


I-386









ՀԱՅԱՍՏԱՆԻ Ե ԼՐԱՌԵ

**ԱՐԵՎԵԼԵՆ**

**Tumak**

ԵՐԱՍՄԷՍԵ  
ԱԶԳԱՅԻՆ  
ԳՐԱԿԱՆ և ԲԱԶԱՐԱԿԱՆ

1908

Ա.Ո.Ա.Զ.Ի.Ն.

ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԵՆ  
Ա.ՄԱՍՏՈՒՐԵԱՆ ՈՐԴԻ  
ԻԶՄԻՐ

MAHARAJAN, 6th May 1908

# Բովանդակութիւն

|                      |                             |     |
|----------------------|-----------------------------|-----|
| ԽՄԲ.                 | Քանի մը խօսք                | 1   |
| Յ. Գ. ՄՐՄԸՐԵԱՆ       | Լրագր. Խրքահայտրուն մէջ     | 3   |
| ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿ.        | Պարտականութեան Հաւասքը      | 21  |
| Ս. ՏԻՒՍԱԲ            | Յիշատակ Բարեկամութեան       | 26  |
| ԿԱՐՕ                 | Ճամբուն վրայ                | 27  |
| Յ. ԳԱԶԱՆՃԵԱՆ         | Կամք եւ դաստիարակութիւն     | 28  |
| Կ. ՍՏԵՓԱՆԵԱՆ         | Տրամախօսութիւն              | 36  |
| Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ      | Յաւիտեան սկան հրեայն        | 44  |
| Ա. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ      | Մոխիր եւ մախր               | 46  |
| ՍԻՊԻԼ                | Մոռնալ                      | 52  |
| ՏՕՔ. Յ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ | Բժշկութեան հայրը            | 53  |
| Տ. ԱՍԼԱՆԵԱՆ          | Կենաց պայքարը               | 57  |
| Զ. ԵՍԱՅԵԱՆ           | Պարագ զերեզմաններ           | 69  |
| ԶԻՖԹԷ - ՍԱՐԱՖ        | Վոհմակին զոհը               | 73  |
| Ռ. ՈՐԲԵՐԵԱՆ          | Մաղթանք                     | 85  |
| Ա. ՆԱԻԱՐԵԱՆ          | Ֆրանս. մեծագոյն տրամերգակը  | 86  |
| Մ. ՄԵԾԱՐԵՆՅ          | Անհայ բանաստեղծ մը          | 92  |
| ԱԼՓԱՍԼԱՆ             | Բեռնաբարձը                  | 100 |
| Ն. Հ. ՆԵՐՍԷՍԵԱՆ      | Հառուշֆուքոյ եւ իր Առածները | 102 |
| Գ. ԶԱՐՈՒՀԻ           | Դիշերը                      | 107 |
| Յ. ԱԼՓԱՐ             | Հուսկ բանք                  | 109 |
| ԱՆԱՅԻՍ               | Սիրելի փոքրիկ աղջնակի մը    | 114 |
| Ս. ԴԱԻԹԵԱՆ           | Տաճկահայ թատրոնը            | 115 |
| Մ. ՈՒՂՈՒՐԼԵԱՆ        | Ժող. հարազատ զաւակը         | 125 |
| ԼՈՒՍԻ ԳԱՍՊԱՐ         | Կանացի մշտնութիւնը          | 132 |
| Մ. ՊԱՐՍԱՄԵԱՆ         | Ուրուականը                  | 135 |
| ԽՄԲ.                 | Համաշխարհ. արձագանք         | 140 |
|                      | Խմբագրին էջը                | 144 |

## ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

| ՁԱՐԵԿԱԹԵՐԹ         | ՁԱՐԵԿԱԹԵՐԹ եւ ԵՐԱՄՍԵԱՅ | ԵՐԱՄՍԵԱՅ           |
|--------------------|------------------------|--------------------|
| ՏԱՐԵԿԱՆ 507. 12 Ֆ. | ՏԱՐԵԿԱՆ 65 Ղ. 15 Ֆ.    | ՏԱՐԵԿԱՆ 23 Ղ. 6 Ֆ. |
| ՂԵՑԱՄՍ 25 Ղ. 6 Ֆ   | ՂԵՑԱՄՍ 35 Ղ. 8 Ֆ.      | ՂԵՑԱՄՍ             |
| ՄԷՆ ՄԻ ԹԻԻ 1 Ղ.    |                        | ՄԷՆ ՄԻ ԹԻԻ 7 Ղ.    |





## ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍՔ



Այս սեռակ ստուար ու յորջ գրական **ԵՌԱՄՍԵԱՅԻ** մը՝ վաղուց ձեռնարկեղ մտադրած էիմ, մակայն զանազան պարագաներ ազդեղ եղան մեր փափաքին:

Մեզի շնորհուած Կոյս. բարեհաճ արժանագրիմ զօրոքեամբ, իրաւունք ունիմ **ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱԾՈՒԼՆ** շարաքն երկու անգամ հրատարակեալ, բայց մինչեւ այսօր գոհացած եմ անգամով մը միայն, ուսի եռանդեայի մը հրատարակութեամբ՝ մասամբ գործադրած ըլլալ կը կարծեմ՝ մեզի շնորհուած իրաւունքն, միւս կողմէ գոհացուցած՝ **Ա. ՄԱԾՈՒԼԻ** համակիր ընթերցողներն, որոնք փութացին իրենց շնորհաւորութիւնները յայտնել մեզ, առաջին առթիւ որ ծանուցիմք մեր այս ձեռնարկի որոշումը:

Ինչպէս արդէն ըսիմ ուրիշ առթիւ, Տաճկահայոցս մեջ չեմ ունեցած ստուար ծաւալով անտես կնալ եռանդեայ հանդէս մը. այս գրական քերին ահա գոհացնէր յանդգնութիւնը կուսենամք այսօր, ամեն կարեղի եղածն ընելով, մեր ոյժերն եւ կարողութեան համեմատ աստիճանին մեջ:

Չեմ ուզել խօսիլ մեր այս առաջին քիւին պարունակութեան վրայ, բնականաբար զովեսներ չեմ կրնար հիշել մեր այս անդրանիկ քիւին եւ զայն պատուող աշխատակիցներուն գրական արտադրութիւններուն վրայ:

Եւ ասկայն չեմ կրնար անտեսել պատմականութիւն մը՝ որու վրայ անցողակի չանդադարունալ, ամենամեծ պատմականութիւն մը պիտի նկատուի մեզի համար:

Այդ պատմականութիւնն է՝ հրապարակային շնորհակալութիւններ յայտնել առանց բացառութեան ու խտրութեան ամեն անուն՝ որոնք սիրաշօժար ընդունեցին մեր հրաւերը, կարեւորութիւն տրին մեր ձեռնարկին, ուզեցին քաջալերել մեզ եւ առանց սեքեքի, առանց թծախնդրութեան, առանց կանխակալ մտածումներու,

ստանց պահանջի տրութան, առաջադրեալ պայմաններու ու խրժ-  
քծանքներու՝ պատասխանեցին մեր քերականացի ու գրաւոր հրաւերնե-  
րուն, պատշտեցին այս առաջին քիւն եւ խոստացան նաեւ պատշտե-  
լայս առաջինին հետեւեցիլ միւս քիւները իրենց ներկառ յօդաւորնե-  
րով:

Մեր ընկերացողները պիտի գտնեն այս եղերուն մեջ խոհուն եկե-  
ղեցականներու հոգեբանական յօդաւորներուն քով, աշխարհական ի-  
մաստասերներու ուսումնասիրութիւնները, փափուկ ու գողտիկ  
մասնեւեհ տոյրած զգայուն տղերու քով, կեանքի իրական տեսարան-  
ներու պատկերացումը, վաղուան օտար գրականութան առնելիք քայ-  
լերուն հետ, այժմու օտար վարպետներու վրայ քննադատութիւններ:  
Հայ ըրագրութեան հայեցացումին մօտ, սիրուն վիպականներու հոյք մը,  
հայ բասրունի պատմութեան քակ՝ ժամանցի հրահանգիչ արտաւորքին  
մը, անժամօք մնացած տաղանդի մը պարզումին քով՝ անկիւ հոգե-  
ցունց նախկին մը, արձակ բանաստեղծութիւններու փունջին մեջ՝  
խերքաւորներու սիրունած քերթիկներ:

Վերջապէս՝ մեկ խօսքով՝ անկարելի փորձեցիք, կարելի ի գործ  
դրիք եւ ուրախ եմք յայտնելու թէ մեր յոյսերն ի դերեւ չեղան եւ  
մեզի պատշտող գրագետ-եկեղեցականներու, գրագետ-կիներու եւ գրա-  
գետ-աշխարհականներու կուգանք կրկին մեր անկեղծ շնորհակալու-  
թիւնները յայտնել:

Թէ ինչ տեսակ ընդունելութեան պիտի արժանանայ մեր այս ա-  
ռաջին հասորը, թէ որքան պիտի հետաքրքրուին անով մեր հրապարա-  
կագիրներն եւ թէ որքան կարեւորութիւն պիտի ընծայեն անոր՝ իր-  
եւ գրական դժուարին գործ մը, կ'ըստանք թէ պիտի ունենանք  
հաճոյքը՝ տեսնելու այս ամենը:

Այս առթիւ հարկ կ'աւ ընել, թէ ամեն տեսակ քննադատութիւն,  
ուսկից եւ ո՛ր կողմէ աչ գալու ըրջայ, միշտ բարեւայական հակումով  
մը պիտի ընդունինք, երբ մասնաւոր դիտում մը կամ հակառակու-  
թիւն մը չնշմարեմք անոր մեջ:

Եւ աւելի անկեղծ ըրջալու համար, որոշած եմք շաքարաքերք Ա.  
ՄԱՄՈՒԼԻ մօտաւոր քիւներուն մեջ հետզհետեւ հրատարակութեան քաշ՝  
ԵՌԱՄՍԵԱՅԻս նկատմամբ յայտնաւորելի կարծիքներէն եւ գաղափար-  
ներէն փունջեր որունց մեջ, — նորութիւն մ'ընելու համար, — գտնց  
չպիտի առնենք նաեւ աննպաստ կարծիքները:

Մեր այս «Քանի մը խօսքեր»ու արկիտի ներածութենէն վերջ  
կ'ըստանք մեր մեծայարգ աշխատակիցներու առջեւ ԵՌԱՄՍԵԱՅԻ  
եղերը:





Յ. Գ. ՄԻՄԱՐԵՆԱՆ

ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԹՈՒՐԲԱՅԱՅԵՐՈՒՆ ՄԵՋ

1840 — 1900

Որովհետեւ ցեղի մը պատմութեան հոգին կը խլրտի մանաւանդ իր մատենագրութեան ու լրագրութեան մէջ, հարկ կը համարինք թուրքահայոց լրագրութեան վրայ ամփոփել հոս քանի մը տեղեկութիւններ, տեսութիւններու համեմատութիւններ՝ ուրիշներու, և մեր կողմէն ալ ուրիշ առիթի թողլով խօսիլ նաեւ 19րդ դարու Հայ մատենագրութեան վրայ: Եւ արդէն ընդարձակ գործի մը մէջ մենք խօսած եմք բաւականապէս մատենագրութեան վրայ:

Լրագրութիւնը, ժողովուրդի մը ամէնօրեայ կամ շաբաթական այն շուսիկ ընթերցարանը, ունեցած է թուրքահայոց մէջ ոչ այնքան փառաւոր այլ և սակայն խոհեմ և ամուր սկիզբ մը:

Բուն թուրքահայ լրագրութիւնը՝ նախնական ընդհատ ու մասնաւոր փորձերէ մը [\*] ետք (նախկին բողոքականաց «Շտեմարան»ը «Դիրասկ Բիւզանդեան»ը «Ալդարարը Պոլսոյ» ու քիչ ետք Զմիւռնացի «Արշալոյս»ը)՝ սկսած մեր մէջ 19րդ դարու կէսին մօտերը՝ մինչ համարատուութեան ազօտ գաղափար մը և, Սիլւատարի ձեմարանին հաստատութեան առիթով, ժողովրդական լրատէր ու բանասէր հետաքրքրութիւն մը՝ կ'զգացուէին հրատարակեալ լուրերու համարատուութեանց և բանասիրական տեղեկութեանց օր առօր աճող կարեւորութիւնը, և առ այն տարիով ու կո'իկ գէթ շաբաթական լրագրի մը պէտքը: Ապա՝ այս պէտքը շեշտուելով հետզհետէ 1846ին լրագրութիւնն, առաջին անգամն ըլլալով թուրքահայերուն մէջ, առաւ սկիզբ մը կանոնաւոր և մշտական՝ երբ Յովհաննէս Տէրոյենց (Զամուրձեան), թուրքահայոց բազմահմուտը, հիմնեց իր աշխարհաբառ լրագիրն ընդ պաշտպանութեամբ Պատրիարքարանի:

Արդարեւ՝ բարեկազմութիւն մըն էր որ, Վենետիկի Մխիթարեանց ակադէմական հանդէսէն ետքը, պոլսական լրագրութիւնը կը յանձնուէր հաստատուն սկիզբով այնպէսի անձի մը՝ որ պետական լեզուին հմուտութեան վրայ կ'աւելցնէր իտալերէնի, ֆրանսերէնի, յունարէնի և ուրիշ արեւելեան լեզուներու հմուտութիւն մը: Աստեղա-

[\*] Կ. Պոլսի առաջին հայ Թերթը՝ «Լոյս Գիր Մեծի Տէրութեան Օսմանեան» (Թագվիսի Վազայի) սկսած է 1832ին և դադարած 1833ին: Ասոր օրինակը տեսած չլլալով՝ գաղափար մը չենք կրնար տալ ո'չ Թերթին ոգին ոչ ալ խմբագրին վրայ:

գրական, ու ամենէն կարեւոր և նշանակելի հմտութիւնը նախնեաց (գրաբար) լեզուին կահաւորուած պոետական աւանդական ու բանաւ սիրական մանր գիտութեամբք։ Տէրոյենց՝ իր ժամանակին ամենէն լուրջ և խոհեմ գրագէտ—մատենագիրն էր [\*]։ Աշխարհաբար լեզուն, որ տալիս առնելու վրայ էր ընթացիկ կալուած մը, ստացաւ իր ներհուն գրիչին ներքեւ՝ Դերոյ մը, հարա լատինացիքէնի և ձեւ մը եփուն ասութեանց և բազմակողմանի դարձուածներու՝ հետեւելով միշտ աւելի՝ նախնեաց օրհնեալ լեզուին ստեղծական տարերաց քան եւրոպական եկամուտ իդական ոճերու և ասութեանց։ Նախագատութիւնները միշտ արամբարանական պարզ ուղղութեամբ մը օժկու, օգտակար են, հաճելին ու պարկեշտն յատուկ գոյներով ներկայացունելու և ամեն պարագայի մէջ հաւատարիմ մնալու կրօնական ու բարոյական չինիչ սկզբանց՝ այս ամէնուն ճարտարարուեստ գաղմիքն ունենալու էր անշուշտ մարդ մը, որ արդէն քառորդ դարէ մը հետէ թարթաւ փելով ասիական ու եւրոպական մատենադրութեանց մէջ, և հեղինակութեան ու թարգմանութեան մէջ արտադրած կարեւոր երկեր՝ կրնար կարգաւ իրենց ընագիրներուն իսկ մէջ Ս. Գիրքը, եկեղեցւոյ հայրապետները, Տակիտոսը, Հոմերոսը, Տիոտո Ղիւիոսը, Թեսոսթրոսն և գառական ամէն հեղինակներն ու հանդէսները։

Թուրքահայոց այգի-իբր առաջին թերթին քանի մը տարուան թիւերն աչքէ անցունող մը պիտի տեսնէ որ վերոյիշեալ յարկութեանց մէջ զրեթէ աննուագելի տեսած է ինք իբրեւ միայնակ (միայն երբեմն օգնական աշխատակցութեամբ Յովհաննէս Հիսարեան բանասէր երկտասարդին)՝ խոհեմաբար ու տոճմասիրաբար, մինչև որ 1848 ին ուրիշներ յաջորդած են իրեն՝ ոչ նուազ հաւաքական կարողութեամբ մը։ Եւ ատենք ալ օփտուած անձեր էին, ժամանակին՝ եւրոպակիր թանճաւորութիւններ։ — Տոքթ. Ալեքիւզէն էֆ, Միտրիչ Ագաթան, Նիկողայոս Զօրայեան, Գրիգոր Աղաթոն, Յակոբ Կրճիկեան և այլք, որ կը շարունակեն նոյն թերթը աքրի ու կէսի չափ և ապա դարձեալ կը յանձնուի Յովհ. Տէրոյենցի խմբագրապետութեան։ [\*\*]

Այսպէս թուրքահայոց առաջին լրագիրը կանոնաւոր խոհեմ ու գիտուն սկիզբով մը կը տեսնէ մինչև 1852 թուականը՝ երբ Պատրիարքարանի Գերագոյն փողովը կը հրաժարի անոր շտաբը վճարելէն և խմբագրապետը թերթը վարելէն։ Անշուշտ նոր ուսնագութիւններ ևս պատճառ կըլլան անոր դադարումին։

[\*] Այս տիտղոսներով կ'ողջունէր՝ Տիգրանց կողմէն Հ. Արսէն Կոմիտաս Բագրատունին, ինքնագիր նամակով մը, Յովհ. Տէրոյենցի խմբագրապետութիւնը, այս օրերէն նաև Եւրոպայի պանդոնողական մամուլէն քանի մը հանդէսներ ու օրագիր մը՝ «Ինիլէն-Մոնտ» և Կ. Պոլիսի «Բռէս տօրիան»ը՝ գովել առած են Յովհ. Տէրոյենցի իբրեւ լուրջ և իմաստուն գրող։

[\*\*] 1849ին սկսած է Նիկոմիդիայի մէջ նոր լրագիրի մը հրատարակութիւնը, որ կարծես տեսած է քանի մը տարի։



Կ .Ս . իւթիւճեան Փարիզէն նոր եկած, որ առաջ ալ աշակերտած էր ձեմարանի աւ Տէրոյնցի դպրոցին, կրասանալ արտօնութիւնը «Մասիս» անուն լրագիրի մը և կրսկսի նոյն տարին փետրվար ամիսէն հրատարակութեան իջրեւ շարունակութիւն Յովն . Տէրոյնցի թերթին Երիտասարդ գրագէտը, թէպէտ ոչ իր նախորդին չափ բազմահմուտ և բազմալեզու, լեցուն նորեկ ճաշակներով, կը յաջողի քիչ ատենէն հաւաքել իր չուրջը նորոյժ աշխատակիցներ ու իրեն ձգել հտարակայ համակրութիւնը ։ Լեզուի կողմէն աւելի ճկուն և կոկիկ ոճ մը, նորաթեք ասութիւններու ֆրանսական ճարտար նմանութիւններ՝ կուտան անոր տարադի նոր փայլ, այնպէս որ քանի մը տարիէն կատարեալ յաջողութեան ճամբու մէջ կը գրուի «Մասիս» լրագիրն ալ ։ Իրեն գլխաւոր աշխատակիցներ կոչուեալ՝ Օ . Բ . (օգնական բանասէր՝ Նիկողայոս Զօրայեան), որ կը գրէր վաճառականութեան և դատարարականութեան վրայ ընդարձակ տեսութիւններ, Բարունակ Քրիթիկեանց, Գ . Սիմարոսճեան, Մկրտիչ Աղաթն, Խ . Պ . Մխաբեան, Մոսթ Մամուրեան, մերթ ևս Տօք . Սեղովչէն էֆէնդի :

1854ին էր որ սխառ նաեւ հրատարակուի ի Պոլիս «Բանասէր» անուն հանդէս մը՝ խմբագրութեամբ Յովն , Հիւարեան երիտասարդին, որ թէ՛ լեզուի հարգատուութեան թէ՛ հմտութեան կողմէն վարչէր մնալ Կ . Ս . իւթիւճեանէն ու իր աշխատակիցներէն՝ իր կուռ ոճովը տալով աւելի տեսական կնիք մը իր պատուական հանդէսին ։

Յիշեալ նախածնունդ գրիչներն իրենց անձնական նկարագիրովն ալ ունէին նշանակելի առաւելութիւններ մը, որ գլխաւոր աղբիւրներն եղած են իրենց սկզբնական և սկզբնապալ նախամանութեանց ։ Անոնք՝ մանաւանդ յանձին կը կրէին ոսկի սրատաղաքացութիւն և աղամանդ խղճմանք մը, ուրկէ յաճախ կ'աղբերանար ինչ որ բարի է ու ձեմարխա :

\* \* \*

Զմիւռնայի «Արշալոյս»ը կը շարունակէր այս միջոցին՝ թէպէտև ոչ Կ . Պոլիսի լրագրաց հաւատարմագրութեամբ և պարունակութեամբ ։ Անոր խմբագիրը՝ Ղուկաս Պաղդազարեան իրեն հզօր աջակից ու խորհրդական ունէր Կ . Պոլսեցի մեծ վարժապետ Ռուբէն Անդրէաս Փափաղեանը, որ Զմիւռնայի նոր գրագէտներուն հայրն եղած էր ։ Իսկ Կ . Պոլիսի «Մասիս»ը՝ վերոյիշեալ վարժագրութեան ձեւով կը շարունակէր օր օրի անձնական ու հանրական վարձերու յաւելումներով և կը տւէր մինչև 1860 ծանր աղղութեամբ մը, մինչ կուտակցական կրօնոյժ խողիւրներ գետ գոցութիւն չէին աւնեցած հանրական նիւթերու մէջ՝ Միւս կողմէն Յովն . Տէրոյնցի ևս կ'սկսէր հրատարակել իր «Զօհալ» անուն թուրքարարաւ պարբերականը՝ գլխաւորապէս փոքր Ասիայի թուրքախօս հայերուն համար խմբագրութեամբ :



և մանաւանդ կրօնական ու եկեղեցական նիւթերու վրայ, որոնց մէջ խմբագիրին ձեռնհաս մասնագիտութիւնն առած դարձած էր :

«Մասիս»ի և «Զօհալ»ի միջև տեղի ունեցաւ կրօնական երկար վիճարանութիւն մը՝ հոռոմէական եկեղեցիին հայ եկեղեցիէն էական տարբերութիւն մը ունենալուն և չունենալուն վրայ՝ Վննետիկի Մխիթարեանց արքայայր Հ. Գէորգ Հիւրմուղեան արքեպիսկոպոսի մէկ խորական գրութեան առիթով : Յովհ. Տէրոյենց կը գրէր տարբերութեան էական չլլալուն վրայ իր եկեղեցական փաստարանութեան, իսկ «Մասիս» հակառակը՝ քիչ մը ծանր ու ծաղրական ոճով և իր կողմն ունենալով ազգին երիտասարդ ու անիրագէտ մասերը . այս վէճ երկարեցաւ կռիւի մը յանգելու աստիճան՝ մինչև որ Պատրիարքարանն արգիլեց :

Ինք Յովհ. Տէրոյենց ալ՝ 1857ին իր ընթերցողներուն թելադրութեամբ փոխեց դարձեալ իր հանդէսին անունն «Երեակ»ի և լեզուն պարզ աշխարհաբառ հայերէնի, զոր շարունակեց չրջան ընդ մէջ ընդհատումներով՝ մինչև 1866 թուականը : Այս հանդէսին մէջ երեցան ընտիր յօդուածներ՝ Տէրտղիսնոսի նախագրութեանց, Լեզուաց գիտութեան, Լուկասնիսի Յաղագս մահու հալած չաց, Մովսէս Խորենացիի, Արմաշի վանիկն, Իշխանութեանց եւ անհաւատութեան ծագմանց, Էնի վրայ՝ որ ունին մատենագրական ու իմաստասիրական արժէք մը և ազդեցին ժամանակին գաղափարներուն վրայ համոզող և փաստարանող ոգիով :

1857էն 1860 թուրքահայ լրագրութիւնը կ'ընթանայ անօսր և պարզ այլ հաստատուն ուղղութեամբ մը, ուր ծաղր, թեթեւութիւն, իմաստասիրութիւն, անբարոյականութիւն և ասոնց լծորդ կիրք ու դիրք գրեթէ բնաւ չունին մուտ : Այդ 8-10 տարիի չրջանը մեր գրականութեան և լրագրութեան համար եղած է հանդարտ և իմաստուն ժամանակամիջոց մը, որ պատիւ կը բերէ գրողներուն : Աշխարհաբառը՝ թէ՛ դպրոցներու, թէ՛ հրատարակութեանց մէջ կ'առնէ աւելի որոշ հարուստ և ընթացիկ դէմ մը, որչափ որ ալ վտարանդի ձեռնարկներ կ'ըլլան քանի մը նորասէրներու միջոցով՝ խոտորեցնելու համար զայն լեզուական անհարազատ նորոգութեանց քառսին մէջ : Մասնաւորներու քիմիայքին անբանաւոր բերմանց արգիւնք՝ ատոնք կ'անհետին ինքնին հասարակաց ողջմտութեամբ նուիրագործեալ և հասարակաց ընդունած սահուն և հարազատ աշխարհաբառին հանդէպ : Այս աշխարհաբառին քիչ նպաստ չեն բերեր նաև Զմիւռնիայի նորահաս զրագէտներն ալ՝ իրենց թարգմանութիւններով և հանդէս ու լրագիրներով, որոնք «Արշալոյս»էն ետք կ'երևին՝ «Արփի», «Դիմակ զաւեշտութիւթ» «Յաւերժահարս», և սոգա հետզհետէ «Գալուն», և վերջապէս խմբագրութեամբ Սարգիս Միրզայի՝ ուրիշ թերթ մը :

Գրական ու լրագրական հրապարակին վրայ բանող այս աշխար-

հաբառը, որ ցարդ հիմն է մեր աշխարհաբառին. իրեն կենդանի առաջնորդներ ունեցաւ 1840էն սկսելով Յովհ. Տէրոյենցի, Կ. Ս. Իւթիւճեանի, Սերովբէ Չէչէնեանի (Սէրվիչէն), Խ. Պ. Մխաքեանի, Ստ. Ոսկանեանի, Մատթէոս Մամուրեանի, Նիկողայոս Զօրայեանի, Ա. Մ. Գարադաշի, Հ. Արսէն Կոմիտաս Բազբաատունի, Հ. Գաբրիէլ Այվազովսքի, Հ. Ամբրոսիոս Գալֆայեանի և Յովհաննէս Հիսարեանի անձներուն վրայ, վասնզի 19րդ դարու գրագէտներէն միայն ասոնք էին՝ որ, քաջահմուտ գրաբառ մատենագրութեան ու եւրոպական դասական լեզուներու, մշակեցին ժողովուրդին ալ լեզուն հաւատարմաշակով և կանոնաւորութեամբ ապրելով ժողովուրդին մօտ, ժողովուրդին հետ, և ժողովուրդին ուղղելով իրենց կրթիչ գրութեանը. և ասոնց հարթած բառունական ձևին վրայ էր՝ որ Հ. Արսէն վ. Այստընեան օրինադրեց իր աշխարհաբառի գիտուն և կաշտն կանոններն՝ իր Քննական ընդարձակ քերականութիւնով:

Կոկիկ և գիտուն աշխարհաբառով մը կը հրատարակուէր նաև Վիեննայի Մխիթարեանց վանքէն «Եւրոպա» անուն հանդէսը:

\* \* \*

Այս ներհուն անձնաւորութեանց խմբագրութեանց քով՝ երևան եկան մերթ ընդ մերթ վաղանցիկ օրագիրներ, հանդէսներ ու տետրակներ ալ, որ թէ՛ դադախարներու վախտութեամբ, թէ՛ լեզուի ուրորուն տղայականութեամբ չեղան իրենց ժամանակին հետեւելի օրինակներ, վայրի ծաղիկներու նման առ օրին փթթելով՝ առ երեկոյին թորչումած թօթափեցան անհետ անյիշատակ:

1860էն ստղիւն մանաւանդ երկրորդական տնային տետրերու, թերթերու և հանդէսներու շարք մը ծայր կուտայ թուրքահայ մաւուլին մէջ. ասոնցմէ, օրինակի համար, կրնանք յիշել «Բուրաստան», «Թռչնիկ», «Կիթառ», «Մուսայք», «Զայն», «Ծրփի» և ինչ: Այդ թերթերէն ամէնէն գիմացկունն հաղիւ տարի մը չափ կեանք ունեցած է: 1861ին գրական նոր պէտքեր, հայեացքներ ի յայտ կուգան հրատարակագրութեանց մէջ: Գրական, քննական, բանասիրական հին յօդուածներ՝ տեղի կուտան վիճաբանական, կուտակցական, բանաստեղծական գրութեանը, և նախորդ հնգեակ մը վարպետներու յօդուածներովը մնած սրուած աշակերտ գրիչներ հրապարակ կիջնեն՝ յազուրդ տալու իրենց գրական հակումներուն, գաղափարներուն և կիրքերուն: Այս առիթներով ծնած էր նաև տոհմին մէջ զաւեշտական հանդէս մը կ'ծննող՝ խմբագրութեամբ Յ. Սըլուճեանի՝ «Մեղու» անունով, որ ողջունուած էր նորերէն կարի քաջալերութեամբ և որուն կ'աշխատակցէր ալ երբեմն իր բարձրութիւններէն Գրիգոր Օսեան:

Թէպէտ լուրջ, բայց Կ. Պոլսի Մամուլէն տարբեր ուղղութեամբ մը կ'սխի հրատարակուիլ Զմիւռնայի մէջ «Ծաղիկ» անուն հանդէսը:



կոկիկ աշխարհաբառով մը և փիլիսոփայական յաւակնութիւններով, խմբագրութեամբ երկտասարդ Գր. Չիլինկիրեանի որ կուտայ նաև տոհմին, ֆրանսական գլխաւոր մեծ վիպասանութեանց թարգմանութիւնները՝ Տէտէեան-տպարանէն։ Աւելի փիլիսոփայական, աւելի փառ-րական ոճով մը աշխարհաբառով կ'սկսի «Սէր» անուն պարբերականն ալ, որու գլխաւոր փայլը կը հանդիսանան Ա. Մ. Գարաբաշեանի ներհուն և հրահանգիչ յօդուածներն՝ ոսկեղարեան աշխարհաբառով մը, աւելի հարուստ և կուռ քան «Երեւակ»ի ու «Մասիս»ի լեզուն։ Ասոնց հետ կը հիմնուի նաև հանդէս մը «Կիրիկիա» (Փունջ), որ ի սկզբն քան քանի մը տարի «Մասիս»ի հաւասար խնամքով կը հրատարակուի Պոլիսի մամուլէն, կը հիմնուի նաև թուրքաբարբառ «Միւնաստի-Մանգուլմէն» խմբագրատնութեամբ կեցարացի Կ. Փանոսեանի և կ'ըլլայ ժողովրդին, մանաւանդ կեցարացիներու, էանաֆ մասին փալտի թերթը, այս թերթին կ'աշխատակցի ազա-Օզսէն Խօճասարեան Սամաթիացին ալ, որ գիտէր գէթ անգլիերէն լեզուն։ Եւ այս շրջանը կ'ըլլայ 19րդ դարու թուրքահայ լրագրութեան ամէնէն փայլունը եթէ ոչ բովանդակութեամբ ամէնէն ճոխն և դիտունը։

Վերոյիշեալ շրջանին կը վերաբերի նաև «Ժամանակ» անուն հանդէսը՝ խմբագրութեամբ Ս. Պ. Բաբաղեանի, որ ժամանակին խօսուն հայկաբաններէն էր։ Միւսոցն ժամանակ կ'երեւին նաև պարբերական հրատարակութիւններ օրական խնդիրներու վրայ «Յայտարարութիւն» անունով՝ յայտարար այլեայլ կարծեաց, զորս ախորժով կը կարդար ժողովուրդն և որոնց թիւը կը հասնի 100ի մը։ Ասոնց նախօրինակն եղած էր՝ Սկիւտարի Ճեմարանին ընդարձակ յայտարարութիւնը դաժկօրէն, զոր 1840ին գրած էր Յովհ. Տէրոյնց։

1860էն 1867 [\*] հետզհետէ իրարու յաջորդող Սարգիս, Գէորգ և Պօղոս պատրիարքներու օրերուն որոնց առաջինը պահպանողական եկեղեցական մը, երկրորդը փառասէր և փառաշուք արքեպիսկոպոս մը և երրորդն հմուտ և վարչապէտ վանական մըն (Արմաշեան) էր, հանրային հրատարակութիւնք ունեցած են։ հետզհետէ յաւանուն կարեւորութիւն հանդէս ժողովուրդին. այդ օրերուն երկու հազարի մը կը հասնէր ի Պոլիս լրագիր ու հանդէս կարդացողներու թիւը, մինչ 1850-55ին հազարն իսկ երկրայելի էր։ Ասոնց մէջ տուրուբուրուած խնդիրներն են ընդհանրապէս ընտանեկան, վարչական ու կրօնափիլիսոփայական. զուտ բանասիրականը չառ քիչ տեղ կը բռնէ, ան ալ գրեթէ միայն «Սէր» պարբերականին մէջ Ա. Մ. Գարաբաշեանի գրիչին տակ, որ դեռ վարձու բռնուած էր Կ. Պոլիսի Պայպըլ-Հաուզի միսիոնարներէն։ Նոյն ատենի հրատարակիչ խմբագիրք՝ բաժնուած երկու խումբի՝ կ'սկսին առնել իրարու հանդէպ

[\*] 1860ին Մ. Գ. Տէյիրմէնեան կ'սկսի հրատարակել Կ. Պոլիսի մէջ «Արեւիկան Դար» անունով հնգետասորեայ հանդէս մը, որ կը դադրի 1862ին։

ոսոխ գիրք» Առաջին խումբին պետք է Յովհաննէս Տէրոյենց՝ իր հնագիտական, եկեղեցական ու լեզուագիտական անսպառ հմտութեամբն և հոռմէականութեան հետ հաշտ իրաւախոս միտումներովը։ իրեն իբր հետևորդ են «Ժամանակ», «Փոռնջ» ու քանի մը աննշաններ, երկրորդ խումբին վարիչն է «Մասիս» իր յղկեալ աշխարհաբառուն ու վիպական և ֆրանսական աղագրագիտով, ու իրեն հետևորդ են «Մեղու», «Ծաղիկ», «Մուսայք» ևն։ Գէորգ Պատրիարք և իր վարչութիւնն՝ առելի թեւարկու կը թուին այս երկրորդ խումբին, զոր մտերիմ պաշտպանութեամբ կը խրախուսեն նաև Պետրոս աղայ Խորասանճեան ու Տօքթ. Սէրվիչէն Էֆէնտի, մինչ Սարգիս ու ապա Պօղոս պատրիարքները, իրենց կցորդ պաշտօնեայնէրով թեւարկել կը թուին «Երևակ»ի հին խումբին, որուն պաշտպան են նաև լուիւ-եայն հին ամիրաններու և եկեղեցականներու մնացորդները, մանաւանդ Պալեան Կարապետ ամիրան և Տառեան Պօղոս ու Յովհաննէս պէյերը՝ իրենց համակիր հետևորդներով։ «Աէր», «Միւնատի», կամ «Մանգումէ» ու ա՛յլ քանի մը թերթիք՝ կը հրատարակուին յաճախ տարբեր ու չէզոք ուղղութեամբ մը, և հազիւ երբեմն մերթ ալս մերթ այն խումբի հետևելով։ Իրենց գործածած աշխարհաբառն ալ բոլորովին կազմակերպուածի ու վերջին անկումածն առածի պէս է՝ խմբագրողաց ճաշակին, հմտութեան և նախասիրութեանն չափերով իրարմէ զանազանեալ։

Երուսաղէմի յուզումներուն հանդարտելէն ետեւ ալ՝ սկսած է հրատարակուիլ նոյն վանքէն «Աթոն» հանդէսը՝ Տ. Սաւադունի և ապա Մեկքիսեղեկ Մուրատեան վրդպ. ի խմբագրագիտութեամբ՝ հնախօսական, բանասիրական և բանաստեղծական պարունակութեամբ, որուն սիրողաբար կը խնամարկեն Միսրանութեան ուսեալ մասն և Եսայի պատրիարքն Երուսաղէմի։

Երուսական արձակ վէպերու թարգմանութիւններ, քանի մը կարող գրագէտներու ինքնագիր հեղինակութիւններ, թատրերգութիւններ, ատենախօսութիւններ՝ տակաւ հասցնելու վրայ էին՝ Կ. Պոլիսի երիտասարդութեան մէջ, խումբ մը բազմաթիւ գրողներու, որ աշխատակցեցան հետզհետէ վերոյիշեալ լրագիրներուն, մանաւանդ «Մասիս»ի՝ գրելու և ճտռելու քաջաշէրեալ մարմաջով մը։ հազիւ երբեմն արժանապէս առաջնորդուած կարողներու մականովը։ Վոլգէրի, Ա. Տիւմայի, Էօփէն-Սիւրի, Վիկտոր Հիւկոյի բազմահատոր վիպասանութիւններն իրարու ետեւէ լոյս կը տեսնէին Կ. Ս. ի թիւ՝ ճեանի և Զմիւռնայի ծանօթ գրագէտներուն ձեռքով. Զմիւռնայի որ կաթողիկոսացու առաջնորդներու, Տէր Յովհան Վանանդեցիներու, Ռուբէն Անգրէաս Փոպիաղեաններու օրերէն՝ Հեկէն տաղանդով վարժուած հին լեզուի հարստութեանց և ընտելացած բանաստեղծիկ նոր բերումներու՝ այս միջոցներուն (1860-1875) կը յաջողէր մարդիկ ու մանաւոր աշխարհաբառով մը ընծայելու ընթերցասէր հասարա-



կուլթեան իր ճարտար թարգմանութիւններն և զգայնիկ հեղինակութիւնները : Պաշարուած այս հրատարակութիւններով՝ նոր գրողներու խումբ մը հրեան կուգար ճոխացնելու թուրքահայ լրագրութիւնըն իր նորոյթ յօդուածներով և օգնելու հին խոնջած խմբագիրներու թարգմանական ու լանսիրական նոր ձեռնարկներով : 1868-9ի միջոցներն սկսաւ հրատարակուիլ ի Կ. Պոլիս «Մամուլ» զաւելտական հանդէսը պատկերազարդ, ուր բացի անգրագէտ խմբագիրներէն՝ ամէն գրող, որ ոխ մը, քէն մը, կուսակցութիւն մը, սիրելութիւն կամ ստուելութիւն մը ունէր, կուգար հեղու իր ծիծաղը, ծաղրը, կիրքը, արհամարհութիւնն և անհամ կամ համով խեղկատակութիւնները : Այս «Մամուլ» տեւեց մինչև 1882, իսկ իր խմբագիրին եղբայրն, Աբրահամ Այվազեան, մինչև քսաներորդ դար կատարեց հայ խմբագիրներու և Պատրիարքարանի պաշտօնէութեանց հանդէպ Խոռխի ճարպիկ զերը :

Կ. Պոլիսի «Մամուլ»էն ետքը կը հիմնուէր, դարձեալ Զմիւռնայի մէջ «Արեւելեան Մամուլ»ը՝ տնօրինութեամբ Մատթէոս Մամուրեանի, որ վիպական, հնագիտական, տոհմային, եւրոպական, քննաբանական իր պաշարներուն վրայ կ'աւելցունէր նաև օրագրական ու քաղաքական Անգլերէն պերճ լեզուին հմտութիւնն ալ : Որով կրցաւ կարճ միջոցի մէջ, Կ. Պոլիսի հին փորձագէտ խմբագիրներուն հաւասար և յաճախ անոնցմէ աւելի լեզուական և հմտական կորովով՝ փայլեցունել իր պատուական հանդէսը, ցոյն վայր միտ' կը թուրքահայոց մէջ, Յովհ. Հիսարեանի «Բանասէր»էն [\*] ետք, որ պարբերական լրջութեամբ, լեզուի ջղուտ ալ նմանող սահունութեան՝ կրցաւ միացնել դիտելու, խորհրդածելու, քննաքննելու, թարգմանելու առաջնորդութիւնը ոգի մը տրամաբանական բայց և յաճախ գրգռիչ :

1866էն ի վեր դադրած էր վաղեմի «Երեւակ» հանդէսը, դադրած էին կարգ մը մակարոյթ թերթեր ու հանդէսներ ալ, ինչպէս Բարիզէ հրատարակուած գեղեցիկ «Մասեաց Աղանիներ», զոր կը խմբագրէին Հ. Գարրիէ Այվազովսքի ու Ամբրոսիոս Գալֆանեան՝ ֆրանսերէն ու հայերէն, դադրած էր նաև «Նոյեան Աղանի»ն Կ. Պոլիսի, զոր կ'հրատարակէին Գրիգոր Էֆ. Մարկոսեան և Սահակ Էֆ. Ապրոյ՝ աշակերտները Զմիւռնայի Ռ. Անդրէաս Փափազեանի : Որով լրագրական ասպարէզն ի Պոլիս մնացած էր գրեթէ բոլորովին «Մատիս»ի, վասնզի «Մանգումէ» ու «Մէճմուայը Հալաութիս» կը հրատարակուէին հայագիր թուրքաբարբառ : Այս անխափանարար յաջողութեան առիթն հակակշռելու և ժողովուրդին ընթերցասիրութեան դիւրամուտ ճարտկ մը մատուցանելու պատահը չվրիպեցաւ եռանդուն Սամաթիացիին աչքէն, Օգոսէն Խոճատարեան, դժբաղդաբար

[\*] Հիսարեանի այս հանդէսը, ուժ տարուան դադարէ մը ետք, 1859ին նորէն հրատարակուեցաւ՝ կարճէնք տարիի մը չտի՝ նոյն անձին ձեռքով :

անմատոնագէտ և մի' այն անդգերէն լեզուին ծանօթ, իր ծնալայրին համբաւեալ եռանդնոտութեամբ նետուեցաւ խմբագրական ապարէզը, հիմնելով «Օրագիր» թերթը, որ թուի պօլսահայոց առաջին հայերէն լրագիրն է հանապազօրեայ:

\* \* \*

Թէպէտ շատ տրամաբանական չթուիր մեղի պատմական և իմացական յեղուածներն ու շրջանները բաշխել տուեալ թուականներու մը վրայ, բայց իրերու բերումով կը տեսնենք որ բուն 1870 թուականէն կ'սկսի հայ լրագրութեան մէջ ճարտարխօսական, բանաստեղծական ու վիճաբանական յորդուծիւն մը, փոխան հմտականին ու բանասիրականին, որ կը տիրէր ցայն վայր մանաւանդ մինչև 1865 հմուտ և բանասէր խմբագրողներու ձեռքով:

Եւ արդէն առած ալ է՝ թէ «Որչափ բանաստեղծ ըլլանք այնչափ կը տուժենք փորձառութեան և հմտութեան կողմէ, ու փոխադարձաբար»: Հոգեբանական այս ճշմարտութիւն մեր մէջ ալ չէր կրնար անարդիւն մնալ՝ մինչ մտաւորական զուարթ և խօսուն երիտասարդ կեանք մը, արժանաւոր բանաստեղծ պատրիարքի մը հովանաւորութեամբ, կը փթթէր, կը ծաղկազարդուէր գրողներու և խօսողներու յորդեալ բաղմութեան մը միջոցով: Գրել, վիճիլ, վերջապէս խօսիլ. 1870էն ետք այս ճիւղըուն երեւոյթն է որ կը հասնի իր գագաթնակէտին: Լրջագոյն և զգուշագոյն՝ վանական հանգէս մըն ալ կար այս միջոցներու, որ կը հրատարակուէր Արմաշի Չարխափանէն և ուր Յովհ. Տէրոյնց ալ հրատարակեց քանի մը պատմական ու թարգմանական ընձեռուած:

Իսկ ի Պօլիս՝ հանապազօրեայ «Օրագիր»էն քիչ ետք՝ հետզհետէ լոյս տեսան նոր օրաթերթեր ու շաբաթաթերթեր [\*]. — օրաթերթ մը՝ Մ. Մէլիքեանի խմբագրութեամբ, «Թատրոն» զտեշտական շաբաթաթերթը՝ Յ. Պարոնեանի ձեռքով, «Միմոս»ը, «Լոյս»ը՝ նախ Հմայեակ վրդ. Դիմաքսեանի, ապա Մ. Գախաւանի խմբագրութեամբ, «Նորագիր»ը, «Ծիածան»ը, բողոքականաց «Աւետարներ»ը ու «Դիտակ»ը, քիչ ետքը «Թէրճիմանը Էֆքեաք» թուրքաբարբառ տնօրէնութեամբ Տիգրան Ճիլէլէկեանի. այս վերջինը չինեց իր համբաւը Յովսէփ Վարդան փաշայի քաղաքական յօդուածներով: Այս թուրքաբարբառ օրաթերթը կը հրատարակուէր հայ հումբականներու կողմէն երբեմնի «Մէճմոսայը Հալատի»ի տեղ, զոր արժանապէս կը խմբագրէր ինք ներհուն Վարդան փաշայ՝ փորձագէտ և հմուտ քաղաքական իրերու, պատմութեան, անգղերէնի, թուրքերէնի, ֆրանսերէնի և հայերէնի:

Վերոյլեալներէն շատը, բացի Վարդան փաշայէն, պատրաստը-

[\*] Ասոնցմէ առաջ է 1869ին սկսած «Եփրատ» լրագիրը, որ տեւեց մինչև 1872:



Լած, չէին օրագրութեան բազմաճիւղ, ծանօթութեանց և ճկուն ոճին, գէթ իրենց երէց կախորդներուն հասասար չստիով, այլ ընդհանրապէս օրութեան ու ժամուան մարդիկ՝ փորձառութեան կողմէն, գրիթէ աղքատ իմաստասիրապէս ու ըստ այնմ կարեւորին, ու լաւագոյնին անտեսող միշտ անգիտակցապէս՝ կրցան սակայն մինչև ութ տասը տարի տեւել շարունակել եռանդուն և շահաւէտ գործունէութեամբ մը, չնորհիւ ժողովուրդին մէջ նոր մղում առած ընթերցասիրութեան:

Վիճաբանական արձակութիւն, գրիչի անչափ յարձակողականք, մերթ-ջատ անպառչած որակմունք և յիշոցեալ համեմունք ու մեծ մեծ խօսերու անխորհրդը սովորութիւն մը՝ ըստ բաւականին և մասնաւոր ըստ բազդի կը ճարակեցունէին այն ամէնօրեայ թերթերը՝ հակառակ զայն վարողներուն ասմանսփակ կարողութեանց: Եւքոս պական չուրերս ի դէպ ու անոյթ պ թարգմանութիւններ, դպրոցական անվերջ խնդիրներ, վարժապետական և բանաքննական խնդր, ծանր առաջնորդական վէճեր, մեքենայութիւններ, սուտակապա սութիւնք անդամ օր առ ուր աղէկ կը համեմէին պարապ մնացած սիւն նախերը լեցունելու այն օրաթերթերուն որոնց դրաշարք վարժուած էին՝ գէթ ինչեւ ժամն անդամ մը՝ «ձեռագիր» ձեռագիր» գոչել իրեցն ամուր խմբագիրներուն երեսին: Այս յրազրողներուն մէջէն՝ բաւական արժանիքով մը՝ Յ. Պարոնեան ալ որ կը վարէր ու կը խմբագրէր «Թատրոն» զանաշտաթերթը՝ քանի մը տարի հանդիսացուց կարողութիւն մը ինքնատիւ իր համով ու եփուն՝ երգիծաբանութիւններով և Զոցերով, որ Յ. Ալեքանանը մուցունելու մը՝ չափ ժողովրդական նացուցին իր անունը: Այս չըջանին գրողներուն մէջ՝ կարողներէն նաեւ՝ Պօղոս Պառնասեան, Երկրպագութիւնպէս ծանան, Եղիա Տէմիրճիպաշեան, Ռ. Յ. Պէրպերեան, Տիգրան Մանասեան, Տիգրան Ա. դպրեան («Թէրճիմանը Էֆքերար»ին մէջ) և այլք:

\* \* \*

Հիներէն ալ մի՞այն «Մասիս», վաղեմի յրագրութեան հրապարակէն գէպի նորը ձգուած հաստատեալ սինի մը պէս, կը տեւր բացառիկ պատիւով մը՝ չնորհիւ իր կոկիկ լեզուին՝ փորձառութեան, զգոյշ ըջմտութեան և իր կարող բաժանորդներուն արմատացած յարգանքին՝ այլ գրիթէ միշտ նաեւ նշաւակ նորերու անհանդարտ մատին՝ մանաւանդ Օգոսէն Խոճանարեանի՝ ոգելից գրիչին: Վաս կենդանի բաւերուն վրայ երկարած գեղալ վէճ մը «Փունջ»ի հետ պահ մը հրապարակ իջեցուց Փաթիլէն նոր դարձած իր Պ. Մինաքեանին ու Յովհ. Տէրոյնեցի իսկ իրեն գէմ և Ա. Մ. Գարապաշեանին՝ անտարբերաբար, ու աղմկեց բանասէրները քաջքաւք մեկնութիւններով և փիլիսոփայաններով: Բայց դարձեալ Մասիսի մէջ վայելչա զէս կերեւէին օրուան կարող գրիչներու յօդուածներն ու տեսութիւնները,

գաւառական չնորհքով թելթակցութիւններ և մերթ, ֆրանսական աւարտականներու արատական ճառերուն հաւատարմութեամբ արգամահութիւնները :

Վենետիկի Միթոսիանց հանրէն ալ արդորելով պատուարներ և քրեմնամեակ մը և կը շարունակէր տակաւ ինչ իր մինչ պատարուն ողբերով և որ Հ. Նդուարդ Հիւրմիլի Հ. Արրանսմ Չարեանի և նմաններուն ակադեմական գրիչները կը փայլեցունէին երբեմն, նորմալարգապաններու գրունմներուն քով, իրենց մեծարելի ատորադրութեամբ գեղարուեստական ու պատմական շահեկան ցօղուններ ինչ, պարզ, լեզուաւոր, գիտուն անարհարատու : Զմիւռնայի «Ա. Մ. մուր» ըսկը հրատարակէր ամսէ ամիս իր ամուր և փորձագէտ հեղինակութիւններն և թարգմանութիւնները, պոլական կծող թելթակցութիւնները Շահնաւի ոչ դունուրեք ստուերած բերելով և Պօլսի լրագրութեան և ոչ դուն ուրեք օրինակուելով և օրինագրուելով անդնցմէ : Մատթէոս Մամբրեսնի, Փարիզի Մուրատեան վարժարանին յաջորաշակերտն ու Զմիւռնայի մեծակերպարգէտը, մէկ կողմ թողլով իր քիչ մը դէպ ու պարտադէտ սոգին, 1870 և 1880 եղած էր մեծ թարգմանիչն ու հրատարակիչը արդոր թուրքահայերուն, «Մատիսէն» ալ չափ մը վեր :

1880—1881ին «Թէրճիմանը Էֆքեար» թուրքարաբառ թերթը գրեթէ երեք ամսովը վերածուած էր հայերէնի, մանաւանդ գրաբառ չախարհաբառի զեզուապայտին առիթով, որուն վրայ հրապարակագրեցին հոն պիտաւորապէս Ա. Մ. Գարագաշեան, Զապէր խանճեան (Սիպիլ), Յ. Գ. Մրմրեան, մինչ Քիւզանդ Բէշեան անխնեաց ամատենագրութեան ոչ անքան ներհուն պայծարակի հրապարակագիրը, որ «Թէրճիմանը Էֆքեար» թուրքական խմբագրութենէն անցած էր «Մատիս» թուրքական խմբագրութեան, իր անկերներովը կը գրէր վերոյիշեալներուն արէմ ինպատակ չախարհաբառի դատին՝

Արաւիկայի գիցարանական տնունով, Այս գիցարանական վէճ բառական յոգնեցուց Ա. Մ. Գարագաշեանի և հետեւորդներուն գրաբառեան խումը, և երկուստեք յամառութեամբ մնաց անորոշ և անպարտելի թուանց պէտք մը ձգելուն որ Հոմերոսի մը երգելու համար այս ամուսական քէնը ժիր ու երիտասարդ լեզիք ու գիցուելու ընդդիմախօսներուն Միայն պահմը մտք՝ իրեւարդ խնդայս լեզուապայքաբերին ու թեւորութեամբ Յ. Գ. Մրմրեանին՝ քանաղով պոլսի մը, միմիայն պոլսի մը, այսպիսով մերական հոգիներդ թեւամը և սիրատարակուեցաւ «Չաշակոսկեղէն» գրարութեան» գրաբառ հանդէսը արդուն Ողիսեան էր Ա. Մ. Գարագաշեան երիտասարդացած իմն գրաբառեան այս վէճին ջերմութեամբն և Տեղեւաքն Յ. Գ. Գարագաշեանի հայրագիր վարդապետի գծած չախղին վրայէն՝ քանի մը տարի երկրորդական խմբագրութիւնն ըրաւ պոլսի քանսիրական հրատարակութեան :



Միջոց մը՝ խեղճ մարդուկ մը ձեռնարկեց «Մամուլ»ի նման զաւելջտական հանդէսի մը հրատարակութեան ի կ. Պօլիս, որ տեւեց քանի մը ամիս «Լապտեր Դիտելնեան» անունով: Իսկ «Բուրաստան Մանկանց» պատկերազարդ հանդէսը, ճաշակաւոր ձեւերով և ոճով շարունակեց քանի մը տարիներ՝ մասնաւորապէս մանրերամ տղայոց համար փողտրիկ նիւթերու պատկերներ զուգախառնելով արուեստօրէն:

Լեզուապայքարի անժամ վէճերէն ետք՝ «Մասիս», իր նոր օգնական խմբագիրին ու ընկերներուն երիտասարդ գործունէութեամբ և մեծցունելով իր վաղեմի անտեսադէս ծաւալն, իջեցնելով իր գինը՝ մէկ քանի տարի եղաւ կ. Պօլիսի հրատարակին ամենէն բանուկ և համբաւեալ օրաթերթը՝ խափանուած ըլլալով «Օրապիր»ն: Իր խմբագիր հիմնադիրին մահով և նուազելով «Մանդումէ»ն՝ իր խմբագիրին անօգնական մենութեամբն և դառն յանգիմանագրութեամբ:

Բայց վերջապէս 1883—4ին հիմնուեցաւ՝ զինքն հակակշռող արժանաւոր մեծ օրաթերթին «Արեւելք», ծաւալով և պարունակութեամբ ալ լայն և ճոխ, նաեւ աւելի՛ պէսպիսաւոր, մինչև ցայն օր երեցած օրագիրներու ճոխագոյնն և քաղաքակրթագոյնը՝ տոնմային, վիպական, քաղաքական, լրատուական, առեւտրական, բանասիրական բազմազան ճիւղերով և բովն կ. Պոլսական համեմով պատրաստուած՝ ձեռնհաս մասնագէտներու ձեռքով: Քիչ ատենէն նսեմցուց «Մասիս» յաջողութիւնները, որ և իր հին խմբագրապետին աչքի տկարութեանը պատճառով «Արեւելք»ի շահակցական վարչութեամբ անցաւ քանի մը տարի ետքը բանասէր նոր խումբի մը, հրատարակուելով իբրեւ հանգէս կիսամսեայ և չաքաթական՝ նախ 1884ին և ապա՝ դադարէ մը ետք՝ 1887ին վերստին: Ապա ուրեմն ալ այդպէս իբրեւ հանդէս պարբերական՝ շարունակեց բանասիրաբար ու բանաստեղծաբար այլ և այլ վարիչներու և գրողներու ձեռքին տակ՝ մերթ մանկավարժական, մերթ ուսումնական, մերթ բանագրական և քերթողական:

Միւս օրաթերթերն ալ հետզհետէ խափանեցան կամ ինկան՝ մինչև «Մանդումէ»ն իսկ, բացի «Թէրճէմանը Էֆքեար»էն, «Փունջէն» ու «Աւետարեր»էն: 1883ին սկսաւ «Երկրագունոտ» հանդէսն ալ այլ և այլ գիտնոց ու բանասիրաց խմբագրութեամբ, մինչ «Գրական և խմաստասիրական շարժում» հանդէսը, խմբագրութեամբ Եղիա Տէմիրճիպաշեանի, զգայուն և բանաստեղծիկ ցոլքերով և ամպերով տեւեց բաւական ժամանակ՝ յոռետես ու մելամաղձիկ խմաստասիրութեանց նորանոր ծածանումներ մը շարժեցնելով ճշմարտապէս՝ մասնաւոր համակրողներու մը մտաւորականին հանդէպ: Եղիա Տէմիրճիպաշեան խմբագիրէ մը զատ՝ կրնար ըլլալ գրապէս ու բանաստեղծապէս չա՛տ բան, այլ ինք ուղեց խմբագիր ալ ըլլալ:

Կ. Պոլիսի «Երկրագունդ»ը մասնաւորապէս յիշատակելի է հանդէսներու մէջ, որ նախ Յ. Պարոնեանի, ապա Եղիա Տէմիրճիպաշեանի

անօրէնութեամբ տեւեց բաւական ժամանակ՝ գիտնական և բանաստեղծական ուշագրաւ յօդուածներով՝ գլխաւոր աշխատակցութեամբ Ռ. Յ. Պէրպէրեանի, Եղիշէ վրդ. Դուբեանի, Գր. Զօհրապի և այլոց:

\* \* \*

Իսկ վէննտիկի «Բազմալէպ»ը՝ նոր վարդապետներու ձեռքով քանի մը տարի բանաքննական և ուսումնական ուղղութեամբ շարունակելէ ետքն ըստ առաջնոյն՝ 1900էն ետք անցաւ նորագոյն և երիտասարդագոյն վարդապետներու մը ձեռք, որ ներքին արժէքին ոյժովը վարդապետցին և զարգարեցին անոր արտաքին ոյժը, փայլը միայն, մաքուր և վճիտ սոցաբութեամբ, գեղեցկազարդ կողքով և ընտիր թուղթով . . . : Վիեննայի Միթարեանց «Հանդէս Ամօրեան» ևս՝ ի սկզբան քանի մը տարի ճոխագոյն բանասիրական և բանաքննական ու հնախօսական պարունակութեամբ շարունակելով՝ հետզհետէ հնագրական անհամուռ խտախօսութեամբ և վկայագրութեամբ կորսնցուց իր համոց զանազանակը, և դարձաւ եղաւ սակաւաթիւ մասնագիտաց և հետաքրքիրներու ճարակը:

Յ. Պարոնեան իր վերջին տարիներուն հրատարակեց «Ծիծաղ» և «Խիկար» անուն զտեչտատերեր, ուր այս անգամ հեղինակն համեմներով աւելի քաղցրացուց իր երգիծական սուր գրուածները: «Մասիս» հանդէսն 1892էն սկսաւ դարձեալ շարունակել իբրեւ բանասիրական՝ մերթ կիսամեայ, մերթ՝ չաբաթական, նոր աշխատակցութեամբ Գր. Զօհրապի, Հրանտ Ասատուրի, Ա. Փանոսեանի, Գ. Ֆնտրքեանի, Սիպիլի և խումբ մը ուրիշ նորահաս ճարտար գրիչներու, որ կրցան պահել զայն քանի մը տարի գեղարուեստական բարձրութեան մը վրայ: Իսկ «Ծաղիկ» հանդէսն՝ անցնելէ ետք քանի մը ձեռքերէ՝ իբրեւ գեղարուեստի պարբերական 1895էն մինչև 1897 հրատարակուեցաւ բանաստեղծ խմբագիրի մը ձեռքով, որ յաջողեցաւ հրապուրել փափկաճաշակ ընթերցողներն իր յատուկ տաղանդով: Այսպէս՝ այս նոր թերթերն ու հանդէսները, արշալոյսի խոստումներով և վերջալոյսի իրական վառքերով մը, քանի մը տարուան մէջ բոլորեցին գեղարուեստական շողշողուն ընթացք մը՝ լեզուի անպատրուակ զգացումներու և գաղափարներու, մանաւանդ բազմերանգ բացատրութեանց ու ճարտարութեանց կողմերով՝ գեղեցկութեանց ոսկեզար մը բանալով աշխարհաբառ լրագրութեան և գրականութեան:

Բողոքականք ևս ունեցան հանդէս մը գրեթէ բոլորովին կրօնական՝ «Իւրաքին» անուն, զոր կը խմբագրէր հին քարոզիչ պատուելի մը. իսկ «Աւետարներ» անընդհատ կը շարունակէր իր չաբաթական գոյութիւնը՝ Ամերիկացի միաբնակարի մը անօրէնութեամբ և մերթ Ա. Դարագաչեանի մերթ ուրիշներու խմբագրութեամբ:



1896ին հրատարակուեցաւ՝ հանտապագորեայ նախփոքրագիրը՝ յետոյ մեծագիրը՝ «Մասիս» [\*] վերջական աշխատակցութեամբ Հր. Ա. Բաբունցի, Յ. Գ. Մարմրեանի ու Գր. Զօհրապի, որ գրական ու բանասիրական նոր պաշարներ մը բերին հայրականաց։ «Մասիս»՝ իբրեւ հանդէս սկսաւ դարձեալ 1898ին և շարունակուեցաւ մինչև 1900էն անդին՝ դարձեալ Գր. Զօհրապի, Եղիշէ եպիսկոպոս Դուբեանի, Յ. Գ. Մարմրեանի, Ա. Փանոսեանի, Տիգրան Եղեղեանի, Յովհ. Գալանձեանի և ուրիշ նոր բանասէրներու և բանաստեղծներու խնամեալ յօդուածներով՝ այլ ատկաւ նուագելով անձնական ոտանաւորներու և միօրինակ խմբագրականներու և պատմութեան անձնակ և անկարեւոր սահմաններուն մէջ։

Բիւզանդ. Բէշեան, որ արդէն անուն մը չինած էր իր շարունակեալ ու վճարեալ աշխատակցութիւններովը՝ «Մասիս»ի, «Արեւելք»ի մէջ, 1896ին վերջերքը յաջողեցաւ հիմնել իւրանունը՝ «Բիւզանդիստ» օրաթերթը, որ միւս օրաթերթերուն հետագելովը՝ քիչ ատենի մէջ ձեռք ձգեց նիւթական և քիչ չափ խմայական առուելութիւն մը, ցոյց տալով անհամեմատ մասնաւոր նիւթականը՝ Անգղիական թերթերէ ածանցումներ և առնալին լուրերու նպատաւորութեան առաւելութիւններ ատեն այս նոր թերթին ալ առաջնակարգ օրագիրի մը վարիլ։

Իսկ միւս հանդէսները՝ «Հանրագիտակ», «Լոյս», «Ծաղիկ» և մերթ ժողովներէ երգիծական կերպարանքներով շարունակեցին իրենց լիարժանութեամբ գոյութիւնը՝ փոխ առ փոխ այլ և այլ նոր ու երկատար, յաջող և անյաջող գրիչներու մը խմբագրութեամբ՝ մինչև որ հասան իրենց վերջին վիճակներուն՝ (1906) «Հանրագիտակ»ը դառնաւ անտարբեր ծիծաղականի, «Լոյս»ը՝ խմբագրութեամբ Բարդէյ Ծ. Վրդ. Ի. և պաշտպանութեամբ Ամեն Տ. Օրմանեան Ս. Պարսկաբլի կրօնական իրատեսիրանի, «Ծաղիկ»ը՝ կանանց շարաթիւթերութիւն։

«Սուրհանդակ» 1898ին մէջ հրատարակելու անօրինութեամբ Տ. Ճիւլէէկեանի իբրեւ օրաթերթ, և ըստ լատականին յաջողութիւն գտաւ ի սկզբան իբրեւ թանկ օրաթերթ մասնաւոր Քերոքէ Լիմոնձեանի (Լիոնքէ) իւրօրինական համեղ յօդուածներով, զոր մայրաքաղաքի եսնաժ ժողովուրդն և օտար լեզու չգիտցող վաճառականները կը կարդային շատ ախորժով, այլ երբ 1900էն ետք ուրիշ 10 փարանոց օրաթերթ մըն ալ՝ «Մանգոլմէ»՝ երեցաւ իբր հաւասարարժէք, բնաբար մասամբ նուագեցաւ իր յաջողութիւնը՝ Այս վերջինին գլխաւոր խմբագիրներն եղան Եր. Տ. Անդրէասեան և Միսաք Քոչունեան, որոց քիչ չափ լուրջ յաջողութիւնները փախաւքիլ էր որ

[\*] Նոյն տարին միշտ մը՝ «Մասիս» հրատարակուեցաւ Արմաշի միաբաններուն և Օրմանեան Սրբազանի կողմէն։

չվթարէին առնթեր խեղկատակ գրիչներ իրենց գռնիկ լեզուով: [\*]  
«Արեւելեան Մամուլ» ևս իր հիմնադիրին վախճանէն հոռե՝ շա-  
րունակեց վարչութեամբ իր զաւակին, Հրանտ Մամուրեանի, և Ռ.  
Յ. Պէրպէրեան, Գէորգ Պուպի, Յ. Ալփիար, Կ. Նուստարգ, Ն.  
Ներսէսեան, Կ. Ստեփանեան ու նմաններ աշխատեցան անդալի բնել  
հոն հիմնադիր խմբագրին յաւիտենական բացակայութիւնը:

\* \*

Ահա այսչափ՝ 1847էն ցայսօր հրատարակուած թրքահայ լրագիր  
ներու ծագումին, վարիչներուն, կազմութեան և համապատասխի՝  
նկարագիրներուն վրայ: Յաւելուածիս մէջ չունինք դիտաւորութիւն  
ոչ լրագրաց պատմութիւն մը յօրինել[\*] ոչ ալ անոնց ներքին դրա-  
կան և իմաստասիրական արժէքն ի վեր հանել բանաճննաբար և  
մանրամասնաբար: Միայն՝ յաւարտ գործիս՝ կը փափագինք ասով  
հին, միջին ու նոր մեր լրագրութեան վրայ գործնականի ու բարոյա-  
կանի համեմատութիւն մը ընելով՝ թեւադիր ըլլալ նորերուն բարիին,  
համեստին, լաւագոյնին: Հասարակաբար նկատելով մեր դիտողութեան  
միջակէտէն՝ թէ՛ սկզբունքի, թէ՛ բարոյականի կողմէն, գէթ մինչեւ  
1860, մենք կը գտնենք հին լրագրութիւնն աւելի՝ ամուր, աւելի՝  
ներհուն և վայելուչ, թէպէտեւ յաճախ, ինչպէս և արդի լրագրու-  
թիւնն ալ, զուրկ գործնական, արուեստական և բարոյական նկա-  
րագիրէ, որով գործի մարդոց յարաբերական նպաստաւորութենէ մը  
միշտ հեռու և միշտ սահմանափակեալ վարդապետական վարժապե-  
տական գաղափարներու մէջ:

Կրօնքի խղճահար ատեանէն, գրաբարի լուրջ դպրոցներէն, նաեւ  
եւրոպական ակադեմիկ մարզանքէն ելնող այդ հին հրապարակագիր-  
ներուն վրայ՝ կ'երևին ստեպ խղճմտութեան, համեստութեան, չափ-  
գիտութեան, պատուազգայութեան խանդաղառելի նշանները: Միշտ  
պատկառոտ բարոյից հանդէպ՝ անոնք կրցան, ի սկզբան իսկ անդ,  
սպասարկել իմացական համեստ բարձրացմանց ղարդացումներու, բա-  
նասիրական, եկեղեցական, կրթական, վաճառականական ու երկրագոր-  
ծական նախաձեռն գրուածներով: Նախնեաց մատենագրութեանց վեհ  
արտագրութիւններով և Յ. Յ. Պարթեւլումիի (Ողեւորութիւն Անախարս  
եայ յԵջատրա՝ աննման թարգմանութեամբ Հ. Եղուարդ Հիւրմիւղեանի)

[\*] Ո՛րչափ շատ՝ այնչափ անհամ, որչափ անպատկառ՝ այնչափ զգուշալի ծագրա-  
կան ու զաւելուական գրուածք միշտ նշան մը եղած են ժողովուրդներու անկումին և  
պատճառ անբարոյութեան, ըստ երևելի գրողներու և պատմագիտաց. (Տե՛ս Յ. Ոսկե-  
բերան՝ մեկնութիւն Մատթէի, Պոսիւէ խոսք վասն տիեզերական պատմութեան, Թ.  
Մովզըն՝ պատմութիւն Հռոմէական և այլին):

[\*\*] Այս գիտի պատմութիւն մը լոյս տեսաւ Վիեննայի Միխմարեանց տպարանէն  
19րդ դարու վերջերը՝ ձեռամբ Հ. Գրիգորիս Վ. Քալէմբերի:

[Ա. Եռամսեայ]



Շաղոպրիանի, Կիզոյի, Լամբնէի, Էմէ Մարդէնի, Ֆենելոնի, Պոսի-  
էի, Ռոյէնի, Թիէրի ու նմանեաց բճերովն և դապաւարներովը մար-  
դուած, անոնք զխոցան և ի վեր դրին համեստ օգտակարն համեստ  
հաճոյքին լծելու արուեստն՝ ուսանց երես տալու արտառոց և կործա-  
նարար հաճոյքներու և անոնց գլխովցունող զերասաններուն: Կը-  
րօնքի մասերուն՝ անոնք կը վերաբերուէին միշտ մեծարոյ երկիւղա-  
ծութեամբ մը, մանաւանդ Միսթարեանք, Յովհ. Տէրոյենց և մա-  
սամբ Կ. Ս. Իւթիւճեան՝ իր քիչ մը թուլցած խիղճին չափով: Ընդ-  
հանրապէս ամուսնացեալ և նախանձախնդիր ընտանեկան պատիւի՝  
անոնք կը խօսէին գիտակից գուրգուրանքով՝ և նուիրական զգու-  
շութեամբ, ու կը գրէին նոյնպէս եկեղեցական և ընտանեկան նիւ-  
թերու վրայ: Ընդհանրապէս ժողովուրդին բարձր ու միջին դասե-  
րուն գաւակ և ընդհանրապէս մայրաքաղաքայի՝ անոնք յօժարակամ  
կը զոհէին ընկալեալ բարոյական սկզբանց իրենց անձնական չափը,  
և հրապարակի վիճաբանութիւնք հազիւ երբեմն իվեր կերեւէին՝  
միշտ պատրաստ ու պատկառ կալով ի կարևորս համերաշխութեան  
մը. կարգալու է՝ ըմբռնելու համար այս ոգին՝ 1864ին կրօնական  
ժողովի առջև Տէրոյենցի ու Կ. Ս. Իւթիւճեանի միջև բանակցու-  
թեան մը ատենագրութիւնը, որ տպուած է նոյն տարուան «Երե-  
ւակ»ներուն մէջ:

Այս հին հրապարակագիրներէն երեցագոյնն իր ստորագրութեամբ  
խոստովանած ալ է տեղ մը՝ թէ «Ես երբեք չեմ մտածեր իմ անձնաւ-  
կան չափս և հոգերս. ես Աստուծոյ ձգած եմ հոգերս»: Եւ բացի «Ե-  
րեակ»ի ու «Մասիս»ի միջև տեղի ունեցած երկարատև վիճաբանու-  
թենէ մը՝ թուրքահայ հին լրագրութեան մէջ չենք հանդիպիր ուրիշ  
աչքի զարնելիք արտուղի բանալէճի մը, ուր տիրող կիրքն ըլլայ մեծ  
մասով անձնականը:

Այս երեց խմբագիրներու վախճանն ալ պոսակեց իրենց շինարար  
երկիւղածութիւնն անփոխաբխնելի վարձքով մը: Կրնանք վստահու-  
թեամբ ըսել իրենց համար՝ թէ Աստուած պոսակեց իրենց կեանքը  
քաղցր, համեստ ու արդիւնաւոր առողջութեամբ ու երկարակեցու-  
թեամբ, վարձատրելով այսպէս զանոնք ամէնէն չքնաղ պարգևով՝  
կորովի կեանքով: Ղուկաս Պալթաղարեան՝ «Արշալոյս»ի խմբագիրը՝  
իր անդրանկական գործունէութիւններէն ետք կնքեց իր ասպարէզն  
անխտոր ծերութեամբ, նոյնպէս Կ. Պոլսեցի և Զմիւռնացի ջոջ  
տպագրիչները՝ Յովհ. Միւնէնտիսեան և Տէտէեան: Յովհ. Տէրո-  
յենց 150ի չափ երկասիրութիւններ ձգելէ ետք՝ անստգիւտ չունեւո-  
րութեամբ ապրեցաւ 87 տարի՝ գրելով, կարդալով, առաջնորդե-  
լով՝ Տոք. Սեբաթիէն Էֆ. նոյնպէս աւագանի պատիւներով ապրե-  
ցաւ 84-85 տարի: Վարդան փաշայ՝ սոսնց մօտ: Կ. Ս. Իւթիւճեան՝  
ձգելով 25-30 հատոր ընտիր թարգմանութիւններ՝ միշակ դիրքով  
մը և աննուազ պատիւով ապրեցաւ մինչև իբր 80: Նոյնը կրնանք

ըսել նաև հրապարակագիր բանասէր Կորովի Խ. Պ. Միսաքեանի և անուրի Ստ. Ոսկանեանի համար: Հ. Արսէն Բագրատունին, Հ. Գաբրիէլ Այվաշլուքի ծանօթ են շատերուն, թէ ի՞նչպէս ասլիքցան և ի՞նչ փառքով վախճանեցան: Նոյնպէս Մատթէոս Մամուրեան՝ բազմաթիւ երկասիրութիւններով փառաւոր յորելեան մը տօնելէ ետք՝ վաշելեց հասարակաց յարգանքը մինչև 70 թղ. տարիքը: Ա. Մ. Գարագաշեան նմանապէս՝ թէպէտ տիրացած բաւական հարստութեան մը, սակայն չկրցաւ կամ չուզեց ալ վայելել այդ հարստութիւնը: Կրօնաւորի չափեալ կենցաղով մը և անդուշ շահաբեր գործունէութեամբ ասլիքցաւ 80 էն աւելի՝ իր վերջին տարիներուն ամփոփուելով իր խորշած եկեղեցիին ծոցը: Յովհաննէս Հիւսարեան անստգիւտ ծերութեամբ մը կը տանի դեռ իր անաղմուկ գործունէութեանց ոսկի բեռը մօտ՝ կարծենք 85ի: Եւ այս կնքեալ պարագաներն ինքնին բաւական պերճախօս չ'են՝ պատմելու ճշմարիտ աշխատաւորներու սահմանուած ճշմարիտ և անկասկելի վարձքը, զոր ո՛չ ժանդ ոսկոյ, ո՛չ ցեղ և ո՛չ ուտիճ ապականեն:

Վերոյիշեալներէն շատերը կը վայելէին նաև՝ առանց քծնելու՝ կարող անձնաւորութեանց մեծարանքը: Յովհաննէս Տէրոյեանց՝ քանի մը ամիրաներու և արհեստավետ աղաներու բազմոցին վերին անկիւնէն կը ճօճեցունէր իր միաքարշ մականը, Տօք. Սերովիչէն՝ արժանացաւ մինչև մեծամեծներու մօտերիմ՝ խորհրդականութեան. Վարդան փաշայ՝ իր պաշտօնակից աւագանիին, հռոմէական և ոչ հռոմէական կիրթ ու բարձր դատու հայերուն մեծարելին էր: Կ. Ս. Իւթիւճեան՝ Պետրոս Խորասանճեանի, Սերովիչէնի և նմաններուն սիրելին եղած էր. Ա. Մ. Գարագաշեան՝ ազգին բարեկեցիկ ուսումնասիրաց և ամերիկացի գնահատող միախոնարներու բացառիկ յարգանքը վայելեց մինչև վախճանը:

Այս երեց վարիչներուն յաջորդեցին՝ 1860էն ետք՝ մեծ մասով յախուռն կրտսեր գրիչներ, որ թէպէտ ըստ երևոյթին նոյնքան անշահախնդիր, այլ հմուտեան, պատկառանքի, չափաւորութեան կողմաբէն շատ ետ մնացին անոնցմէ, որով իրոյնց ինչ և իցէ գործը չունեցաւ տեսական կնիք ա իրենց կեանքը չարժանացաւ նշանակելի պըսակի: Մինչև 1875 ուստատուն եռանդով մը տեսցին անոնք և՛ վաղանցիկ օրական փառքէ ու յազուրդէ դատ՝ ոչինչ չահեցան ու ձգեցին տեսական, իրենցմէ շատն՝ և ոչ իսկ երկասիրութիւն մը թուուց՝ որ ըլլայ արժանի մօտաւոր իսկ ապագայի մը ընթերցման:

1880էն ետքն է՝ որ ծայր սուաւ քիչ մը աւելի լուրջ և հաստատ լրագրութիւն մը հետեւող՝ առտո՞ քիչ շատ տրամաբանող, այլ այս երևութական յառաջդիմութիւնը նսեմացուց հանդէպ անձնականին, երկտասարդականին, կուսակցականին՝ փայլուն զարտուղութիւններով, որ խոտոր կը համեմատին հասարակաց օգուտին նուիրեալ արուեստի մը սահմաններուն: Արդարեւ՝ բանաստեղծութիւն, բանա-



սիրութիւն, քննաբանութիւն, լայնարձակ տեսութիւններ զանազան խնդիրներու վրայ՝ մշակուեցան յաջողապէս նոր գրիչներէ, այլ մեծ շարժառիթը գրեթէ միշտ ետադրելու ըստաշն էր ու տակաւ տեղի տուաւ հրապարակագրական աղնութիւնը. գրեթէ միշտ երկրորդական երրորդական ու չքական կարեւորութիւն մը ունեցան կրօնական ու բարոյական սկզբունք, և գրեթէ միշտ պակսեցաւ աղնուական այն մեծ սկիզբը, որ պատիւ կըսուի և վեհ այն քանոնն աղամանդեայ, որ մաքուր խղճմանք կը կոչուի: Գեղարուեստի կողմէն ալ՝ 1885էն 1900 երկցող գլխաւոր հանդէսներն յաջողեցան արդարեւ յօրինել գրական գողտր ոսկեղար մը եւրոպական մանաւանդ ֆրանսական՝ նորագոյն հանճարներու ճարտար նմանութեամբ, այլ բուն օրագրութիւնն՝ հակառակ իր հարկեալ յորդութեանց՝ մեծ մասով դարձաւ եղաւ ալբիւր մը ապավայր շահագիտութեանց ու փառասիրութեանց և ատենան մը նոր գրողներու պատանի մուսաներու համար՝ ցոյցի, պերճանքի, շատխօսութեանց, սիրասպասուկութեանց և անձնական սղա՛յ յազեցումներու, ուր ինչ և իցէ կերպով՝ մանաւանդ դատաւորաբար ու բանաստեղծաբար՝ խօսիլն ու գրելն՝ յալթանակ մը, առաքինութիւն մը, և լսելը՝ պարտութիւն մը կամ ոճիր մը կը համարուի:

Այսպէս՝ հոս կնքելով թուրքահայ լրագրութեան իրել 60ամեայ գործունէութեան վրայ մեր այս համառօտ յաւելուածը՝ կը մաղթենք առ հասարակ մեր հրապարակագիրներուն համար բարոյական ու իմացական աւելի մխիթարիչ, յառաջադէմ ու համեստ յաջողութիւններ՝ հետեւելով երիցագոյն նախորդաց արժանաւոր մասին գծած մաքուր շաւիղին և օգտուելով անոնց քիչ շատ աղնական օրինակէն:

Ըշմարիտ յաջողութեան պայմանն է՝ շաւ կողմէն շարունակել կատարելագործել նախորդաց անկատար ձգածը: Ո՛չ եթէ մենք ենք որ վեր կը բռնենք արմատը, այլ արմատն է՝ որ վեր կը բռնէ մեզ:



ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՒԱՏՔԸ

Երբ ուշադրութեան առնենք անցեալին ու ներկային բոլոր կրօնները, պիտի տեսնենք, թէ ամէն աւելորդապաշտութիւն ունեցած է իր ՀԱՒԱՏԱՅԵԱԼԸ (croquant): Իրենց դիքերէն մերկացած բոլոր մեհեանները, որոնք երբեմն ու այսօր մեռելային սոսկումով մը շրջապատեցին մարդկութիւնը, այդ պարագան կը հաստատեն: Պարտականութեան հաւատքը միայն չունեցաւ իր հաւատացեալներու բաւարար թիւը, որովհետեւ ան անդրշիրմի կրօններուն պէս ո՛չ երազներ ծնցուց մարդկային հոգիէն ներս, և ո՛չ ալ շողովիչ պատրանքներ տուաւ, որովհետեւ անոգսք մնաց բնութեան օրէնքին նման, և գութի ո՛րեւէ անձրեւ չկաթեցուց պարտազանցներու մրոտած ճակտին վրայ: Պարտականութիւնը ո՛չ վերացականութիւն մըն է, և ո՛չ ալ բնազանցութիւն մը, շօշափելի ճշմարտութիւնն իսկ է ան. հետեւաբար պարտականութեան հաւատքին ուրիշ բառով պիտի կըրնանք ըսել ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՀԱՒԱՏՔԸ: Անոնք որ իսկական մարդերէ պահանջուած նկարագրի ոյժը չունին, պիտի սիրեն շարունակ խարուիլ, որովհետեւ այդ խարկանքը մարդս կը խնայէ այն տագնապներէն, այն մաքառումներէն, որոնք անհրաժեշտ դարձած են՝ միշտ՝ պարտականութեան և ճշմարտութեան զոհուած հոգիներուն:

Ձենք ուզեր քանդել բնաւ կեղծիքի ու աւելորդապաշտութեան սեղանները, որովհետեւ բիւրաւոր մարդիկ առանց հաւատքի պիտի մնային այն ասուն. չենք ուզեր քակել երազկոտ բնութեանցութիւններու խանձարութիւն մէջ օրօրսւածներու ոսկեղէն կապերը, որովհետեւ հազարաւորներ այդ խանձարութեան գութս տեղ մը պիտի չկըրնային գտնել իրենց գլուխը հանգչեցնելու. բայց գոնէ անոնց համար, որոնք իրենց կուրծքին խորը «գիտակցութեան սրբալայր» մը ունին, գոնէ անոնց համար կուզենք մատնանշել պարտականութեան հաւատքը, որ ներկային ու ապագային ալ հաւատքը պիտի մնայ, երբ ծէսերը ածինաացած ըլլան ա՛լ տաճարներուն ծոցը, ճիշտ ա՛յն տակօրներուն պէս, որոնք մոխրացած են այսօր անհատական հոյադամբաններու (mausolée) խորը: Երկուքն ալ — հոյադամբանն ու տաճար — իրենց բոլոր շքեղութիւններով, գեղարուեստական բոլոր նորութիւններով, պիտի մնան անցեալին յիշատակները, մէկը իբրեւ անհատական գերեզման, և մէկը իբրեւ դարաւոր սնտփններու, դարաւոր երազներու, ածինաացած պատրանքներու հսկայ ու ընդհանրական շիրիմը:



Հասարակաց հաւատալիքը, պատրանքներու բովերն մէջ, ինքնախաբուրթեան նոյնութիւն մը կըստեղծէ ամբոխին համար: Ճշմարիտ հաւատացեալները, սակայն, չեն անոնք, որոնք կը հաւատան անոր համար, որ ուրիշներն ալ կը հաւատան: Ուրիշներուն հաւատալը, զօրաւոր և հիմնական պատճառ մը չկրնար ըլլալ միշտ ալ հաւատալուն: Ճշմարիտ հաւատքը անհատական համոզումէն կ'ծնի: Հետեւաբար անոնք միայն կրնան ճշմարիտ հաւատացեալներ նկատուիլ, որոնք անձնական փորձաքննութիւն մը իբրեւ միջոց կը ծառայեցնեն: Հասարակաց հաւատքին կարենալ մասնակցելու համար: Հոս է, որ կ'սկսի կռիւը, անհատին պարտականութեան հաւատքը, որ պիտի հակաէ հասարակաց հաւատալիքի միութեանը: Բայց ապահով ըլլանք, «երբեմն կռիւը, նոյն իսկ մարդկութեան համար մութեանէն աւելի ապահով միջոց մըն է՝ յառաջդիմելու»: Երբ այս ճշմարտութիւնը որդեգրենք, այլեւ դիւրին կըլլայ ըմբռնել քննադատութեան դերը նոյն իսկ կրօնական հաւատալիքներու, աւանդութիւններու, սովորութիւններու կալուածին մէջ: Հոս այլեւ նախապաշարումի համազօր, ու սկոլտական eclectique փիլիսոփայութեան sens communը կը դադրի իր գոյութեան իրաւունքէն, պարզապէս ըլլալու համար ձեռնադատուած ու խորհող անհատի bon sensը, որ քննադատութեան անհրաժեշտ պայմաններէն մէկն է: «Հայր Հեռեկոյաց» կանոններուն 26րդը կ'ըսէ. «Եկեղեցւոյ հաւատ իմանալի է, և ո՛չ քննելի. իսկ կրօնքն քննեսցին բոլորովին»: Ահա հոս փնտռելու ենք բուն իսկ քննանադատութեան աղբիւրը: Քննադատութիւնը ազօրիքի նմանցուցած են յաճախ. աղացուած ու ալիւր եղած ցորենը, չրունիւր այլեւ, քննադատութիւնով վերլուծուած հաւատալիք մը ալիւրի վերածուած ցորեն մըն է կըսեն շատեր, կը կորսնցնէ իր աճումի զօրութիւնը, իր ինքնաբերութիւնը (spontanéité) և կ'ըլլայ հասարակ նիւթ մը: Կը սուղանէ, բայց չհրապուրեր. կը գոհացնէ, բայց հիացում, պատկառանք չազդեր բնաւ: Իրաւ, բնագէտը որ հմտութիւնը ունի բնական օրէնքներուն, իրաւ է որ ո՛րէ հոգեկան վայելք չզգար ծիածանի մը մեղկ հիւստեածքէն, որ կը նշմարուի խոնաւ օդի մը մէջէն սահող ճառագայթներէն. իրաւ է որ բուսաբանը բան մը չզգար վայրի ծաղիկի մը բաժակը թերթատուած ատեն. կամ կենդանաբանը՝ փեթակի մը խորը շարուած մեղրածոր բջիջներէն: Անձանօթին հրապուրը ընդհակառակն, եթէ իր մէջ ունի տարտամ ու վայրենի հրաշքը բոլոր անհեթեթութիւններուն (absurdité), ճանչցուած հրաշալիք մը, զբական ճշմարտութիւն մը իրմէն կը ճառագայթէ փթթինազարդ սքանչելիքը բոլոր վսեմութիւններուն, որոնցմէ այլեւ անբաժան կ'ապրի գիտակցող հոգին: Եւ եթէ աղացուած ցորենը՝ իր աճումի զօրութիւնը կորսնցնելէ վերջ, իբրեւ սնունդ մեր մարմնը կ'ապրեցնէ, ու կը նոյնանայ անոր հետ, քննադատուած ու վերլուծուած հաւատալիքն ալ՝ իր ալանդակութիւնը մերկանալէ վերջ՝ կը սնուցանէ մեր հոգին,

կ'իմեցանայ անով, և մեզի կուտայ ճշմարտութեան վայելքը: Ով որ չէ՝ ընտելացած քննադատական վերլուծումին, և ինքզինքը կաշկանդած է մտտի աւանդութիւններով միայն, «մանուկներու կը նմանի, իր ուժին սահմանը չէ կրցած զգալ տակաւին»: Եւ մանուկի մը համար ճշմարտութիւնը գոյութիւն չունի դեռ, հրապոյր մը աւելի կ'արժէ քան այդ ճշմարտութիւնը: Մարդկութեան մանկութիւնն ալ միեւնոյն ճամբով քալած է, մինչև ա՛յն թուականները, ուր մարդ ալեւս ստիպուած է իր ձեռքով խորտակել զինքը ցանցող խորհուրդներուն, երազներուն, ցնորակոծ շոշականքին հիւսկէնները, խորհրդաւոր ճոխութիւններուն տեղ, ընդունելու համար բուն իսկ ճշմարտութիւնը, քանի որ ալ աւետարանական սկզբունք մըն է սա, թէ «ճշմարտութեան դէմ կարողութիւն մը չունինք, այլ ճշմարտութեան համար» (Բ. Կորնթ. ԺԳ, 8): «Աստղաբաշխութեան (astro-nomie) նոր սկսած աստիճան, կըսէ Հրքսի, անտուան աստղերը հըրճունքի պարերդ մը կը լսեցնէին, և երկնային ձեռքեր կը վարէին մոլորակներու ընթացքը: Այսօր աստղերուն ներգաշնակութիւնը կը լուծուի հեռաւորութեանց քառակուսին խտորնակ ծանրակաւութեան (gravitation) օրէնքով, և մոլորակներուն ծիրը (orbite) կը վերածուի ա՛յն օրէնքներուն, որոնցմով տղու մը ձեռքով նետուած քարը կուգայ պտտահանի մը անկախին խորտակել: Փայլակը Տիրոջը հրեշտակն էր, բայց այս վերջին աստիճանը, գիտութիւնը դաշն մարդուն խոնարհ ալգարարը չինեց»:

Ահա երկու բառերով մէջ ամփոփուած այն տարբերութիւնը, որ կը տեսնուի բունտղ ցոբեմին ու աղացուած ալիւրին միջև: Այս տարբերութիւնը վերլուծած աստիճանիս, կը փորձուինք հարցնել. թէ ո՞վ աւելի արժանիք, ո՞վ աւելի ինքնագիտակցութիւն ունեցաւ. ա՛ն որ աստղերուն մէջ երաժշտութիւն, և մոլորակներու շրջանին մէջ հըրճատակային մատ տեսաւ, ու սասկաց, թէ ա՛ն, որ իրերը իրենց բընտկան վիճակին վերածեց, ու ամենէն հեռաւոր մարմիններուն մէջ անդամ տեսաւ ա՛յն օրէնքը, որ ամէն վայրկեան մեր վրայ ու մեր շուրջ կը գործէ: Հաճոյքի վայրկեաններուն մէջ, ուր հոգեկան վաշելք մը կուղենք ըմբռնանել տալ մենք մեզի, հոգ չէ՛, թոյլ տանք որ մեր բանաստեղծ հոգին, մանուկ մարդկութեան երազներովը օրօրուի, և լսէ ա՛յն միեւնոյն երաժշտութիւնը, որ Դաւթի Սաղմոսաբանին լարերը թրթռացուց, թոյլ տանք, որ մեր միտքիք շարատենջութիւնը փայլակին մէջ տեսնէ այն լուսաթիւ հրեշտակը, զոր Մովսէս ու Արքայաճամ տեսան, մին մօրենիին ու միւսը իր վրանին առջև, բայց խորհինք թէ մարդ երազելով չկրնար լաւականանալ, խորհուրդը, ճշմարտութեան ծարանը, բնական օրէնքներու իրականութիւնը, շարունակ զինքը իրենց պիտի քաշեն: Եւ զգոյնական անուրջի մը զարթնումէն վերջ, մարդ պիտի ստիպուի ինքզինքը և զինքը վաշտոյ օրէնքները փնտռել բոլոր ա՛յն երեւոյթներուն մէջ, որոնք ար-



համարհուած էին երբեմն, և որոնք վարագոյրներն են միայն յաւիտեանական ճշմարտութիւններուն վրայ ձգուած :

Հոս բուն իսկ մարդկային պարտականութեան հաւատքը կ'սկսի գործել, և այդ հաւատքին, այդ ոյժին գործաւորներն անոնք են միայն, որոնք գիտեն կշռել ճշմարտութեան արժէքը և անոր դերը՝ մարդկային կենսական և անհրաժեշտ յառաջդիմութեանը մէջ : Այսօր, եթէ մենք վերլուծենք մեր շուրջը գտնուողներուն հաւատալիքները, պիտի չկրնանք գտնել թերեւ մէկը, որ ճշգրիտ, որոշ և բաւարար եղանակով մը մեզի պատմէ իր հաւատացածը : Կը խնդանք, երբ մեզի կը պատմեն, թէ հրաբուխներու մօտ ապրող վայրենիները այնպէս կը կարծեն, թէ «այս լեռներուն կրակները, իրենց նախնիքներուն խոհանոցին մէջ վառուած կրակներն են» : Չենք կրնար ինքզինքնիս գտալ, երբ կը լսենք թէ Եսքիմացիները, ո՛ր և է նուազարան կամ երաժշտական գործիք՝ անասուն կը կարծեն, և կը հաւատան, թէ կառքն ալ ձիերու նման պէտք ունի խոտ ուտելու : Շատ հեռուները չերթանք, սակայն, այդ տեսակ հաւատալիքներ վնասել գտնելու համար, մեզմէն անոնք, որոնք կոյր թշնամիներն եղած են քննադատութեան, և գիտական վերլուծումին, մէկ մէկ Եսքիմացիներն իրենց ըմբռնումներուն մէջ . խորտակէ անոնց մէկ նախապաշարումը, և ալ բան մը պիտի չգտնուի, որուն կարենան հաւատալ : Ասկէ առաջ գրուեցաւ, թէ կին մը բացարձակ անհաւատ մը եղած է, լսելով, թէ Աւետարանի աղքատ Ղազարոսը իրական անձնաւորութիւն մը չէ : Գանինքր ունինք այսպէս, որոնք կը հաւատան տառնց գիտնալու, թէ ի՞նչ բանի կը հաւատան, որովհետեւ իրենց մէջ պարտականութեան հաւատքին գիտակցութիւնը չէ արթնցած դեռ :

Այդ գիտակցութենէն զուրկ մարդը, աւելի արժէք կուտայ ենթադրութիւններու, և երեւոյթի մը հանդէպ մտքին եկած առաջին կարծիքը իբրեւ ճշմարտութիւն դառանելու հակամէտ կը գտնուի : Անոնք ենթակայներն (sujet) են ա՛յն կրօնքին, որ կարգ մը բնականացական վարկածներ (hypothèse) իբրեւ իրականութիւն կը հրամցնէ իր հեռաւորներուն, և չթողուր որ տեսնեն յստակօրէն, թէ «արդի գիտութիւնը աւարտած է կրօնական վարկածներու աւերածը (ruine)», բուն հաւատքին տալու համար իր լրութիւնը, իր փառքը, իր կաշուածքը, ուր այլեւ չկարենայ մանկ ո՛չ յետամուտ աւանդականութիւնը, և ո՛չ ալ կաշկանդող նախապաշարումը : Վերջերս գերման բարձրաստիճան եկեղեցականի մը կողմէն Արդիականութեան կոնդակին դէմ գրուած սա տողերը, դարուն ոգին ճշգրտօրէն կը թարգմանեն, « . . . արտաքին աւանդութիւնները խառնուած են Բրիտանիական Յայտնութեան, և Բրիտանիական ուսուցման մէջ : Այս պատմութիւնները կրնան հրապոյր տեսնուիլ կիներուն համար, կամ քիչ ուսեալ և չիմական մարդոց համար, բայց անոնք որ միաւորական բարձր

մշակութիւն ունեցող հաւատացեալներու շարքին մէջ կը գտնուին, կուգին որ իրենց հնազանդութիւնը պատճառքանեալ ըլլայ և կ'ըմբոստանան միամիտ հոգիներու միայն հաճոյ եղող այս աւանդութիւններու դէմ»։ Ո՛չ կրօնքին և ո՛չ մարդկութեան նպատակը անհատները դէպի ետ մղել չէ՛ բնաւ. ժողովուրդէն ծնած քահանան, իր անցեալի ներշնչութեամբ պիտի փարած, եթէ մասնաւոր միտումը ունի զայն վերապրեցնելու, ալ մեզ չկրնար հետաքրքրել։ Հրէական և յունական հին պատմութիւնները մեզի ցոյց կուտան քահանային մօտ մարգարէն, որ անցեալին աղետաբեր սովորամոլութեան դէմ բողոքող ձայնն եղաւ, ապագայի, յառաջդիմութեան և զարգացումի ներշնչումովը աւելցուած, որ կ'երազէ ու կ'ընդունէ մարէ, կը թափանցէ ու կը տեսնէ անհատներուն բուն կոչումը, իրենց մարդկայնական պարտքը կատարելու սահմանուած։ Բոլոր գիտունները, որոնք իրենց դարուն սքանչանքը խլելու խիզախութիւնն ունեցան, գիտեցաւ շարքով մը, բոլոր հոգետեսները, որոնք իրենց դարերու ապականութիւններու ծոցը՝ ապագայի մաքրութիւններն ու վսեմութիւնները քարոզեցին, բոլոր հետադարձները, որոնք անձանցիկ աշխարհներու գլխին համար վտանգաւոր ճամբորդութիւններ կազմակերպեցին, ինծի համար մարգարէներ են, եթէ այդ բանը իր մէջ կը խտայնէ ապագայի ռահվարայի մը կոչումը, և բոլոր այն թրթռումները, որոնք ներկային մէջ ապրող հոգիին խորը ապագային գաղտնիքները կը խօսեցնեն։

Այսօր մանաւանդ, եթէ մարած է ամենուս մէջ պարտականութեան հաւատքի ներշնչումը, պատճառը այն է որ, միայն քահանան վարած է մեզ, ու մարգարէական օծութիւնը դադարած է մեր սրտին խօսելէ։ Զայնքերու ներհակութեան մէջ մարդ գտնէ ընտրութեան մը պէտքը միայն կ'զգայ. բայց երբ քահանային ձեռնադրումը արտաքինութեան հանդէպ չկայ ձայն մը, որ մեզ իր կողմէն՝ դէպի մեր կոչումը առաջնորդէ, հո՛ն ալ կ'իյնանք ա՛յն սովորամոլութեան մէջ, ուր ո՛չ մէկ ձայն կը գօտեւորէ մեզ, տարբեր ուղղութեան մը մէջ փորձելու մեր կարողութիւնը։ Մարգարէական շունչին տակ, այսինքն սոսկ ապագայի տեսլականովը օժտուած պարտականութիւնն է, որ կրնայ արդիւնաւորել մեր կոչումը։ Ասկէ դուրս եղած ո՛չ մէկ ձգտում, ո՛չ մէկ խիզախութիւն, նոյն լակ ո՛չ մէկ կրօնք կրնայ մեզ ներշնչել, ու տալ մեզի ա՛յն միտ հաւատքը, որ պարտականութեան և ճշմարտութեան հաւատքը ըլլայ։





## ՅԻՇԱՏԱԿ ԲԱՐԵԿԱՍՈՒԹԵԱՆ

Առ Տիկին ԴՐ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

Հոգի մըն ես դուն, ու ես քու քոյրդ եմ. Աստուած մեր հայրն է, ու սէրը մեր մայրը: Իմ հոգիս կ'ըմբռնէ քուկդ, ա՛լ ո՛ր և է քօղ չիկայ մեր երկուքին միջև: Կ'հասկնամ քու արցունքներդ, կ'հասկնամ հառաչանքներդ: Հոգիիդ օղային ծնունդներն են քու արցունքներդ որոնք կ'արտահոսին իբր վշտի կաթիլներ՝ ողբադին հառաչանքներուդ հետ խառնուած:

Լսէ՛ ինձի, ո՛ր գերընտիր հոգի: Ո՛րքան աւելի բարձրանաս մարդկութեան վերեւը, ա՛յնքան աւելի կուգես սիրել ու խորհիլ: Խնդ՛ հոգի, մէկ կողմը անէութիւնը պիտի գտնես, միւս կողմը նախապաշարունակները: Ի զուր պիտի թափառիս հոգիիդ մթամած ամայութիւններուն մէջ՝ հոն գտնելու համար սիրոյ արձագանգ մը: Շրջանդ կատարելէ ետք՝ կանգ կ'առնես վաստակաբեկ, ու սիրող խոցոտած կ'մրմնջես. Ոչինչ:

Եթէ յաւիտեանապէս վերակիս քու յուսահատ քայլերդ, միշտ նոյն ոչինչը կը գտնես որ յեղ կ'անէացնէ: Գիտե՞ս ինչո՞ւ: Մտի՛կ ըրէ: Աստուած ուղեց բարձրացնել կաւով ու միտով յօրինած իր մարդը: Հրամայեց անոր որ խորհի և իմացակախութիւնը տուաւ անոր: Հրամայեց սիրել, և սիրոյ վառարան մը սպտաբաւորեց անոր համար: Բայց իր կիսաւարտ գործը իր աստուածային ձեռքերէն խոյս տուաւ, և Աստուծոյ այս վիժածը, առանց վառարանի, առանց բուցի, գլորելով գլորելով ինկաւ երկր: Վրայ: Սրտմտեցաւ Աստուած, և իր ձեռակերտին վրայ ամօթահար՝ կնոջ տուաւ ո՛չ միայն ինչ որ տուած էր միւսին, այլ նաեւ անոր յատուկ սիրոյ կայծը զոր կ'նախադասմանէր անոր:

Աստուած կինը զրկեց այր մարդուն ընդառաջ: Ո՛հ, իցի՛ւ թէ կարենայի յաւէտ պաշտել զայն, ըստ կինը՝ ի տես այս շրեղ ու հանճարեղ էակին, իցի՛ւ թէ կարենայի իմ հոգիս Աստուածը ընել զայն: Այր մարդը, իր կողմէն, այսչափ գեղեցիկ տեսնելով կինը, — Իցի՛ւ թէ իմն ըլլար այն —, գոչեց: Ու երբ ձանձրացաւ անորմէ, Աստուծոյ այս պիտակը, ապակամութեան այս ծնունդը, — Ուրիշ կիներ ալ պէտք են ինձի, գոչեց բարձրաձայն, այո՛, ուրիշներ ալ պէտք են ինձի՛ իմ հաճոյքիս համար —: Եւ կինը, սրտաբեկ, անէացած, — Ես հոգի մը կ'կարծէի քեզ, մրմնջեց ցոյ՛ ձայնով: — Հոգի՛ մը, առանց սիրոյ վառարանի՛ մը: Ո՛հ . . . :

Կ'հասկնամ հիմա, քո՛յր ի՛մ, թ. ինչո՞ւ յիսուր լռութիւն մը կը տիրէ հոգիիդ ալքերուն մէջ: Աստուծոյ սխալն է որ կը տուէս: Ի զուր պիտի ջանաս լեցնել այր մարդուն և քու միջև գտնուող ըն-

դարձակ պարապութիւնը . անկարելիին պիտի բաղխիս : Համակերպէ՛  
ճակատադրիդ . մահաշունչ արձան մը կանգնէ , հո՛ն թաղէ սիրտդ ,  
յետոյ այդ շիրիմին վրայ բարձրացիր ու կռուէ՛ մոլորութեան դէմ ,  
կռուէ՛ ստութեան դէմ . . . : Նախապաշարումները քաջալերել՝  
ոճիր մըն է : Ուղեցիր բարձրանալ , կրէ՛ ուրեմն անոր հետեանքները :

Դարձուր աչքերդ մարդկութեան վրայ . ի՛նչ կ'տեսնես հոն : Ան-  
մեղութիւնը մոլութենէ զրպարտուած , պոռնկութիւնը բարձրաձայն  
հռչակուած , պնդեցող աղքատութիւնը արճամարհուած , արժանիքը՝  
հարստութեան հանդէպ խնկարկու և քծնող , խիղճը՝ անօրէնութեան  
առջև խոնարհած , կրօնքը՝ նենգութեան լծակը , բարեպաշտ հոգի-  
ներու չարչարանքը դարձած : Ու հէք մարդկութիւնը մերթ՝ վհատ ,  
մերթ խտւարամած ու մերթ լուսափողփող , սերունդներու հարուածը  
կ'կրէ իրենց ստութիւններով , իրենց նախապաշարումներով , իրենց  
մոլորութիւններով , և երբեմն՝ իրենց լայսերով :

Ճշմարտութիւնը նշմարել և զայն սքօղել՝ Աստուծոյ դէմ սանել  
կ'նշանակէ : Ճշմարտութիւնը հռչակել՝ կ'նշանակէ անոր առաքեալը ,  
անոր մարտիրոսը բլլալ :

Սիրոյ մարտիրոսը բլլալէ յետոյ՝ միթէ դժուա՞ր է քեզ համար  
ճշմարտութեան մարտիրոսը բլլալ : Ամէն բան ուրիշներուն համար ,  
ոչի՛նչ քեզի համար , ահա , ս'վ հոգի , քու ճակատագիրդ :

Կ. Պօլիս, 2/14 Ապրիլ 1882

## ԿԱՐՕ

### ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ

Նոյեմբերի վերջն երբ իրիւն մը ճիւղուր  
Վերելակել կուգաս գիւղիս իմ բլուր,  
Շրթունքներս քաղցր հեղնութեամբ ժպտազին,  
Մըռայլ ծըմեռ, քեզ կ'ողջունեմ վերստին  
Կը գտնես զիս նորէն՝ ճամբուն եզրը լայն,  
Անծուկին մէջ եկւորի մը սպասման,  
Միջոս այս ճարի ալ աւելի է շրփոթ,  
Հոգիս՝ հոգեւ ունի, ճակասս ամալ եւ փոթ,  
Թթենիի չոր ձերեւ մը կիսամեռ,  
Քայլերուն ճակ կը հեծեծէ, նվ ծմեռ,  
Եւ հոն, վարը, ձերեւաճափ իմ ալզին՝  
Սուզը կ'ողբայ դափնեկոռոյս իր փառքին  
Ես՝ խոկալէն՝ վերադառնամ դէպի ճուն,  
Ու յամրաքայլ՝ իմ ետեւէս եկուր դուն,  
Եւ քաղաքէն ու մարդերէն ալ հեռու՝  
Հարիւր գիշեր մեր վիշտն ըսենք իրարու,  
Այս իրիւնն երբ, նվ ծմեռ, վերստին  
Վերելակել կուգաս բլրակն իմ գիւղին,  
Կը գտնես զիս նորէն ճամբուն մէջ երկար,  
Ուր կ'սպասեմ եկւորին որ դեռ չի գար :



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳՍԶԱՆՃԵԱՆ



ԿԱՄԻ ԵՒ ԴԱՍՏԻԱԲԱԿՈՒԹԻՒՆ

Մարդկային հոգիին մէջ կանխ կոչուած կարողութեան քնութիւնը շատ բարդ և հետաքրքրական հանգամանքներով կը ներկայանայ դիտող միտքերու առջև: Հախառակ ստորաբար ասարածուած այն կարծիքին թէ մարդիկ ինքնիշխան կամքի (libre arbitre) տէր են, այսինքն ազատ են այսինչ բանն ընելու, այսինչ բանը չընելու, իրականութեան մէջ բացարձակ կամքի գործը կարծուածէն չա՛տ աւելի հազուադէպ է: Մարդոց գործերը, կամայողութեամբ կատարուին թէ անամայ, ընդհանրապէս անհրաժեշտ հետեանքներն են այն բարդ և բազմապիսի ազդեցութիւններուն որոնց ենթակայ են ամէն վայրկեան գիտակցաբար կամ անգիտակցաբար, և ասիկա՝ ինչ ինչ հոգեբանական օրէնքներու հարկին տակ:

Հոգեբանա-կենսաբանական օրէնք մըն է այն թէ որ և է կենդանի էակ ամէն արտաքին գրգռութեան կը պատասխանէ անմիջական գործով մը, կամ ուրիշ բառով՝ ամէն տպաւորութիւն և զգայութիւն գործի կը փոխուի: Սրտաքին գրգռութիւնը եթէ կենդանիին անհաճոյ պարագայի մը արդիւնքն է, անոր համապատասխան գործը կ'ըլլայ շարժում մը այդ անհաճոյ պարագան վանելու. իսկ եթէ գրգռութիւնը հաճելի է, առաջ եկած գործը կը լինի մղում մը գրգռութեան հաճելի առարկան իւրացնելու: Այս կենսաբանական déterminismeին ենթակայ է նաեւ մարդը: Հոգեբանութեան մէջ անդրադարձ արարք (acte reflexe) կը կոչուի այս իրողութիւնը, և շատ մը հոգեբաններ ո՛չ միայն ջղային ստորին կեդրոններէ բխող անգիտակից արարքները, այլ նաեւ համայն մարդկային գործունէութիւնը, կամայական և գիտակից գործերն ալ մէջն ըլլալով, կը համարին acte reflexeներ աւելի կամ նուազ բազադրեալ և եղանակաւորեալ ձևի տակ, անպատճառ պատասխանելով գրգռութեան մը, թէև կրնայ յաճախ պատահիլ որ գրգռութեան համապատասխանող գործը անմիջապէս տեղի չունենայ և նկատելի կերպով ուշանայ[\*]: Ըստ Շ. Ռիչէի կամայական և անդրադարձ արարքներուն տարբերութիւնն այն է որ անդրադարձ արարքը (acte reflexe) անմիջապէս կ'յաջորդէ զգրգռութեան, մինչդեռ կամայակա արարքը (acte volontaire) գրգռութեան կը յաջորդէ աւելի կամ նուազ երկար ժամանակէ մը յետոյ, և

[\*] See F. Paulhan. Physiologie de l'esprit: էջ 36

թէ՛ կամքին գործը կը թուի ըլլալ անդրադարձ կամ բնազդական արարքը յապաղեցնել, կասեցնել կամ չափաւորել միայն[\*]

Հոգեբանական այս օրէնքին, այն է անդրադարձութեան յայտնի գործունէութիւնը կրնանք տեսնել մանաւանդ մանուկներու վրայ ուրոնք դեռ բոլորովին բնազդական էակներ են։ Այսպէս՝ զորօրինակ, մանուկը reflexeի մը հարկին տակ է որ կ'ելլէ ծեծել անշունչ քարը որուն զարնուելով ինկած է. դարձեալ նոյն կերպով է որ աչքին կամ քիմքին հաճելի եկած առարկայ մը (փայլուն խաղալիք մը), չաքար մը) կուզէ անմիջապէս իւրացնել և վայելել։ Այս է պատճառը մանուկներու այնքան քմահաճ կամակորուրթեան, զի անդրադարձ արարք մը պէտք է որ անմիջապէս տեղի ունենայ և չափահասի մը դատողութեան կամ կամքին ուժը պէտք է զայն յապաղեցնելու կամ արգիլելու համար ինչ որ դեռ բոլորովին կը պակսի մանկան։ Ստուգիւ մանուկին ամբողջ գործերը այսպէս հաճութեան և տհաճութեան առանցքին շուրջ կը դառնան և կատարելապէս բնազդական են։ Մարդկութիւնը իր նախնական վիճակին մէջ ալ ճիշդ այդ բնազդային կեանքը ապրած է մինչև որ հասած է բանականութեան և դատողութեան ստեղծած քաղաքակրթութեան ներկայ աստիճաններուն, և արդէն մանկութիւնը շատ մը կողմերով մարդկային հոգիին նախնական փուլերը կը յիշեցնէ, արագաբար անցնելով ճիշդ այն շրջաններէն որոնցմէ անցած է մարդկութիւնը դարերու տեղութեան միջոցին։

Մարդոց մեծագոյն մասը, սակայն, դեռ մինչև հիմա չի տարբերի մանուկներէն։ Կայ դատարար մը, բոլորովին բնազդական, դրդումային impulsif մարդոց դասակարգը, զուրկ դաստիարակութենէ և որ և է բարոյական զգացումէ, որոնց բոլոր գործերը ճիշդ նոյն անմիջական հաճոյքի և տհաճութեան զգացումին ծնունդն են։ Ասոնք վայրկեանական տպաւորութիւններու և գրգռութիւններու ազդեցութեան տակ կը գործեն այն բոլոր բաները՝ որոնք իրենց հաճելի կը թուին, առանց խորհելու, առանց երբեք ունենալու բարոյական նկատումներու կամ որ և է տպազայ պատասխանատուութեան մտահոգութիւնը։ Բայց այս դասակարգէն դուրս՝ պարկեշտ, զարգացած, դատողութեան տէր մարդերու մէջ ալ իրերը տարբեր չէ որ տեղի կունենան շատ անգամ։ Ինչքան բարի, ազնիւ և ամէն լաւ տրամադրութիւններով օժտուած մարդիկ կան, բարոյականի ամէնէն գերազանց ըմբռնումն ունեցող, որոնք սակայն անկարող են զսպելու իրենց ախորժակները, յուզումները, կիրքերը, որոնց բովանդակ լաւ տրամադրութիւնները բան մը չեն արժեք զիրենք արգիլելու համար այն մոլար ընթացքէն որուն կը հետեին սկամայ, արտաքին տպաւոր-

[\*] Stéu Ch. Richet. Psychologie générale. էջ 61, 159։



բութիւններէ գրգռուած բնազդական դրդումներու ազդեցութեան տակ, մինչդեռ իրենց մեծագոյն փափաքն էր տեղի չի տալ և յաղթել բնազդումին պահանջմանը: Այս կամ այն մոլութեան անձնատուր եղած և փորձութիւններու չդիմացող բոլոր պարկեշտ մարդիկը որ հակառակ իրենց փափաքին՝ չեն կրնար իրենց մոլութենէն հրաժարիլ կամ ներկայացած փորձութեան մը դիմադրել, այս տեսակէն են ահա: Այս պայմաններուն մէջ կամքի ազատութեան վարդապետութիւնը ինքնին արժէքէ զուրկ կը մնայ, զի ազատ կամքի տէր էակ մը, ցորչափ իր կարողութենէն և կամեցողութենէն անկախ եղող յայտնի պատճառի մը հարկին տակ չի գտնուիր, պէտք էր որ ուզածն ընէր, չուզածը չընէր, մինչդեռ իրականութեան մէջ մարդը կամ մարդերու մեծագոյն մասը արտաքին տալանորութիւններու և միջավայրի ազդեցութիւններու իր մէջ արթնցուցած բնազդական մղումներուն, դրդումներուն, բաղձանքներուն և յուզումներուն ձեռքը դարձած եղած է ողորմելի գերի մը, և այս արտաքին ազդեցութիւնները շատ անգամ նոյն իսկ աշխարհի անուղղակի, բարդ և թաքուն ձևերու տակ կը ներգործեն որ ենթական նոյն իսկ ազատ կամքովը գործած ըլլալու պատրանքը կ'ունենայ, առանց կասկածելու թէ թագուն *acte reflexe* մը կամ բնազդումի մը մղումով գործած է:

Արդի նիւթապաշտ իմաստասիրութիւնը գրեթէ բոլորովին կը հերքէ ազատ կամքի վարկածը: Ըստ Հէքելի՝ կամքը մարդուն քով ինչպէս կենդանիին, ստուգիւ ազատ չէ, այլ ուղեղին կազմակերպութենէն կը բխի և այս վերջինն ալ իր կարգին իր անհատական յատկութիւններուն մէջ մասամբ ժառանգականութեան օրէնքներուն ենթարկուած է և մասամբ պատշաճեցումի ազդեցութեան: Աւելի հետաքրքրական տեսութիւն մը կը պարզէ այս մասին Ֆէլիքս Լը Տանդէք որ հեղինակն է կենսաբանական նոր տեսութեան մը: Այս վերջինին կարծիքով՝ մարդուն և կենդանիներուն բոլոր կենսական երևոյթները որոշադրուած են (*déterminé*) միջավայրի պայմաններով: Այդ երևոյթներէն ոմանք ընկերացած են գիտակցութեան *épiphenomène*ներու որոնք կամքի պատրանքը կուտան և սակայն բոլորովին անգործօն են: Ինչպէս որ մարդուն մէջ կարգ մը մեքենական-կենսալիան երևոյթներ տեղի կունենան առանց իր գիտակցութեան, նոյնպէս գիտակցօրէն կատարուող կենսական և հոգեկան երևոյթներն ալ եթէ առանց գիտակցութեան կատարուէին, դարձեալ ճիշտ այնպէս պիտի կատարուէին ինչպէս որ կը կատարուին հիմա: Գիտակցութիւն կոչուածը լոկ լուռ վկայ մըն է մեր էութեան մէջ անցած-դարձածներուն, զանոնք ուղղելու կամ վարելու մասին որ և է դեր կամ ազդեցութիւն չունի, և կամք կարծուածը պատրեւաւոր մըն է միայն, որովհետեւ մենք չէ թէ կը գործենք այն բաները զոր կը կամենանք, այլ կը կամենանք կամ կը կարծենք կամենալ այն բաները զոր կը գործենք. կամ ուրիշ խօսքով՝ ներքին կամ արտա-

քին այսինչ որոշ պայմաններուն տակ մարդիկ այսինչ կերպով մի ոյն կը խորհին ու կը գործեն, և կամեցողութիւնն ալ միջավայրի ազդեցութիւններուն և կազմութեան պահանջներուն միայն կը հետեւի[\*] :

Զարմանալին այն է՝ որ քրիստոնէութեան մեծ առաքեալը՝ Ս. Պօղոս դեբթէ անքան կը մերժէ ինքնիշխան կամքի տեսութիւնը որքան արդի նիւթապաշտ իմաստասիրութիւնը : Հետաքրքրողները թո՛ղ աչքէ անցընեն Ս. Պօղոսի Հռովմայեցւոց թուղթին է. գլուխին 15-23 համարները և պիտի տեսնեն թէ թէպէտեւ տարբեր բառերով՝ բայց au fond նոյն հայեացքներով է որ կրօնքն ու իմաստասիրութիւնը կը ջանան լուծել կամքի ազատութեան հարցը : Միայն թէ մինչդեռ կրօնքը կ'ընդունի թէ մարդ թէև մարդկայնօրէն անկարող իր մարմնի պահանջումներուն և դրոշմներուն յաղթելու, բայց երկնային ազդեցութեամբ մը, Ս. Հոգիին չնորհքովը կրնայ փոխուիլ և ազատ կամքի առաջնաչնորհումը ձեռք բերելով յաղթել իր բնազդումներուն և միջավայրի ազդեցութիւններուն, նիւթապաշտ իմաստասիրութիւնը դժբախտաբար այդ տեսակ՝ կարելիութիւն մըն ալ չընդունիր և մարդ էսկը կուզէ պահել միջավայրի և արտաքին ու ներքին ֆիզիքական, բարոյական և հոգեկան ազդակներու պահանջներուն յաւիտենական գերիի իր ողորմելի դերին մէջ :

Սակայն բոլորովին ստոյգ է թէ կամք կոչուածը խապառ չեղօք և անգօր հանգամանք մըն է մարդկային բնութեան մէջ, ստոյգ է որ բնազդական մղումներուն, արտաքին ազդեցութիւններուն յաղթող, տիրող բարձրագոյն սկզբունք մը չկայ մարդուն մէջ . . . : Չեմ կարծեր : Հերիք է որ նկատի առնենք հոգեբանութեան տուած սահմանը կամքին համար իբրև ոյժ մը որ կը կասեցնէ կամ կ'եղանակաւորէ անդրադարձ և բնազդական արարքները (Շ. Ռիչէ), և այն առնն անհրաժեշտաբար պիտի ընդունինք թէ այդ ոյժը կրնայ անհունապէս զարգանալ անդրադարձութեան կամ բնազդումին արդիւնքը իսպառ արգիլելու կամ ջնջելու աստիճան : Եւ ստուգիւ՝ եթէ այսպէս չըլլար, մենք չպիտի գտնէինք մարդկութեան մէջ հոգեկան գերազանց կորովի տէր այն սքանչելի տիպարները՝ որոնք պարզապէս կամքի ուժով կրցած են կատարելապէս սանձել բնազդական էութեան պահանջները և յաջողած են իրենց անձը հպատակեցնել իրենց կամքին : Գերազանց բարոյականի մը շունչովը ոգևորուած այլախրութեան մը բոլոր գործնական ցոյցերը, բոլոր յայտնի ու թաքուռ անձնութիւնները, բոլոր սրտառուչ առաքելութիւնները որոնց օրինակները ատեն ատեն կը տեսնենք կամ կը լսենք տիրող ընդհանուր գլխապաշտութեան և եսամոլութեան մէջ իբրև մաքուր և քաջալերիչ երևոյթներ, կ'ապացուցանեն թէ մարդերու մէջ բնազ-

[\*] F. le Dentec. Le déterminisme biologique et la personnalité consciente.



դաւական էութենէն, ստորին Յսէն վեր կայ բարձրագոյն կարողութիւն մը, ազնուագոյն Յս մը որ ի՛նչքան ալ շատերու մէջ խելդուած, գրեթէ չբայցած ըլլայ բնազդական Յսին ճակատագրական պահանջներուն տակ, կրնայ սակայն երեւան դալ վսեմ յայտնութեամբ մը և տիրողը դառնալ ստորին Յսին:

Բնազդական-զգայնական մարդը որուն կըրտականին դժբախտաբար մարդոց, նոյնիսկ դատարարակեալ և զարգացեալներու ստուար մեծամասնութիւնը, զուրկ է ճշմարիտ կամքի վեհ ձիրքէն: Անոր կարծեցեալ կամքը իրականին խաբուսիկ և պատիր երեւոյթն է չոկ որ կը հետևի արտաքին ազդեցութեաններու և ներքին ախորժակ-ներու ծնցուցած պահանջներուն միայն: Մենք ընդհանրապէս կամքի վրայ սխալ կարծիք մը կողմած ենք. շատ անգամ կամք կը համարինք ինչ որ պարզապէս ախորժակ կամ բաղձանք է, մինչդեռ կամքը ճիշտ ստոր հակառակն է: Յամուռ, կամակոր մարդոց համար կը կարծենք թէ կամքի տէր մարդիկ են, բայց ճի՛շտ յամուռ, կամակոր մարդիկ ամէնէ՛ն աւելի կամքէ զուրկ են, հարազատ տիպարներն ըլլալով բնազդական մարդուն որուն յատկանիւնն է իր մի որեւէ ախորժակին, զրդումին գոհացումը փնտել *à tout prix*: Այսպիսիներուն կամքը, եթէ երբեք կարելի ըլլայ կամք համարել կայն, վարող ոյժ մը չէ, այլ վտանող, կրաւորական հանգամանք մը յաւետ: Բայց կայ բնազդական մարդէն վեր ճշմարիտ մարդը, ճըշմարտապէս ինքնիշխան կամքի տէր և որուն կամքը իրական ու վարող ոյժ մըն է և այս ոյժը կրնայ հրաշքներ գործել: Երևակայեցէ՛ք այն անազնին անշրպիտը որ կայ իր սայթաքման պատճառ եղող անշունչ քարէն կամ փայտէն անգամ վրէժ լուծելու մղող մանուկ-մարդուն բնազդական արարքին և քրիստոնէական այն վսեմագոյն առաքին-նութեան մէջ որով մարդ կարող կըլլայ իր թշնամիներուն, իրեն չարիք հասցնողներուն բարիք հատուցանել: Ահա՛ բնազդական և ճշմարիտ մարդուն տարբերութիւնը:

Այն մարդը որ իր բնազդումներուն և ախորժակներուն գերին է, որ իր յուզումներու և կիրքերու հովերէն կը տարուբերի, որ կատարելապէս միջավայրի, ներքին և արտաքին ազդակներու ներգործութեան ենթակայ է, ի՛նչքան ալ դատարարակուած և զարգացած ըլլայ, մի՛շտ բան մը կը պահէ իր մէջ կենդանական էութիւնէն: Այն գերագոյն բանը որ ճշմարիտ մարդը կը տարբորէ, որ ճշմարիտ մարդկութեան դատանիչը կրնայ համարուիլ, իր դըր-դումներուն, ախորժակներուն, յուզումներուն և կիրքերուն իշխելու կարողութիւնն է. ով որ այս կարողութիւնը չունի, ազատ կամք կամ լաւ ևս՝ կամք չունի իր ճշտագոյն իմաստով, և ով որ կամք չունի, զուրկ է այն բարձրագոյն սկզբունքէն, մարդկային գիտակցութեան կամ եսին այն ազնուագոյն յայտնութենէն որմէ կը բխին բոլոր ճշմարտապէս ազնիւ, առաքինի և մեծ գործերը: Կը պատմուի թէ

Վաղենտինոսն իր մահուան անկողնին մէջ բռնած է. «Ամէն ըրած յաղթութիւններու մէջ միայն մէկ հատ կայ որ զիս կը միտիթարէ հիմա. այն է՝ իմ ամենազօրութեամբ թշնամիիս, բռն իսկ իմ հար սրտիս յաղթեցի»։ Եւ սառագլու մեծագոյն յաղթութիւնը ինք իր անձին իշխեցն է։ Ով որ իր անձին կրնայ իշխել, այն նոյն կարողութեամբ ընդունակ է ազդելու նաեւ իր միջավայրին եւ անով իսկ ինք իրեն ստեղծած է սոկրան, կորովի եւ աղնիւ նկարագիր մը։

Ճշմարիտ դատարարակութիւնը կամքի դատարարակութիւնը պարտի ըլլալ։ Ազնիւ, անյողդողդ նկարագիր մը կազմելու համար դատարարակութիւնը բնաւ օգուտ մը չի կրնար ընծայել եթէ կամքը զօրացնելու կամ լաւ եւ՝ կամքը ստեղծելու չճառայէ։ Բարոյական դասեր, քարոզներ, խրատականներ ինչքան ալ պերճաւիտ ըլլան, կուտ մը չեն արժեր։ Չի բաւեր բարին ու հարը ճանչցնել, ազդելութիւններու, յաղթութիւններու մասին նողկանք ներշնչել, ազնիւ ձգտումներ, խեղալային բարձրութիւններ մատնանիշ ընել, մարդ այս բոլորը գիտնալով եւ չա՛տ լաւ տրամադրութիւններ ունենալով հանդերձ՝ դարձեալ պաշտպանուած չըլլար փորձութիւններու դէմ, եթէ իր բնազդական դրդումներուն դիմադրելու համար կամքի զօրութիւն չունենայ։

Մեր դպրոցներու մէջ գործադրուած՝ արդի դատարարակութիւնը դժբաղդաբար երբեք չի ծառայեր այս նպատակին։ Արդի դատարարակութիւնը մաքի եւ զգացումներու դատարարակութիւն մըն է լոկ. բայց մաքի մարդէն եւ զգացումի մարդէն վեր կայ կամքի մարդը (homme de volonté), առջի երկուքին միայ իշխող եւ սակայն բոլորովին անսկսած դատարարակութեան արդի պայմաններուն մէջ։ Կամքի դատարարակութիւնը միայն կրնայ արժեցնել մաքի եւ զգացումներու դատարարակութիւնը եւ զանոնք գործածել բազմացուած աղնիւ եւ բարձրագոյն նպատակներու։ Հակառակ պարագայի մէջ միայն միտքի եւ զգացումներու դատարարակութիւնը որ զուգորդուած չէ կամքի մշակումին հետ, երբեք չի կրնար բան մը արժել անհասար բորեփոխելու եւ անոր մէջ նկարագրի աղնիւ գլծեր դրոշմելու գործին մէջ։ Այս է պատճառը որ արդի դատարարակութիւնը ա՛յնքան ամուլ կը մնայ գործնական բարոյականի տեսակէտով՝ անհատը բարեփոխելու գործին մէջ, եւ նոյն իսկ իմացական դատարարակութիւնն ալ պէտք եղած արդիւնքը չի տար, զի ինչպէս բարոյականի՝ նոյնքան ալ գիտութեան կալուածին մէջ անո՛նք միայն ճշմարտացի մեծ եւ մարդկութեան բարեարարներ կոչուելու արժանի գիտուններ եղած են որոնք օժտուած են կամքի գերազոյն կարողութեամբ մը, անոր բոլոր ուժովը ձգտած են որոշ նպատակներու իրագործման, տարամբոժելով զգայնական-բնազդական ամէն ձգտում եւ անորժակ որ աստիճանաբար դիրենք պիտի՞ ջլատէր։ Եւ արդարեւ բոլոր մեծ գիտունները ամենաբարձր բարոյականի տէր



անձեր եղած են միևնոյն ատեն որոնք կրցած են կատարելապէս իրենց կամքին ստորագասել զգալնական-բնագոյական մարդը: Այս կարգի բարոյական ոյժ մը պէտք է որպէսզի մարդ իր հարմարիքի առաւելատիւն դիշերն իսկ կամաւ մոռնայ իր ամուսնացած ըլլալը և իր աշխատանոցին մէջ մինչև կէս գիշերէն անդին շարունակէ իր գիտական փորձերը, ինչպէս պատմեցին թէ պատահած է Բասթէօռի, այն մեծանուն գիտնականին:

Մենք տեսցժ. չենք կրնար ըսել թէ կամքի դաստիարակութիւնը ինչ մէթոտներով պարտի իրագործուիլ: Անգամ մը որ կամքի դաստիարակութեան պէտքն ու բարձրագոյն կարեւորութիւնը ընդունուի, մեր դաստիարակութեան արդի ձևին մէջ մեծ յեղաշրջում մը տեղի պիտի ունենայ, և անշուշտ մեթոտիկ և գործնական ծրագիրներ յղացուելով կ'իրաւութեան պիտի դրուին և հետզհետէ փորձառութեամբ պիտի կատարելագործուին: Ահա՛ այն պոեն դաստիարակութիւնը, մտքի, սրտի և կամքի դաստիարակութիւններու կրթողութենէն կազմուած ճշմարտ դաստիարակութիւնը իր իրական շնորհներն ու բարիքները պիտի ծաւալէ մարդկութեան մէջ:

Դպրոցներէ դուրս՝ կեանքի ասպարէզին մէջ ալ ամէն անհատ կրնայ և պարտի իր կամքը դաստիարակել: Մէկ անգամէն մեծ արդիւնքներ պէտք է սկսնկալել, պղտիկ քայլերով, մեր անորժանեւրուն վրայ տարնուած պղտիկ յաղթութիւններով կարելի է հետզհետէ մեծ յաջողութիւններու հասնիլ: Յամու ծխամոլ մը, զորօրինակ, մէկ օրէն միւսը չպիտի կրնայ իր մոլութենէն խալտ հրաժարիլ, մէկ օրէն միւսը գլխիկ գլանիկ պակսեցնելով պիտի կրնայ բոլորովին բաց օրական մէյմէկ գլանիկ պակսեցնելով պիտի կրնայ բոլորովին ձգել ծխամոլութիւնը: Յետոյ կան մեզմէ ամէն մէկուն վրայ աչքս շուտ չգալնալ պղտիկ թերութիւններ, որոնցմէ կրնանք յաջողապէս սկսիլ զօրացնելու համար մեր կամքը, մինչև որ հասնինք ինքնիշխան կամքի այն օրհնելի կարողութեան որ վաւերական դատանիչն է ճշմարտ մարդկութեան: Օրինակի համար՝ անդուն բերան և լեզուի անսանձութիւն մեր մէջ նոյն իսկ շատ բարի մարդոց վրայ ալ մշնէն շատ տարածուած թերութիւններ են, ըստ անհա ճիշտ այս թերութիւնը բնագոյական մարդուն ամենէն աւելի յայտարար և հասարակաց նշանն է: Պարապ տեղ չէ որ Յիսուս ըսած է, «Ով որ իր ընկերին մօրոս կ'ըսէ, դատաստանին օրը հաշիւ պիտի տայ, ով որ իր ընկերին յիմար ըսէ, նմանապէս դատաստանին օրը հաշիւ պիտի տայ» ու դարձեալ՝ «Բոլոր դատարկ խօսքերու համար որ կը խօսիք, դատաստանին օրը հաշիւ պիտի տաք»: Ու մեր մէջ ու մեր չուրջ ինչքան շատ կը լսենք, բերանով կամ գրիչով, պապիսի դատարկ խօսքեր, նոխատինքներ, անճան տկնարկութիւններ, վերջապէս անսանձ լեզուի մը բոլոր անպտղշաճութիւնները: Եւ սակայն մարդ կրնայ կամքի գիտակից ճիգով մը զսպել իր գրգռութիւնը և պատշաճ լեզու մը գործածել գիտնալ: Այսպիսի գիտակից ճիգեր իր

կամքի զօրացման պիտի նպաստեն, մինչև որ զինք հասցնեն իր աւելի հզօր դրդումներուն, կիրքերուն և անորժակներուն յաղթելու կարողութեան:

Կարելի է կամքի մշակութեան համար տակաւին ուրիշ շատ գործնական թելադրութիւններ ընել և թերեւս օր մը անդրադառնանք այս խնդրին: Հիմակուհիմա սա կարեւոր պարագան կողմնք աւելցնել թէ հոգեբանական օրէնքի մը համաձայն ողուն չենք ուզեր առայժմ մանրամասնութիւններուն մտնել, ամէն արարք զոր քանի մը անգամ կրամաւ կը կրկնենք, գործնական թելադրութիւն մը կը դառնայ և ուղեղին վրայ ծալք մը, հետք մը թողլով՝ հետզհետէ տեսակ մը անգիտակից ինքնաշարժութեամբ ինքնին իրագործուելու, կրկնուելու բնութիւն մը կ'ստանայ, այսինքն՝ հասարակ բառով, սովորութեան ունակութեան կը փոխուի: Այսպէս կը կազմուին բոլոր մոլութիւնները, Բարեմտօրէն առնուած գաւաթ մը օղին կրնայ ենթական անգիտակցօրէն արրեցութեան առաջնորդել, բայց ունակութեան ոյժը գրեթէ նոյնն է ինչպէս յոռի՝ նոյնպէս ալ լաւ արարքներու համար և մինք կրնանք հոգեբանական այս հարկաւորութիւնը գործածել մեր մէջ բարի, ազնիւ սովորութիւններ, ունակութիւններ ծնցնելու, արմատացնելու և մեր նկարագիրը չիտկելու համար: Առաջին անգամ կամքի ճիւղով մը մեր այս կամայն ստորին անորժակին յաղթելով և այս կամայն լաւ արարքը մէկ երկու անգամ գործելով, կրնանք զանոնք սովորութեան վերածել, և անգամ մը որ լաւ սովորոյթ մը մեր մէջ արմատ բռնէ, ա'լ առանց մասնաւոր ճիգի մարդ պիտի կրնայ հետեիլ այդ սովորութեան:

Դաստիարակութիւնը ահա ճի'շտ այսօրինակ միջոցներով պարտի գործել, որպէսզի արդիւնաւոր ըլլայ:





ՀԱՅԿԱՅՈՒՄՍ ՍՏԵՓԱՆԵԱՆ

## ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

### ՀԱՅՐ ՈՒ ՈՐԴԻ

— Կը յիշես մայրդ :

— Օհ, եթէ կը յիշեմ, կոյ ըտպէ մը ուր անոր լոյս պատկերը կարենար սքօղտ իւ իմ կեանքի մտայնով. ու մտածել թէ այդ հրեշտակը՝ որ եկած էր աշխարհ անթերի երանութեան խոյսը պատկերացնել իր անձով՝ այժմ սեւ փոսին մէջ փտած, քայքայուած և անկերպարան . . . :

— Բա՛ւ է թորի, ևս պարտիմ քեզ ընդմիջել. եթէ մայրդ յիշեցուցի՝ մեր կսկիծին լեզու տալ չէր նպատակ, այլ ու կո՞ծ որքան ալ քնական էն անդարմանելի դժբաղդութիւններու հանդէպ՝ այնքան՝ աւելի թաւաժմորթ կազմութեան մը խնորը կը մերձացնեն ստէպ անտանելի ու մերթ կեղծաւոր հանդամանք մը տալով իրենց երեւոյթին :

— Ինչպէ՞ս կարելի է չողբալ կորուստ մը՝ որուն թողած պարտքը մարդկային կարողութեան չէ տրուած լեցնել :

— Ահա բուն խնդիրը շօշափեցիր թերեւս անպարտքար :

— Բացառքէ, հայրիկ :

— Կը յիշես անշուշտ որ անցեալ տարի այս սրահին մէջ, ճիշդ այս ժամին երեք հոգի կը բոլորէինք այս սեղանը քու ծննդեան քսաներորդ տարեդարձը տօնելով. դեռ տարի մը պէտք էր որ երկրին օրէնքը քեզ արտօնէր վաճառական աշխարհին մէջ քու անձնական պատասխանատուութեան տակ առանց խնամակալի գործելու. ևս ու մայրդ անբացատրելի մարմաճով կ'ուզէինք փութացնել այդ մեծ օրն ըսելու համար ընկերութեան թէ մենք ալ մեր պարտակահութեան իրը հարազատ արդիւնքը կրցանք վերջապէս կատարեալ մարդ մը հասցնել, այս հանդիսագործ աւետումը այն ժամանակ միայն պիտի երաշխաւորուէր երբ դուն ալ քու կարգին պարտականութեան ամենէ դիւրատար ու քաղցրագոյն բեռը կրէիր ուսերուդ վրայ :

— Եւ այդ բեռն է :

— Կինը :

— Զոր ընդհանրապէս կը կոչեն ծանր և անտանելի :

— Այնպէս որ ամուրիներ, բայց առողջ ամուրիներ այդ սոսկումով չեն մտած աշխարհ :

— Ինչ որ կը վկայես, հայրիկ :

— Եւ իմ վկայութիւնը սուտ պիտի հռչակուէր, ըստ որում աւմուրին կը ստէ զրպարտելով կիներ իրբնս կեանքի ցեղ:

— Բայց եւ լսած եմ թէ ամուսնութիւնը պաշտօնած բերդի կը նմանի, այնպէս որ մշլիկները կ'ուզեն դուրս գալ և դուրսիները կ'աշխատին հոն մտնել:

— Անհեթեթ սուտ, որու նմաններ կը վխտան ժողովուրդի բերնին մէջ, ապուշ մը, խմատակ մը չկրնալով հանդուրժել ու է արկածի, և որովհետեւ իրմէ կը պակսին պատահարներու դէմ պայքար մղելու կամք ու գիտակցութիւն, յանկարձ տնիմատս խօսք մը կ'արտատանէ, և հասարակութիւնը կը կարծէ զանեւ անոր մէջ սրամտութեան ինչ մը, յետոյ ապուշին խօսքը բերնէ բերան տարածուելով կը մնայ աւտո. օրինակ, զաւրճաւով կը խորհի կ'ըսեն, որքան ապուշ այնքան աւելի բարբարիկ ու վայրենի է այդ առածի ոգին, վասն զի մարդիկ հետեւելով այդ վարդապետութեան պիտի ուզէին արիւնք արիւնքով մաքրել, և սոսա նկն շնոյ յետեւի օրէնքը պիտի վերանստատուէր, մինչդեռ արիւնք ջուրով կը մաքրուի: Բայց բնութեական կեանքը առածներով չէ որ կ'երաշխաւորուի, ինչպէս բնկերպին կազմակերպութիւնը այս կամ այն խօսքով չէ որ հաստատ կուտանի վրայ կը հիմնուի. ուրիշ բան է ծաւիտ գեղի նման վիճիտի պոկան վարդապետութիւններ, որոնք մէն մին փարսաւ և ուղեցոյցի դեր կը կատարեն կեանքի ովկիանոսին մէջ: Դամնցնել ամուսնութիւնը պաշտօնած բերդի, ասիկա մարդկութիւնը ուրանալ է, վասն զի առանց ամուսնութեան չկայ ընկերութիւն. ուրիշն աւելի շարմար է ու բնական նմանցնել ամուրին հնդ կական թռնաւոր ծաւին, որ ոչ միայն անպատու է այլ մահաատ, որու չափին անակ քնայողն անպատճառ կը մեռնի:

— Սովայն ինչով կարելի է քննադատել այն տխուր ճշմարտութիւնը թէ ամէն կատակերգութիւն ամուսնութեամբ կ'աւարտի, նոյնպէս և ամէն սուտ ամուսնութեամբ կ'սկսի:

— Աշխարհի կանոնաւոր ընթացքը և մարդկային կեանքի անվրէպ ուղղութիւնն է ասիկա, զոր յեղաշրջելու փորձով կիրարկուած ամէն ճգստամ ծիծաղելի ու միեւնոյն ժամանակ վտանգաւոր պիտի ըլլար, ինչպէս հիւսնող ու խեղաղար պիտի նկատուէր երեւոյթութիւն մը որ կամենար դիշերին խաւարը վտարելու համար երկրին շարժումը կտալէն եւ արեւակը մշտապէս կեցնել զենիթին վրայ: Ամէն յղացում պէտք է որ ծնունդ մը ունենայ և ամէն ծնունդ իր վախճանը, և այսպէս շարունակաբար. բնութեան մէջ տիրող յաջորդութեան օրէնքին կական հանդամանքն է ասիկա, որով արեւելեական զոյգութեան յաւաստութիւնը անվրէպ կը պահպանուի, լոյս ու խաւարին միջև համընթաց կամ փոխադարձօրէն կատարելադարձող անշեղակի և մշտական ուղղութեան ջիւղն է համերաշխութիւնը, որմէ կը ծնի ներդաշնակութիւնը, այսինքն կեանքը առանց



այս ներդաշնակութեան տիեզերք պիտի ներկայացնէր քառսը:

— Քանի որ այդպէս է, այսինքն՝ քանի որ կրկին հակառակութիւններու համերաշխութեան կը պարտաւորի կեանքն իր գոյութիւնը, ուրեմն դիւրին է հետեցնել թէ ինչպէս ամեն բանի՝ նոյնպէս և ամուսնութեան մէջ յիմար է փնտռել իսկական և անթերի երջանկութիւն:

— Անտարակոյս. նոյն աչերէն կը փայլի ժպիտը, ինչպէս նոյն աչերէն կը հոսի արտասուքը, ուսկէ և ստէպ ժպիտ ու շիթ անբաժան կ'արտաբերուին. այս յանկուցիչ տեսարանը կը պարզուի մանկան՝ այսինքն անմեղութեան և անարատ կնոջ՝ այսինքն սիրոյ երեսներուն վրայ: Տառապանքը անհրաժեշտ է երջանկութիւնը ապահովելու համար, ինչպէս երկունքը անխուսափելի է ծնելու համար. նա որ չուզեր տառապիլ՝ կուրօրէն կը սխալի ու չարաչար կը կորսուի տանելով իր հետ իրմէ սպասուած արդիւնքը և ստիկա ոճիրներու ծանրագոյնն է, վասն զի մարդ եկած է աշխարհ այն տեղէն ուր յղացուած է ինք, ուստի և ինքը պարտաւոր է յղանալ, երկնել, ծնիլ ու բեղմնաւորել ընկերութիւնը. պարտաւորութեան այս զլացումը իր բոլոր տգեղութեամբ կը նկարուի ամուրիին անձին վրայ, որ ոչ միայն անպտուղ և առանց յաջորդի կը կորսուի՝ այլ և ընկերութիւնը կ'սպառէ, կ'ապականէ թողով անոր մէջ հասարակաց թշուառ կիներ և անամուսն պիտակներ. ամուրին նոյն ինք տառապանքն է թէ իր անձին և թէ ընկերութեան հաշուին, նա կը գօսի, կ'իյնայ ինչպէս փառն միրգը. ընկերութիւնը ոչ միայն չօգտուի ամուրիին կեանքէն՝ այլ նաեւ կը տուժէ ապականուելով, վասն զի ամուրին կ'առնէ ինչ որ իրենը չէ, կը յափշտակէ ինչ որ ուրիշին իրաւունքն է, կ'իւրացնէ առժամաբար և կը պղծէ ամեն սրբութիւն առանց փոխարինելու իրաւանց և պարտաւորութեան օրէնքով. ասոր համար ամուրին ծայրագոյն ոճրագործն է. ինչպէս անբարոյական վախառուն ամենէ ահաւոր գողն է, ասոնք բաց օդին և հրապարակաւ կը գործեն ու ոչ ոքէ չեն վախնար, վասն զի իրենց զոհերու բռնազբօսիկ հաւանութեամբ օրինաւորութեան երևոյթ մը կուտան իրենց աւերիչ չահատակութեան. ամուրին չսիրեր երբէք, չկրնար սիրել, վասն զի եթէ սիրէր՝ ընկերութեան բուրաստմանն գոնէ կանաչ տերեւ մը պիտի ընծայէր, և նա որ չսիրեր՝ կ'ատէ, կ'աւերէ, կ'ապականէ, կը խորտակէ ինչ որ անբիծ է ու նուիրական:

— Ուրեմն ամուսնութիւնը պէտք է ընդունիլ իբրեւ պարտաւորութիւն:

— Մանաւանդ բարձրագոյն և անհրաժեշտ պարտաւորութիւն, առանց որով՝ գոյութեան իրաւունքէն պէտք է զրկուած ըլլայ ամուրին, վասնզի ինչ որ ստացած էր նա իր ծնողքէն պէտք էր նոյնը տալ աշխարհի, և քանի որ կ'ըմբոստանայ յաջորդութեան օրէնքին դէմ և չուզեր իրմէ ետեւ կեանք թողուլ երկրի վրայ, հետեւապէս իր

կեանքը աւելորդ բնութիւն ունի. և ինչպէս բացատրեցի՝ քիչ առաջ, իր գոյութիւնը աւելի է և մահատու, վասն զի նա կը վայելէ առանց սրբութեամբ փոխարինելու. կը վայելէ անիրաւաբար յօդաւորելով, կը վայելէ իր հաճոյքին առարկաները, ապականելու համար միայն:

— Թոյլ տուր ինձ, հայրիկ, դիտել տալ որ քու խորհրդածութիւնը՝ որքան ալ կուռ և խմտատուն՝ չգաղբիւր սակաւն միակողմանի ըլլալէ, վասն զի դու կը դատաւարտես տմուրի այրն առանց քննելու կնոջ թերութիւնները, իր կամաւոր մեղսակցութիւնը մեր զեղծումներուն հետ, մանաւանդ առանց քննադատելու կնոջ խելաղիւտութիւնը որով բուռն և անդիմադրելի հոսանք մը կ'ստեղծէ նա և որմէ կը քշուի, կը տարուի մարդն անկումը մինչև յետին վայրը՝ մինչև անդունդ: Դարձեալ դու կը ճառես այնպէս իբրև թէ ամուսնացեալ բոլոր այր ու կիներ ըլլային առաքինութեան ներկայացուցիչ՝ մինչդեռ յաջորդութեան օրէնքով՝ խմորուած աշխարհը ի՞նչ կարծես կը մտնայանէ իր ծոցին մէջ. ապա ինչ կան ամուրիներ՝ որ իրենց գոհութեամբ անձերով բարոյական կեանքը կը յաւերժացնեն՝ առաքելները ամուրի ապրեցան և Աւետարանը նոյն իրենցին աշխարհի:

— Նոյնպէս այդ առաքելներուն յաջորդող կուսակիցներ:

Ահա կէս դիշեր, օրը կ'սկսի և դու քսան մէկ տարեկան կ'ըլլաս, այս բոպէին ուրեմն կը դադարի իմ հայրական իշխանութիւնը քու վրայ ծանրանալէ, այսուհետեւ բարեկամ ենք իրարու, և կարծիքի ազատ փոխանակութեան ասպարէզին մէջ մենէ իւրաքանչիւրն իր նախաձեռնութեամբ կրնայ վեր հանել ճմարտութիւնը: Այս սուգի սրահին մէջ պէտք է նոյնպէս դադարի նախապաշարումը և տխուր սովորութիւններ իրենց վախճանին հասնին: Ահա ես իմ ձեռքով կը վերցնեմ մօրդ պատկերը վարագուրող սուգի պատատուր՝ որպէս զի իր ներկայութեան կատարուի քու հանդիսանար մուտքն ընկերային աշխարհին մէջ:

— Ահ, հայրիկ, դու . . . դու որ . . .

— Ինչ, Թորի, սրբէ արտասուքդ ու քաջ եղի՛ր լսել ձայնս որ քու մօր շունչով օծուած թոքերէս կ'արձակուի քեզ հաղորդելու համար նոյնպէս այդ սրբուհւոյն կամքն ու փափաքը:

— Խօսէ՛, հայրիկ, քու ձայնին մէջ իմ հոգին կ'զգայ մօրս գուրգուրանքը. թէ քու շուրթերը հաւատարմօրէն կը թարգմանեն ահա սիրտն իմ սիրտին, ես կ'երգնում իր գերեզմանին վրայ, թէ կը մերժեմ ձեր երկուքին փափաքը, թող ձեր անէծքն ըլլայ իմ դատականի:

— Ո՛չ այդպէս, այլ իբրև բարեկամներ խորհրդակցինք, փառաւորենք ճշմարտութիւնը մօրդ պատկերին տակ ինչպէս քահանան կը պատրաստէ Խաչեցեալին կոտակը Տիրամօր խորանին առջև:



Ըսիր թէ միակողմանի կը դատեմ մարդիկը բարոյականի վթար-  
ման ու բարձրութեւն ապականութեան բոլոր պատասխանատուութիւնը  
բեռնակրող ամուրիներու վտանակին վրայ, իսկ եթէ համբերութիւնն  
ունենայիր մինչև իմ քննադատութեան վերջակէտին սպասելու՝ հոն  
անշուշտ պիտի տեսնէիր բաղմակողմանի և խիստ անաշտ զննու-  
թեան մը եզրակացութիւնը, որով դարձեալ այլը, ինչպէս ամուրին՝  
նոյնպէս և ամուրինը պիտի մնային պատասխանատու :

Երբ ո և է խնդիր մանաւանդ ընկերային հարց մը կը յուզուի,  
քննադատը սլաքաբեր ամենէն առաջ այդ հարցին խորը թափանցել,  
մեծ խնամով և կարի զգուշավար ու շրջանայեաց քննութեամբ ու  
բռնել, գտնել, չօչափել և ուսումնասիրել անկումի բոլոր հիմնական  
պատճառները :

Թողով առ այժմ այն բազմատեսակ պատահարները որոնք առիթ  
կուտան այր ու կնոջ անհամաձայնութեան, գոտութեան և յետոյ  
ընտանեկան յարկերու քայքայման և որոնց բուն ծագումը կը վերա-  
գրենք յոռի դատարարականութեան ու զարգացման պակասին քննենք  
այն անաւոր և անբուժելի հիւանդութիւնը միայն որմէ վարա-  
կուած է մինչև իսկ ժողովուրդին մշակուած ու զարգացեալ դասա-  
կարգը, այս խտրին անունն է շահ :

— Բայց ինչպէ՞ս ներելի է շահին վերագրել, օրինակի համար,  
հարուստ կնոջ անհաւատարմութիւնը, որ իր բովանդակ կեանքով  
աղքատ օր մը չէ տեսած : մանաւանդ ի՞նչ ըսել այն դատապարտելի  
մոլութեան՝ որ կը նուիրագործուի մեր կրօնապետներու յօրինած  
հրահանգով, որ մատուած ամուսնին կուտայ մի այնպիսի տխուր  
զոր յետին թշուառն անգամ յախուռն պիտի մերժէր, ու եթէ այդ  
հրահանգը գործադրութեան դրուէր՝ որ ամուրին պիտի համարձա-  
կէր մինչև իսկ ամուսնութիւն բառն արտասանելու :

— Համբերէ՛ որ լացատրեմ, մի ածուղարեր երեւոյթներու վրայ  
վճիռներ արձակելու, ինչպէս ըրին մի շատ լանդլուռն ու տողանդա-  
ւոր գլուխներ առանց բացառութեան :

— Ի՞նչ, միթէ պիտի պաշտպանե՞ս հրահանգը :

— Այո՛, խիստ հակիրճ երկօայրաբանութեան մը ձևին տակ, ու  
որքան ալ իմ պաշտպանողականը քեզ և հառարակութեան իբր ան-  
մարսելի քարասօխ մը նկատուի, ես անով պիտի մերկացնեմ տը-  
խուր ու ցաւալի ճշմարտութիւնը :

— Շարունակէ՛, հայրիկ, հետաքրքիր եմ լսելու և կը փափաքիմ  
ընտելանալ այդ քարասօխին :

— Բուն մոլին, բուն չարը, գայթակղութեան բուն քարը՝ զոր  
ոչինչով կարելի է փշրել, պէտք է փնտռել շահին մէջ : ամուսնական  
կազմածքին մէջ չկայ աւելի զօրաւոր թոյն մը քան ֆլաշը : Բարոյա-  
կանի ամենէն բուռն հակառակորդն է շահը, շահը նոյն ինք պոռնկու-  
թիւնն է : շահը բոլոր ոճիրներուն ոյժ տուող ելեքտրականութիւնն

է. և որովհետեւ չա՛ր յաջորդեց սիրոյ՝ ընական էր որ ապականու-  
թիւնը ընդհանուր ու տարա՛ռն հանդամանքով նեխոտէր ընտանե-  
կան կեանքը: Այս ալէտը վնասելու համար պէտք էր հակաթոյն մը  
ներարկել ժողովուրդին երականերուն, այդ հակաթոյնը պէտք էր  
պատրաստել բուն հիւանդութեան աղտէն զտուած սերունդ, և ահա  
այդ սերուն է Հրահանգը:

Աւելի պարզ ու մեկին արտաբերումով բացատրեմ ինչ որ թերեւ  
խրթին թուի քեզ. ահա մարդ մը, ըսենք հարուստ, գործի և դիրքի  
տէր, զարգացած մինչև իսկ, որ սակայն իր երիտասարդական կորովը  
քիչ շատ ցոխութեան մէջ սպառած՝ կ'ուզէ ամուսնանալ. ամուսնու-  
թեան գաղափարը յղանալուն՝ անմիջապէս իր անձը կ'իներու աշ-  
խարհին մէջ աճուրդի կը դնէ. այն աղջիկը՝ ըլլայ գեղեցիկ կամ  
տգեղ, խելացի կամ սպուշ, հոգ չէ, որ ամենէ աւելի դրամ ունի՝  
խակոյն կ'ընդունուի աճուրդի դրուած մարդէն, բայց կ'ինը զգալով  
թէ ինք չէ ամուսնացողն այլ իր դրամը, նոյն այդ վայրկեանին չէ թէ  
սէր՝ այլ վրէժի ոգին կը ծնի իր սիրտին մէջ, վրէժ՝ զոր յետոյ պի-  
տի լուծէ. միւս կողմէն դրամին ամուսինը արդէն իսկ արտօնած է  
իր կնոջ գործել ազատ՝ ինչ որ սիրող ու սիրուած կ'ին մը չափաի  
գործէր երբէք:

Հետեւապէս այդ ամուսինը հարսանեկան տապաստին բացումէն  
առաջ իսկ իր բացարձակ և յօժար կամքով համակերպած է այն ճիւ-  
ղոսին զոր յետոյ Հրահանգը կ'սպառնայ առաջ, ուրեմն ինչո՞ւ վշտա-  
նայ պարմը, ինչո՞ւ արժանապատուութեան խնդիր յուզէ. ահ, առ-  
ժանապատուութիւն բառը կրնայ եղեր արտասանել դրամով գնուած  
ամուսին մը, ո՞ր կատակերդութիւն: Միայն սարբերութիւնը որ կայ  
տխտողն արուելու ձեակերպութեան մէջ՝ այն է թէ ամուսինը զայն  
յօրինած է իր հաճոյքը զոհանքելու համար, մինչդեռ Հրահանգը  
պաշտօնապէս կը հաստատէ. արդ, եթէ տխտողին պաշտօնական  
հանգամանքը պիտի կարենայ գոնէ մտածել առաջ դրամի ամուսին-  
ներուն՝ ուրեմն Հրահանգէն դուրս ուրիշ ինչ աւելի կուռ գաւազան  
մը կարելի էր գտնել ապականութիւնը հարուածելու համար:

— Կը հասկնամ, հայրիկ, բայց ըսիր արդէն թէ արիւնը արիւնով  
չմաքրուիր:

— Ո՛չ անտարակոյս, բայց կան մահատու հիւանդութիւններ որ  
սերունդէն ընդհանուր, ու սերունդ նոյն հիւանդութեամբ վարակուած  
արիւնէն միայն կը զտուի. չուրանանք գիտութեան հրաշալի գիւ-  
տերը:

— Մէկ կողմէ ամուսին դասադարձել իրր ընկերութիւնը սպու-  
ռող ցեյ, միւս կողմէ դրամով ամուսնանալու ընդհանրացած սովո-  
րութիւնը նկատել իրբն քար գայթակղութեան. ուրեմն սէր գտնել  
ճշմարիտ ամուսնութիւնը բառին նուիրական առումով:

— Սիրոյ մէջ աշխարհ սէր է, կեանքը սէր է, և ուր որ սէր չկայ՝



հոն արեւ չկայ, հոն օդ չկայ, հոն անդնդային խաւարը կ'իշխէ ու մթնոլորտը թոյնով խտացած է, հարցո՛ւր մօրդ պատկերին և անոր աչերուն մէջ պիտի կարդաս իր պատասխանը որ սէր է. եթէ քեզ ունեցանք, թորի, սիրոյ կը պարտաւորինք այդ գանձը: Հաւատանք սիրոյ դերիշխանութեան որմէ դուրս ոչինչ կայ Աստուածային ու Մարդկային, երբ մարդ սիրոյ կատարը կը բարձրանայ՝ Աստուած ալ հոն կ'իջնէ:

— Եւ սակայն աղէտալի փորձեր կը հաստատուն թէ սէրը մշտապէս ու տոկուն չէ. քանի՜ սիրային ամուսնութիւններ քայքայուած են մեղրալուսինէ քիչ յետոյ:

— Այդ աղէտին մէջ պէտք է վնասել զարգացման, կամքի ու նկարագրի չգոյութիւնը, որով ամէն ներդաշնակութիւն կը խանգարուի:

— Հապա ֆեմինիզմը որով կինը կը պահանջէ կատարելապէս հաւասարել այրին:

— Հաւասարութիւն, այո՛, բայց երբէք նոյնութիւն: Այդ ու կին պէտք է որ իրարու հանդէպ պարտաւորութեան և իրաւունքի հաւասարութիւն ունենան, պէտք է որ իւրաքանչիւրը բնական օրէնքով հաստատուած իր կոչումին ու դերին մէջ չթերանայ, այն ժաւ մանակ միայն հաւասարութեան խոչալը կ'իրանայ. ասորմէ դուրս կինը այրին նմանցնելու ամեն փորձ յիմարական է, վասն զի կնոջ առնացումը կ'ենթադրէ այդ փորձը, որով նոյնպէս համերաշխութիւն ու ներդաշնակութիւն չարաչար կը տուժեն: Այս հակիրճ բացատրութիւնը՝ զոր կուտամ անցողաբար, դու կրնաս վերլուծել, ընդարձակել և ըստ այնմ անվրէպ ուղեցոյցի բնութեամբ օժտուած հասնոր մը յօրինել, որուն մէջ կինը կարենար յստակ ու մեկին տեսնել իր իսկական և անթերի պատկերը: Բայց նախ ամուսնացիր:

— Ահ . . .

— Ամուսնացի՛ր որպէս զի մօրդ թողած պա՛խար լեցուի, ինչ որ անկարելի կը թուէր քիչ առաջ քեզի:

— Եւ ո՛ւր դասնել անոր նմանը:

— Հարցո՛ւր սիրտիդ, որու թելադրութեամբ միայն կրնաս յաշողիլ:

— Մէկէ աւելի է կիներու տեսակը. Նիշէ իր հոշակաւոր Զարաթուսթրայի բերնով երեք կարգի բաժնած է կինը, կով, կատու և թռչուն:

— Ընտրէ՛ թռչո՛ւն մը քեզի:

— Բայց թռչունը կը թռի, կը փախչի:

— Մի՛ վաճակել դա՛ն որպէսզի աչքը դուրս չըլլայ:

— Բաց օդի աւելի հեշտ է թռիլ:

— Ընտելացո՛ւր թռչնիկդ որ քու տաք բոյնին մէջ գտնէ իր հանգիստը, նոյնպէս քու ձեռքով ու ճաշակով պատրաստուած սնունդէն

դուրս ոչինչ փափաքի ճաշակել :

— Ի՞նչ տարբերութիւն բոյնի ու վանդակի միջև :

— Թո՛ղ զայն ազատ որ մերթ թա՛ն օդ ու լոյս վայելելու համար :

— Չվերադառնար :

— Կը վերադառնայ, վստահ եղիր, ինչպէս լրատար աղաւնիներ իրենց պաշտօնը հաւատարմօրէն կատարելէ յետոյ կուգան հանգչիլ իրենց սեպհական բոյնին մէջ :

— Սակայն բաց օդին որսորդներ կը հալածեն ու կ'սպաննեն զինքը :

— Սորվեցուր բարձր սաւառնիլ, այնքան բարձր ուր ոչ գնդակ և ոչ նետ չկրնան հասնիլ : Ընտրէ՛ կին մը որ քենէ սորվի կեանքը, վասնզի ամէն պարագայի մէջ կինը պէտք չէ ճանչնայ աշխատիլ այն չափով որով մարդը պարտի մշակել զայն :

— Զիշդ այդպէս . . . :

— Դու կ'երազես Թորի :

— Թո՛ղ զիս, հայրիկ, առաւօտը մօտ է :

— Կ'ուզեմ որ այսօրուան արեւին հետ նոր կեանք մը սկսի քեզ համար :

— Թո՛ղ զիս . . . :

— Խօսէ՛, մի՛ քաշուիր, արդէն ըսի թէ բարեկամ ենք այլեւս, ո՞վ է սխրահիդ :

— Կաղաչեմ . . . :

— Անունը :

— Օրբէլին :

— Օրբէլին, այն աղքատիկ որբուհի՞ն, որու ծիծ տուաւ մայրդ և դու օրօրոցը կ'օրէիր երբ հազիւ հինգ տարեկան էիր :

— Նոյն ինք :

— Մինչև ո՞ւր խօսեցան ձեր սիրտերն իրարու :

— Համբ, խիստ համբ և անմիմունջ, այնպէս որ հակառակ մեր ընտանի շաղակրատութեան՝ երբ ես ուժով նայիմ ուր ուրեք իր աննման երեսին՝ նա իր աչիբը կը խոնարհեցնէ և լուսափայլ ճակատը կը շիկնի :

— Այդ իսկ է՝ սէրը, գնա՛ ուրեմն աւետել իմ հաւանութիւնը և ըսել թէ իր ներկայութեամբ միտքս կրնայ բառնալ սուգը մեր տունէն : Այժմ դո՞հ ես, Թորի :

— Երջանիկ եմ :





Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

## ՅԱԻՏԵՆԱԿԱՆ ՀՐԵԱՅՆ

(DER EWIGE JUDE)

(ԱՒԱՆԴԱՎԷՊ ԳԵՐՄԱՆԵՐԷՆԷ)

«Ահաավեր Կարմեղոսի միջին մէկ քարայրէն դուրս կը սողոսկի դողդոջ քայլերով. երկու հազար տարուան մօտ է որ նա թափառական կ'երթայ երկրէ յերկիր: Այն օրը ուր Յիսուս խաչին բեռը կը կրէր, ուղեց վայրկեան մը հանգչիլ Ահաավերի զբոնն առջև. աւաղ, ընդդիմացաւ սա ու խտուրթեամբ վանեց Մեսիայն: Երբեք կոծ կ'իյնայ Յիսուս բեռին տակ, այլ գանգատ չեններ իր բերնէն:

«Այն ատեն մահուան հրեշտակը Ահաավերի առնը մտաւ ու գայրազին ձայնով մ'ըստւ անոր. «Մարդու որդւոյն դու հանգիստը ղլացար . . . լա՛ւ ուրեմն, ձիւսա՛ղ, ա՛լ քեզ համար չկայ հանգիստ, մինչև այն օրն ուր վերստին գայ Քրիստոս:

«Սև դե մը խուսափեցաւ յանկարծ անդունդէն և սկսաւ հալածել գրեզ, Ահաավեր, երկրէ յերկիր . . . : Մահուան քաղցրութիւնը, գերեզմանի հանգիստը, այս ամէնն անկէ ի վեր զլացուեցաւ քեզի . . . :

«Ահաավեր դուրս կուգայ գայթ ի գայթ Կարմեղոսի միջին մէկ քարայրէն . . . : Կը թոթուէ մօրուքին փոշին, հոն դիզուած գանկերէն մին կ'առնու և կը նետէ զայն լերան բարձունքէն. գանկը կը ցատկոտէ քարէ քար ու կտոր կտոր կը խորտակի: «Հայրս էր ան» կը գոչէ Հրեայն: Հաս մ'ալ . . . ո՛հ, վեց հոտ ալ սո՛ւս՝ կը գլորին կ'երթան Ժայռէ Ժայռ . . . : Եւ ասո՞նք . . . և ասո՞նք, կը մօնչէ աչքերը կատաղութեամբ բոցավառ: Ասոնք կիննրս են:» Ահ, գանկերը միշտ կ'երթան թաւալգլոր: Ասո՞նք . . . հապա ասո՞նք. ողաքներու գանկերն են: Աւաղ, անոնք կրցան մեռնիլ. բայց ես, անիծեալս, չեմ կարող . . . : Ահեղ վճիռը իմ վրաս կը ծանրանայ յաւիտեան:

«Երեսաղէմ ինկաւ . . . : Սանդեայ մանուկը ջախջախեցի, բողբերուն մէջ նետուեցայ. անիծեցի Հռովմայեցին իր յաղթութեան մէջ: Աւաղ, աւաղ, անխոնջ անէծքը պաշտպանեց զիս միշտ, և չմոռայ: Հսկայ Հռոմը կը կործանէր. գայի տակը կեցայ, ինկաւ ան . . . առանց զիս ջախջախելու: Անոր բեկորներուն վրայ աղգեր կանգնեցան և վերջացան աչացս առջև . . . : Ես մնայի ու չկրցայ լ'մնալ:

«Ամպածրար ապառաւի մը բարձունքէն ծովերու վհին մէջ գա-  
հավիժեցայ. բայց շուտով սարսուռն ալիք զիս դէպի ծովափը գլո-  
րեցին, և գոյութեան փրկնը խոտեց զիս կրկին: Աչքերով չտիեցի  
Նտնայի խաւարաբորբ հրաբերանը, և մոլեգին հոն նետեցի զիս: Հոն  
հոկայից հետ տասն ամիս այրեցայ, և թառունչներս ծծմբաժառ գի-  
հը տաղտկացուցին, աւաղ, ամբողջ տասն ամիսներ: Սակայն Նտնա  
փրփրաց իւր լաւայի ալիքներու մէջ զիս դուրս պոռթկաց իր ծոցէն.  
մոխրին տակ կը բաբախէր սիրտս ու նորէն սկսայ ապրիլ:

«Անտառ մը կայրէր, հոն դիմեցի խօլ խելայեղ. ծառերու բոցա-  
վառ վարքն իմ վրայ թափեցին իրենց բոլոր կայծակները. բայց  
հրդեհը մարմինս միայն ցտեց ու վայն ծախել չկրցաւ: Այն ատեն  
պատերազմող մարդոց խռան խառնուեցայ, մարդամբոխից փոթոր-  
կին մէջ ինկայ գահավէժ: Զայնատուր եղայ Գաղիացւոյն, Գերմա-  
նին... . բայց միսս տէգերն ու գեղարդները կը բխացնէր.  
սուր մը կորստեցաւ գլխուս վրայ, երկար ատեն գնդակները պղքն-  
ձազրահի մը դէմ արձակուած սիսեռներու նման տեղային հան-  
դերձներուս վրայ ընդունայն: Անպօր իմ մէջքիս շուրջը օձաշաւիղ  
գալարեցան չանթերը մարտի, ինչպէս ամպերէն վեր բարձրացող  
պարսպաձև ժայռի մը շուրջ:

«Հսկայի մը պողպատեայ գանդուածը փշրեցաւ իմ վրայ, դահ-  
ճին բուռը զիս բռնելու պահուն գօսացաւ. երբեք կրկէսին մէջ սո-  
վալուկ առիւծ մը զիս պատառել չի կրցաւ: Թունաւոր օձերու վրայ  
պատկեցայ. օձը զիս խայթեց ու չմեռայ: Վիշապն իր գալարներուն  
մէջ հեղձամղձուկ զիս սնդեց, ու չմեռայ:

«Աւաղ, չկարենալ մեռնիլ, չկարենալ մեռնիլ, չկարենալ հանգ-  
չիլ յետ կեանքին յոգնութիւններուն: Ընդ քարշ տանիլ անվերջ այս  
փոշեղէն մարմինը՝ իր կմախային գոյնովն ու դամբանային հոտովն:  
Հազարաւոր տարիներ դիտել պարտաւորիլ յորանջող հրէշային միօ-  
րինակութիւնը, և արգաւանդ ու անյաբուրդ ժամանակը, ու միշտ  
ծնանող ու միշտ իր ծնունդները լափող:

«Աւաղ, չկարենալ մեռնիլ, չկարենալ մեռնիլ: Ահաւոր բարկա-  
ցողը երկնից, քու զինարանիդ մէջ ունիս ահաւորագոյն տանջանա-  
րան մը: Ահ, ինկիր ուրեմն շանթահարող իմ վրայ. թո՛ղ որ կար-  
մեղեան ժայռերէն մրրկավար կործանիմ դարահոն, սնանց ստորոտը  
թաւալիմ հեալով ու ջղածիդ ողեարիմ ու շնչարձակ մեռնիմ»:

«Ու Ահապեր գետին տապալեցաւ. ականջները դռնեցին, ու դի-  
չերը ծածկեց անոր ձիգ արտեանունքը. հրեշտակ մը տարաւ զայն  
հեռուն անձաւին մէջ: «Քնացի՛ր հիմա հող, ըսաւ հրեշտակը, Ահա-  
սվե՛ր, քնացի՛ր անուշ քունով. Աստուծոյ ցասումը չէ՛ յաւիտենա-  
կան:



ԱՐՏԱՇԷՍ ԵՍՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ԱՊՈՒԽԻՆԻ ԵՒ ԱՄԱԼԻՆԻ

Ah! ne jamais sortir des Nombres et des Etres!

BAUDELAIRE

Այլ մոռցայ զգայն, օրագիրս: Մոռցայ: ձիւղ է ըսել թէ մոռցայ: Ո՛հ, չա՛տ կը յիշեմ զգայն, աւելի քան երբեք կը յիշեմ զգայն, օրագիրս: Թերեւս անոր համար մանաւանդ որ՝ այլեւս անոր անկարելիութենէն կը տանջուիմ: Օրագիրս՝ զգայն չեմ կրնար ունենալ այլեւս: Ու կը խանդաղատիմ այսօր, ժամանակ մը զգայն ունեցած ըլլալու միամտութեանս վրայ: Ինչպէս կարելի էր այն տեսն, և ինչո՞ւ անկարելի է հիմա: Կար ժամանակ ուր մեծ ու վճիտ վստահութեամբ մը, որ յատկանիշն է մանուկ հոգիներուն, ներքին մտերմասացութիւններս ճերմակ էջի մը գաղտնապահութեան վստահելու քաջութիւնն ունէի: Ատիկա՝ անտեղիտալի հարկ մըն էր կարծես մանաւանդ: Լեցուն ճնշեալ անօթ մը՝ որ կը դեղուէր: Ի՞նչ պարզ էր հոգիս: Ի՞նչ վճիտ էր ան: Որքան կարելի էր անպատիր նայուածքով յատակին պայծառութիւնները դիտել, — ոսկեղօծ խիճերը՝ արեւի ճառագայթէ մը ընկած, հանդարտ աւազը՝ մաքուր և արծաթափայլ, կամ պատահական խռովութիւնները՝ որք այնքան չուտով կը խաղաղէին: Այսօր՝ տարօրինակ կերպով, անթափանցելի կերպով պղտոր կը տեսնեմ ինքզինքս: Ու վախով մը, որ անբացատրելի է, և կասկածով մը՝ որ դատապարտելի է թերեւս, կը սիրեմ զգայն, այդ պըղտորութիւնը: Յատակն այլեւս անորոշ խորութեանց մէջ կ'անհետի: Ջուրերուն ցեխտոտ պղտորութիւնն՝ ամէն թափանցում անկարելի կը դարձնէ: Արեւին ամէնէն վճիտ ճառագայթը՝ մակերեւոյթի անզօր խաղ մըն է: Գրիւ ուժաթափութիւն մը: Քանդի, հսկառակ մակերեւոյթին անայլալ խաղաղութեան, ներքին կոնֆլիկտներու դուպար մը՝ յատակին աղիքները կը յօշոտէ անընդհատ: «Իմօք ժպտեալ և մոռք լացեալ», ըստ Նարեկացւոյն: Այլեւս անկեղծ չեմ ես ինքզինքիս հետ, այլեւս անյողթելի կասկած մը, մտերիմ համարձակութիւններս կը շղթայէ: Մեծ գաղտնապահութիւն մը՝ իր թունաւոր հրապոյրներով կ'արբուցանէ զիս: Այո՛, անշուշտ, ուրիշ տեսն մըն ալ, երբ օրագիր մը ունէի, անոր էջերը աշխարհի չորս հովերուն սահմանուած չէին: Մնոնք իմս էին նորէն, ինձի՛ համար էին միայն: Այդ իսկ պատճառով, այդ պատճառին խորունկ անկեղծութեան հետեւանքով էր անշուշտ որ, օր մը այլեւցի օրագիրս, զգայն գրած ըլլալու ամօթէն ճակատս կարմրահար: Եւ ահա՛ այսօր, ընդդիմամարտ տպաւորութիւններու հալա-

ծանրի մը մէջ, շուարուն կ'զգամ ինքզինքս: Սուգն ունիմ՝ այլ ևս անկարելի իմ անկեղծութիւններուն: Խրոխտանքը կ'զգամ՝ իմ այսօր ունի գաղանասիրութիւններուն: Այն երբեմնի միամիտ պայծառութիւններուն ամօթահար ապաշաւը կամ կարօտալիր յիշատակը և այսօրուան միգապատ պղտորութիւններուն դառնութիւնը կամ հպարտութիւնը: Ի՞նչ կորսնցողի այն պայծառութիւններուն հետ, — արեւի ոսկեթիւ ճառագայթ մը: Ի՞նչ չահեցայ այս պղտորութիւններուն հետ, — ինքզինքս բարդ, անթափանցելի և խորունկ զգալու ունայնամտութիւնը:

\* \* \*

Բայց ահա նորէն մտածումիս ցայտերը կը վարանին: Ի՞նչ կ'ընեմ այս վայրկեանիս. նոր օրագիրի մը յառաջաբանն է այս: Ո՛հ, ո՛հ, ատրկա անկարելի կը թուի այլևս: Ինչո՞ւ կը գրեմ սակայն. ինչո՞ւ գրած եմ ընդհանրապէս: Ինչո՞ւ կը գրեն մարդիկ: Ե՞րբ պիտի գգնատանամ այս շատախօսութիւններուն նանրասիրութենէն: Լռութիւնը, որ դրոշմն է գերազանց մեծութեան ու գերազանց իմաստութեան, — ի դուր իմ մէջս քու վճռական կարելիութիւնդ կը փնտռեմ, ո՛վ լռութիւն: Տակաւին որքան անմտօրէն խլրտուն են այս չաղփաղփ շրթունքներս, առկաւին որքան անզգամ եմ. «Ձայն անզգամիւն՝ ի բազմութեան բանից» ինչպէս ժողովողը կ'առածաբանէ: «Լռութիւնը, մեծ կայսրութիւնը լռութեան, — կը գոչէ Քարլայը, Մոուս Մէթէլինքի մէկ մէջը երումին համեմատ, — աւելի բարձր քան լուսաւորները, աւելի խորունկ քան Մահուան տիրապետութիւնը...: Լռութիւնը՝ և ազնիւ մարդիկը լռակեաց...: Անոնք ցրուած են հոս ու հոն, անձնիւրն իր գաւառին մէջ, խորհելով լռելիայն, աշխատելով լռելիայն, և առտուան օրաթերթերն անոնց վրայ չեն խօսիր բնաւ...»: Առտուան շատախօս այն օրաթերթերը, որոնց հետ այնքան կապեր ունի իմ ստրկութիւնս: Կ'աշխատակցի՞մ անոնց, անոնց հաւանութեան կ'ենթարկեմ իմ մտածումս, իմ զգացումներս, իմ յոյզերս ու երազներս և իմ անձս բոլորով: Ամէն օր պիտի հանդուրժեմ որ, ընթերցողներու դատաստան մը վճռէ իմ մասին, իր անմիտ հաւանութեամբը երախտաւորէ զիս, և ասիկա իմ գիւրագնի ու նուաստ երջանկութիւնս պիտի չինէ:

Բայց իրա՞ն է այս բոլորը. թերեւ կրնայի ըսել անարատ անկեղծութիւն մը՝ թէ այդ ստրկութիւններուն հարկը լիովին չի գերեվարեր իմ հոգիիս հպարտութիւնը: Գրեթէ մտքէս անցողցած չունիմ ուրիշի համար գրել: Այդ եղանակը՝ չափազանց անախտ ու յաւակնոտ գտած եմ իմ ոգն լռութեանս համար, իմ տքնութիւններովս ուրիշներուն հաճոյքը պիտի չինէի: Երբեմն այս տուրեառիկ փառասիրութիւնը գերելարեց զիս: Այդ խայծին համար այսօր որեւէ արտօթակ չունիմ այլևս: Մեղուշն որի՞ համար կը չինէ մեղը: Մեղուին գերը՝ իշամեղուներուն ծոյլ երջանկութիւնը չինելու էր միթէ: Ստեղծա-





սիրովելու մտքիս ցաւաքեկ արգանդը, անդարմանելի պարտաւթեան մը գդալութիւնը կը թողու իր ետին: Աւելի՛ գերողանց, աւելի՛ բաւ ցարձակ ու անխառն, հրճուանքը կուգեմ ես: Դժուարտապահանջ հպարտ մօր մը մօխանքով, պիտի ջանամ խեղդել՝ այդ զաւակներս, մտքիս անլոյս գիշերին մէջ: Աշխարհի նուաշտացուցիչ հաւանութիւնը չպիտի սրբապղծէ զանոնք: Իմ այդ ներքին ճշմարտութիւններս պիտի մնան բացարձակ, անկէռելի՛ անչափելի՛ անթափանցելի բացարձակին մէջ, և մասնակի լուսաւորումներ չպիտի ռամկացնեն անոնց անձառելի խորհուրդը:

\* \* \*

Այս դաշտավայրի կենցաղն այլեւ կը խեղդէ զիս, կը սողացնէ զիս, կը ջնջէ զիս: Լեռնային վայրերնի բարձրութիւններու պտպակ մը կը խոշտանգէ ռնդունքներս, այն աստուածամերձ աստուածաբնակ սարերուն, զոր կ'երգէր սաղմոսերգուն Դաւիթ, — ուր հանդարտութիւնը կը ձիւնէ, լուսթիւնը կը խոկայ և միայնութիւնը կ'աշխարհակալէ: Այն վերերէն՝ անդունդին խորութիւնն աւելի՛ վսեմ ըլլալու է և աւելի՛ տալաւորիչ, — խորութիւնն անդունդին՝ որ կը գահավիժի անստուգութեան մէջ: Այդ առանձնութիւններուն մէջ, հնգիկ Եօկիի մը հոգեկան կատարելութեան կը ցանկայի ես, բաղձանքներուս բաղմագլխեան իժը՝ կրունկիս տակ ջախջախուած, անդգաժ խաղաղութեան մը օծումովը հոգիս զօրացած, աշխարհի ու կեանքի դարձդարձիկ ու վաղանցիկ գունափոխումներուն խորը՝ նկատելիով տիեզերական անբաժանելի միութիւնը, — միակ բացարձակ ճշմարտութիւնը, որուն համար արժէր հոգ ունենալ: «Ան որ ամէն բան կը գտնէ միութեան մէջ, որ ամէն բան կը վերբերէ միութեան, և որ ամէն բան կը տեսնէ միութեան մէջ, կրնայ հաստատ սիրտ մը ունենալ, և խաղաղութեան մէջ ապրիլ Աստուծոյ հետ»: Այսպէս կ'ըսէր Նիսևոսքեան անձանոթ այն մեծ հեղինակը, որ բարոյական կատարելութեան գաղափարը ձեւաբանեց, փոքրածաւալ բայց անմոռանալի այն գրքին մէջ: «Հաճոյք, զգացէք անձանոթ մնայէն և աշխարհի մէջ բանի՛ մը տեղ չդրուելէն»: Ուրեմն, այլեւ թիթիւնիկի մը հոգեվարքը, վարդի մը գունաթափութիւնը, սիրելիի մը գալկահար ճակատը՝ չպիտի զօրէին արամեցնել զիս, — այլեւ մահուան վիշտին տնաւիկ պիտի ըլլար այս հոգին, խորապէս իմաստնացած, մաքրուած աշխարհի բոլոր կապերուն վաղանցիկ հրապոյրներէն, զի ամէն ինչ երևոյթ է, խաբկանք է, ներկայացում է: Այն ատեն ես պիտի վնասեմ իմ Աստուծոյ, իմ էութեանս խորը. ես պիտի ջանամ գտնել զոյն՝ հոգւոյս անկնճիռ պայծառութեանը մէջ: Սուր Թամաքուիչա Բառամահանսա[\*], ո՛վ սուրբ, ո՛վ մեծ իմաստուն,

[\*] Ժամանակակից Հնդիկ իմաստուն

[«Ա. ՄԱՄՈՒԼ» — Ա. Եռամեսայ]



կը ճնրագործեմ քու խօսքիդ ճշմարտութեանն առջև. «Ինչպէս որ լուսինը բեկեղալ պատկերներով կը ցոլանայ վերդովալի ջուրերուն պզտոր մակերեսին վրայ, այնպէս ալ՝ Մայայէն (պատարանք) նուաճուած մարդու մը խռովայոյզ ոգին՝ հաստիկոտոր մասերով կը ցոլացնէ աստուածային պայծառութիւնը:»

\* \* \*

Օհ, ունայն յառաջադրութիւններս, օհ, իմ հաճելի ինքնախաբեւութիւններս: Ո՞վ աւելի քան ես ինքս պիտի վկայէր իմ ստրուկ մարդկայնութեան անդամանելի տկարութիւններուն նկատմամբ: Ահա՛, աշխարհը կը չրջապատէ զիս, կը հալածէ, զիս՝ իր սնտախփներուն՝ կախարդանքովը՝ և իմ բաղձանքս գերազոյն ձերբազատութեան: Նոգւոյս գերազոյն՝ գերեթափութեան, գեոմաքարչ թուիչքի մը թեւարախումն է միայն: Ահա՛, աշխարհի պայմանէն հալածական է յաւէտ՝ իմ գոյութիւնս: Երեւթներու տեսարանը կը նուաճէ զիս: Կարելի չէ որ իմ զգացողութիւնս ճողողի վազանցիկին ու անկայունին՝ մշտափոփոխ չրջապատումէն: Հազիւ ուրեմն՝ հոգիս՝ ինքնամփոփման, կեդրոնացման և գերազոյն հայեցողութեան գերեթանիկ երկվայրկեանի մը մէջ: Բացարձակ միութեան գաղափարին պիտի մերձենայ, անոր զգացումին թափանցումը պիտի հաստատէ իր չամանդադնիւրուն մէջ: Բոլոր մնացեալ վայրկեաններուն, ժամանակին վրայ՝ նետուած ու միջոցէն աւակախ երեւոյթ մըն եմ նաեւ ես ինքս: Ու հաւատք և հաւաստիք իսկ չունիմ թէ մեզի ծանօթ մա՞ր՝ բացարձակօրէն պիտի ձերբազատէ զիս այս պայմանին լուծէն: Ապա ուրեմն, եթէ տարելուն մէջ գերազոյն խնաստ մը չկայ, եթէ տարելուն մէջ անդրադառնի վախճանականութիւն մը չի տեսնուիր, այլ սակայն՝ ապրիլը տրամաբանական կը կը թուի նորէն, ինչպէս մեռնիլը արամաբանական է: Կիանքը մերթ չեն սիրեր մարդիկ, և կոմ գայն անհրապօր կը գտնեն վաւրնդի՝ բարիին ու չարին անձնական սկզբունքը կը վարէ զմեզ մեր գնահատումներուն մէջ: Եւ չէ կարելի ժխտել թէ՛ տառապանքն է մահաւանդ դրական: Շօթէնհաուէրի յոռետեսութիւնը ճիշտ է և մաթեմատիքական: Իր կործանարար եզրակացութիւններուն, իր ժխտական յարակարծիքներուն (paradoxe) խնցական հաճոյքը կը ճաշակեմ: Միայն թէ՛ ճշմարիտ չէ ան: Կարելի չէ փիլիսոփայական ու բնագիտական հարամաութեան մը, հաւաքաբանութեան մը պիտակ լուր հարկադիր բնել բնութեան: Անելութիւնը, նիրվանան՝ երազ մըն է, պատրանք մըն է, անկարելիութիւն մըն է: Անիկա հանճարամտութիւն մըն է միայն, մինչդեռ լինելութեան խնդիրը, ապրելու կամքը, կը վարեն մարդկութիւնը, խնդալով իր բոլոր բնականացութիւններուն վրայ, հեգնելով իր բոլոր նրբամտութիւնները:

Զպիտի եղբակացնեմ՝ Պէտք է ապրիլ . վասնզի յաճախ կրնամ հաս-  
տատել թէ՛ պէտք մը չէ ապրիլը : Զպիտի հաստատարանեմ թէ՛  
պէտք չէ ապրիլ . վասնզի այս վճիռը խիստ անհաստական է ու անզօր  
խել : Այլ պիտի ըսէի՝ Քանի որ կ'ապրիմ . . . : Միայն թէ, ես պի-  
տի ուղէի որ, կեանքին հանդէպ իմ ունեցած դիրքս, պատրանքնե-  
րէ դառնացած և դատալիք մարդու մը դիրքը չըլլայ : Նախ՝ չեմ ու-  
զեր կեանքին տուած ըլլալ մտացածին խաբեպատիր նշանակութիւն  
մը, ցնորալից նպատակներով լեցուն, զորս յետոյ կեանքն ինքն իսկ  
պիտի գար հերքել : Մարդոց յուսախաբութիւնները, հետեաբար ի-  
րենց ստառապանքները, այնքան աւելի մեծ են՝ որքան մեծ եղած  
են իրենց յուսադրութիւնները՝ կեանքին վրայ : Ոչինչ կայ բացար-  
ձակօրէն լուրջ՝ կեանքին մէջ : Պէտք չէ անխորատակելի կապեր երե-  
ւակայել, պողպատէ չղթաներ՝ որք զմեզ անոր կապած պիտի ըլլա-  
յին : Ինչ, բամպակէ մանած մը, որուն կապանքները հոգիիս թւիչ-  
քը պիտի գելուին :

Բայց քանի որ կապրիմ . . . :

\* \* \*

Բազմատարր աշխատէր մտածումներու խարխափոտ հոյլ մը կ'ելե-  
ւէջէ գլխիս մէջ, վերջալոյսի միջնադէպի խորը թռչտող ոսկեղօծ մի-  
ջաններու և մեղուններու պարսի մը նման : Զգացումին ու մտածու-  
մին ներշնչութեան անլուծելի պայքարը, ներքին ներդաշնակութիւն  
մը ստեղծելու ցաւազին մշտարթուն ջանքը, — այս եղբրական բա-  
նազործութեան յաւիտենական թատերապային է ահա իմ հոգիս, բո-  
ւոր իր տենջերով, բոլոր իր սաւառումներով, բոլոր իր երազներով :  
Ու վերջին պահուն, աւելի քան երբեք ինքզինքս անկեղծ կզգամ  
իմ հէգ մարդկայնութեան հետ . երբ կը խորհիմ կ'անդադառնամ  
իմ անդարմանելի ունայնասիրութիւններուս : Ինչո՞ւ գրեցի այս բո-  
ւորը : Ինքզինքս համոզեցի՝ թէ ուրիշներուն հետաքրքրութեան հա-  
մար լարուած թակարդ մըն էր այս : Միակ բան մը կը մխիթարէ զիս  
այս բոլորին մէջ . ինքզինքիս վրայ կարեկցօրէն խնդալու, իմ խըր-  
տուն ոչնչութեանս նկատմամբ հեգնօրէն արգահատելու չափ սիրտ  
կ'զգամկուրծքիս տակ, ու կ'իշխեմ Բասթալը՝ որ Մարդոց մեծութեան,  
ունայնութեան, ճկարութեան ու թշուառութեան վրայ իր խոյուժ-  
ներէն մէկին մէջ կ'ըսէ . « Ունայնասիրութիւնն ա՛յնքան ամբապնդ  
միտած է մարդուն սրտին մէջ որ, որմնադրի աշկերտ մը, խոհա-  
նոցի ծառայ մը, բեռնակիր մը՝ ինքզինքը կը գովէ, և կը փափաքի  
ունենալ իր հիացողները . և փիլիսոփաներն ալ՝ նոյնպէս : Անոնք որ  
կը գրեն փառքի գէմ, կուզեն լաւ գրած ըլլալու փառքն ունենալ,  
և ես որ կը գրեմ ասիկա, ե՛ս ալ թերեւս այդ իղձն ունիմ . . . : »

Իսկ ան՝ որ չաղակրատեց այս էջերուն ընթացքին, ի՞նչ միտք  
ունէր և ի՞նչ ըզձանք . . . :





ՏՕՔԹ. ԵՈՒՍ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

ՄԱՍՄ

## ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ՀԱՅՐԸ

Յունական բժշկութեան ծագումը միութեամբ պարուրւած է: Պատճառ մը չիկայ սակայն հաւատալու թէ բժշկական գիտութիւնը՝ ի՞նչպէս նաեւ փիլիսոփայութիւնը՝ եգիպտոսէն մտցուած ըլլայ Յունաստան: Թէև կրնայ ըլլալ որ Յոյն բժիշկներ՝ ժամանակի ընթացքին մէջ հմտացած ըլլան գիտութեան այն վիճակին, որուն հասած էր եգիպտոս և հաւանական է նաեւ թէ այդ խմաստով՝ անոնք օգտուեցան ալ եգիպտական գիտական գննութիւններէն և մէթոսներէն:

Բժշկական արուեստի մասին առաջին ակնարկութիւնը կը դրուի Հոմերի գրուածքներուն մէջ: Հոմեր՝ երկնային կամ առաւուածային ծագում մը և բնութիւն մը կը վերաբերէ բժշկութեան: Եւսկիւլապի տղաքները կը յիշուին ո՛չ թէ իբրեւ քուրմեր, այլ իբրեւ պատերազմիկներ Յունական բանակին մէջ, որոնք ունէին միանգամայն մասնաւոր ճարտարութիւն՝ վէրքեր դարձանելու: Հոմերի գրութիւններուն մէջ ուրիշ ակնարկութիւններ ևս տեսնուած են բժիշկներու մասին. բժիշկները կը յիշուին — Հոմերի կողմէ — միշտ յարգանքով և ակնածանքով, և է՛կրեւ թէ այն ատենի նկարագրուած ընկերութեան մէջ՝ քուրմերէն բոլորովին սարքեր ու անջատ բժիշկներ կային: Աւելի վերջերը անկայն, բժիշկը միանգամայն քուրմ էր: Տաճարներ կանգնուած էին առողջարար կլիմայ ունեցող քաղաքներու մէջ, համբային ջուրերու տեղերու քով, և հիւանդներ ու ցտապարներ հո՛ն կը գէմէին դունդադունդ՝ առողջութեան չափաւորածին դարմանը հայցելու համար: Ու այդ տաճարներուն մէջ կատարուած դարմանահրաշ բժշկութիւններու արձանագրութիւններէն ոմանք հասած և պահուած են մինչև մեր օրերը: Այն քանի գիտական ծանօթութեան և փիլիսոփայական տեսութեան համաձայն՝ չափաւորածի մը ցատումը բաւական էր հիւանդութիւն մը առաջ բերելու համար, ինչպէս նաեւ երազ մը՝ դայն դարմանելու համար: Ֆիլիքական բներեղոյթ մը ֆիլիքական պատճառով մը բացատրելի հիւներու միտքէն չէր անցներ երբէք, ուստի և ֆիլիքական, բնական երեղոյթներու բացատրութեանը համար կը դիմէին երկնակամարին, և երբ ստիկա ալ բաւական չըլլար՝ գերնախանին:

Հին Յունաստանի միաւորական գործունէութեան ամէնէն փոքրուն չըլնանին Քրիստոսէ առաջ 470 թուականներուն ծնած է բժշկութեան հայրը՝ Իբսկրատ, որուն համար կ'ըսուի թէ սերած էր Եւսկիւլապէն: Այդ չըջանին, Յունական կեանքը և խորհուրդը կար-



ծեռ մագնիսական աղդեցութեան մը տակ՝ կը կրէին ահագին առաջգլխութիւններ, մեծամեծ բարեհոգութիւններ, և Իրոկրատի հման մեծ մտքի մը պէտք կար որ ուրիշ գիտութիւններու վրայ ներգործող այդ հոյն աղդեցութիւնները իրենց հետեանքը ունենային նաեւ բժշկութեան վրայ, հիմնովին փոխելով զայն, և նոր դիրք մը տալով անոր գիտութիւններու, փորձառական գիտութիւններուն պատուական և օգտաշատ ցանկին մէջ :

Իրոկրատ ուսաւ Պորճիաս և Տէմոքրիտոս փիլիսոփաներուն ձեռքին տակ : Կասկած չիկայ թէ իր ժամանակէն առաջ գոյութիւն ունէր բժշկութիւնը. բայց նախկին գիտութեան վրայ աւելցուցած ծանօթութիւններէն զատ՝ Իրոկրատի գործը կամ աշխատութիւնը անմոռանալի ու յիշատակելի կը մնայ գլխաւորաբար սա՝ երեք տեսակէտներէ :

Առաջին . ի՞նք էր որ բժշկութիւնը անջատեց նախապաշարումէ . որովհետեւ, Իրոկրատ բացարձակապէս կ'ուրանայ հիւանդութիւններու երկնային բնութիւնը : Ոչ մէկ հիւանդութիւն, կ'ըսէ, ուրիշ մը աւելի աստուածային կամ մարդկային է. և ո՛չ մէկ հիւանդութիւն՝ կ'աւելցնէ, առաջ կուգայ առանց բնական պատճառի : Այս որոշ ըսկզբունքին վրայ հիմնուելով, մէկդի նեւեց ժողովրդական նախապաշարական հմայքները և թովշութիւնները : Ու այս մասին իրեն կատարած դժուարին գործը հասկնալու համար կը բաւէ գիտել թէ սա՝ մեր լուսաւորեալ օրերուն իսկ ի՞նչ գեր կը կատարէ նախապաշարումը, և ի՞նչքան դժուար է հասարակ ժողովուրդին համար ազատիլ անոր կործանարար աղդեցութենէն :

Երկրորդ . ինքն էր որ առաջին անգամ յայտարարեց սա՝ մեծ ու կարեւոր ճշմարտութիւնը թէ՝ ճշգրիտ զննութիւնը բժշկութեան մէջ՝ բոլոր գիտութեան իրական հիմն է. և ուշադրութիւն դարձուց հիւանդութեան միայն բնական պատճառի կամ պատճառին . ու մտածական փիլիսոփայութեան դրութիւնովը՝ ընդհանուր սկզբունքներ հանեց գիտուած անհատական կամ մասնաւոր երեւոյթիցէ ու պարագաներէ :

Երրորդ . Իրոկրատ էր որ առաջին անգամ քարոզեց և գործադրեց ա՛յս մեծ սկզբունքը թէ՝ բժիշկին գլխաւոր պարտականութիւնը — արուեստն — է գիտել և ուսումնասիրել բնութեան գործողութիւնները, և կարգաւորել զանոնք . արուեստն մը կամ ճարտարութիւն մը որ կ'ստացուի միայն փորձառութեամբ : Իր այս համոզումն էր որ զինքը ըրաւ մանրակրկիտ հետազօտող մը բնութեան գործողութիւններուն . զգուշաւոր՝ խառնուելու անոնց գործելու եղանակին : Իր այս զննութիւններէն հանուած փորձառութիւնն էր որ իրեն համար դժեց սա՝ օգտակար կանոնը՝ լսորիք ընել և չարիք չընել հիւանդին : Խորհրդալից կանոն մը, և ամէն բժշկի ուշադրութեանը ջերմապէս յանձնարարելի ոսկեղէն կանոն մը . քանզի այդ խօսքը իր

այսպէս ձեռն մէջ կը խառնէ ինչ որ պէտք է ըլլայ Իբոկրատի աշակերտի մը կէտ նայատակին՝ հանդէպ իր հիւանդներուն :

Իբոկրատ մասնաւոր ուշադրութիւն դարձուցած է առողջներու և հիւանդներու արուելիք կերակուրներու ամենակարեւոր խնդիրին : Հիւանդութեան վանագան տեսակներու և աստիճաններու համար նկարագրած է մասնաւոր ճաշացոյցակներ , ու դժած է օգտակար կանոններ վիճիկ գործածութեան մասին : Հասկնալու համար թէ ինչքան խորաթափանց ըլլալու էր ինք , որ այդքան կանուխ դարու մը մէջ իսկ ուտելիքի և խմելիքի մասին որոշ կանոններ դժեւու չափ առաջ գացեր է , միտք բերելու ենք թէ հիւանդներու և առողջներու ուտելիքներուն կամ ճաշի խնդիրը դեռ մինչև այսօր լման մը վճռուած չէ : Այսպէս , ամէնուն գիտցած բանն է թէ քիժօ կոչուած աղիքի հիւանդութեան միջոցին կարծր նիւթեր կամ հաստատուն մարմիններ ուտելու չէ՝ հիւանդը : Դեռ քանի մը ամիս առաջ սակայն Լոնտոնի նշանաւոր հիւանդանոցի մը տկանաւոր մէկ բժիշկը իր երկարատե ու հեղինակաւոր փորձառութեան վրայ հիմնուելով՝ երեք ատար ճիշդ հակառակը կը պնդէ , և կաթի տեղ միս կը յանձնարարէ քիժօյէ բռնուող հիւանդներու . խօսք մը որ վստահ եմ թէ պիտի ապացնէ մեր բժիշկները առ հասարակ : Քանի որ այսքան դժուարին բան մըն է հիւանդին ճաշացոյցակը պատրաստելու խնդիրը՝ ուրեմն կրկնապէս զարմանալի է Իբոկրատի կատարած աշխատութիւնը՝ այս մասին :

Դարձեալ , Իբոկրատ՝ իր մէկ գործին մէջ պատկերացուցած և խտացուցած է առողջապահական սկզբունքներու ամէնէն հին բացատրութիւնները և արտադրութիւնները : Ու արդարեւ զարմանալի է որ ասկէ երկու հազար սաչափ թորի առաջ իսկ , ինք կարողացած է դժեւ առողջապահական անյայտ օրէնքներ , զորս գործողութիւն է այս օրուան առողջապահական պաշտօնեաներուն պարտականութիւնը : Միջնորոտային արդեցութիւններու , տարիին եղանակներուն և բնակարաններու ընտրութեան մասին իր ըսածները այսօրուան գիտութեան լոյսովն իսկ գիտուելով՝ նկատուած են պահապանելի և գործողութիւն տեսութիւններ :

Յայնմի է թէ հին Յոյները ունէին թուանշաններու Պիւթաքորեան վարդապետութիւն մը : Կասկած չի կայ թէ Իբոկրատ ևս՝ իր կարգին սղգուած էր այդ վարդապետութեանէն , և հիւանդութեաններու վանագան շրջանները կը ջանար ճշդել որոշ թուանշաններով : Հիւանդութիւններու տեսութեան մասին հիներուն ունեցած հաւատքը բոլորովին նախադաշարումի և երեակալութեան գործ մը չէր սակայն . ճշմարտութեան հիմ մը կար տակը , և չափով մը՝ հաստատուած էր փորձառութեան վրայ : Գէթ այսքանը պարտինք ընդունել Իբոկրատի համար , որ այլեայլ հիւանդութիւններու ընթացքը ուշադրութեամբ գիտելէ վերջ՝ ընդունեց այդ վարդապետութիւն



նը, դոր՝ հարկ չի կայ ըսել՝ կ'ընդունի նաև մեր օրերու բժշկութիւնը, քիֆօյի ու թոքատապի նման հիւանդութիւններու պարագային։

Իբոկրատի օրերէն մեղի հասած են հիւանդութեան և հիւանդին նկատմամբ այն աստիճան կատարեալ ու մանրամասն նկարագրութիւններ, որոնց ընթերցումը իրաւամբ ապշութիւն կ'ազդէ։ Նկարագրութիւններ կան ա՛յնպիսի ախտանիշներու, որոնց ճանաչումը և պարտրոշումը սխալմամբ և անիրաւութեամբ վերագրուած են շա՛տ յետնագոյն դարերու գիտուններու կամ բժիշկներու։ Թոքերու և երիկամներու մասին իր ունեցած հմտութիւնը հիւսնալի է պարզապէս, ի՛նչպէս նաև անոնց դարմանումին համար իր գործածած միջոցները։ Մէկ օրինակ մը կրնայ մասնաւորապէս շահեկան ըլլալ։ Իբոկրատ առաջինն էր որ իր ականջը դրաւ հիւանդին կուրծքին վրայ, անոր թոքերուն վիճակը հասկնալու համար։ Ու արտաճանաչումը այս գիւտին հեղինակը հռչակուած՝ Լէնէք ինքն ալ կ'ընդունի թէ իր գիւտը (stethoscope) իրեն թելագրուեցաւ Իբոկրատի գործերուն ուսումնասիրութենէն։

Յայտնի է հարկաւ թէ Իբոկրատի քարոզած բժշկական սկզբունքներուն և իր յայտնած գիտական տեսութիւններուն վրայ անպայման հիացում մը կը տածենք, յիշելով իր ապրած ժամանակը, և միաքի առջև ունենալով ընդհանուր գիտութեան վիճակը՝ Քրիստոսէ իբր չորս դար առաջ։ Իբոկրատ շա՛տ քիչ անդամազննութիւն գիտէր, որովհետեւ հին Յոյները մասնաւոր յարգանք մը ունէին իրենց մեռելներուն հանդէպ, ու ասիկա բնականաբար արդելք կ'ըլլար գիպղնութեան, առանց որուն չատ թերի կ'ըլլայ մարդակալական ո՛ր և է ծանօթութիւն։ Իբոկրատի գիտցած բնախօսութիւնն ալ բնական է՝ աւելի թերի էր, քանզի այս ուսումը մենաշնորհն էր փիլիսոփաներուն։ Թէև չիտակ է թէ առանց անդամազննութեան՝ ինքնին մեծ բան մը չի շահիր և չարժեր բնախօսութիւնը։ Իսկ քիմիաբանութիւն և կենսաբանութիւն, որոնք իրմէ դարեր վերջը ծնան ու ծաղկեցան, բոլորովին տարբեր ճամբու մը մէջ մտցուցին բժշկութեան արուեստը։

Կարեւոր պարագայ մըն ալ սա է թէ Իբոկրատի ժամանակ՝ գոյութիւն չունէին այն կատարելագործուած միջոցներ, որոնցմով՝ հիւսնական բժշկական ուսանողն անգամ կարող է իրեն համար կատարել ճշգրիտ զննութիւններ։ Այն ատեն, բժիշկը ստիպուած էր ապակինիլ իր զգայարաններուն։ Ի՛ր աչքը, ի՛ր ականջը միայն կրնար գործածել ախտանիշ մը փնտռած պահուն։ Մինչդեռ, հիմա ունինք ա՛յնպիսի կատարեալ գործիքներ, որոնց շնորհիւ՝ վերջին աստիճան դիւրին կ'ըլլայ մանրակրկիտ զննութիւնը. և հետեապէս շա՛տ աւելի վստահելի նաև՝ այսպէս ձեռք ձգուած ախտաճանաչումը։ Ու հիներուն գործը աղէկ ճանչնալու և գնահատելու համար՝ անհրաժեշտ է յիշել ատենք։ Քանզի կատակած չիլայ թէ ապագային առաջգիմութիւններն ալ, իրենց կարգին ստուեր պիտի ածեն մեր ներկայ ժամանակի պարծենկոտ գիտութեանք վրայ։ Բնական գիտութիւններու զարգացումով՝ ի՛նչ առաջգիմութիւններ ալ իրականանա պագային, տակաւին սակայն բոլոր ուղղափառ բժիշկները պիտի ստիպուին մինչև Իբոկրատ ետ երթալ հաստատելու համար իրենց առաքելական յաջորդութիւնը։ Որովհետեւ դարերու հոլովումը, գիտութեան նորանոր առաջգիմութիւնները ա՛լ աւելի պատկառելի ու պաշտելի կը դարձունեն հին Յունաստանի այս մեծ իմացականութիւնը, որ իրաւամբ ճանչցուած է և միշտ պիտի ճանչցուի Բժշկութեան Հայրը։

ՏԻԳՐԱՆ ԱՍԼԱՆԵԱՆ

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

ԳԵՆԱՑ ՊԱՅԳԱՐԸ

Կենաց պայքար ըսելով հասկնալու չէ միայն պայքար մը, զոր մարդիկ իրենց կեանքը կամ գոյութիւնը ապահովելու միտումով կը մղեն մէկմէկու դէմ, ինչպէս նաեւ զմեզ չըջապատող բնութեան դէմ, անհատապէս և կամ հաւաքաբար: Կենաց պայքարի գաղափարը շատ աւելի ընդարձակ է: Այն կ'ամփոփէ իր մէջ պահպանելու միտումը բոլոր կենդանի արարածներուն, նաեւ անիր ամեն բանի, որ գոյութիւն մը ունի և կորսուելու, ոչնչանալու ենթակայ է, իբրեւ թէ անիր գոյութիւններն ալ, ինչպէս են գաղափարները, իրենց կեանքը և գոյութիւնը շարունակելու ինքնուրոյն զօրութիւն մը ունենային: Այսպէս պիտի ըմբռնենք կենաց պայքարի գաղափարը հետեւեալ տողերուն մէջ, ուր անոր վերաբերութեամբ մեր մտածումը պիտի պարզենք համառօտիւ:

Կենաց պայքարի գաղափարը նախ Տարվինի կողմէ գիտական կերպով բացատրուեցաւ, այս մեծ հեղինակին *Origin of the species* անուն գրքին մէջ: Ստ'յան Տարվին միայն կեանք և կ'նդանութիւն ունեցող արարածներուն վրայ խօսեցաւ և անոնց վերաբերութեամբ միայն պայքարի գոյութիւնը գտնանեցաւ: Պայքարի սկզբան վրայ հիմնուած է Տարվինի ամբողջ վարդապետութիւնը, որ անցեալ դարու փիլիսոփայութեան կարեւոր պատճեններէն մին եղաւ, եթէ ոչ կարեւորագոյնը, և իր ժամանակին մեծ ազմուկ հանեց գիտական աշխարհին մէջ:

Տարվինի սկզբանց համեմատ, երկրիս վրայ գտնուող բոլոր կենդանիները միմեանց դէմ կռիւ կ'մղեն, ինչպէս տեսակները, նոյնպէս անհատները: Տեսակներուն պայքարին մէջ յաղթողները անոնք են, որք աւելի կատարեալ կերպով իրենց միջավայրի պայմաններուն կը յարմարին, և կամ յարմարելու յատկութիւնը ունին: Անհատներու պայքարին մէջ անոնք որ աւելի զօրուոր, աւելի հարամիտ, աւելի նենգաւոր են, կ'յաղթեն, կ'պահպանուին և կ'բազմանան: Իսկ միւսները կ'կորսուին և կ'անհետանան:

Պայքարի գաղափարը քիչ ժամանակի մէջ տարածուեցաւ և շատերու կողմէ իբր բացարձակ ճշմարտութիւն ընդունուեցաւ: Տարվին հակառակորդներ ալ ունեցաւ, որք ուժ գնուպէս իր գաղափարներուն դէմ մաքառեցան: Մասնաւորապէս ուղղափառ փիլիսոփայութիւնը մարտեց ի սպառ նկատի առնել անոր վարդապետու-



թիւնը : Տարվին ինք շատ համեստ սահմաններու մէջ պարզած էր իր կենաց պայքարի գաղափարը : Իր անակիրանները ընդարձակեցին և մասամբ խեղաթիւրեցին վարպետին սկզբունքը : Գաղափարապաշտ փրկիտփայութեան ծայրայեղ հետևորդները անոնց հետ համերաշխութիւն հաստատեցին և պայքարը հիմ րբին հաւաքական համոզումներու փոփոխութեանց, իբր թէ գաղափարները ինքնուրոյն գոյութիւն ունենային և մէկմէկու դէմ պայքար մղէին, առանց ի նկատ առնելու մարդոց պէտքերը, որ անոնց ծնունդ տուած կամ անոնց էութիւն առնելու միջավայրը կազմած էին :

Նորագոյն հետազօտութեանց համեմատ, պայքարի սկզբունքը կարելի է ընդունիլ բաւական ընդարձակ սահմանի մը մէջ : Այդ դաշտփարը պէտք է ընդունիլ, որպէս ոչ այնպէս, ինչպէս բանկէիզմը և ծայրայեղ խեղաթիւրը կ'մտկաբերեն : Պայքար կայ, ինչպէս կենդանեաց զանազան տեսակներուն, իբր հաւաքական միութիւններ, և անոնց անհատներուն մէջ, իբր ինքնուրոյն էութիւններ, նոյնպէս նաև մարդոց և կենդանեաց և մարդոց միմեանց մէջ : Նրանք մասնազէն կրնանք երևակայել պայքար մը իրերու մէջ, անոնց մին առ միւսն ունեցած ձգտումին և անոնց արժէքին տեսակետով, և պայքար մը անիւր գաղափարներու մէջ : Միայն թէ պէտք չէ չփոխել զանազան տեսակ այս պայքարները մէկմէկու հետ : Ասկէ դատ, հրապարակ չէ տալ յատկանիշ մը անոր, որ պայքարին մէջ յաղթանակը կ'շահի : Ոչ միայն հաւաքական պայքարին մէջ, այլ նաև անհատականի տեսակետով, զօրաւորը կ'յաղթէի գաղափարը նիւթապէս թէ բարոյապէս, հակառակութիւն կրնայ սրբունակել : Պէտք է քննարկել զանազան տեսակ այս պայքարները :

Երբ երկրի մը մէջ ոսկի կամ թղթադրամ, կամ առհասարակ տարբեր արժէք ունեցող նիւթերէ յիշուած վրամներ, հաստար գծութեամբ միանգամայն կ'զօրածուին, այսինքն երբ անոնք օրինական շրջաբերութիւն ունին, կ'առնուին և կ'արուին հասարակաց և կառավարութեան անտուկներու կողմէն իբր օրինական վճարումի միջոցներ, այն դրամը, որոյ արժէքը անկումի ենթակայ է, իր կըրած անկումին, կամ ինչ որ նոյնն է, իր ունեցած ամբողջ տարբերութեան համեմատութեամբ առաւելութիւն կ'շահի հրապարակին մէջ անփոփոխ արժէք ունեցող գրամներուն վրայ, որք կ'վտարուին, անդործութեան կ'մասնաւորին և տեղի կուտան առաջնոյն աւելի ընդհանրամարտուն : Այսինքն, եթէ հրապարակին վրայ, ուր ոսկի և թուղթ դրամ միանգամայն կայ, այս վերջնոյն գինը ինչոյ, երկու տարբեր գրամներուն մէջ տեսակ մը պայքար տեղի կունենայ, որոյ հետևանք ոսկին խոյս կուտայ գործօն շրջաբերութիւնէ այնչափ աւելի վրձաւորան կերպով, որչափ աւելի թղթադրամի գինը ինչոյ : Չնայ կըրնար երևակայել թէ թղթադրամն աւելի զօրաւոր ըլլայ քան ոսկին, որովհետև հաստատուած է թէ թղթադրամն այնչափ աւելի կ'ընդ-

հանրանայ և այնչափ աւելի բացարձակ կերպով կ'վանէ ոսկին հրապարակէն, որչափ աւելի մեծ ըլլայ անոնց զիններու տարբերութիւնը, որչափ ոսկին աւելի բարձր գնահատուի: Ոսկին չփողովուրի անոնց ձեռք, որք ամենէն աւելի զօրաւոր են, այլ անոնց քով կը հաւաքուի, որք ամենէն աւելի քիչ վստահութիւն ունին հրապարակին վրայ և կամ ամենէն աւելի կ'վախնան թղթադրամին անարժէք իր մը գառնալէն: Հեռզհետէ անկում կրելէ վերջ, երբ թղթադրամը այլևս առնող չգտնիր, անոր արժէքը քրախ մը յառաջ կ'բերէ և կ'խորտակի, այն ատեն ոսկին վայրկեանապէս նորէն հրապարակ կ'եղնէ: Նոյնը կարելի է ըսել նաև արծաթ և պղինձ դրամներու համար, որոց գինը անկումի ենթակայ է ոսկին հանդէպ: Միշտ այն դրամը, որ տկարութիւններ ունի, կ'յաղթէ հրապարակին վրայ և կ'ընդհանրանայ, մինչև որ ան բոլորովին մեռնի և անհետանայ:

Երբ ապրանքի մը զանազան տեսակները, որք մէկ մէկէ որակի և գինի տեսակէտով կ'տարբերին, միեւնոյն հրապարակին վրայ տեսական կերպով ծախու. կ'դրուին, ստորին տեսակը չստանալամ կը յաղթէ, թէպէտ այն համեմատաբար աւելի սուղ ըլլայ սպառողին համար: Բայց ստորին ապրանքին գերադասութիւն ունենալը չէ ընդհանուր օրէնք: Այդ առնչութիւն ունի հրապարակի կացոյ թեան և ապրանքներուն մէկմէկու. հետ ունեցած տարբերութեան հետ: Երբեմն ազնիւ ապրանքը աւելի գիւրին կը ծախուի: Մեզ համար կարևոր է վեր հանել թէ անընդունելի է նկատել իբր զօրաւորագոյնը ապրանաց, երբեմն անոնց ազնուագոյնը, երբեմն ալ անոնց ստորնագոյնը, վասնզի այն ատեն գաղափարներու մէջ հակասութիւն պիտի գտնուի, ինչպէս հակասական պիտի ըլլար նաև ի վերջ ընդունիլ թէ տկարութիւն ունեցող դրամը զօրաւորագոյնն է, քանի որ այն դէպի մահ տանող ընթացքի մը մէջ կ'գտնուի:

Բացարձակ խոհալիսթներէն ոմանք կ'զաւանին թէ գաղափարները կ'տարածուին այնպէս, ինչպէս կ'տարածուին ձայնը, լոյսը և ջերմութիւնը, այսինքն ոչ թէ ստացողներուն տեսողութեան, լսողութեան և խոհականութեան միջոցաւ, այլ համակերպումն եթերային ալիքներու հոսանքով, այսինքն ի չնորհս արտադրողներուն զօրութեան իրաւ է որ երբ գաղափար մը բարձր հեղինակութիւն ունեցող անձի մը կողմէ կ'արտայայտուի, ընդարձակ ընդունելութիւն կ'գտնէ, դիւրաւ կ'տարածուի և մեծ ազդեցութիւն կ'ընէ, մինչդեռ միեւնոյն գաղափարը աննշան մէկու մը կողմէ արտայայտուելով կըրնայ բոլորովին ապարդիւն մնալ: Բայց պէտք է դիտել թէ չկայ բնութեամբ հեղինակութիւն ունեցող անձնաւորութիւն մը, որ ի ծնունդէն ազդէ եղած ըլլայ: Ուստի հեղինակութիւն չունեցող մարդոց խօսքերուն աննշան մնալն ալ օրէնք չէ: Անընդունելի է նմանապէս բացարձակ խոհալիսթներու այն վարդապետութիւնը, որոյ համեմատ գաղափարներու հոսանքները մէկմէկու դէմ պայքար կը



մղեն իրենց գոյութիւնը պահպանելու նպատակով, և անոնք որ աւելի զօրաւոր են, ընդունելութիւն կ'գտնեն և կ'յաղթեն, իսկ տրւեալները օգը կը ցնդին և կ'կորսուին առանց հետք մը թողելու։ Արդարեւ այս վարդապետութեան մէջ հակասութիւն կայ։ Եթէ գաղափարները այնպէս տարածուին, ինչպէս կ'տարածուին ձայնը, լոյսը և ջերմութիւնը, պէտք էր որ անոնց յառաջ բերած ալիքներուն մէջ պայքար տեղի չունենար, վասնզի ձայնի, լոյսի և ջերմութեան ալիքները կ'բարդուին մէկմէկու, անոնց աղբիւրները չեն ոչնչանար զօրաւորներուն միջոցաւ, նոյն իսկ երբ անոնք հակառակ ուղղութեամբ հոսանքներ գոյացնեն։ Ասկէ վատ, եթէ գաղափարները ալիքներով տարածուէին, միեւնոյն եղանակին, միեւնոյն երկրին մէջ, կամ միայն բարի մարդիկ, կամ միայն չար մարդիկ պէտք էր գոյութիւն ունենային։ Սահմանափակ որ և է տարածութեան մը վրայ, պէտք էր որ մարդիկ նմանօրինակ ուղղութեամբ ընթանային բարոյական տեսակէտով։ Իրականութիւնը ստոր բոլորովին հակառակն է։ Ոչ միայն մարդիկ կ'տարբերին մէկմէկէ առաւել կամ նուազ ամէն տեղ, այլ նաեւ շատ անգամ կ'սրտասի որ միեւնոյն ծնողաց զաւակներէն ոմանք բարի ախպարներ, ոմանք ալ չար և անախտան են։ Ո՛վ կրնայ պնդել թէ մարդկային մէն մի էակ, որ իր մրտային կարողութեան տէր է, բարին և չարին վերաբերութեամբ ինքնուրոյն գաղափար կազմելու անկարող ըլլայ։ Ահաւասիկ այս է վերջին եզրակացութիւնը բացարձակ խեղճութիւններուն, որք կ'ընդունին թէ գաղափարները ալիքներու հոսանքներով կ'տարածուին, որով անոնց վարդապետութիւնը մեքենայանութիւն է միայն։

Նկատենք այն պայքարը, որ տեղի կունենայ կենդանեաց մէջ։ Առիւծը և վագրը իրենց գոյութիւնը կ'ապահովեն մէկ ստափճան չնորհիւ իրենց ջիղերուն, ճիրաններուն և սկրաններուն զօրութեան։ Անոնք մեծ առաւելութիւններ ունին շատ մը կենդանեաց վրայ, զորս կ'ընեն և կ'յօշոտեն, լափելու կշտնաղու և իրենց կեանքը շարունակելու համար։ Այժեամբ ու ևլիւրուն, որ մի քանի տեսակ գիշատիչ կենդանեաց կերակուր կ'ըլլան, մասնաւոր յատկութիւններ ունին, որով անոնք անմատչելի ժայռերու վրայ կըրնան ապրիլ, կամ անտառներու և մացառներու մէջ ցնունդ տանել, մնալով անտեսանելի իրենց թշնամեաց։ Այս յատկութեանց չնորհիւ, անոնք ալ կրցած են հազարաւոր տարիներէ ի վեր իրենց գոյութիւնը ապահովել։ Նմանապէս արծիւն ու ագռաւը, գայլն ու ոչխարը, մուկը և կատուն, խլուրդը և օձը, կարիճը և ճանճը, միզուռն և թրթուրը, ինչպէս նաեւ հազարաւոր տեսակ կենդանիներ, որ օգին կամ ջութին մէջ կտայրին, մեծ և յաղթանդամ կամ փոքր մինչև իսկ անտեսանելի են առանց խոչորացոյցի, ունին իրենց յատուկ առաւելութիւններ, որ անոնց գոյութիւնը կ'ապահովեն առաւել կամ նըստով վատահ կերպով։ Կենդանեաց մէն մի տեսակը որ դարձեալ ի դարս

կ'մնայ, իր գոյութիւնը կ'պարտի այն յատկութեանց, զորս անոնք ստացած են նոստախնամութեան կողմէն և կ'պահեն յաւիտեան, հաւկառակ տիեզերական այն պայքարին, որոյ մէջ անոնք կ'զմնուին չարունակ:

Կենդանեաց անսակներուն մէկմէկու դէմ ունեցած հաւաքական պայքարը իբր հիմ ունի անոնց մէկմէկու վրայ ունեցած ցեղային առաւելութիւնները, որ աւելի համեմատական և երեւակայական են քան բացարձակ և իրական: Շատ տեսակ տկար կենդանիներ, ունենալով հանդերձ զօրաւոր թշնամիներ, կ'ապրին ու կ'պահպանուին այն պատճառաւ որ անոնք աւելի մեծ արագութեամբ կ'բազմանան քան իրենց հակառակորդները և կամ փախչելու, թռչելու համար դիւրութիւններ ունին: Փոքրիկ թռչունները, չնորհիւ իրենց թևերուն, չեն ինար յաճախ կատուին ճիրաններուն տակ և մուկը գետնի ծաւ կերուն մէջ կ'պահուի, անկէ ազատելու համար: Օձակեր թռչուններ կան որ այս սովորներուն չափազանց շուտ բազմանալը կ'արգիլեն: Եթէ այն կենդանիներն ու միջատները, որք մըջիւն ուտելով կ'ապրին, այնչափ շուտ բազմանային, որ կարենային ընտելն ընել պայտ, այդ պարագային իրենք ալ պիտի դադրէին գոյութիւն ունենալէ: Բոլոր կենդանիներէն գեր ի վերոյ էութիւն մը ունի մարդը, որ անոնց վրայ կ'իշխէ և անոնց մէկմէկու դէմ մըշտ պայքարը կ'սահմանափակէ, այնպէս որ անիւն անհամար կենդանեաց մէջ տեղի ունեցած պէսպէս պայքարը կ'տանի գէպի տեսակ մը հաւասարակշռութիւն, ուստի երբեք դադրելու, եթէ նկատենք աշխարհը բացառութեամբ մարդկային ցեղի քաղաքակրթութեան ազդեցութենէն:

Անհատներուն մէկմէկու դէմ ունեցած պայքարը ցեղերու պայքարէն տարբեր հանգամանք մը ունի: Երբ երկու շուն կուրի բռնուին, յաղթողն այն է որ կամ աւելի զօրաւոր, կամ աւելի արագաշարժ, կամ աւելի ուժգին է: Յաղթողը պէտք է ունենայ որ և է մէկ առաւելութիւն իր հակառակորդին վրայ և այս առաւելութիւնը չընդունիր ուրիշ կերպով հաւասարակշռութիւն մը, որ մշտապէս ըլլայ: Այսինքն ամէն անգամ որ նոյն շունները և կամ անոնց նմանները մէկմէկու հետ կռուին, միշտ միեւնոյն յատկութիւններն ունեցող շունը յաղթող պիտի հանդիսանայ: Յաղթողը շունը յաւէտ անկարող է ինք զինք բարեփոխել յարստե կրթութեամբ, ինչպէս նաեւ յաղթողը չկրեւ փոփոխութիւններ իր յաջողութեան պատճառաւ, այնպիսի փոփոխութիւններ որ իր առաւելութիւնը կորսնցնել տան: Ուրեմն անհատական տեսակետով, պայքարի սկզբունքը կարելի չէ քննադատութեան առարկայ ընել և պէտք է ընդունիլ թէ անկէ բարեփոխում յառաջ կրնայ գալ: Ըսել կ'ուզենք թէ անհատական պայքարէն ծնունդ առած բարեփոխումը յարստե օրէնքի մը հետեւանքը չէ և անհրաժեշտ շարունակութիւն մը չկրնար ունենալ, այլ միայն պատահական է և կախում ունի գերազանց անհատներու ծնունդ:



տունելէն : Այս պատճառաւ Տարվինեան սկզբանց մէջ յառաջդիմութեան գաղափարը բացարձակ կերպով մեքենայական հանգամանք ունի և չկրնար ծառայել բացատրելու համար թէ ինչպէս ստեղծագործութեան գերագոյն արտաքին, մարդը, աստիճան առ աստիճան զէտի աւելի բարձր կատարելագործութիւն կ'նկրտի :

Տարվինեան սկզբանց համեմատ, պայքարէն ծնունդ առնող յառաջդիմութիւնը կամ բարեփոխումը պահպանողական տեսակէտով միայն ըմբռնելու է, մինչդեռ այս անբաւական է բացարձակ կերպով բարեփոխման այն գաղափարին, որ կ'պարունակի բարեշրջում (évolutionnisme) անունը կրող վարդապետութեան մէջ : Արդարեւ, ցեղային պայքարի տեսակէտով, զօրաւորի և սկաւրի գաղափարը այն ատեն միայն բացառապէս և աներկբայելի կերպով կրնանք ընդունիլ, երբ կռուող ցեղերէն մին լնաջինջ կ'ըլլայ, թողլով հրապարակին վրայ հակառակորդը բոլորովին ազատ : Բայց այս պարագային մէջ, տեսակի մը անհետանալը կրնանք աւելի յաճախ վերագրել արտաքին աշխարհի փոխուելուն, քան հզօրագոյն տեսակի մը երևան գալուն : Նոր տեսակին առաւելութիւնը արտաքին աշխարհի պայմաններուն համեմատական պիտի ըլլայ և չպիտի ունեննայ ուղղակի յարաբերութիւն անհետացող տեսակին յատկութեանց կամ պակասութեանց հետ : Այսպէս մամուլը և անոր նման ուրիշ վիթխարի կենդանիներու տեսակները ոչնչացած են ոչ թէ անոնց վրայ առաւելութիւն ունեցող նոր կենդանեաց երևան գալուն պատճառաւ, այլ երկրագնդի առանցքին և մթնոլորտի ջերմութեան յարաշրջումով : Ասկէ կերելի թէ Տարվինական պայքարի սկզբունքը, յառաջդիմութեան և բարեշրջումի տեսակէտով բացարձակ ճշմարտութիւն մը չկրնար ըլլալ : Ոչ միայն կենդանեաց տեսակներու անհետանալը վերագրելի է բացարձակ կերպով ուրիշ տեսակ կենդանիներու հետ անոնց ունեցած պայքարին, կամ որ նոյնն է, անոնց տկարութեան, բալդատաքար անոնց թշնամի եղող տեսակներու, այլ նաեւ կենդանեաց երկու տարբեր տեսակներ, որոց մին աւելի զօրաւոր կ'ըլլի քան միւսը, կրնան միանգամայն անսահման կերպով իրենց գոյութիւնը պահել, երբ իւրաքանչիւր տեսակը իր կենաց պայմաններուն կ'յարմարի :

Նկատենք այժմ կենաց պայքարը մարդկային տեսակէտով :

Եթէ մարդիկ անհատական գոյութիւն միայն սեննայլին, տարուկոյս չկայ թէ Տարվինական սկզբանց համաձայն, անոնք պիտի յաղթէին և պիտի յաջողէին իրենց կեանքը լաւագոյնս ապահովելու, որոնք աւելի զօրաւոր, աւելի նենգամիտ կամ աւելի հնարագէտ պիտի հանդիսանային : Բայց անհատական գոյութիւնը միայն բացարձակ վայրենութեան մէջ կարելի է մակաբերել, ինչ որ, եթէ նոյն իսկ կայ, չենք կրնար ի նկատ տունել, վասնզի մարդ ըսելով մանք պէտք է հասկնանք էակ մը, որ լեզու և կրօնք ունի, ուստի նաեւ

համայնքի մը անդամ է: Հոս Տարվինական սկզբանց հակասութիւնները կ'ըաղմագատուին, այնպէս որ մեզ անհնար պիտի ըլլայ տնոնց հետ այլեւս զբաղիլ, քանի որ այս տողերուն համար մեր գծած շրջանակը չափազանց նեղ պիտի գայ, նո՛ւ մանաւանդ թէ աւելի օգտակար կ'համարինք խնդիրը գործնական տեսակէտով մը ներկայել:

Ըսել չենք ուզեր թէ մարդկային հաւաքական միութեանց մէջ անհատական պայքար գոյութիւն չունենայ: Սակայն պէտք է նկատել որ համայնական կեանքը հետեանք և պայմաններ ունի, որք անհատական պայքարին մէջ այնչափ աւելի մեծ դեր մը կ'խաղան, որչափ այդ կեանքը աւելի բարձր և բողոքատեսակ չպտուղներ կ'արտադրէ, որչափ այն աւելի կ'ըաղմագատուի անհատներու մէկմէկէ ունեցած պլազմութիւնը:

Համայնական կեանքը կ'արտադրէ քաղաքակրթութիւնը, որոյ յտաճղիմութեան հետ մարդոց գաղափարները կ'այլազանին, պէտքերը կ'ըաղմագատուին, ձգտումները կ'պէսպիսանան: Այս ամեն տարբերութիւնները անշունտպէս կ'կնճռատեն կենաց պայքարին մէջ յաջողութիւն գտնելու պայմանները, այնպէս որ մարդոց մեծագոյն մասը կամ անձնատուր կ'ըլլայ իր բնազդումներուն և կ'երթայ դէպի անծանօթ ուղիութիւն մը և կամ սխալ ըմբռնումով, իրեն համար սխալ ընթացք մը կ'նախորդէ: Ասկին կ'տեսնեն մարդ մը, որ հաբուստ, իրեւացի, ճարպիկ է և բաւական լաւ կրթութիւն ունի, բայց իր անձնականութեան և արժանապատուութեան վրայ չափազանց գաղափար մը ունի, պարագայ մը որ անոր կեանքը պիտի խորտակէ: Այդ մարդը կամ անհանդուրժելի կ'ըլլայ ամեն անոնց, որոնց օժանդակութեամբ և գործակցութեամբ միայն իր նպատակները կրնան իրադրութիւլ, և կամ ան իր միջոցները կ'սպառէ, ամեն տեղ չափազանց ծախքեր ընելով, իր գերազանցութիւնը հաստատելու համար: Անդին ուրիշ մը, որ ամեն տեսակ յասկութիւններով օժտուած է, կ'ոչնչանայ, վասնզի արբեցող կամ խաղամոլ և կամ բարկացող է: Ինչի՞ կ'ծառայէ հմտութիւնը այն մարդուն, որ յարատեւ աշխատութեամբ կ'իրադրծէ կարեոր արդիւնք մը, բայց անկէ օգուտ քաղելու ժամուն, ամեն բան կ'զոհէ իր կիրքերուն և կ'ոչնչացնէ կամ ձեռքէ կ'հանէ իր գործը:

Մարդիկ չառ անգամ միտում ունին տունը իւրացնել և իրենց բնութիւն ընել սովորութիւնները այն շրջանակին, որոյ մէջ անոնք կ'գտնուին և կամ զոր միայն կ'տեսնեն մօտէն կամ հեռիէն, բայց անկէ կ'ազդուին անգիտակցաբար: Պատանի մը կուգայ ներսերէն և կ'հաստատուի ծովեզերեայ բազմամարդ քաղաքին մէջ: Իր կոկիկ կեանքով և յարատեւ աշխատութեամբ հոն դիրքի մը կ'հասնի, որոյ արժէքին և տեականութեան վրայ սխալ գաղափար մը կ'կազմէ ան: Իր շուրջը կ'տեսնէ տեսակ տեսակ մարդեր: Մին կ'տընի շաբունակ, կամաւորապէս կ'զրկուի հրճուանքէ, սուսնց ուշ ընելու



ուրիշներուն, որք իր վրայ կ'ընդունէ և կ'ըսեն թէ՛ ապրիլ պէտք է, ապրիլ մէկ անգամ է: Ուրիշ մը կ'երթայ բամպակ կ'ընդունէ և կ'ըսէ թիկ գումար մը կ'զրպահէ, որով ան կ'սկսի մեծութիւն ծախել: Եթէ մարդ պաղարիւն մնայ և ժամանակ մը դիտելով և խորհելով գոհանայ, կրնայ շուտ գաղտնիար կազմել մէկին և միւսին ուղղութեան վրայ: Սխալ որոշումներ կ'առնեն առ հասարակ ամեն անոնք, որք իրենց գոյութիւնը իբր անհատական նկատելու կ'նկրտին: Բայց բնականօրէն մարդոց շատերը, գիտակցաբար կամ անգիտակցաբար, կ'զգան համայնական կենաց և առաքինութեան օրինաց հետեւելու պէտքը, որով ստացական տարբեր բնութիւններ ստեպ միեւնոյն անհատի մէջ կ'միանան և բարեխառնութիւն յառաջ կ'բերեն: Այսպէս, իռլանտացի մը, որ արեցող, ագէտ և սակաւագետ է, երբ կ'հասնատուի Միացեալ Նահանգաց մէջ և կ'ստիպուի մրցիլ Ամերիկացիներու հետ, որք չեն արբեմար, աւելի հմութիւն և բազմաոնասակ պէտքեր ունին, քիչ ատենէն կ'փոխէ մասամբ իր բնութիւնը, կ'արբենայ միայն երեկոյն, Ամերիկացիին հմութիւնը կ'ընդօրինակէ և կ'պահէ իր սակաւագետութիւնը, որով ան իր շահածին մէկ մասը կ'աւելցնէ, խնայողական մտտուկի մը մէջ կ'պահէ և քիչ քիչ դրամագլուխ մը կ'կազմէ:

Մարդիկ գրեթէ անսահման յարմարութիւն ունին մէկմէկու հմութիւնը ընդօրինակելու տեսակէտով, եթէ զարաւելինք համայնական կենաց պայմաններէն: Պէտքերու տեսակէտով անհատներուն մէկմէկէ ունեցած տարբերութիւնը սովորաբար կախում ունի միջավայրէն և հմութիւնը իւրացնելու եղանակէն: Այն մարդը, որ տեսը սարի աշխատած է, օրինակի համար յիշուան աստիճան հմութիւն ձեռք բերելու համար, առ հասարակ աւելի պէտքեր ունի քան թէ այն, որ նոյն աստիճան հմութիւն իւրացուցած է մէկ տարուան մէջ: Բայց այս այն տուն կարելի է, երբ առաջինը կ'հնարէ, իսկ երկրորդը կ'ընդօրինակէ: Որով այն մարդը, որ դիւրութիւն մը կ'հնարէ, ունենալով հանդերձ անուշանալի տաւելութիւններ, չկրնար յաջողութեամբ մրցիլ անոր դէմ, որմէ ան կ'ընդօրինակուի:

Տասնեութերորդ դարուն սկիզբը Անգլիացիներ գտին հաստատուեցան Նոր Աշխարհի քանի մը մասերուն մէջ, ուր անոնք բազմացան, հարստացան և տասնեութերորդ դարուն վերջերը համայնքներ կազմեցին: Մինչև 1840 թուականը, Միացեալ Նահանգաց սպիտակամորթ բնակիչները զրեթէ ամբողջովին Անգլո-Սաքսոններէ կ'բաղկանային: Այն թուականէն սկսեալ գաղթականութեան հոսանքը հետզհետէ զօրացաւ և կերպարանափոխուեցաւ: Ասոր պատճառը կրկին էր: Ամերիկայի մէջ օրողչէքները չափազանց բարձր էին և են, համեմատելով հին աշխարհի հետ, ուր տարբեր երկիրներ յաջորդաբար մեծնալով և զօրանալով միտում մը ունեցան, որոց

հետևանք անոնց գաղթականութեան հոսանքը զօրացաւ։ Առ հա-  
սարակ, գաղթողներուն թիւը ամենէն աւելի մեծ է այն երկիրնե-  
րուն մէջ, ուր ժողովուրդը արագաբար կ'աճի և կ'ուճի և այնպէս  
կ'ընեն թէ իր բնական սահմաններուն մէջ չպիտի նստի։ Քիչ անկամ  
բացառութիւն կ'ըլլայ։ Եթէ 1846էն մինչև 1870 Իռլանդացիք,  
1870էն մինչև 1890 Գերմանացիք և այս վերջին թուականէն մինչև  
ցարդ Իտալացիք և Սլաւք դէպի Նոր Աշխարհ գաղթող միւս ազ-  
գերը թիւով գերազանցեցին, այս փոփոխութիւնը աժան աշխատե-  
լու անսակէտով նոյն ազգերուն մէկմէկէ ունեցած ստորբերութենէն  
և անոնց մեծնալու զօրանալու միտումին յաջորդաբար կազմուելէն  
գոյացած է։ Անգլիական և Գերմանական հոսանքը զաղրեցաւ, վա-  
սերդի այս ազգերուն աշխատութիւնը հետզհետէ սուղնալով, նմանու-  
ղութեամբ իրենց հետ մրցող օտար ազգաց դէմ Ամերիկեան հրա-  
պարակին վրայ պայքարելու անոնք անկարող եղան։ Իռլանդացիք  
և Գերմանք աւելի աժան կ'աշխատէին քան Անգլիացիք, Իտալա-  
ցիները և Սլաւները, որ աւելի նոր ժամանակներու մէջ երևան ե-  
կան քան Իռլանդացիները և Գերմանացիները, ասանցմէ աւելի ա-  
ժան կ'աշխատէին։ Ասկէ զատ, Իռլանդացիները չէին կրնար շա-  
րունակել մեծ թիւով գաղթականներ ուղարկելու, վասնզի իրենց  
հայրենի երկրին մէջ բնակչութիւնը զգալի կերպով նուազեցաւ։  
1846ին այդ կղզին ունէր  $8\frac{1}{2}$  միլիոն բնակիչ, 1870ին  $5\frac{1}{3}$  միլիոն և  
1900ին  $4\frac{1}{2}$  միլիոն։ Այսինքն կէս դարու մէջ անոր բնակչաց թիւը  
 $50\%$  նուազեցաւ։

Ինչպէս ըսինք, դէպի Նոր աշխարհ գալիս գաղթականութեան  
հոսանքը տարիներու բոլորման հետ կերպարանափոխուեցաւ, որոյ  
պատճառը, այն հոսանքը կազմող զանազան ազգերուն կենցաղավա-  
րութիւնը տարրերիւն և աստիճան աստիճան բարձրանալուն մէջ  
պէտք է փնտռել։ Հին Աշխարհի մէջ փոփոխութիւն կրեցին կենաց  
պայքարի պայմանները, որ մերթ Անգլիացւոց և մերթ Գերմանաց-  
ւոց աւելի նպաստաւոր եղան։ Մինչդեռ երեսուն տարի առաջ,  
այս վերջինները կ'ընդունէին Անգլիացւոց անասական գերազան-  
ցութիւնը, այժմ ընդհակառակը Անգլիացիք կ'գանգատին գերմա-  
նական մրցման դէմ, ինչ որ Չէմպլէրէյնի պատճառարանութիւնը  
կազմեց Բրիտանիոյ անտեսական քաղաքականութիւնը փոխելու  
մասին։ Գերմանական մրցումը կտրելի եղած է այն պայմանաւ որ  
Գերմանք, բաղդատամբ Անգլիացւոց, աւելի սակաւագետ են։

Իրաւ է որ խնդիրը հոն չվերջանար։ Եթէ առևտրական միջառ-  
դային մրցման մէջ միշտ այն ազգերը գերազանց հանդիսանային,  
որք ամենէն աւելի նուազ պէտքեր ունին կամ քիչով կ'գոհանան,  
հարկ պիտի ըլլար որ Հնդկները և Չինացիները երկրիս ամենէն  
աւելի հարուստ և ամենէն աւելի զօրաւոր ժողովուրդները ըլլային,  
վասնզի անոնք ամենէն աւելի աժան կ'աշխատին, իթէ միայն օր-



չէքը ի նկատ առնուի: Պէտք է ի նկատ առնել որ գանազան ազգաց յառաջդիմութիւնը համահաւասար և զուգահեռական կերպով տեղի չունենար, որով անոնք, որոնց պէտքերը կ'ըսողմտապատկուին անտեսական վարդապետան հետ, կ'ատխաղան հետզհետէ տեղի առաջ անոնց, որոնց դոհասցումը աւելի գիւրին է: Բայց այս չբաւեր, որովհետեւ յառաջդիմութեան և անտեսական վարդապետան պատճառները անորոշ կ'մնան:

Հոս կ'մտնենք համայնքներու կազմութեան և վարդապետան բարձր խնդրոյն մէջ, որմէ պէտք է խուսափինք, վասնզի այդ մեր նպատակէն դուրս է և անոր վրայ ուրիշ տեղ ընդարձակ կերպով խօսած ենք: Այս յօդուածին մէջ պէտք է որ մենք անհատներու մէկ մէկու հետ ունեցած յարաբերութեան տեսակէտով միտն ըմբռնենք կենաց պայքարը: Այս տեսակէտով կ'մնայ մեզ բացատրել թէ, հաւառակ Տարվինական սկզբանց, ակար կարծուած անհատները կըրնան վճռական առաւելութիւններ ունենալ, անտեսական միջման մէջ, մարմնով և գիտութեամբ աւելի զօրաւորներուն դէմ, երբ անոնք կարող են պարագաներէն օգտուիլ, կ'ենաց պայմաններուն յարմարիլ:

Ի վերեւ դիտեցինք թէ արժանատագատուութեան և անհատականութեան վերաբերեալ գաղափարները երբեմն վճռական հանգամանք ունին գործնական յաջողութեան մէջ: Նոյնպէս, յարատեւութիւնը և հնարաւորութիւնը, խնայողութիւնը և աշխատասիրութիւնը, հաւատարմութիւնը և ուղղախոհութիւնը կարեւոր դեր կ'խաղան կ'ենաց պայքարին մէջ: Համայնքներն ալ կ'ատարբերին այս տեսակէտներով մէկմէկէ և անոնց յատկութիւնները անփոփոխելի չեն: Բայց մենք պիտի նկատենք անհատներու տարբերութիւնները, ենթադրելով որ անոնք միեւնոյն համայնքին մէջ կ'գտնուին և մէկմէկու հետ կ'մրցին:

Արժանագատուութիւնը երկու տարբեր կերպարանք ունի, մին գնահատելի և օգտակար, միւսը պոխտրակելի և վնասակար: Ընդհանուր առմամբ, կարելի չէ բաւել թէ ի՞նչ պարագաներու մէջ արժանագատուութեան արտայայտութիւնը բացարձակ կերպով և առանց բացատրութեան օգտակար կամ վնասակար է, վասնզի այս արտաքին աշխարհի ուղիղ կամ սխալ ըմբռնումէն կ'ախում ունի: Միեւնոյն անհատին միեւնոյն ընթացքը այս ինչ միջավայրին մէջ գովելի, անյինչ միջավայրին մէջ պոխտրակելի կրնայ ըլլալ: Նոյնպէս պարագաները մեծ կարեւորութիւն ունին հանրային գաղափարութեան համար: Խնայիլութիւնը կ'կայանայ դիտել և դատելու մէջ, երբ մարդ իր միջավայրին հետ ի մի ձուլուած չէ և կամ եթէ միջավայրը ալազան հաւաքական տարրերէ կ'ըսողկանայ: Միջավայրի պայմանները ուղիղ դատելու համար, անհրաժեշտ է մոռնալ անձնական գաղափարները: Անոնք որ աւելի դիւրաթեք են, աւելի հեշտութեամբ կ'յարմարին միջավայրի պայմաններուն, գերազանց ա-

առաւելութիւն ունին անուեսական պայքարին մէջ : Անտարակոյս մարդիկ բոլորովին անկախ չեն պայմաններէն այն համայնքին, որոյ մէջ երկուր տաւն ապրած, որոյ գաղափարները խրաջուցան են առաւել կամ նուազ և որոյ գոյութեամբ իրենք ալ գոյութիւն առած են : Այս տեսակէտով, մարդկային զգացումները մէկմէկու հետ յաւրարեութիւն ունին և յարարեութիւն ունին նաեւ միջավայրին հետ : Բայց միանգամայն ամեն ոք, իր մտային կարողութեանց համեմատ, կրնայ իր բնութեան վրայ ազդել, իր անհատական յատկութիւնները զարգացնել, իր մարտիւնները գտնել, և երբ իր միջավայրը կ'փոխէ, նոր պայմաններուն յարմարիլ :

Ամեն տեղ կան մարդիկ, որ չափազանց չափլ են կամ իրենց անհատականութեան վերարեութեամբ չափազանց գաղափար ունին, ինչպէս նաեւ ուրիշներ, որոնք վերջին ծայր կծծի են կամ արժանապատուութեան զգացում չունին : Կարեւոր է միայն գիտել թէ պատմանեութիւնէ երիտասարդութեան անցնող հասակին մէջ, մարդիկ միտում ունին կարգ մը սովորոյթ բնութիւն բնելով պահելու, և եթէ յետոյ կենաց պայմանները փոխուելով անոնք իրենց բնութիւնն ալ փոխելու հարկին մէջ գտնուին, մինչև մէկ ատփճան փոփոխութիւն բնելու սովորաբար անոնք կարող կ'ըլլան :

Սովորոյթը բնութիւն կ'ըլլայ : Այս ամենամեծ կարեւորութիւն ունի դատարարական և կենաց պայքարին մէջ : Ապրելու եղանակին վերարեութեամբ մարդոց կազմած բնութիւնը ժառանգական չէ : Շուային զաւակը կրնայ խնայող ըլլալ և խնայողին զաւակը չըռալ կամ կծծի : Ոչ հարամութիւնը, ոչ յորատութիւնը և առնց նման ոչ մի յատկութիւն կամ պակասութիւն ժառանգական չէ : Բայց ծնողացը մէկ խօսքը, մէկ խորհուրդը, մէկ վարմունքը կրնայ վճռական ազդեցութիւնը բնել զաւակաց վրայ : Եթէ երիտասարդ մը, որուն ըսած է թէ շատ ծախսողը շատ կ'շահի, մէկ քանի անգամ յաջողի չափութեամբ ըրած ծախքերը գոցելու որ և է կերպով, անոր գլխին մէջ հաստատ գաղափար կ'կազմուի թէ այդ միշտ պիտի կրկնուի : Իսկ եթէ նոյն անձը, փորձառութիւն ունենալէ առաջ, ըսած ըլլայ թէ խնայողութեամբ միայն մարդ կրնայ զինք ապահովել բախճին անյաջողութեանց գէմ, երբ այն առիթ ունենայ խնայողութեան արդիւնքը տեսնելու, ըստ այնմ ուղղութիւն մը կ'առնէ : Ստացական սովորոյթին բնութիւն ըլլալով պահպանուելու միտումին պատճառաւ է որ կ'ըսենք առ հասարակ թէ այսինչը խնայող, խաղամու, չափլ, գող կամ առաքինի մարդ է : Սակայն ամեն մարդ կրնայ զինք բարեփոխել և դէպի աւելի բարձր առաքինութիւն մը նկրտիլ : Գործնականապէս և միջավայրն ալ մեծ ազդեցութիւն ունի մարդոց վրայ, այնպէս որ երբ մէկը իր բնական երկիրը կամ ընկերական դիրքը փոխէ, քիչ շատ իր բնութիւնն ալ կ'փոխէ, եթէ մնայ բաւական երկար տոեան այդ նոր միջավայրին մէջ :



Առնենք երկու գործաւոր, մին Անգլիացի և միւսը Իռլանտացի, և ենթադրենք թէ անոնք Բէնսիլվանիա գացած են և միւսնոյն գործարանին մէջ կ'աշխատին ստարեր օրչէքով: Անգլիացին աւելի բարձրը վարժութիւն ունի, աւելի մեծ օրչէք կ'առնէ և աւելի կ'ծախսէ քան Իռլանտացին: Բայց մէկ տարի աշխատութիւնէ վերջ, վարժութեան տեսակէտով երկուքին մէջ եղած տարբերութիւնը կ'անհետանայ, որով Իռլանտացին կ'սկսի Անգլիացիին հաւասար օրչէք առնել և քանի որ անոր չափ պէտք չունի, անոր խնայած գումարը աւելի շատ կ'աւելնայ: Իռլանտացիին գոյութիւնը աւելի կ'ապահովուի, ան աւելի կարող կ'ըլլայ բախտին ձախորդութեանց դիմագրել և պարագաներէն օգտուիլ, եթէ երբէք գործ ընելու յարմար առիթ ներկայանայ:

Հայ մեծ վաճառական մը կայ, որ իրեն սկզբունք ըրած է բարեպաշտութիւն, աշխատասիրութիւն և խնայողութիւն: Բարեպաշտութեամբ մարդ կ'նկրտի գէպի կիրքերէ և մոլութիւններէ վեր մթնուլորտ մը: Աշխատասիրութիւնը կ'առաջնորդէ գէպի յաջողութիւն և կ'մոռցնէ կենաց դառն յուսախարութիւնները: Խնայողութիւնը կ'ապահովէ կեանքը ձախորդութեանց պէմ, կ'զսպէ մեր կիրքերը և կ'հանդարտեցնէ ստէպ մեր թշնամիները: Այս ամեն առաքինութիւնները միտան կ'ըստցրացնեն գոյութիւնը, օգնելով կազմել ընտանիք, տուն և տոհմ:

Ասոնք են անհատիկ ընդհանուր առմամբ կենաց պայքարին մէջ յաջողութիւն գտնելու պայմանները: Բայց անիւր բացառութիւններ կան, այսինքն յաջողութիւն ունեցող անձինք միշտ գերազանց կիրպով աշխատող, խնայասէր և բարեպաշտ չեն: Ստէպ կ'առնուի որ համերաշխութիւնը մեծ պակասներ կ'ընցնէ: Երբ Անգլիացի մը կը տեսնես, որ իր տոմարները և գումարկը յանձնած է ապիկար Յնագլիացիներու, մինչդեռ անդին անհամեմատ աւելի կարող Իտալացիներ և Գերմաններ կան, որոնց աշխատութիւնը ան կ'արհամարհէ, ասոր պատճառը ուրիշ բան է, բայց եթէ վստահութեան գաղափարը: Անգլիացին Անգլիացիներու կ'վստահի և անոնց կ'յանձնուի, անոնք իրեն մարդերն են և գերադասելի կ'համարուին, եթէ նոյն իսկ ապիկար են:

Ուրեմն որ կողմ ալ դառնանք, երբ յառաջդիմութեան ուղիները կ'հետադոտենք, մեր դիմաց կ'ելլէ համերաշխութեան սկզբունքը և այս ալ միջավայրի մէջ հաստատ մնալու, անոր յարմարելու խնդիր է, համայնական և անհատական կենաց մէջ հաւասարապէս: Միայն թէ ուղղակի յարաբերութիւն ունեցող անհատները, երբ համերաշխութեան գերին գիտակից են և կրնան զայն հաւատարապէս գնահատել, աւելի գիւրաւ միջոց պիտի գտնեն իրենց աշխատութիւնը արգասաւորելու համար, իրենց մտային կորովին համեմատ: Համայնական կենաց մէջ համերաշխութիւն կազմուիլը տարբեր օրէնքներու կ'հետեւի:

ՀԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ

ՊԱՐԱՊ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐ

[ ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ]

Ափրիկեան չողողուն երկնքին վրայ, իրիկնամուտի թեթև վարդազոյն ստուեր մը կը ծածանի առանց խառնուելու անոր անօրինակ և թափանցիկ պայծառութեանը, մինչ հորիզոնին գիծը կորսուած է արեւագոյն, կարծր և բեկբեկուն երիզով մը որ կ'երկարի . . . :

Ճամբուն երկու կողմէն կանանչագեղ մարգագետինները կը տարածուին, հեռաւորութեանց մէջ եզերուած դարաւոր ծառերու շարքով մը, որոնց կապուտակ սիւլուէթը թեթև կոհակաւորումներով կը սահմանէ անոնց ընդարձակութիւնը:

Նեղոսը արծաթեայ ժապաւէնի մը պէս կը պտտաքի քմահաճ դարձերով, աջ թէ ձախ շեղումներով, տեղ տեղ ճիւղաւորուած և տեղ տեղ լճացած, այնպիսի յատկութեամբ մը որ իր յատակի աւագներուն սուտակային փաշտումները դէպի մակերեսը կը բարձրանան և կը խառնուին երկինքէն ինկած լոյսի ճաճանչներուն հետ:

Երբեմն վարդազոյն փրփուր մը կը վարանի անոնց վրայ ու քանի երեկոյեան ժամը կը յառաջանայ, այդ փրփուրը կը բարձրանայ կարծես, կը չոգիանայ և կը ծածանի մթնոլորտին մէջ:

Երբեմն ալ այլ և ալ երանգներու ալքեր, անշատուած հեռաւոր ծառերէն, մարգագետիններէն, երկնքի կապոյտէն կ'անցնին և կ'անհետանան մարմելով:

Օգը ծանր է չրթունքներու վրայ անծանօթ և ստորախարհիկ բոյսերու գաղջ բուրմունքովը. ու բարկ արտաշնչումը Եգիպտոսի հողին կնիքուելի, զմուռսի համը ունի:

Բաղաքը հեռուն է հիմա, անիկա կը արտփէ եղեքարական լոյսերու սառկ ցնծուն և անգիտակից զուարթութեամբը ու բոլոր միջազգային քաղաքներու յատուկ շքեղութեան, մեծածախս և փարթամ դրօսանքներու ժխորովը. ֆէլահուհիին համաչափ և ծեփծեփուն քալուածքը, շարժումներուն ներդաշնակութիւնը, իր նայուածքին հուրքը կը կորսուին ու կը չեղոքանան պոռոտ լուսավառութեանը մէջ նոր քաղաքին, ո և է եւրոպական նուազախումբի մը ջգադրդռող ազմուէլին մէջ հազիւ թէ կը լսուի հաշաշին երջանակաւէտ արեւոյթեան հեշտազին աղաղակը, Ա . . . եա . . . Ալլա՜ . . .

Ի՛նչ տեսիլք և ի՛նչ աւանդական ու մեղի սա յաւէտ անծանօթ երանութիւն կ'դաւարէ անոր հասակը, թեկերը վեր բարձրացուցած, էնթարիին քղանցքները հովին, աչքերը մոլորուն ու դէմքը կրճ-



կուսած անպատմելի ժպիտի մը մէջ . ու անիկա կը վազէ , կ'երթայ անուշադիր ու կարծես բացակայ մեր աշխարհէն , ասդին անդին զարնուելով . . . անայլալ իր գերագոյն հրճուածքին մէջ . . . Ա՛ . . . եա . . . Ալլահ . . . մինչև որ ձայնը հեռզհեռէ հառաչագին գալա-  
րում մը կառնէ , վերջին վանկը կ'երկարի , կը հեծեծէ , կը կորսուի  
կնդրուելով և պոխրուքով բուրումնաւէտուած մթնոլորտին մէջ :

Հոն են նաև , ահաւասիկ զմրուխտի կանանչով և բերուղի կա-  
պոյտով դրուագուած գմբէթները աշխարհիս գեղեցկագոյն մըղ-  
կիթներուն , իրենց քաղմայարկ մինարէներով որոնց չքեղ ճոխու-  
թիւնը կը կանգնի օրումն մէջ՝ ճերմակ և ժանեկաւոր , մշտնջենա-  
կան արևով մը պայծառացած երկնքին վրայ :

Ու կ'յիշեմ նաև հինաւուրց սրճարանները իրենց փախթով ծած-  
կուած ւեթերով ուր ծաղկապատիկ չռքած ֆէլլահներ լսին ու սև  
դունչերնին ցցուն՝ մտիկ կ'ընեն մեղրանին հրաշալի պատմութիւն-  
ները : Անթարի բանաստեղծութիւնները կը զգուեն իրենց ականջնե-  
րը ու իրենց աչքերը կը խոնաւնան յուզմունքէ , հրճուածքէ . Հա-  
զար և մէկ զիշերներու զմայլելի և հեշտագին պատմութիւնները կը  
զրգւեն իրենց երեւակալութիւնները ու մոգական դռները կը բանան  
առասպելական ճոխութիւններու , հմայքներու կախարդիչ աշխարհ-  
ներու : Թանձր մուխ մը , հաշիշով օծուած կը տատանի իրենց աչ-  
քերուն սառլք , կը փայփայէ իրենց մթին ճակատները ու հոն կ'ար-  
թնցնէ գերմարդկային վայելքներու , գեղեցկութեան ու չնորհի ծա-  
րաւը : Այս է պատճառը թերեւս որ անոնց սև դիմակը կը ծամածոփ ,  
անշուշտ արցունքներ կ'իջնան ու կը կորսուին իրենց յուզմունքէ  
զաւարուն գէմքին ծալքերուն մէջ . ու թեւերնին կը բարձրացնեն ան-  
կարող և ջլատուած շարժումով մը . և ի՞նչ կայ արդեօք այն եղէգ-  
նատրինակն բեկրեկ հօթերու մէջ որ զիրենք կը վերացնէ յանկարծ ,  
զիրենք գերագոյն արբեցութեան մը կը հասցնէ . ի՞նչ բան այդ ե-  
ղանակին մէջ իրենց սրտին կը դաշի , զայն կը թրթռացնէ , զայն  
կ'ընդլայնէ գողգոջուն յուզումով մը . . . : Ի՞նչ առնչութիւն և ի՞նչ  
նոյնութիւն այդ դիւրաբեկ և նսեմ երգին մէջ որ աւելի մրմունջի  
մը կը նմանի և որ սակայն իր չափովը և իր ելեւջովը կը փոթորկէ  
այդ երազատես և տխուր ու քնացող հոգիները ֆէլլահներուն :

Ամայի ճամբուն վրայ որ մեզի դէպի բուրգերը կը տանի , կը խոր-  
հիմ իրենց երկարօրէն . ու երբ ետև կը դառնամ հիւանդագին ճեր-  
մակութիւն մը կը տեսնամ միտքն որ լուսաւոր և կապտորակ ամպի  
մը պէս կը բարձրանայ քաղաքէն , կը տարածուի անոր վրայ թեթև  
մը վէտվէտալով կարծես վրդովուած վատառողջ արտոնչուսներու  
վը օտար և զուարճացող ամբոխին :

Մեր դիմաց անսպասոր կ'ընդլայնի իր աւազկոյ տարածութիւն

նովը, մարած կարմրութիւն մը ունի անիկա երեկոյեան թանձր մահիչականագոյն երկնքին տակ՝ արեմուտքին կողմէն լուսաւորուած կապտորակ բացուածքներով և շամբրուած կանանչորակ երիզներով, արեւմագոյն գիծը, հորիզոնին վրայ հեռզհեռէ կը նուազի, կը հատնի...

Բռւռն, բայց զսպուած փոթորիկ մը կարծես երկրիս խորերէն կը դզրդէ անոր դարուստ հանգստութիւնը, հով չկայ, ձախ չկայ, բայց ամէն բան թրթռուն յուզմունք մը ունի, մեր շնչառութիւնը, մեր սրտի բաբախումները կը համաձայնին կարծես անասնոսկի ելեէջի մը որ կը տատանի միջոցին մէջ:

Յանկարծ կը տեսնենք բուրգերը... անոնք մէկ անգամէն, վէսօրէն և մեր հասկացողութեան օտար՝ գեղեցկութիւնով մը կը կանգնին: Լուսինը դեռ չէ բարձրացած հորիզոնին վրայ, բայց մթնոլորտը մասնաւոր անթափանց ճերմակութիւն մը կ'առնէ, շուքերը աւելի կ'երկնան ու կը տարածուին անարգել կապտորակ արաններ կազմելով աւազներուն մարած կարմիրին վրայ...

Քանի՜ կը յառաջանանք, այնքա՛ն բուրգերը բարձր կ'երևան, մեր պզտիկ ու ճզճիմ գոյութիւնը անոնց ստորոտին վրայ ինծի երկշտուութիւնով և երկիւղածութեամբ մտածել կուտայ տարբեր մարդկութեան մը որ զանոնք կանգնել առած է և որոնց գիտակցութեան և զգացումներուն բռւռն և եղբրական գերազանցութիւնը մեզի մշտնջենապէս անմատչելի պիտի մնայ:

Երբեմն անոնք կ'երևան անսպասին դոյնովը, կարմրորակ և ջերմ երանգովը աւազներուն որոնց վրայ աստղերը կ'երկարածքեն ճերմակ և լուսեղէն գիծեր, իբր թէ փոթորիկ տազնապալի օր մը աւազները մոնչելով բարձրացած ըլլային ալիքներու նման անապատի խորշակէն վարուած ու այդպէս մնային քարայցած, որովհետեւ իրենց անալոյշ հաստատութիւնը աւազներու շարժուն մակերեսին վրայ ինծի կ'երևայ հզօր գեղեցկութիւնովը բնութեան այն երեւոյթներուն՝ որոնց մարդու ձեռք չէ դպած:

Անսպասող կը ճերմկայ հեռզհեռէ բարձրացող լուսնին լոյսովը, հեռուն ուղտերու սիւլեէթները սև կ'երևան և պետուէններու վերարկուները կը ծանամին անոնց համաչափ և ելեէջաւոր գնացքին միջոցին: Խնկաւէտ հով մը զգալի կ'ըլլայ հեզահեռէ, թեթև մը կ'անցնի և այդ դարուստ յիշատակարաններէն գալով կարծես ականջիս կը փափայ անսահմանելի խորհուրդը, Սփինքսին համբ խորհուրտութիւնը և անոր նստուածքին յարստեւ խոկումը կը պատմէ անիկա և ինծի կը թուի անիրական տեսիլք մը ունենալ աչքիս առաջը... քանիցս երազուած արդէն և խորապէս ընտանի իմ ներքին հայեցողութեան:

Ուխտաւոր ֆէլահուհիներ, խումբով, սև երկայն քօղերով ծածկուած, ուրուականներու նման կ'անցնին Սփինքսին առաջին որուն



սեւեռուն և երազող նայուածքէն բան մը կ'ապրի իրենց խոնաւ և մթին աչքերուն մէջ . երբեմն արծաթեայ օդի բոժոժ մը կը փայլի տմոյն և թուխ աչտի մը վրայ և իրենց քայուածքին հեշտաւէտ ճշկունութիւնը, իրենց չարժումներուն դաստկան ներգաշնակութիւնը, իրենց կեցուածքին արձանային գեղեցկութիւնը կ'ուրուագծուի աւաղին տարածութեան վրայ բաղմապատկուելով իրենցմէ երկարող շուքերով :

Սիինքսը միշտ իր նայուածքին տիրութիւնը կը սեւեռէ և անիկա կարծես կ'արտայայտէ թէ ի'նչ սարսափի և մահուան ճակատագրական օրէնքին դէմ ընդվզումի օր մը յղացուած են այդ բուրգերը եփենոսէ ճակատներու ետին, խոկմունքի գերազգեռութեան մը մէջ . . . ի'նչ գերազոյն արհաւիրք անէանալու և ի'նչ փոթորկալից աւիւն ուրականի մը նման իրենց մօայլ կամքերը խարազանած է . անոնք ուզած են որ ժամանակը անկարող ըլլայ զիրենք փճացնելու և կրանիդէ լեռներով գրած են իրենց կամքը ու բուրումնաւէտ աստուներով պատանքած ու զմռսած են իրենց յաւիտենակմութեան պատրանքը . . . իրենց արիական վրդովմունքը հասած է մեղի ու դարերուն մէջէն ահաւաստիկ կը խառնուի անիկա մեր դողդոջուն ու մեր չիտթ յուսաբեկութեան . . . :

Ու կը խորհիմ թէ իմ մտածումիս ո՞ր թագուն խորութեան մէջ արդէն տեսած էի անոնք, անսահման յուսախաբութեան և անձկութեան ժամերու մէջ, պարսպ գերեզմանները, որոնց մէջէն յաւիտենական մոռացումի յոյսովը քնացած մեռելներ, նուիրական բանաձեւերով կնքուած և գուրգուրանքով զմռսուած, վրդովուած են իրենց վերջնական հանգիստին մէջ :

Որովհետեւ այդ կրանիդէ լեռները պարսպ են այսօր, պարսպ, այդ հսկայ գերեզմանները . . . բոլոր կնիքները, ջերմեւանդութեամբ և հուստքով գրուած խորտակուած են ու դարաւոր դամբանները բացուած են արդիական անխորհուրդ հետաքրքրութիւններու համար, անպաղտնապահ ձեռքեր պատանքները քակած են և մոմեաները իրենց դարաւոր քունին մէջ անհանգիստ եղած են վերջնականապէս փճանալու համար, միւղէներու աղմկալից և երթեկեկող ամբոխներու աչքին առաջ : Անոնց գերազոյն ցաւին արտայայտութեամբ վերացած դէմքերը կը շարունակեն փոշիանալ մեղի ալլաս անիմաստ դարձած ծամածուութեան մը մէջ : Ու բոլոր այս հանգրտարանները, արքայական բուրգերը ու գեանափոր գերեզմանները պարսպ են այսօր, անապատին մէջ լքուած իրենց մեռելական ընտկիչներէն : Ու բուրգերուն եղբական խոյանքը ալլաս ունայն կը թուի Սիինքսին սեւեռուն նայուածքին տիրութեան ստակ, որուն առեղծուածային լուսութիւնը կը շեշտէ կարծես ահաւոր և պատրանքին ցաւագին նշանակութիւնը :



ՀԻՅԹԷ. ՍԱՐԱՅ



ՀԱԿԱՏԱԳՐԱՅԻՆ ՏՈԱՄՆԵՐ



## ՎՈՇՄԱԿԻՆ ԶՈՇԸ

Ա.

L'amour et la mort se complètent, se neutralisent et se suppriment l'un l'autre, en forgeant ainsi la chaîne de la vie.

DR. WOLF

Կենդանիներով միշտ սիրած եմ հետաքրքրուիլ։ Անոնց կեանքին ուսումնասիրութենէն շատ շահեկան դասեր կ'արելի է քաղել երբեմն։ Ուստի օր չանցնիր որ հաւերու, կատուներու, շուներու, ձիերու, միջատներու ըրածներովը չի դառնում։ Կը յիշեմ ատեն մը գրած ըլլալ կատուներու սիրային կեանքէն դրուագ մը որ կարգ մը բարոյականութիւններու ջիւղերուն դասու, որոնք մինչև այսօր երես վար կ'առնեն աւտոր համար, յայտարարելով թէ պիտի չմոռնան զայն բնաւ և պիտի չի ներեն ինծի, ինչ որ կը յայտնէ այն խորունկ տպաւորութիւնը զոր ան ըրած է իրենց փափուկ ու դուրաղդած ջիւղերուն վրայ։ Եւ ինչ է արդէն այդօրինակ գրութեան մը յաւակնութիւնը, եթէ ոչ տպաւորութիւն ընել, ազդել, դզողել։ Այս անգամ նորէն սիրային պատմութիւն մըն է, նորէն կենդանիներու կեանքէն, և որովհետեւ չատնոց է որ, մարդերու մէկ մեծ մասը բնութիւնէն հեռացած, իրեն յատուկ պայմանադրական սէրեր ու կեղծ բարոյականներ ստեղծած է և չի հանդուրժեր անոնցմէ դուրս արարքներու կամ պատկերներու, որչափ ալ բնական ըլլան անոնք ու անկեղծ, պէտք կը տեսնամ ազդարարել անոնց կանխաւ, որպէսզի հաճին հրաժարիլ այս գրութիւնս կարդալու պատիւը ընելէ ինձ, եթէ չեն ուզեր աղնաւական ջիւղերու ու փափուկ բարոյականի *crise* մը ունենալ։

\* \* \*

Մեր տունը, քառանկիւնի մը ծայրը կառուցուած է։ միշտ հոն երկու երկար փողոցներ ուղղահայեաց կերպով զիրար կը խաչաձևեն և կ'երկնաման սովորական փողոցներէ շատ, շատ աւելի հեռուն։ Մեր հանդիպակաց անկիւնը, փայտէ խորխուրդ դռ'ւոյ մը, միշտ կ'ոնակի վրայ բաց, անցք կուտայ լայնարձակ ու դալարաւէտ պարտէզի մը վրայ, զոր շրջապատող երկար բարակ պատեր, տեղ տեղ փլփլկած



են : Ներսը , պարտէզին մէջտեղւանքը , հին օրերէ մնացած փայտաշէն վիթխարի ապարանք մը , որ ինք ալ իր կտրգին փլփլելու , թափթփելու վրայ է , հակառակ ամեն կողմէն զարնուած կտորներուն , նորոգութիւններուն , ներկերուն : Մէջը , մէկէ աւելի ընտանիքներ կը բնակին յարկ , յարկ : Մեր քովը , քիչիկ մը ներսօք քաշուած , ուրիշ փայտաշէն բայց պղտիկ տուն մը , որուն երրորդ յարկը կը բռնակի ծերունի ու գործէ քաշուած բժիշկ մը , որուն պատահանը ու իմ սենակս մէկ գիծի վրայ իրար կը զուգադիպեն , և իրարու մէջ կը նային ինչպէս ուղղանկիւնի մը երկու կողմերը :

Յոյժ հետաքրքրաշարժ գէմք մըն է սա ծերուկը : Մենակեաց մը բառին բուն առումովը և ինքնատիպ՝ որչափ կրնայ ըլլալ : Տօքթօր Ուօլֆ է իր անունը . հրաշալի գերմաներէն ու գաղղիներէն կը խօսի , և մինչև վերջը չի կրցանք հասկնալ թէ ինք , երկու սա աղպութիւններէն որուն կը պատկանէր : Ես ֆառաթ կը կանչէի զինքը և թաղին մէջ իր անունը ասանկ էր ելած : Կարճատակ էր ու նիհար , բայց ճշմարտի երկար ուղորուն մազեր կը ծածանէին մինչև ծոծրակին վարերը և լայն , ճերմակ պատկառելի մօրուք մը իր կուրծքը կը ծածկէր : Եւ երբ պատահանին առջևը դար կենար , ինչ որ իր սիրական սովորութիւնն էր , հասալը ու նիհարութիւնը կը ջնջուէին ու իր ալեգարդ գլուխը ու փառաւոր ձիւնաթոյր մօրուքը կը չրջանակուէին , Ռոսքինեան անմահ buste մը ձեռացնելով , յուցադրելով այդպէս և զմայլումս գրաւելով : Եւ այդ չքեղ tableauին միակ թերութիւնը կուգար ըլլալ , ջգային տկարութիւն մը , միշտ ինքնիրենը ու առանց ձայնի խօսելու ունակութիւն մը՝ որ իր չըրթունքը յարաւարժ ոգևորութեան մէջ կը զնէր և լայնասփիւռ մօրուքը մշտնջենապէս կը թրթռացնէր :

Իր պոռոմութիւնը գիտէինք սակայն քիչ շատ : Գիտէինք որ առտնով յաջողակ բժիշկ մը եղած էր . գեղեցիկ գիրք ունեցած էր . ամուսնացած էր սիրային պայմաններու մէջ և ինք գաւալներու տէր եղած՝ մանչ , աղջիկ : Չենք գիտեր ինչպէս , բայց բազմին մէկ չար կատակով , ամենքն ալ , քսան տարւածն չրջանի մը մէջ , տարբեր հիւանդութիւններէ կամ համաճարակներէ մեռած էին , մեծ կամ պղտիկ , օրօրոյն մէջ կամ ծաղիկ հասակի մէջ , էն վերջն ալ վրայ տալով մայրերին , որ իր միակ միտքարանքը պիտի ըլլար թերեւ , այդչափ տառապանքներու ու աւերակներու մէջ , և որ ճնշադարեւութեան մը մէջ ճողած էր իր տանները իր հետ : Եւ ինք , վաղեմի բժիշկ , անկարող եղեր էր կտնցնելու մահուան ընթացքը և գէթ խլեակ մը ազատելու անոր ճիրմաներէն իբր իր ձեր օրերուն միակ սիրտանքը Այդ օրէն ի վեր , միայնակ կ'ապրէր վանականի մը պէս , անօգուտ դատելով իր բովանդակ հմտութիւնը մասնագիտական և զաղբելով իր արհեստը ի գործ զնեղէ զոր անկարող կը հաշակէր ամեն առիթով :

— Պէտք է ամեն բան ձգել ընտելեան ձեռքը, կ'ըսէր. ան կ'աւրէ կամ կը չինէ իր քմհաճոյքին համեմատ. այլ մանաւանդ կ'աւրէ քան թէ կը չինէ. ինչ փոյթ եւ ինչ հարկ, պայքարիլ անոր հետ Պիտի ըլլայ ինչ որ պիտի ըլլայ:

Հիմա, հաղիւ հեռաւոր թաղի մը մէջ, մէկ-երկու տուներու, գերմաներէն-գաղղիերէնի դասեր կուտար և ծայրը ծայրին կ'ապրէր, գրեթէ չքաւորութեան գրացի: Եթէ ուզէր, անշուշտ, նոյն իսկ միմիայն դասախօսութիւնով շատ աւելի կրնար շահիլ, բայց ինք դիտմամբ իր պէտքերը իջեցուցած էր *strict minimum*ի և տրամադրելի մնացած բոլոր ժամանակը կուտար կարգաւոր Շօքէհաւարի, Մաքս Սթերնէրի, Նիչէի գործերը, որոնց վարդապետութիւններովը խմբուեալ էր ալ: Քիչ անգամ իր սենեակը կ'երթայի. փողի, ազատութեան, հինութեան. ամեն կողմ գիրք, թուղթ, գիրք, թուղթ, և անա անկիւն մը քաշուած, մութին մէջէն, իր ուրուային գլուխը ցցելով ու խաղցնելով լուսութիւնը կը խզէր և յռեւտես կամ *fataliste* վարդապետութիւններու ամփոփոյքը կ'ընէր ինծի, իր անձնական կեանքէն օրինակներ շտայելով և ամեն բան, ոչինչ, ինքնաւար, անգիտակից, անկարեկիր, ունայն ու զաղիր գտնաւով:

Փողոցէն անցած ատենը, առանց զգածուելու իր ալեւոյթքին բըռնողաձ ակնածանքին, ստահակներ կը ծաղրէին զինքը, անընդհատ ինքնիրենը խօսելուն համար և մօրուքին անդուլ թօթվրաութէն դուարձացած: Ան, անտարբեր, փիլիսոփայաբար, իր փիլիսոփայութիւնները միտախօսելով կ'առաջանար գանդալ քայլերով, իր հետ դարեան ու անբաժան հովանոցին ծայրովը միայն, երբեմն անդին քշելով, իրեն շատ մօտեցող անտակորդիները:

Օրուան ժամերուն մեծ մասը, ինծի պէս, իր սենեակին մէջը փակուած կ'անցընէր, կտրուալով ու գրելով, և երկուքս ալ որոշ ու զուգադիպող ստանձներ ունէինք պզտիկ դադարներու, որոնց միջոցին պատուհանին առջև կուգայինք: Կէս-օրէն առաջ, ընդհանրապէս գաղղիացիներուն եկեղեցիին ու դպրոցին ժամ դուռն զարնուած կոչնակները, կէս-օրէն վերջը յոյներուն եկեղեցիին կոչնակը և իրիկուան չղզնաւին սոյլը նշաններն էին մեզի համար, պատուհանին առջև գալու ստանձներուն: Ես, սենեակիս զիրքին չնորհիւ, երկու փողոցներն ալ վերէն վար կը հետախուզէի նայուածքով, դիտալով կը վայելէի երբեմն ծովին ու հեռաւոր ձիւնափայլ լեռներուն տեսարանը և ի վերջոյ կը յառէի Տօքթօրին, որ պարագային կամ իր ներքին տրամադրութիւններուն համեմատ, աւելի մեզմ' կամ աւելի դաժան նայուածքով մը, յաւիտենապէս, անխոնջ, կը խօսէր, կը խօսէր, սպասելով իմ ներս երթալուս, ինք ալ իր կարգին, իր աշխատութիւններուն գլուխը անցնելու համար:

Աւտոմանրը, ամեն անգամ զինքը բարեւելուս, սովորութիւն ունէի պզտիկ ծաղրերով խայթելու զինքը, ես որ իր վաղափառները



քննադատելու, իր մուսլ վարդապետութիւններուն ու արտակերպոն համոզումներուն հակառակը խօսելու ձրի պաշտօնը տուած էի ինքզինքիս:

— Bonjour! bonjour, ինչպէս էք: A quand la métamorphose? Եղե՛ճ Մարկրիթը ձեր սիրային յայտարարութեան կ'սպասէ կոր: Թօթափեցէք տա ձեր տխուր գաղափարները և կեանքը նորէն պիտի ժպտի ձեզի: Ուրեմն սխալեր են ձեզ Ծառութ կոչելով: Երիտասարդացնող նեկտարն է որ կը պակսի ձեզ սրդեօք: Պրատուն-Սէքարդին առէք, պարոն Տօքթօր, Պրատուն-Սէքարդին!

Այն ատեն, աւելի արագ կը բաբախէին իր շրթունքը, ճակատին խորշոմները, մակընթացքի մէջ եզոդ կամ տեղի տուող կոնակներու պէս հետզհետէ կը ձգտուէին ու կը կծկուէին և անոտրքեր նայուածքը մէկէն ի մէկ կը խոթոնար: Ապահովաբար դառնօրէն կը պատասխանէր ինծի իր համը բարբառովը, ինչ որ կը զուարճացնէր զիս չտիէն աւելի: Օր մը սակայն չի դիմուցաւ և բարձրաձայն ըսաւ.

— Փողոցի տղաքներ թող ըսեն ու ընեն ինչ որ կ'ուզեն, կարելութիւն չունի ինծի համար, ինչու որ ամենք իրենց սարբին մէջն են. բայց ձեզի չեմ ձգեր որ այդ վարմունքը ունենաք, դուք որ կարող էք հասկնալու զիս, դուք որ գրական արժանիք ունիք, դուք որ...

— Գրական յաւակնութիւններ լսէք, Տօքթօր, գրական յաւակնութիւններ...:

Հակառակ իր ջղապար վիճակին, ամեն բանէ տեղեկութիւն ունէր սարսափելին, ու թէև կարգացած չէր կրնար ըլլալ իմ գրածներս, բայց հոս ու հոն լսուած բարեկամա'յան գովեստները և իր անթերի բարեկրթութիւնը զինքը արամաղիր կ'ընէին, զիս գրական արժանիքի մը տէր ճանչնալու:

Անկից ի վեր կը քաշուիմ զինքը հեղեկու մէջ շատ առաջ երթալէ, աւելի նկարչական իր զմայլելի գլուխին զարնուած կը դիտեմ զինքը Գլատուհանէս կամ իր սենեակին մէջ և ան կը շարունակէ իր մունջ կամ ձայնաւոր քարոզները, կը բաւէ որ հազուադիւր իր դադարներուն, պզտիկ քննադատութիւն մը կամ սիրային արկածի մը ակնարկութիւնը սարդեցնեմ: Այլ intarissable է, և իր գաղափարներութեան ընդհանրութիւն մէջ, երբեմն ճշմարիտ հաճոյք կըգտնեմ, մտածումի, փորձառութեան, ճշմարտութեան գոհարնեղջիւնալով: Ակներեւ հըրճուանք մըն ալ ան կ'իմանայ ամեն անգամ որ Տօքթօր կը կոչեմ զինքը, պէտք եղած կամ չեղած տեղը, հակառակ անոր որ լծկութիւնէն շատոնց հրաժարած է ինք և գրեթէ կ'ատէ զայն: Ու երբ օր մը զարմանքով կը հարցնեմ ատոր պատճառը, ա'լ աւելի կը զարմացնէ զիս իր պաշարին պատասխանով.

— Փիլիսոփայութեան Տօքթօր:



Ինքն ալ ինծի պէս կը հետաքրքրուի անասուններով, ոչ թէ անոր համար որ կը սիրէ զանոնք, ոչ, ինչու որ իր գծացած սիրտը ալ սիրելու անկարող է, այլ անոր համար որ անոնք աւելի մօտ են բնութեան, աւելի կարծեն քան մարդերը և յետոյ, ասիկա ժամանց մըն է իրեն համար, թօթափելու համար իր միտքը, քիչ մը շատ խորթին աշխատութիւններէ։ Կը հետաքրքրուի անոնցմով, որովհետեւ անոնց մէջ աւելի մօտէն կրնայ ուսումնասիրել բնութիւնը, իր անողոք թշնամին, զոր կատաղի կերպով կատէ, այն՝ որ իր կեանքը, իր ընտանիքը, իր սիրտը ջախջախած, խորտակած է, իր խօսքին նայելով։ Ես ալ միշտ՝ հակառակ փաստեր կը ջանամ քաղել նոյն այն կրնդանիներուն կեանքէն և ճակատեցնել իր դժնդակ ու սև հայեացքներուն, ի՞նչ որ թէ զուարճալի և թէ չահեկան կը դառնայ շատ անգամ։

Այն երկու երկայն փողոցները, որոնք ուղղահայեաց՝ իրար կը կտրեն, կը գտնուին շուներու պզտիկ վոհմակի մը իրաւասութեան շրջանակին մէջ որոնք նախանձոտ բնազդով մը կը պաշտպանեն իրենց սահմանները։ Տասնըմէկ հատ են, ամենքն ալ երիտասարդ և միօրինակ կերպով թխտթոյր ու փոքրակազմ։ Բայց հակառակ իրենց այդ նուրբ կազմուածքին, որ յաւիտենական պատանքի երեւոյթը կուտայ իրենց, քաջաւորջ, թեթեւաշարժ ու աշխոյժ են յոյժ և ուրիշ թաղերէ եկած ամենէն մեծղի ցեղակիցներն անգամ չեն կրնար ճակատիլ անոց ամեն մէկուն հետ, combat singulierի մէջ, ուր մնաց հաւաքական դիմադրութեան մը ատեն։ Ուստի, աւանց պատճառի չէ որ, ոչ ոք կը համարձակի ոտնակոխ ընել, ով գիտէ ի՞նչ հաշուով մը գծուած իրենց սահմանադրութիւնները, գալ բազդ փնտռելու համար անոնց ստացուածքին մէջ։ Յայտնի է որ ամենքն ալ միեւնոյն ծնողքէն են սերած, մէկ-երկու տարիներու տարբերութիւնով միայն և հարազատ ընտանիք մը կը կազմեն այսօր։ Ծնողները մեռած ըլլալու են, քանի որ մէջտեղը չի կան անոնք, գէթ այնչափ ատենէ ի վեր որչափ մենք կը ճանչնանք ու կը հետաքրքրուինք անոնցմով։

Երբէք որ մը կուի չի կայ մէջերնին. համերայախտթիւնը, համակերպութիւնը, ու դասակարգութեան զգացումը կատարեալ են անոնց մէջ։ Ուստի երբոր խառնակութիւն մը, կուի մը, հաշիւներ ըլլան, ապահով ենք որ թաղը անհանգիստ ընող պատճառ մը տեղի ունեցած է։ Գնչու մը, գող մը, արջեր, կամ օտար շուներ։ Անգամ մը Տօքթօրին սենեակին էի, քանի մը լատիներէն ասացուածներուն՝ նշանակութիւնը հարցնելու համար իրեն, երբ եկեղեցիին, կէս-օրէն առջի, առտուան երրորդ զանգակը զարկաւ. երկուքս մէկ ելանք սեղանին քովէն, մօտեցանք միեւնոյն պատուհանին, և սկսանք դիտել դուրսը, բան մը չի կորսնցնելու համար մեր սովորութիւններէն, երբ ես ինք-



ներենս կը խնդայի ներսէս և ան՝ ինքնիրեն կը խօսէր անդու։ Մէյ մըն ալ տեսանք որ ձեռք մը մեռած հաւ մը կը նետէր զխմացի պատին վրայէն դուրս։ Հոն գտնուող չոբս շուներ, լսելով անոր գետինը իյնալու ձայնը, ոտքի ելան և վրան խոյացան։ հոտուըտային զայն և երեքը անմիջապէս ետ քաշուեցան հանդարտիկ, յարգանքով ու պուշերին խաղցնելէն, ինչ որ իրենց ակտրժակը կը մտանէր։ Մէկը, էն ուժովը ապահովաբար, սխառ փարատել զայն իր եղունգներովը ու ակռաներովը և ալիքները դուրս քաշելով ճաշակել։ Հաղիւ մէկ քանի պատառ վար տուած էր կոկորդէն, և ահա անդիէն հինգերորդ մը վրայ հասաւ, որուն աւելի ուժով ըլլալը ապացուցուած բան էր մշկերին, կ'երեւայ. այն ատեն առաջին ուտողը ետ քաշուեցաւ իր կարգին, տեղի սալով նորեկին տալէ, և թաց ու արիւնոտա՝ զուսկը լըուըտելով, երբ միւսները իրենց զսպուած ակտրժակէն նեղուած ու անհամբեր, կ'երէճկտային անկերջ, վերջէն եկողը հաւին փորը պարպեց իբր լեցնելու համար և ալէկ մը կշտանալէն ետքը դանդաղ քայլերով հեռացաւ, արեւին տակ մրափելով, բարի մարսողութիւն մը պարգեւելու համար ինքզինքին։ Նորէն եկաւ հիմա կարգը միւսին որ ոտքերը ու գլուխը կրծեց քիչ մը և ելաւ գնաց պտրտելու։ միւսներն ալ վերջէն եկան, թրջած գետինը հոտուըտալու լըելու, և մեկնեցան դժգոհ, երկու կոոր ոսկոր ու փետուրներու կոյս մը միայն ձգելով հոն։

— Դատակարգութեան զգացում, ըսաւ այն ատեն, ծերունին իր յարաշարժ չրթունքներովը որոնցմէ մէկէն ի մէկ ձայն ելլալուն զարմանքդ կուգար առջի բերանս Անոնք աւելի մօտ են բնութեան, ինչու որ իրենց այդ զգացումը ուժին վրայ է հաստատուած, մինչդեռ մարդերուն մէջ՝ դրամին վրայ ինչ որ անբնական, հետեւարար և անբարոյական բան մըն է։

Ես առիթէն օգուտ քաղելով անմիջապէս կը հարցոյադնեմ՝

— Ըսել է կ'ընդունիք որ բնութիւնը բարոյական է ինքնին։

— Ո՛չ, կըսէ անդրդուելի կերպով, առանց փոյթ ընկու իր հակասութիւնը և ահա Սթերնէրի փարկած մը կը քշէ սուս։ Ու ետքէն նորէն վերադառնալով շուներուն կը շարունակէ. անոնք աւելի մօտ են բնութեան ինչու որ իրենց պէտքերը կարելի եղածին չափ սահմանափակ են և խիստ բնական պէտքեր. փորերնին կշտացնել և սեռերնին գոհացնել...

— Աս տեսակէտով դուք աւելի մօտ էք բնութեան, կ'ըսեմ չար հեգնութիւն մը սահեցնելով, փորերնիդ կշտացնելէն ուրիշ պէտք մը չունիք, որչափ որ կը յիշեմ։

— Անտարակոյս կը պատասխանէ, առանց անդրադառնալու կամ կարեւորութիւն տալու կատակիս. մինակ միտքի, ուսումնասիրելու, բանականութեան գոհացում տալու պէտքը կայ, որ սակայն *factice* է։

Ուրիշ անգամ, երբոր կուգամ պատուհանիս առջև, կը տեսնամ իր մեծվայելուչ գլուխը և կը դիտեմ փողոցին մէջ փոքրակազմ սեւ-ւռլիկ շուներուն շտապակութիւնները, չեմ կրնար միշտ չի յիշել իր սա խօսքերը. «փոքրնին կշտացնել, սեւերնին դժնացնել»։ Եւ իրաւ ալ, խիստ գուարճալի է տեսարանը, ամեն առտու, երբ փողոցին վարի ծայրէն թաղապետութեան կառք մը կիրեայ աղբիւսով լեցուն, գալ անցնելու համար մեր կողմէն։ Սեւ վոհմակը սրարչաւ կը մեկնի զայն դիմաւորելու համար ճիշտ այն տեղ ուր՝ ուրիշ թաղի մը շուները պիտի բերեն ու ձգեն զայն, պզտիկ խուռուքի մը մէջ՝ որ հակառակորդներու բարեն է և կարգ կարգ, ամենէն ուժովէն սկսելով կ'առաջանան ետեւէն, սեւ թափօրի մը պէս՝ միշտ օգտուելով, կառքին ցնցումներէն վար թափթիփած աւելցուքներէն, կտորուանքէն, աղբիւսներէն։ Քիչ ետքը, միւս փողոցին անդիւրի ծայրէն կ'առաջանայ միւսնոյն թափօրը, այս անգամ գլուխ կամ լեարդ ծախողի մը հորիզոնական փայտին ետեւէն, միշտ նոյն հանդիսաւոր, ոստոստուն ու կանոնաւոր գնացքով։ Ու ամենքն ալ քիչ շատ կուենան իրենց բաժինը, փոքրնին կը կշտացնեն ու կը ցրուին իրենց անկիւնները, գոհ ու երջանիկ։

Ամբողջ ամառը չեմ յիշեր օր մը, ուր տեսած ըլլամ անոնց սեռային զգացումին յագուրդ սալը, ես որ ուշի ուշով կը հետեւիմ անոնց ամենօրեայ կեանքին։ Եւ այդ՝ ինծի կը զարմացնէ։ Դեկտեմբերին միայն, բուռն անհանգստութիւն մը, խուլ խուլք մը թափ կուտայ մէջերնին և ամենքն ալ աւելի կրակոտ, աչքերնին աւելի թաց, բերաննին աւելի լայնաբաց ու դուրս կախուած լեզուին աւելի ջղադրգիւ տեսք մը ունին։ Հեւք մը, հուրք մը, ետք մը կայ վրաւնին և պոչերնին վեր կարկառած, դարձմուր, երբեուն, կը վազվառտեն հոս ու հոն, հոտուրտալով, փնտուելով բան մը՝ զոր չեն գտնար։ Տօքթօրին կարծիքը կը հարցնեմ, նրբօրէն հեզնական եղանակով մը. ան՝ առանց նեղանալու լրջօրէն կը պատասխանէ.

— Որովհետեւ ամենքն ալ արու են և էգը կը պակսի իրենց ձիւղ էր։

— Մնոնք ալ ուրեմն ձեզի պէս, մինակ փոքրնին պիտի կրնան կշտացնել և ստանկով աւելի մօտեցած պիտի ըլլան բնութեան։ Մեղք, մեղք հազար։

Այս անգամ անթարթ կերպով աչքերուս մէջը կը նայի իր պատուհանէն և կերեւնայ թէ առանց ձայնի պատասխանել աւելի յարմար կը դատէ, ինչու որ շրթունքներուն ոգեւորութիւնը կը կրկնապատկուի պահ մը։

Օր մը, հեռագիտակով լեռները կը գննեմ, երբ յանկած փողոցին վարի ծայրէն շուներու ծեծկըւուքի մը ձայնը կուգայ ականջիս. դիտակս հոն կ'ուղղեմ և քովս տեղի ունեցածի պէս կը հետեւիմ տեսարանին, երբ Տօքթօրը հազիւ տարտամ բան մը կրնայ որոշել հե-



ռուէն, և անդրադառնալ պատահարին: Ճերմակ ու դեղին երկու շուներ վազելով գալու վրայ են, հեռաւոր թողերու խորերէն, երբ ճամբուն վրայի բոլոր շուները կը յարձակին անոնց վրայ, կը ծեծեն կը խածնեն զանոնք, կը վռնտեն, կը նեղեն, կը հալածեն: Թուխերու մեր կայտառ վոհմակն ալ կը փութայ հոն և ծայրագոյն սահմանադիմին վրայ կապտէ ընդունելու նորեկները և պէտք եղած ծեծը քաշելու համար անոնց: Բայց ի՞նչ կըլլայ զտրմանքս, երբ կը տեսնամ որ անմիջապէս կը չրջապատեն զանոնք և կ'առաջանան անձայն, անոնց հետ, դէպ ի մեր կողմը: Նորեկները, գոհ, այսչափ զօրաւոր և բազմաթիւ պահապաններու հսկողութիւնը վայելելուն, և տագնապայի շրջանէ մը բաղդատարար անփնաս պատած ըլլալուն, կ'առաջանան նմանապէս: Մինակ, երբ վոհմակը մեր դիմացի պարտէզին տուէրն կը համի, կէս անուշութիւնով, կէս կռիւով, կը մշտն նորեկները, և կը խոթեն զանոնք մշտաբայ գունդէն ներս: Աս մոնախին էր. ուլջ պիտի չելլային դուրս:



Հինուորաց ապարանքին մէկ կողմը, լայն պատշգամ մը կը կարկառէր դուրս, փայտէ երկու հատ սիւներու վրայ կրթնած: Անոր շուքին տակ հաստատուեցաւ մեր վոհմակը: Նախնական բարեկերէ հոքը, երկու դեռատի շուներ եկան նորեկները իրարմէ բաժնելու, որ տանն ահռելի վախատուն մըն է փրթաւ: Նորեկներուն մէկը, աղնիւ ցեղէ պատուաւորած, ճերմակ սաւներով, սև դունչով ու պոչով սիրուն ու յաղթանդամ էգ մըն էր: Միւսը, հատարակ փողոցի շուն մը, նիհար, ազատ դեղին գոյնով, պոչը ներս քաշած, սոքած ու լալկան երևոյթով արու մը:

— Սիրահաններ եղած ըլլալու են, որոնք սուեանդութիւն մը սարքած ըլլալու ամեն երևոյթ ունին, ըսի, յոռետես փրխոփայիս: Բայց վայ է եկեր իրենց գլխուն: Իսկ դուք, որ աւելի փորձառու էք, en la matière, կրնա՞ք ըսել ինծի թէ ինչու, ուրիշ փողոցներու մէջ կռուեցան և հոս, այնչափ սիրալիր ընդունելութիւն եղաւ իրենց:

Այս անգամ շրթունքին բաղխումէն, նորէն բառեր սկսան բղխիլ:

— Որովհետեւ անտեղուանքը թիւի տարբերութիւնը մեծ չէր շատ, և յետոյ թէ էգ կար անոնց մէջ և թէ արու, որով երկու կողմերն ալ առ նախասնձառ կը կռուին իրենց արժանապատուութիւնը ու իրաւունքները պաշտպանելու համար: Մինչդեռ հոս, քանի որ անգամ մը fatal կերպով ինկան,— և ճիշդ ատոր է որ անձրեւէն փախչելով կարկուտի բռնուիլ կըսեն,— ալ ազատում չիկայ. նախ էգ չիկայ մէջերնին սը նախանձի խնդիր ըլլայ, երկրորդ՝ բազմութիւնը շատ է ասդիի կողմը և դիմադրութիւնը անկարելի:

— Այսօր տարեգլուխ է և գէշ պարգև մը չէ որ կընդունի կորուրեմն մեր վոհմակը, չէ՞. բարի վայելում:

— Տարեգլուխը ձեզի է, vieux style, մեզի բան չիկայ, կը պատասխանէ յետին ծայր լըջութիւնով և առանց պատահութեանս։ Եւ յետոյ, իմաստասէրին համար գոյութիւն չունի տարեգլուխը, կը շարունակէ, մէկէն ի մէկ խորասուզուելով իր սիրական մասածումներուն մէջը և հեռանալով պատահանին առջևէն։

Խեղճուկ դեղին շունը անկիւն մը թխմած, երկու վառվռուն շուները դէմը կայնած, պոչերնին կը խաղցնէին ու կ'երէճկաային իրենց կարգին սպասելով անհամբեր։ Մեր տանըմէկ քոթոմներն ալ հոն էին։ Օրերով փողոցները թափուր մնացին։ Անոնցմէ մէկը որ էն ուժովը ըլլալուն համար պարագլուխը ըլլալու էր վնասակին, առաջ կ'անցնէր, կը մօտենար ճերմակ շունին, և իր կնամեծարական զգացումներուն հաւաստիքը կը մատուցանէր։ Ան, նախնական պրզափէ ընդգլխութենէ մը ետքը անձնատուր կ'ըլլար, երբ միւս ընկերակիցները, գրգռուած, անհանգիստ կ'երերալկային իրենց տեղերուն վրայ և նեղը գրուած դեղինը լալականչ կը հեծէր։ Ճիշդ, հուր ուտելուն պէս բան մըն ալ առ եղաւ. առաջինէն ետքը կարգը երկրորդին եկաւ, յետոյ երրորդին, յետոյ չորրորդին, այսպէս մինչև վերջը, մինչև տանըմէկերորդին։ Դասակարգութեան զգացումը այս անգամ աւելի պինդ էր ու կանոնաւոր և մանաւանդ հիմնադր էր երբոր, դեղին ու ցաւագար սիրահարին, — որ խնջոյքէն զրկուած, անընդհատ կ'սղբար ու կը բողբէր, — քովը սպասողները կը փոխուէին իրենց կարգին երթալու, իրենց բաժինը վաշեղելու համար։

Աւելի քան քսան օր տեւեց այսպէս. յունվարի վերջին մօտ էինք։ Ես, ա'լ գրեթէ մինչև իրիկուն չէի հեռանար պատահանիս առջևէն, և կզակա ափիս մէջ առած, նստած, կը հետեւէի, սիրային անհաւատալի, խենթ երաւիք այդ débauchés, մախուսին։ Գիշերները միայն չեմ գիտեր թէ ինչպէս կ'անցնէին դէպքերը, թէ և ապահով եմ որ ընտելեան գործը կանգ չէր առներ, բայց ցորեկները, միօրինակ կիրպով, աչքերուս առջև déroulé կըլլային անոնք, և վայրկեան մը ու շարժում մը չեմ փախցուցած մանրակրկիտ ու հետախոյզ գննութենէս։ Հազիւ տանըմէկերորդը իր դերը կատարած կամ իր բաժինը վայելած կ'ըլլար, ահա անդին, նախադարձակը, արդէն իսկ կազդուրուած, հանգչած, նորէն գրգռուած կուգար գործի գլուխ անցնելու։ Եւ այսպէս, շարունակաբար մշտապէս կերպով։ Յաւիտեանական դարձ մը ատիկա, լիկամ դեղին սիրահարին յաւիտեական կադկանձիւնին հետ։ Անգամ մը միայն չափազանց յոգնութենէն, հակողութիւնը թուլցած ըլլալով, այս վերջինը կամայեղ կ'ըմտեցաւ իր սիրուհին, որ այդ պահուն ով գիտէ քանիերորդին քանիերորդ մերձաւորութեան տոկալու վրայ էր, անձայն ու համակերպիկ երևոյթով մը, և սկսան իրարու քիթ-բերան լղուռուտել կարօտով, որ ատեն սրահապան շուները ընդոտտ հասան և կզակի երկու հարուածով բաժնեցին զանոնք։ Ատիկա իրենց մնաս-բարովի համբոյրը եղաւ։



Եւ հիմա ամեն անգամ, պատուհանին առջեւ դալուն, յօնքերը պուտած, բարկացած երեւոյթ մը ունէր Տօքթօր Ուօլֆ, և ա՛լ աւելի գահավէժ կերպով կոխէր ինքնիշխան խօսիլ, երբ ես կատակներս կը կրկնապատկէի:

— Oeuvre de création, cher docteur... en philosophie! կըսէի:  
Ծռռռ ծռռռ երեսս կը նայէր և շուտով ներս կը քաշուէր, մէջ մըն ալ միւս կողմակէն երեւոյթ համար անվրէպ:

Անգամ մը երբ ես նորէն բան մը կրսէի ու կը խնդայի, ան՝ Շօքէնհաուսէրի մէկ խօսքը կը նետէր ինծի, չեմ գիտեր ի՞նչ յարմարութիւն տաւելով, ու վերջի մասին վրայ բաներ մը աւելցնելով, ինչ որ մէկէ աւելի անգամներ կը ներէր ինքզինքին:

— La volupté est bestiale, et la bestialité ne rit pas, ou bien ne raisonne pas.

— Ի՞նչ է սա, տօքթօր, կը շարունակէի ես հարցնել, առանց կարեւորութիւն տալու իր citationներուն, դուք որ փորձառութիւն ունիք և երանդներէ կը հասկնաք: Faible? toquade? flamme? amourette? béguin? amour? Ո՞րն է ասիկա:

Եւ երբ ան կը շարունակէր իր բարկութիւնը միշտ մօռնջերէն թափել վրաս:

— Ոչ մէկը, ոչ միւսը, չէ՞, կը կրկնէի հարցնել, բան մը կարենալ փրցնելու համար իրմէն, որ ասին յանկարծ:

— Այո՛, ոչ մէկը, ոչ միւսը, կ'արձագանքէր: C'est de l'abomination, monsieur, de l'abomination pure; c'est la nature! կը բացազանջէր յուսահատ և ներս կ'աճապարէր, երբ ես փոխադարձաբար կը կրկնէի նորէն, իրեն ամենէն աւելի ջիւերուն դարձ յանկերգս:

— Oeuvre de création! Oeuvre de création!

Ահ, խղճալի էր հիմա, երկու նորեկներուն վիճակը: Անօթի ծառա, հոն էին միշտ, արգելքի տակ, մինչ միւսները երբեմն կ'երթային քիչ մը սլքաքաղալ հոս ու հոն, ուտելու բան մը ճարելու համար: Ամենքն ալ նիհարցած, անպիտանցած, ամբած էին հիմա: Ստեւսին աղտոտած, անխալ, տակնուվրայ: Դեղին չուշը, ալ գրեթէ ոտքի վրայ կենալու կարողութիւն չունէր, բայց միշտ կը հաչէր, կը կանչէր, ցաւագին հեծիւնով մը՝ ուրկէ ծակող, սուր չեշտ մը կ'անջատուէր: Միւսը, գեղանի ու ճերմակ էզը, նմանապէս անկարող՝ ա՛լ ոտքի վրայ կենալու, բայց հոն էր միշտ, հլու, անձայն, կրաւորական, առանց ընդգիծութիւն փորձելու, ուժաթափ ու նայուածքը մոլորուն: Քանի քանի անգամներ միտքէս անցաւ, երթալ աղաւտել զիրենք այդ գեհնային վիճակէն, ջուր տալ, հաց տալ: Բայց վերջը, վերջը ի՞նչ ընել. տունս չէի կրնար առնել զիրենք, թէ դժուար էր, թէ անպատեհ: Տեսնողը ինչ կ'ըսէր. և յետոյ, հարկաւ օր մը ինքնիշխան պիտի վերջանար սիրային երկարատեւ այդ արարուածը: Անանկ ալ եղաւ:

Աստու մը, մինչև կէս-օրին մօտ, զուր տեղը կը փնտռեմ զանոնք. դիտակով կը խուզարկեմ չորս բոլորս, դիմացի պարտէզը, փոլոցներուն խորերը, ոչինչ: Այ ներս կը քաշուիմ և շատոնց ի վեր երեսէ ձգած մէկ աշխատութեանս ձեռք կը զարնեմ նորէն: Շատ չանցած հաշիւներու, ունումներու, ծեծկուռքի խուլ ազմուկ մը կը լսեմ և պատուհանիս քով կը փութամ: Դիմացի պարտէզին պատին փլած մէկ մօտին տուչե քանի մը հոգի ժողվուած հետաքրքրութիւնով կը դիտեն: Ճիշտ այդ պահուն, թաղապետական երկու կառքեր եկած կեցած են հող և կառավարները մէյմէկ թի ձեռքերնին, պատին վրայէն ներս կը խոյանան: Ես իմ տեղէս, կը ցաւիմ որ չեմ տեսնար պատին ճիշտ ետին անցած դարձածը: Յանկարծական հարուածներ, ցաւի ունումներ և թխալոյն շուներու արցակ մը կը ցատկէ պատին վրայէն փողոց ու խուսափող խուճապի մը մէջ հոս ու հոն կը ցրուի: Անձկանքով կ'սպասեմ ձերմակին ու դեղինին, բայց ոչինչ: Թերեւս դիշերով փախած են, կը մտածեմ, և շունչ կ'առնեմ: Բայց ինչո՞ւ այդ կոխար ուրեմն:

Մէյ մըն ալ ձերմակ մարմին մը կը բարձրանայ պատին ետեւէն, երկու թիւերուն թևերուն վրայ և մէկ ոտտուժով, քարացած, ոտքերը վեր անկուած, «բա՛՞՛» կ'իյնայ փողոց, գետին, հողին վրայ ուր խաւ մը թաւ փռչին կը թնդէ ու կը բարձրացնէ: Ներսէն կողկողալին հեծիւն մը, կ'ողբայ ու կը յաւէրժանայ: *Raide mort!* Միւս շուները դարձ մը ընելով պատերուն եզերքն ի վեր, բայց դուռնէն և անդիի փլած կողմերէն ներս կը մտնան նորէն և արագօրէն կը վազվառն հոս ու հոն, հին շէնքին չորս դին դառնալով խօլական: Կը փնտռեն, կը հոտուրտան, բայց չեն գտնար: Անդին, աղբիւս հաւաքողները, նորէն իրենց թիւերուն վրայ կ'առնին հէք ձերմակ շունին կարծրացած դիակը և կառքերէն մէկուն մէջ կը թաւալցնեն: Ահ, որչափ պիտի ուզէի գիտնալ թէ ինչ անցաւ հուսկ այդ դիշերը, փլվեկած այդ պատերուն ետին. թէ ինչէ՞ն մեռաւ, ինտո՞ր մեռաւ ան: Եւ միտքովս կ'անխաւ կը կազմակերպէի այն diagnosticը զոր բժիշկ-փիլիսոփան հաւանութեն պիտի ընէր այս գէպքին վրայ. «*Inanition, excès de fatigue, surmenage sexuel.*»

Հիմա ապագաման բայց ճշմարիտ ցաւ մը կզգամ, ժամանակին զոյն ազատած չըլլալուն համար և դեղին սիրահարին յետին ուրբ, յանդիմանութեան մը պէս կուգայ ախանջիս: Կառքերը կ'սկսին քաշել, բայց շուները այնչափ զբաղած են փնտռութիւն և այնչափ քիչ կ'ըստպասեն անոր՝ այդ կառքին մէջը ըլլալուն որ ոչ իսկ թափօր կը կազմեն ետեւէն, ինչպէս կ'ընէին, իրենց հին բարի օրերուն, ուտելիքի սիրուն: Եւ, առանց հետևորդի ու անշուք, հանրակիլնի մը պէս առին տարին խեղճ ձերմակ աղւոր էգը՝ զոր լլկեցին, հափափեցին, զրկելով իր սիրահարէն և դարձնելով զայն ալ շնական հանրակիլ: Հոն, մարդերուն մէջ, եթէ շատ կիներ դրամի բռնութեան կ'երթան զոհ, հոս



ուժի գերազանցութեան ու թիւի անհաւասարութեան զոհը եղաւ ստիկա՝ իր գեղին սիրականը անգամ,— որուն հետ փախած էր և որուն համար կրկն ապր պատիժը պիտի ըսեն բարոյախօսներ,— անկարող սեղէն չարժեքաւ, որ չստ չանցած ինք ալ պիտի մեռնէր, առանց անգամ մը կարենալ ճաշակելու իր առեանգած գեղունիին վայելքը, չի կրցաւ հետեւիլ մեռելախաւքին՝ որ իր սիրտին հատորը կը տանէր։ Իր լացը, իր անկիւնէն ընկերացաւ անոր երկու քայլ և յետոյ ամեն բան լնացաւ։ Խորհրդանշան մը կար կարծես ատոր մէջ. այն կիներ որ մէկուն սեպհականութիւնը կ'ըլլայ մեր մէջ, երբոր կը մեռնի, հանրութեան հուսկ յարգանքը կ'ընդունի մինչև իր հանգստավայրը, մինչդեռ այն կիներ՝ որ հանրութեան կը ծառայէ, յաճախ իր կամքէն անկախ պատճառներով, ան ցուրտ արհամարհանք մը միայն կը քաշկռտէ իր գաղաղին հասէն։

Կառքերը անիւներու ճգուքի մը ու բիրտ թաւալումի մը մէջ, ահագին թնդիւն մը հանելով հոս ետեւի կ'առաջանան հիմա, պայծառ արեւին տակ, ու փռիլին մէջ իրենց շուքը քսկոտելէն, երբ կէսօրին զուարթ կոչնակը կը հնչէ անդիւն և ժխտող խնայողութեամբ, իր անխախտի սովորութեանը համեմատ, կուգայ կը կանգնի իր պատուհանին առջին։ Լալու մարմնով մը ներսս կը մտնենք, այն չափ դէպ ու այնքան յեղակարծ կերպով աղքատած եմ, սա dénouementէն։ Ան՝ մէկ նայուածքով կը հասկնայ իրողութիւնը, որուն կ'սպասէր կարծես օրերէ ի վեր և իր գէմքին վրայ անօրինակ ու անպատու մատապայթում մը կը փայլատակէ մէկէն ի մէկ։ Պատու հանը կը բանայ, աչքերուն մէջ գեհնային շողիւնով մը, ու երեւին վրայ դիւային ծիծաղով մը, ինծի կը դառնայ, ձեռքը կը կարկատէ և ինքնաշարժ չրթունքէն յանկարծ կը պոթկան, յաղթական յանկերգի մը պէս.

— Œuvre de mort! œuvre de mort! œuvre de mort!

\* \* \*

Մեր սեպիտոյ շուները, մէկ երկու օր ևս կը հոտուրտան, կը փնտռեն և ալ յուսահատ մէյմէկ կողմ, արեւին տակ կ'երկնան, փռերնուն վրայ, լեզուին դուրս կախած, հե ի հե չնշառութիւնով մը, ուժաթափ, խոնձած ու իրենց եռքէն հանգչած։ Երկու օր, երկու գիշեր ալ կ'երկարածգուի ոգեարի կաղկանծիւնը հէք գեղին շունին։ Յետոյ ան ալ կը դադրի։

Անկէ ի վեր չեմ երթար ալ, պատուհանիս առջև, բայց նաև չեմ կրնար աչքիս առջևէն վանել ձեր յուետեան պատկառելի գլուխը ու խոժոռ նայուածքը՝ որոնք մէկէն ի մէկ, վայրաշ հրճուանքով մը կը վառվռէին և իր խաղոտ ու մռնչուն ձայնին զոգող արձագանքը՝ որ կը բացադանչէ կարծես միշտ ետեւս.

— Œuvre de mort! œuvre de mort!

Թ. ՈՐՐԵՐԵԱՆ

Ս Ա Ղ Թ Ա Ն Ք

Ա. Մ. ԱՐՔ. Օ.

ես լսեցի ձայներնին,

Առանց ասո՛ր՝ պիտի չի կրնայի ծաննալ զիրենք, այնչափ կը փոխուին եղեր անդրաշխարհի մէջ հոգիներ։ Անսպասէն ու ուղիւնէն՝ դէպի յաւերժութիւն՝ քայլ մը միայն առի, ու զիս իրենց մօտ գտայ։ Երկրային ստուերներուն վարժ աչքերս կրցան թափանցել միւս կեանքին՝ լուսաւոր սահմանները, եւ ան ինչ գեղեցկացած էին։ Մուրասեանց կը պահէր իր ալեփառ կերպարանքը. երկնային դրախտին չորս գետակներէն մէկուն ափը, կեանքի ծառին լայնատարած ճիւղերուն տակ, անոր բունին յեցած, աշխարհէն հոն տարած քնարը կուրծքին կը սեղմէր։

Մամուրեան, սիրական Վահէին կռնած, իր արծուի նայուածքը էութենէն անջատ կարծես, մշտնջերուն մէջ, շատ հեռուն թաւալող երկրագունիսն կը սեւեռէր։

Ու նորեկը, Պէրպէրեան, աչքերը իր վարը թողած սիրելիներու բաժանումէն լացած ու կարմիր տակաւին, այլ ճակատք անճառ երանութեամբ արդուն, իր Զարուհիին ու իր մտերիմներուն կը յառէր փոփոխակի։

— Կաղանկի զիշերն է, Սրբազան, — ըսաւ Պէրպէրեան, — «մեզի հին սիրելի երգերէն կ'ուզենք որ երգես։»

Մամուրեան թեթեւ ու հեզմող ժպիտ մը գծեց շրթունքին վրայ։ — Ինք նորեկ է, կը մտածէր, ու դեռ չի գիտեր թէ հոս յաւիտենականութիւնն է տարին, ժամանակը ջնջուած է, ոչ կաղանկ, ոչ նոր տարի, ոչ սկիզբ ու ոչ վախճան։

Այլ Մուրասեանց, յիշատակներու անճնատու, վերցուց քնարը եւ իր արծաթե ձեռքով իր ամենէն անուշ երգերէն մէկը երգեց։

Ու երբ քնարին վերջին շեշտերը հնչեցին, — «Լեցուր, Վահէս, ըսաւ, կաղանկի զիշերն է, լեցուր անմահութեան նեկտարէն։»

Կարմաբոյն հեղուկը, որ լոյսի կաթիլներէ՛ կ'ազմուած էր կարծես, սկսաւ փայլիլ գաւաթներու մէջ։

Ու Պէրպէրեան, երանութենէն երկոյս յուզուած, ելաւ ոտքի, եւ լուսապսակ ճակատք դէպի Անմահին Գահը դարձուցած ըսաւ։

— Իւսկիւտարի ափեր, մտերիմներու եւ յաւերժութեան մէջ, ձեզի է որ կը յիշեմ։ Կը փափայրիմ ու կը մտղմեմ որ լոյսի վառարանը, իմ վարժարանս, փայլի ու շարունակէ անխափան։

Գաւաթները իրարու զարնուեցան երկնային յուզումով։

Կարգը Մամուրեանինն էր։ Մէջքը կուցած այլ ճակատք կարմիր ու աչքերը սուր, ինչպէս միշտ, ոտքի ելաւ ան։

— Մարիամ, հոգիս, մոռցեց, — ինչպէս ըսած էր աշխարհէն մեկնած ասէն, — զաւկիս թողուցի անքիմ անուն մը եւ «Արեւելեան Մամուլ»ը, իր անտրտատ անցեալով, ու քեզի որ իբրեւ հեռուակ հսկես իր քայլերուն։ Կը փափայրիմ եւ կը մտղմեմ որ իմ հոգիիս զաւակը չմեռնի երբէք։»

Մուրասեանց, Պէրպէրեան, Զարուհի, Վահէ, հոգիով իրենց գաւաթները զարկին Նահապետիսն գաւաթին։

Ու Սրբազանը, քնարը միշտ կուրծքին, թաղուած վայրիկ մը վշտագին խոհերու մէջ, կանգնեցաւ։

— Անգամ մըն ալ թափուր եւ ամայի մտաց կաթողիկոսական Ս. Աթուր, ըսաւ, — մաղթենք, եղբւրք, որ Աստուած անասան պահէ զայն։

Բոցեղէն հոտեր մը շաշուց ամէնքը։ Յնցուելով կանգնեցան ու սեփան թէ ալեւոր Աստուած, որդոջուն ձեռքով գաւաթ մը բռնած, կը մօտեցունէր զայն Սրբազանին գաւաթին։



Ա. ՆԱԻԱՐԵԱՆ

— 32 —

ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

— 33 —

## ՓՐԱՆՍԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ՏՐԱՄԵՐԳԱԿԸ

(ՎԻԳՏՈՐԻԷՆ ՍԱՌՏՈՒ)

Ա.

Սառտու թէև չունի Իպսէնի մը կամ Թօլսթօյի մը տիեզերական հռչակը՝ բայց նկատուած է համազգային գրական շրջանակներու մէջ իբր Ֆրանսայի կենդանի տրամերգակներու մեծագոյնը։ Այսու հանդերձ՝ ոչ միայն կարելի է բաղդատել զանի անցեալի հոյակապ գրագէտներու հետ, այլև նորերու վերաբերմամբ ակնյայտնի են անոր գրական տկար կողմերը։ Չունի ոչ Ֆլօպէռի կուռ ու հրաշագեղ ոճը, ոչ Զօլայի իրապաշտական մեծաշուք բանաստեղծութիւնը, ոչ Լաֆտանի բարիգական նուրբ ու խայթող հեղնութիւնը և ոչ ալ Պուսթէի մը ճկուն հոգեբանութիւնը։ Ի՞նչ է ուրեմն պատճառը որ այսօր իր խաղերուն շնորհիւ աէրն եղած է ան Մալիի պատմական չքեղ գղեակին ու իր կուրծքին վրայ կը կրէ Հանրապետութեան նախագահին ու մի քանի բացառիկ զօրավարներու և մեծ մեծներու հետ Պատուոյ լէգէոնի մեծ լանձախաչը։ Սառտուի գրական թերութիւններն չեն արգելած արգարեւ իր տրամներն խոշոր յաղթութիւններ տանելու եւ նոյն իսկ իրենց գիտական կազմուածքով նշանաւոր գրագէտներու հիացումը հրուիրելու։ Սառտու անձխտելիօրէն բեմական կիսաստուած մ'է։ Գիտէ թատրոնի բոլոր գաղտնիքները, բոլոր փոքր բայց կարեւոր մանրամասնութիւնները, այսինքն է այն ficellesները և trucsները՝ որոնք կը պակսին Շէքսպիրի, Սոփոկլի, Իպսէնի և նոյն իսկ Վիգտոր Հիւկօի մօտ — բարեբաղդաւար։

Սառտու թատրոնի գերագոյն մարդն է՝ որոյ մօտ technique մասը գլխաւոր, զրեթէ էական դերը կը կատարէ․ բայց բոլորովին զուրկ է ոչ ճշմարիտ զգացումէ և ոչ կիրքէ։ Ահա այն անկիւնաքարը որոյ վրայ կուած է ան իր հարստութեան ու փառքին ոսկեզօծ սպարանքը․ բայց թէ այս չէնքը պիտի կրնայ դիմանալ տաղալիչ մրրիկներուն, ասոր պատասխանը չենք կարող տալ վերջնական կերպով մը, կան սակայն օրինակներ — բեմի պաշտուած կուռքեր — ինչպէս Լապիշ մը կամ Սկոպա մը՝ որոնց գերեզմանին վրայ մոռացութիւնն սկսած է դրոշմել իր անողոք կնիքը։

Վիդարիէն Սառառ ծնած է 1831 Նոյեմբեր 5ին : Հետզհետէ աւսումնասիրած է իրաւագիտութիւն եւ բժշկութիւն . բայց ոչ մի կոչում զգալով այս ճիւղերու մէջ , հակառակ իր ծնողքին թախանձանքներուն կընդգրկէ գրական ասպարէզը : Անոր նախաքայլերն եղած են յոյժ դժուարին . գրեթէ ոչ մի գրագէտ չէ ունեցած անոր դժբաղդութիւնը : Բայց ամուր նկարագրի տէր , օժտուած կամքի հզօր լծակով մը , շարունակած է անդադար իր նպատակակէտը աւանց մի վարդիւնան չնդիւլ տանել եւ վնասելու իր վերջնական յաջողութենէն : Իր աստին՝ գրեթէ Բարիզի բոլոր թատրոնները լեցուած էին Սկոպիւլու անոր աշակերաններուն ապակար ու անհամ խաղերով՝ եւ որոնք տէր բեմական ասպարէզին՝ թշնամի էին ու է սկսնակի արուեստագիտական նոր ձգտումներուն :

Ինչպէս յայտնի է՝ գրեթէ բոլոր դրօշմաններն իրենց առաջին դժուարութեանց պահուն աշխատած են շահու աղբււր մը գտնել լրագրութեան մէջ : Սառառ չէ խուսափած այս հատարակային ճակատագրէն : Իր անդրանիկ յօդուածը կերելի «Արուեստասէր Եւրոպա» կոչուած պարբերական թերթին մէջ՝ որոյ անօրէնն էր Շառլ Տըղօլմ : Այդ յօդուածը իբր նիւթ ունէր հռչակաւոր դաշանկար Գօսօի մէկ ցուցահանդէսը : Տնօրէնը որ միւլենոյն աստին նկարներու վաճառականութեամբ կըրողէր եւ բաւական հարուստ չէր մեծ վարպետներու գործերը գնելու , կը խնդրէ Սառառէն որ յօդուածներն իր խանութին մէջ գտնուած արուեստագէտներու նկարները գովաբանելու ծառայէն միւսին : Սառառ զգուած լուսագոյն կը դառնէ հրաժարել այսօրինակ գծուած աշխատակցութենէ մը :

Այս միջոցներուն՝ իր ընտանեաց բարեկամներէն մին , Հիւլառ-Պէէհօլ կը ներկայացնէ անոր դիտատի պատանի մը որպէս զի յունարէն եւ լատիններէն գտներ տայ անոր : Սառառ լատիններէն խիստ լաւ գիտէր , բայց յունարէն ընտա չէր գիտեր : Պատանին եղիպատցի մըն էր՝ Փրամոս ոչի Սպայի մը եւ օտարուհոյ մը սիրոյ դաղանի պատւով՝ որ մի քանի ամիսներ ասպարէիւն ճիւղերէ յետոյ կը վերադառնայ իր երկիրը առանց կարենալ սովորելու ոչ մի բառ լատիններէն կամ յունարէն :

Սոյն բոլոր անակնկալ անյաջողութիւններն կը նեղեն հէզ գրագէտը թշուառութեան ճիւղաններուն մէջ : Իր սովալուկ վարը կշտացնելու համար կը գտնուար յերա մը չոր հացով ու մէկ քանի սուր եփած գետնախնձարով : Բարիպի եւ նոյն խակ ու է չըջանակի մէջ յայտնի է որ յաջողութեան ստաջին արդիւնն է արտաքին մարտեր երեւոյթը : Այնպէս որ ձեռնադիր մը յանձնուելու համար ու է անօրէնի՝ եթէ հեղինակը լաւ չէ հաղուած՝ կը կորսնցնէ իր գրական



բոլոր արժանիքը . և Սառտուռ ունէր միմիայն հինցած , գունատած ու կարկսած վերարկու մը և նոր քանթալոն մը որ կը պատկանէր իր բարեկամին և որուն հետ կը բնակէր նեղ մանսարաի մը մէջ հազիւ մարդաչափ բարձրութիւն ունեցող :

Եթէ Սառտուռ այն ատեն բոլորովին անծանօթ էր իբր թատերագիր, գրեթէ հռչակաւոր էր իբր médium, այսինքն է ոգեհարցական միջնորդ : Ոգեհարցութիւնն մուտ գտած է ի Ֆրանսա Պօսն Հօմի միջոցաւ : Այս վարդապետութիւնն որ ժամանակ մը տարածուած էր բոլոր դասակարգերու մէջ, դեռ ունի այսօր իր մոլեռանդ աշակերտները : Անոր որբանն եղած է Ամբրիկա : Ֆրանսայի մէջ այս վարդապետութիւնը ռումկացնելու համար հանդէս մը կար «Le spirite» (ոգեհարց) որուն կ'աշխատացէր նաև Սառտուռ : Սոյն հանդէսին տուած ոգեհարցական ժողովներն հանրածանօթ են , և Սառտուռ անոնց մեծ վարդապետը՝ ոգիներու և կենդանիներու միջև կը ծառայէր իբր մէքիսմ : 1897ին կը հրատարակէ գեղեցիկ գործ մը որոյ տիտղոսն էր «Ոգեհարցութիւն» :

•

Սառտուռի առաջին խաղը «Ուսանողներու Սրճարան» խոչոր անկում մը ունեցաւ Օտէնի թատրոնին մէջ . պատճառը սովայն ուսանողներն էին որք իրենց ուղղուած անարգանք մը տեսնել կարծեցին սա երկու տողերուն մէջ՝

— On n'a plus de jeunesse, on n'a plus de pudeur,  
Et l'on se croit savant et l'on se croit penseur!

— Ոչ երիտասարդութիւն ունին և ոչ պատկառանք,  
Ու ինքզինքնին կը նկատեն իբր գիտուն և խորհող :

Այս թատերախաղի ներկայացումը կը վերջանայ կատաղի սուլումներու , անպատկառ բացազանչութիւններու , անամուսկին զանազան զննչիւններու ու կոկորդալից ծիծաղներու միջև : Միւսնոյն աղմուկը կը վերսկսի երկրորդ ներկայացման , այսպէս որ անօրէնն կ'ստիպուի վերջնականօրէն զազրեցնել զայն : Այս առաջին անգամ ջողութիւնը զանի չլուսահատեցներ : Երկրորդ խաղ մը կը յանձնէ Օտէնի «Պէռնար-Բալի» անուան տակ : Խաղը նախապէս կ'ընդունուի ու քիչ յետոյ կը մերժուի առանց բացատրութեան : Ամպիկիւ թատրոնը կընդունի անոր ուրիշ մէկ նոր խաղը «Ճկենիի ծաղիկ» . գերազաւարտ անօրէնն զայն ներկայացնելէ առաջ կը մեռնի ու աւնոր յաջորդը կը կարսնցնէ բնագիրը : Մի տարի յետոյ կը հեղինակէ «Կուզ» անուն արամ մը որ կը մերժուի բոլոր թատրոններէն : Վհաւտած կը յանձնէ զայն երկու ծանօթ թատերագիրներու՝ Բօլ Ֆէվալի

և Անիսէ Պուռժուայի որոնց ստորագրութեան տակ կը խաղացուի մեծ յաջողութեամբ Բորթ-Սէն-Մարթէնի թատրոնին մէջ: 1859ին, Տէժապէ թատրոնը կը ներկայացնէ անոր «Ֆիկառօի առաջին զէնքեր» անուն գործը: Այս կատակերգութիւնը բաւական կը յաջողի, և Սառտու հետգհետէ կը խաղցնէ ուրիշ երկու գործեր, մին «Ջոպլին անձեր» Բալէ-Ռուայալ թատրոնը, երկրորդն՝ «Պարոն Կառա» Տէժապէ թատրոնը: Սակայն այս մի քանի միջակ յաջողութիւններէ յետոյ, վերստին կիցնայ սեւ թշուառութեան մէջ: Իր «Ճանճի ոտքեր» կատակերգը կը մերժուի ամեն տեղ. յուսահատած, չլստած իր բազմաթիւ տպարդիւն գիւմուսներէն, Սառտու կը խնդրէ իր կնոջմէն որ երթայ գտնէ Ռօզ-Շէնի ծանօթ գերատանուհին որ միւսնայն տոտեն կը վարէր ժիննազ թատրոնը: Տիկին Սառտու կը պատմէ անոր իր ամուսնոյն գրական պայքարները, ու այն առժառնելի թշուառութիւնն որուն մասնուած էր իր ամուսինն և զոր անուցանելու համար ստիպուած էր ինք ծախել իր գլխարկներն ու հանդերձները: Ռօզ-Շէնի յուզուած կը կարդայ անմիջապէս վերստին իշխալ կատակերգութիւնը և հետեւեալ օրը կը գրէ հեղինակին որ իր գործը ընդունուած է: Սառտուի հռչակն տարածեցաւ «Մեր մտերիները» անուն գեղեցիկ գործովն որ մեծ յաջողութիւն գտաւ ժիննազի մէջ: Այսպէս կնոջ մը շնորհիւ կեանքի նիւթական պէտքերէ աշատուելով, շարունակաբար կը խաղցնէ «Դրացոյն ինձորներ», «Պընուաթօն ընտանիք», «Սե մարգարիտ», «Տիկին Սան-ժէն», «Թէրմիտոր», «Թէոտորա», «Փէտօրա», «Լա Թօսդա» ևն.:



Լա Թօսդա Սառտուի տրամներէն ամենէն յուզիչն է, ամենէն կենդանին ու գեղեցիկը: Հոն դրած է ան ոչ միայն իր բնական յատկանշական տաղանդին ալլազան ու չքնաղ գրողձը, ալ և սիրոյ և կրքի ամենակատարեալ գեղեցկութիւնը: Թերեւս այս միակ տրամն է որ զանի պահէ տպագրայի մոռացումէն:

Թօսդայի միջավայրն է Հռովմ. գործողութիւնը տեղի կ'ունենայ 1799ին Հռովմայական հանրապետութեան տապալումէն անմիջապէս յետոյ: Առաջին արարուածը կը ներկայացնէ Ս. Անդրէասի. եկեղեցին, Հոն Մարիօ Գալարատօսի անուն ծանօթ պատկերահանը կրօնական հին նկարները վերանորոգելու կ'աշխատի: Թէև կասածելի է իր տարտամ կարծիքներուն պատճառաւ, բայց զինքը ազատ կը թողուն բանի որ անի իրեն իբր գլխաւոր զբաղումն ըրած է արուեստը և Թօսդայի սերը: Այսպէս օր մը, աշխատած պահուն եկեղեցոյ մէջ խուլ աղմուկ մը ուշադրութիւնը կը հրաւիրէ եկեղեցին այս ժամուն զոցուած ըլլալով հասարակութեան, Անժօմմի՝ դատաւարարտեալ մը՝ Հռովմայ ագնուական դատաւարգէն, բանտէն խոյ տալով հոն առժամապէս ազատան մը կը գտնէ: Բայց չէ կարելի երկար ստեն մնալ հոն. իր փախուսան պիտի ինցուի անշուշտ ու պիտի փնտռեն զինքը: Գալարատօսի որ անոր գաղափարակից է, յուզուած անոր տաժանակիր բերդարգելու-



Յենէն կ'երդնու ազատել հիւրընկալելով զանի իր գեղջկային ծածուկ մէկ տան մէջ որոյ գոյութիւնն թօսքայէն զատ ոչ որ գիտէ: Այս խօսակցութեան միջոցին դուռը կը զարնեն: Մարիօ աւանդատան մէջ կը փակէ փախստականը ու կ'երթայ դուռը բանալու: Իր նազելի սիրունին է՝ Ֆլօրիա՝ Լա թօսքա ծածկանունը կրող հոգնակար ու գեղանի երգչուհին որ անուշահոտ ծաղիկներու ժապաւնազարդ փունջ մը կը բերէ իր տարփաւորին Լա թօսքա քր ձայնի աղմուկը իմացած էր, կոսկածոտ ու նախապաշարեալ ինչպէս բոլոր տարփուհիներն՝ զխաւորապէս խալացի գեղեցիկ աղջիկները, կ'ընէ՝ անոր հետ սիրաբոլորքը նախանձի փոքր կտիւ մը, իբրեւ թէ արուեստագէտն չգոհանալով իրմէն ու խտէլի սրբունիներէն, ունենայ ուրիշ նոր տարփուհի մը: Հազիւ թէ երկու սիրահարներն հաշտուած կը մեկնին սրբալայրէն, ահա Սքարբիա՝ քաղաքին ոստիկանապետը՝ կողզայ խուզարկել եկեղեցին որ կը գտնուի կեղդանական բանտին մօտ և որ կը պատկանի Անտօնիոյ հոյակապ ընտանիքին: Բայց Անտօնիոյ թողած էր իր թաքստոցը, և Սքարբիա աւանդատան մէկ անկիւնը կը գտնէ հովանար մը միայն որ կը պատկանի փախստականի բրոշ մարքիզուհի Անթալանդի և կը պանծ գայն իբրեւ ծանկազին ապացոյց մը:

Երկրորդ արարուածը տեղի կ'ունենայ Ֆրանչէզի պերճ պալատան մէջ: Այս տեսարանը ժամանակամիջոցի բարբերուն մէկ հաւատարիմ պատկերն է: Հոն կը գտնուի Հռովմայ բարձր ազնուական դասակարգը, ինչպէս նաև Նաբոլիի թագուհին՝ որոյ ի պատիւ պիտի երգէ Լա թօսքա Սքարբիա տխուր է իր անյաշդութեան համար: Իր ծանձր մեղմադճութիւնը կը պոտցնէ շողշողուն լոյսերու, ծիծալներու և պարբերութիւն, երբ յանկարծ թագուհին կը լոյճ գինքը և կը հարցնէ թէ արդեօք Անտօնիոյն ձերբակալուած է: Անոր բացասական պատասխանին վրայ թագուհին կը բարկանայ և նոյն իսկ կ'սպառնայ անոր փախուստին իբրեւ մեղսակից նկատել զանի: Ոստիկանապետը պէտք է անպատճառ գտնէ Անտօնիոյն, բայց ո՞ր և ի՞նչպէս Պան մը կը կասկածի Մարիօ որ մի գուցէ պահած ըլլայ զանի իր բազմաթիւ բնակարաններէն միոյն մէջ: Կը խորհի ձերբակալել սրբեստագէտը, բայց գիտէ որ այս ձերբակալութիւնը չպիտի յանձնէ իրեն փախստականը: Ետիք բարձր նկարագրի տէր՝ նոյն իսկ տանջանքի մէջ չպիտի զիջանի ստորնաբարչ մատնութեան մը: Ի՞նչ ընել ուրեմն: Այս միջոցին սրահ կը մտնէ Լա թօսքա երգչուհի համար Բէզիլլօի մէկ մեղեդին: Սքարբիա՝ որ անշուշտ ճանչցած պէտք է ըլլայ Շէքսպիրի Իսկոն, յանկարծ դիւսկայն գաղափար մը կ'ունենայ, այն է նախ անձի սպառիչ կրակը նետել գեղեցիկին թօսքայի սրտին մէջ: Կը յաշդի, մանաւանդ երբ անոր ցոյց կուտայ մարքիզուհի Անթալանդի հովանարը և կ'ըսէ որ այդ կինը Մարիօի նոր տարփուհին է: Լա թօսքա դալկահար և յուսահատ նախանձի բզկտիչ ճիրաններէն ազատելու համար, կը թողու պալատն ու կ'երթամ զանելու իր տարփաւորն անոր գեղջկային բնակարանին մէջ՝ որ իրենց սիրոյ սովորական ժամագրաւայրն է: Սքարբիա զոն իր դաւաճան ծրագրէն՝ գաղանադողի կը հետևի Լա թօսքային:

Երրորդ արարուածը տեղի կ'ունենայ վերոյիշեալ բնակատան մէջ: Տեսարանն կը ներկայացնէ գեղեթիմաղ պարտէզ մը: Վարագոյրը բացուելուն պէս կը տեսնենք Մարիօ և Անտօնիոյն, այն է կ'երջինը չարագուշակ նախազգացումներ ունի: Մարիօ կը ջանայ փարատել զանոնք ըսելով թէ՛ բացի թօսքայէ՛ն ոչ որ գիտէ ապատանաւորանին հասցէն: Այս վարկեանին դուրսը աղմուկ մը կ'իմացուի: Անտօնիօ կ'երթայ պահուէտի պարտէզին անկիւնը կիսաւեր հորին մէջ ուր կը գտնուի թագստանոց մը: Թօսքա ներս կը մտնէ: Մարիօ որ չէր սպասեր անոր գալուստին, սա բացազանչութիւնը կ'ունենայ:

— Դո՛ւն:

— Այո, ես. ասի կը նեղէ՞ բեզիլ:

— Ոչ, բայց կը մոտանա՞նք զիս: Ի՞նչ է գալուստիդ պատճառը:

— Հետաքրքրութիւնը: Գուզեմ տեսնել . . .

— Զո՞վ:

— Քու տարիւնհիդ . . .

Մարիօ հակառակ իր խոստման՝ կ'ստիպուի ամեն ինչ բացատրել և ապացուցանելու համար թէ ոչ թէ կին մը այլ մարդ մը կը պահէ, նոյն իսկ թագաւորնոցը ցոյց տալու անխոհմտութիւնը կ'ունենայ։ Սքարբիա ներս կը խռժէ այս պահուն ու կ'սկսի իր խռժարութիւնները։ Տանջանքի կը դնէ Մարիօ և կը հրամայէ Թօսգայի որ Անժլօթթիի ներկայութիւնը խոստովանի՝ երգչուհին տեսնելով որ ահեղի տանջանքներու մէջ պիտի սպաննեն իր տարիաւորը և թէ իր բոլոր ցաւակո՛ծ աղաչանքները ապարդիւն պիտի մնան, լաւագոյն կը համարէ մատնել քան թէ իր սիրելի տարիաւորին աղետալ մահուան պատճառ ըլլալ։ Ոստիկաններն կը խոյանան դէպի Թաքսանոցն, բայց հոն ցուրտ դիակ մը կը գտնեն լոկ։

Չորրորդ արարուածը յոյժ տրամերգական է։ Մարիօ իբր մեղսակից դատաւար տուած է մահուան, ոչ որ չէ կարող ետ առնել այս անողոր վճիռը։ Թօսգայի յուսահատութիւնը աննկարագրելի է։ Կապառնայ, կը պաղտարի, կուլայ որպէս զի Սքարբիա ազատէ զանիս Ոստիկանապետը եթէ ուզէ կրնայ փոխանակ կախաղանով ապաններու հրացանի բռնել տալ։ Կարող է նաև փամփուշտի տեղ միայն վառօղ դնել տալ հրացաններու մէջ ու կեղծ մահով մը փրկել Մարիօն։ Բայց ասոր համար միակ պայման մը կը դնէ, այն է՝ Թօսգան յանձնուի իր տոգոտ քմահաճոյքին։ Այս տեղ խնդ կնոջ պարտականութեան ու սիրոյ հոգեկան վիճակը յոյժ շահեկան է և սրտայոյզ։ Այո՛, պիտի յանձնէ իր մարմինը, այո՛, պիտի ըմպէ ստորնութեան ու վատութեան դառն բաժակը՝ փրկելու համար իր պաշտեցեալ տարիաւորն։ Սառտու այս տեսարանին մէջ դրած է իր արուեստին ու սրտին գեղեցկագոյն մասը։ Սքարբիա հրաման կուտայ Թօսգայի ներկայութեամբ որ դատաւարտեալը կեղծ հրացանի բռնեն։ Բայց զաղանօրէն կը հրամայէ որ զօրոգութիւնն իրապէս տեղի ունենայ։ Թօսգա գո՛հ է, մի քանի վայրկեանէն իր Մարիօն ազատ պիտի ըլլայ։ Հռովմայ նահանգը պիտի թողուն ու պիտի երթան ուրիշ հիւրընկալ երկիրի մը տակ իրենց սիրոյ յաւիտեական մեղեդիէ երգելու։ Սակայն յանձնուելէ առաջ կը խնդրէ որ զրէ ու իրեն յանձնէ՝ ազատագիրը։ Սքարբիա գրելու միջոցին, երգչուհին կը նշմարէ դաշոյն մը զրանեղանին վրայ. յանկարծ իր սիրաբորբոր ուղեղին մէջ վրէժի գաղափարը կը ծիլի։ Կառնէ դաշոյնը ու կը մխրձէ զայն անոր սրտին մէջ։ Մահը վայրկեական կըլլայ։ Այս միջոցին դուրը հրացանի հարուածներ կը լսուին։ Թօսգա կը վազէ իր տարիաւորը գտնելու ու միտան խոյս տալուն։ Մարիօն զոտին տարածուած է անշարժ ու անկենդան։ Հէ՛ք սիրուհին կը խօսի անոր, կը շոյէ, կը համբուրէ, կը պաղտարի . . . կը տեսնէ անգութ իրականութեան ու դառնագին կը հեծկտայ գիակին վրայ։ Ոստիկանապետին մահը կրմագորի ու խուճ մը գինեղոյներ կը յարձակին ձերբախելու։ Թօսգան, բայց անի միջոց չթողուր ու իր մահացու յուսահատութիւնն ու սուզը կը թաղէ յաւէտ՝ կամուտը մահուան մը մէջ[\*]։

[\*] Բօրծ-Սէն-Մարթէն Թատրոնը, 1907 Դեկտ. 7ին տուաւ Սառտուի մէկ նոր խաղը «L'affaire des Poisons» (Թոյներու խնդիրը)։ Այս տրամը յաջողութիւն չունեցաւ. միւս տրամներուն բաղդատմամբ զրեթէ ամենէն տկարն է։ Ֆրանսացի բննադատներն շատ չբաշխեցին մեծ վարպետը անոր տարիքին ու համբաւին ի յարգանս, զոհացան ըսելով թէ այս նոր խաղը լոկ մեղրորամ մ'է որ կ'ներկայացնէ Լուդովիկոս ԺԴ-ի պատմական մէկ ժամանակամիջոցը։



ՄԻՍԱՔ ՄԵՌԱՐԵՆՑ

ԱՆՏԻՊ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՄԸ

Ի՞նչ ուրախութիւն, ու մանաւանդ ի՞նչ հպարտութիւն, հանապազօրեայ դանդալ ու միտիկրայ տեսարաններու մշտանոցն ձանձրոյթին մէջէն, յանկարծ, ճառագայթող դէմքով ու գիտակից ցնծութեամբ ձայն բարձրացնել ու զոչել, — ահա՛ նորութիւն մը, ահա՛ ճշմարիտ նորութիւն մը: Փանգի, աւաղ, գրական հովիտին ծաղիկները, բանաստեղծներ՝ իրենց առաջին փթթումին ուրախացուցիչ յուսադրութենէն վերջ՝ ինչ դառնութիւն, յուսախաբութիւններ կը դառնան մեր աչքին: Հեռուէն տեսնուած բայց բախրանալ թոյլեր, մարմանդին ալեծուփ կանանչին վրայ սփռուած, նոր ծաղիկներու թափօրի մը պատրանքը կուտան մեզ. բայց երբ արեւին հուրքը կը բանայ անոնց չափրակները, երբ ժամանակը աչքերը կը բանայ՝ ինչ յուսափրկում. յաւիտենական ճերմակ երիցուններն են կոկեր անոնք...:

Ահա՛ Լասիկ ուրեմն, նոր ու նորանշան բո՛ւտատեղծ մը. եթերաշած, աննիւթարաղծ, քիչ մը տարաշխարհիկ, բայց լիովին բանաստեղծ: Փառատենչիկ և ունայնատէր չէ՛ ինքը. անտարբեր ալ չէ անշուշտ փառքի ծաղիկներու հմայքին. բայց վերապահ է, որովհետեւ մշտախաղաց զարգացումին տենչը ունի, և իր երբեմնի ծաղիկները՝ իր աչքին այլեւ թարչամոծ՝ կարեկից ժպիտ միայն բաժին կը ստանան. և սակայն գուցէ անիրաւօրէն անտարբեր կամ վերապահ. որովհետեւ մեղի համար անթօչ ու թարմ է, ինչ որ բանաստեղծը բարձրագոյն յարացոյցի մը հետապնդումին մէջ անպէտ ու օթեկ կը նկատէ: Եւ ինչպէ՛ս լքել մտքին երբեմնի սիրատուն զուամները՝ երբ մանաւանդ ջոռքին պէս ծիծղուն ու չնորհալի մանկուններ ըլլան անոնք. —

Ջուրն է ծիածան,  
զանչիլ մը ջինջ,  
դիպակ մ'անոնն,  
փոփոխ ու ջինջ,

հիւսուած՝ ցիրցան  
ցոլքերով ջինջ,  
ջուրն է ծիածան,  
երիզ մ'է ջինջ:

Եւ լուսինկան,  
նո՛ր, ոսկեջինջ,  
շրքանքշան  
մ է կախուած՝ ջինջ  
ջուրին ծիածան:

Ծածանուտ այս տաղիկը՝ մթին ջուրերու վրայ յանկարծօրէն անդրադարձած լուսնային ճառագայթում. մըն է, ջուրին խաղաց-

քէն հալած, նրբերանդուած. կամ մանտօլինի երաժշտութեան ժա-  
նեկահիւս երգեակ մը:

Եւ արդէն տուտելուպէս նրբերանդութեանց ու նրբաձայնու-  
թեանց քերթողն է ինք, և իր հոգին անդրադարձութիւնը լուսնա-  
յին ծիածանումի մը նրբակապոյտ ու սաթի գոյներուն. կամ ըզմոյ-  
լադին խոնարհումի շարժումն մը՝ լուսնային ջուրերու երազային  
ծփումին վրայ. —

Եւ կամ մերձ հոգիս՝  
լուսնի ջուրերուն  
մէջ՝ ինչպէս նարկիս՝  
կը նայի, զմայլուն՝ . . .

Ինչպէս չթափանցուիլ այս զմայլանքէն, կարենալով գիմագրել  
գրեթէ կանացի այս ձեռքին փափուկ դիւթանքին:

Այս բանաստեղծութիւնը պիտի կրնար նմանցուիլ ամհունօրէն  
թարմ, չքնաղ, գեղատեսիլ ծաղիկի մը՝ որուն բոյրն ալ կ'երեւակա-  
յենք ու կը զգանք հեռուէն, և որ սակայն՝ քիչ մը կը տխրեցնէ  
մեզ՝ վասնզի կը փորձէ ու կը խաբէ մեր հոտատութիւնը. բայց ո՞վ  
պիտի ժռէր պնդել թէ բոյրը միակ հմայքն է ծաղիկին: Յետոյ, այս  
բանաստեղծութիւնը նրբութեան բանաստեղծութիւնն է. քանզի եր-  
գիչին սիրար, իր սիրելութեանց ափին մէջ, (իր իսկ գործածած նը-  
մանութեամբ) մետաքսէ թաշկինակ մըն է, փափուկ, մեղմածալ,  
թեք, անդատու. և կամ իր բարբառը ցանկալի երաժշտութեան մը  
հոգին մէջ երկարաձգուած արձագանգը, կամ նոյնինքն երաժշտու-  
թեան ընկերացող ամանուն բայց զգալի շրջունն է, թեղարիչ, խա-  
ղաղածուփ. և իր վրձինը գրեթէ աներեւակայելի կերպով զանազա-  
նակ նրբերանդութեանց ծորակ մըն է: Իր գոյները պոռոտ չեն՝  
այլ նուաղուն. իր ձայները՝ շրջուն, հծծիւն, մեղեդի: Եւ ամբող-  
ջութիւնը կը նմանի քիչ մը, բայց քիչ մը, իր երգած պերճուհիին՝  
որ կ'անցնի,

Նօսը՝ ինչպէս երազ,  
չքնաղ՝ ամպի պէս,  
կ'անցնի՝ երկինքէս  
միակերպ ու պարզ.  
. . . . .

Բայց իր բանաստեղծութիւնը չըլլայ որ շփոթուի անկշիռ թեթե-  
ւութեանց, ու սարամիթօրէն ձեւապաշտ արտադրութեանց հետ:  
Իրաւ է, առաջին ընթերցումով լիազօր ներգործութիւններ չընե-  
րան, ու կը կարծուի անկապաշտ կամ ծայրացի խորհրդանշական մը  
ըլլալ. սակայն համար նորանշան անուանեցի զինքը. կ'ընդունիմ որ իր  
հոգին անցած ըլլայ մանուսնդ խորհրդանշական հոսանքի մը մէջէն,  
և այդ հոսանքին հետքերը կան իր մէջ. բայց երբեք մեծամոլու-  
թիւններ կամ իրապաշտութիւններ:

Ինքը էսպէս խորհրդապաշտ մը չէ. անգիտակցօրէն, թերեւ.



բայց ոչ թէ գարոցի մը յառելու միամիտ և ինքնուրաց կոնխակալութեամբ մը։ Ո՞վ ըսեր է արդէն թէ բոլոր խորհրդանշականները արհամարհելի կամ հակակրեւի են։ Կը համկնամ որ գաղափարի և զգացումի կամ բուերութեան հրապոյր խառաքարդոսմէտոս հերոս մը այսպնեւ յնկատուի։ Բայց այս տիպարը, հապառա, մենամուլ, ամուլ տիպարն է։ Մալաուէն է, կամ մեր մէջ, քիչ մը, Ինտրան ու Գօլանճեանն են։ Իսկ անդին կոյ թափանցիկ, գրաւիչ ու մանաւանդ թեւաբերիչ խորհրդանշանականութիւնը՝ որ առողջ ու բեղմնաւոր է։ Մեր բանաստեղծն ալ թերեւ այս վերջին դասակարգէն է։ Իր նըրբերանդութիւնները՝ երբեմն աննշմար կ'անցնին. ու գիտենք թէ չեղաւ ձայներ ու աչքառու գոյներ տառչին վայրկեանէն իսկ գրաւելու առաւելութիւնը ունին, բայց ասոնք մեր մէջ տափանհերու ծընունդ տուած են։

Ըսել չեմ ուզեր թէ տառչին վայրկեանէն իսկ գրաւող բանաստեղծութիւններ տափակութիւններ միայն կրնան ըլլալ. ընդհակառակը միշտ նախընտրելի պիտի ըլլար վարակիչ գեղեցկութեան զգացում մը։ Բայց ինչ ընել երբ գեղեցկութիւնները միշտ բացերն չեն կըրնար ըլլալ։ Արուեստին մեծագոյն գրգիւզ գաղափարը գիւրամտոյց ըլլալն է. և հոս նոր բանաստեղծի մը ստուերոտութիւնները արդաւրոյնել ջանալով, մթութեան և անհասկնալիութեան պաշտամունքին ջատագով հանգիստնալ չէր միտքս ապահովութար Լոռնին ճակ երգելուն բանաստեղծն ալ պիտի չուզէր այս տեսակ ջատագովական մը։ Բայց մատչելի ընելու ըզմանքով չըլլայ որ արուեստը՝ ոչնչացնենք. սահման մը կայ՝ ուրիշ վար չի՛ կրնար իջնել գրագէտը. թող ընթերցողը, եթէ կուզէ, բարձրանայ այդ աստիճանին՝ ու ճաշակէ գրագէտին երկերը։ Բայց գրագէտն ալ իր գիրքին հրապոյրը աւելցնելու համար պէտք չէ որ վերելակելու տենչեր ունենայ, և ասոր համար ստիպուի . . . Գլխուն ծանրութիւնները պարպելու, օգտապարիկի մը ըրածին պէս։ Խնդիր է հիմակ թէ մեր քնարահարը ուղուած աստիճանին վրայ է. ևս պիտի ըսէի թէ քիչ մը վեր է։ Ու պիտի չգարմանամ, եթէ վաղը միւս օր վճիտ, բիւրելի պէս թափանցիկ տաղեր արտագրէ, ինչպէս հզօրագոյն ու լափողդեցիկ քերթութիւններ, ու այն ատեն, կարծեմ, ճշմարիտ աստիճանին վրայ պիտի գտնուի, ու հասած իր գաղափարականին՝ որ ամբողջական ու խաւարին պաշտամունքը չէ։ Իր հրատարակելի նախապտուղ երկը ուրեմն, Լոռնին ճակ երգեր, փոքրիկ, գրաւիչ նըրբերանդութեանց գանձարան մըն է՝ որ պիտի սքանչացնէ արուեստին սիրահարները, ու բարեխառնէ քիչ մը պոռոտագոյն գեղեցկութեանց տեսքով յզփայած ճաշակներու բթութիւնը։

Իր գեղօրները, ինչպէս ըսի արդէն, տարամերժ ձեւապաշտութեանց արտագրութիւններ չեն, այդ պարագային՝ որքան ալ յօրինուածքով արուեստագիտական՝ պիտի չկլնային հպանցիկ հմայքէ

սուելի բան մը ունենալ: Լա՛ւ գիտնանք սակայն թէ բանաստեղծը  
ուշադրաբար ութիւններով խոյստացող մը չէ. իրեն արտայայտածները  
հոգեկան զգացումի մակերեսային նշուլանքներ չեն՝ վարդապոյն  
մշուշներէ թափանցած: Իր նույնածքը գիտէ խորերը սուգիւ,  
մինչև մայրական սիրտի ծովուն խորերը: Ահաւորիկ նմոյշ մը իր  
Օրօրէն՝ ուր մայրը իր սրտահատորին կ'ընծայերգէ երեք գանձերու  
աղբիւր մը՝ ուրկէ ծաղկավարս կին մը կը խմէ, գոհար թռչնակի  
մը ապրչումէ բոյնը, ու փառացեղ Այգ մը. վերջաւորութիւնը.

երեք գանձ ունիմ,  
քեզի՛ երեքն ալ . . . :

Հիմակ, լացիդ վրայ,  
բունիդ եծերին  
շլացիկ ու ջերմին,  
Պո՛ղ իմ երգս ըլլայ

Ծիրանի-Գօտին . . . :

Ու յետոյ պանդուխտի երգերը կան, գորովալիր, զգայապեղ.  
պանդխտավայրին առաջին իրիկունն է, երիտասարդը կ'ըսէ.—

Երբոր ես այս իրիկուն  
գօտիս քակեցի,  
զրտայ անոր մէջ Թաքուն  
ուշունք մ'ու խեցի,  
և զուգճ մ'ալ սին, բայց անհո՛ւն,  
— յուճնե՛ր կանացի,—  
երբոր ես այս իրիկուն  
գօտիս քակեցի:

Իրա՛ւ է այս երգերը ժողովրդային ինքնարուխ պարզութիւններ  
չունին.—

կարմիր վարդի նման բացուիս,  
շուքըդ նստիմ, կանչեմ օրօր,  
օրօ՛ր, կապեմ կախօրան  
ուռուն տըկտին, ու շուքն ի վրան,  
ցածէ պուտ պուտ արեւն ի վրան.

Ջըրի՛կ, օ՞ր այնէն կուգաս,  
դուն, պաղուկ ջըրիկ 'ւ անուշիկ.  
գիշեր ու ցորեկ կ'երթաս,  
բուն չունիս, անոր կու երթաս.  
բուն չունիս, անոր չի ունիս՝  
բու եարին պաղջան կու երթաս:

Դարձի՛ մըր պաղջան երթանք,  
վարդ ու նուշ ունիմ ջըրեղու.  
վարդ ու նուշ ունիմ ջըրեղու,  
ուանանս է կունծ կապելու:  
Քաղեմ ու տէսմէ անեմ,  
արմաղան անեմ խարիպիս . . . :

այլ սակայն գեղեցկութիւններ են՝ ուր մշակուած միաքը խոյտա-  
լով պիտի թառէր:

\* \* \*

Այս բանաստեղծութիւնը երեակայել կուտայ ինծի վերջալոյսին  
խորը ընկզմած բլուրի մը կողքին վրայ բարձրացող, նրբատաշ,



գմբեթարդ շէնք մը, — մեհեմէտն թէ տաճար. ո՞վ գիտէ: Շուքընա-  
կի անտառներն ու մրդաստաններն կան. ծաղկանկար ածուներն ալ՝  
գաշտավայրերուն մէջ. ծառաստաններուն մէջ թռչունի լիահագագ  
ձուռողուններ, նոր ծաղկած նշենիի ու սալորենիի բոյրեր. վարը,  
հովիտին մէջ, հեղեղաւորն ձայնը, ուշացող հօտին աղաղակը: Շէն-  
քին բակին մէջ բազմածորակ աղբիւրներու շաշը, ու գրգացող  
տառարակի ու աղաւնիի աղաչաւոր հծծիւններ: Կարելի չէ՝ դիմա-  
դրել սրբենի ու հովուերգական կեանքի այս կախարդանքին. սըխ-  
րանքով ու երկիւղածութեամբ ներս կը մտնենք. վերջալոյսը տակա-  
ւին կը դեղւի. գաւիթին մէջ կ'ընդհատուին փափուկ, լուռող  
ձեւքի մը հրաւիրով շարժուածք, յետոյ դէմք մը, ամբողջական հա-  
սակ մը. քուրմ մըն է, քահանայ մը. չենք գիտեր. որովհետեւ միշտ  
շողին մէջ զփուար պիտի ըլլար զանազանիլ թէ զինքը պարածա-  
կող շուրջաւոր քղամիջ մըն է արդեօք թէ նախորտ մը: Բայց ի՞նչ  
փոյթ, կը հետեւնք իրեն. գորշ, հեղհեղ մութ, ու վերջապէս  
գրեթէ խաւարչուտ նրբուղիներէ կը աննի մեզ. քիչ մը երկար կը  
տեւէ գնացքը. կը գփկամակնք, ու վերադարձի հաստատ շարժու-  
ած մը կ'ընենք. որովհետեւ մեր լայնաթիթիթ աչքերը իրենց ծարաւը  
յագեցնելու գրեթէ ոչինչ կը գտնեն յուսադրական, պարապինգ մը-  
թութիւն. յանկարծ պատուհանիկի մը ծերակերէն նշուշնք մը կը  
վիտակի, յետոյ ուրիշ մը, ուրիշ մըն ալ: Ու վերջապէս ինքզինքնիս  
կը գտնենք զրան մը առջեւ, որ կը բացուի շէնքի յետակողմի պար-  
տէզին վրայ, և լայնատարած դաշտերու, ճամբաներու, գրեթէ հո-  
րիզոններու կ'իշխէ: Ամէն ինչ նոր է սակայն, նրբադաշտած, շար-  
մաղուած, անսրացած. ձայները, բոյրերը, լոյսերը, ձեւերը, ամէն  
ինչ: Կը զգանք անմիջապէս թէ մեր նայուածքին պարզուող տեսա-  
րանը՝ գիշերասկիզբի տեսարան մըն է. ամենօրեայ գիշերասկիզբ-  
ներուն յարեւման, այլ սակայն անոնցմէ տարբեր. առաջնորդող  
ձեւքին արժանիքն ու հրապոյրը կայ ուրեմն՝ տեսարանին վրայ  
ցանցնուած: Ո՛րքան երախտապարտ ենք իրեն որ առաջին մարդու  
մը մանկականութեամբ ու պարզութեամբ հանդիսատես ըլլաւ մեզ  
տեսարանին, որ մեր գիտցածը չէր, յաւիտենօրէն կրկնուած միօրինակ  
դանդաղութեամբ. այլ կուսացած, քաղցր նորոյթ մը՝ զոր ըմբռն-  
ակու հաճոյքը պարզեւեց մեզ՝ սիրելի՛ ձեւքը:

Բացառքէն անդին, ճամբուն վրայ բարակ,  
իրիկուան ոսկի սեղանին դիմաց,  
քահանայ սօսին կ'ընէ պատարագ,  
մորը շուրջաւոր ուսին՝ լոյսերով բանուած:

Նոյն կուսութիւնը ունի այգն ալ՝ ուր հրեշտակները լոյս նախորտ  
հագած այգուն դուռը կը բանան և

կուգան առնել իբր հաղորդ  
լուսին նշխարը մաքուր:

Լուսնին նշխարը . այգուն դէմ, ձերմկոտած նշխարը լուսնին՝ որ  
կը սրբանայ . . . :

Վերջապէս երբ կը բաժնուինք զիւթական, նորատեսիլ երևոյ-  
թէն, վերադարձին, նրբանցքին մէջ, արծաթեայ դրան մը առջին,  
որ խորանի երևոյթ ունի, կը տեսնենք ռօնտէնիւրու կանթեղաշար  
մը՝ որ կ'աստղալուստ . ինչպէ՛ս չնայիլ ուշադիր անոնցմէ մէկուն . —

#### ՎԵՐՋԱԼՈՅՍ

Ծովէն շատ անդին,  
իրիկունս մէջ խոր,  
շահապ գըլուխին  
լեռան դարաւոր՝

Եւ այս մեծ տօնին  
պայազա՛տ եկուր՝  
կատարնե՛րն են հին,  
պարթև սօսն հօօր,  
ծովէն շա՛տ անդին . . .

Կը դնէ արփին  
բոց Թագն իր բոսոր,  
ծովէն շա՛տ անդին,  
իրիկունս մէջ խոր

Ու վերջապէս, մի՛շտ հետևելով ձեռքին շարժումին՝ որ մեզ  
կ'առաջնորդէ, կ'առանձնանանք խցիկի մը մէջ՝ որուն միակ մեծա-  
նիստ պատուհանէն լուսինը ներս կը նայի գորովալէն, ու կ'առնէ կը  
տանի մեզ տիեզերքին մէջ սրտոյնել . ու վայրկեանէ վայրկեան գի-  
ցըմպիլիի կայլակներ կամ լեղի շիթ եր կը ցօղէ միւր ծարաւ հոգիին .  
լեզի՞ն . չհասկցուիլը, համակերպիկ վշտակրութիւնը, լքումը . —

Ո՞վ մոռցաւ, աւա՛ղ,  
այս ծողկեփունչը, Թօշնած, քայքայուած,  
հոս, Թմրիկն տակ . . .  
Եւ ինչո՞ւ այսքան Թուղթի կտորուանք . . .

Ի՞նչպէս լաւագոյն կերպով կարելի ըլլար անձնացնել լքումին  
գաղափարը՝ որ մտատանջ ու խորհրդաւոր կը դառնայ սա երկտու-  
ղով . —

Ա՛հ, այս զանգակն ալ ի՞նչ է  
որ այս ժամուն կը հնչէ . . .

Ուրեմն այս եթերահիւս կուստաթեկերու բանուածքը, իր երազը՝  
զոր մեղի տուաւ, երևութական սակեցող փաղփի մը տակ մթին գա-  
ղափարի մը խոցսուկը ունի . պէտք պիտի ըլլար ուրեմն խորը սուղ-  
ուիլ իր հոգիին . —

Ինչպէ՛ս պիտի ուզէի  
որ նայէին, ուշադիր,  
հանդարտութեան ծովուն խորերը Թաքած  
տեսչանքիս բուստը կարմիր:

Տեսչա՞նքը, ուրեմն հոգը. հա՞գը, ուրեմն երջանիկ երազի մը սակի  
բաղձանքը . ուրեմն մշտանոյն յաջորդութիւնը հառաչին ու ծիծա-  
ղին . Կեանքը: Անոր համար է որ իր քերթութիւնը արջնաթոյր՝



ապրտաւ թեւաբախում մը չէ յարաժամ, այլ մերթ ապրտով լաջնա-  
թեւ ճայի մը ճշմարտագէտ խայտաղուցիչ վերթեւումները ունի, որ  
երբեմնի տիրութեանց վրայ սակի կապոյտ քօղ մը կը քաշեն,

Օ՛, ջահերը վառեր են,  
— ովսաննա՛, լոյսե՛ր,  
օ՛, ջահերը վառեր են.  
իրենց կարմիր ալեղուն ես կը լըսեմ հեռուէն.  
տօ՛ն է այս գիշերս

Ուրիշ մը.

Ահա՛ լնակը լուսին,  
ահա սարսուռն իր վճիռ.  
ահա տատերն ու իրենց ձայնը, շիժ շիժ,  
ահա լնակը լուսին,  
ուր համբարտներ կ'երգեն միասին

Իր սէրը կրտսղին համարձակուած, խախտ ու սրբացող սէր մըն  
է. բաղձախտաւոր քողքենի յառաւակին բղձանք մը՝ անձեւազեղծ,  
նախնական կեանքի հովուերգականութեանց համար. արբիւր գրկա-  
բացումներ, կամ ցնորատենչիկ, չարչարող վայրկեաններ չունի. վա-  
ղող ջուրին պէս արարչ է, ու համեմատ՝ մորչ մարմանդին վրայ հե-  
ղօրէն ընկողմանած կ'անուշիկ մը պէս. չիկնոտ սէր մըն է՝ որ կ'ըն-  
ծայուի

Վայրկեանի մը մէջ ամօթի և իղձի

Իր նուազը լուսնագիշերի հեշտերգութիւն մըն է, և լուսնային  
ճառագայթի քուղեր ևն որ կը թելթելին իր երգերուն ցանցին  
վրայ:

Նուագարանը քնար մը չէ, ո՛չ ալ տաւիղ, ջութակ, ո՛չ մէկ  
որոշ բան: Նէյք խորհրդամած, երկիւզաւոր, փափկաձայն սլու-  
լիւսներ, մանտօլինի նորագայտ, վճիռ կաշակիկներ, սրինգի ողե-  
կոչող շեշտեր՝ սրունք զաշտային ու հովուական աւաարաններ կը  
մանրանկարեն, ջութակի դողդոջուն գիծեր, ու լարանուագի փափ-  
կատրոփ հծծիւններ. ասոնց համադրոյթն է Լուսնին ճակ երգերու  
արուեստականին նուագարանը:

Լուսնին ճակ երգերու վերջնութիւր նուազը, Զիւնը՝ սիր ոլի քը-  
նտրերգութիւն մըն է. ձիւնին ապրտակախաղաղ գաղափարը անսահ-  
ման ուրախութեան ծաղկում մը կ'ըլլայ քերթողին համար.

Հօ՛, երէկ գիշեր ձիւնը ծածկեր է,  
— ի՞նչ ուրախութիւն, ի՞նչ ուրախութիւն,—  
ձիւնը ծածկե՛ր է՝  
իմ յորանջող ձանձրոյթիս,  
իմ վհատութեանս դաշտերը աղմուս:

ուրախանձալի վայրկեան մը՝ սոս անձնուրաց ու խեղայեղ կոչը կը  
խլէ իր կուրծքէն, իր սուգին անզաւակումը. —

Զէ՛, անիկա որիներու պէս<sup>2</sup> հիմակ,  
պիտի չփութ  
նեղասէնակութիւնն այս շոյս ու ճերմակ

Վասնդի ի՞նչ կրնայ ըլլալ իր սուգը այս լայնանիստ բոլանդակին՝  
մէջ՝ որ տիեզերքն է կամ՝ այլուրը. ի՞նչ փանաքի բան, ու նախ,  
վասնդի ինքն ալ պէտք ունի լիալիր ուրախութեան մը՝ որ իրեն  
համար ձիւնախաղանդ համանկարին ճերմակ գաղափարին հետ կը նոյն-  
նանայ. —

և ասիկա ճերմակ տո՛նն է իղձերուս,  
և ասիկա բոլոր հարսնիքս է իմ կոյս

Ի՞նչ գորովանք ու սրտաղեղում. —

և անո՛ չորացին, բուռ բուռ,  
պրիմակ, վանակ, աղամանդ,  
մարգրիտ ու սարսուռ...

Իսկ վերջին նուագը ներոյժ ու ողբական աւազներ, երազամոլ,  
հրուստ խանդավառութիւններ ունի: Ամայի վերջալոյս մը. գաշտե-  
րու վրայէն չարագուշակ ստուեր մը կ'անցնի. առկայծող ճրագի  
վերջին լիալիր ցոլքը ունի մի՞նչազը: Այս շրջանակին մէջ քերթողը  
կը ճանչնայ իր հին երազները, խայտանքները, իր Հոգին՝ «անջրպե-  
տին մէջ ցրուուն» . ու կ'արծարծի այդ հոգիին խնկամանը. իր հին  
երազները, բաղձանքները, յոյզերը՝ կրակ կ'ըլլան, ստաշխ կ'ըլլան,  
եթեր կ'ըլլան. ու

խնկամանը կը տոնվառի, խնկամանը կ'արծարծի,

եղբարօրէն, կարեկցօրէն, քողցօրէն.

վասնդի այս իրիկուն նախատօնա՛կ է...


Իր վերջուշուրթեանց նախատօնա՛կը. և ի՞նչ գրգռի անուրջ է  
որ կը ծորի այս հանդիսութեանէն. —

Արդ, խոհերուս ծագկաւէտ ոստերուն վրայ,  
ա՛հ, ըզձաղի աղանձեկի փափկութեամբ,  
յիշատակ մը, ա՛յնքան մեղմ ա՛յնքան աղո՛ւ,  
կուգայ մէկէն կը թափ...

Եւ աղանձեկը կը կարկաջէ, հին հին բաներ կը պատմէ, ու վեր-  
ջապէս,

իր խօսքն աւարտած՝  
քիւի մը տակ կը ծածկուի, նիրհելու...

Հոս վերջ կը դնէ, կամ սկիւղը կ'աւանէ, սրտի վիպերգութիւնը  
Վահրամ Թաթուլ բանաստեղծին... :





Ա.Լ.ՓԱՍԼԱՆ.

ԲԵՌՆԱԲԱՐՉԸ

Ալիսայանի անտիպ գեղեցկագոյն էջերէն մէկն է ասիկա, քաղուած՝ ի ժոտոյ հրատարակելի Այգեկումքի առաջին հատորէն, և որ՝ մեր իսկ խնդրանք՝ հաղորդուած է մեզ ներկայ առաջին Յոսմանային համար: Տարակոյս չի կայ թէ սոյն անտիպ ֆանթէզիին հրատարակութեամբ՝ թերթս առաջնութեան պատիւը կ'ունենայ նախաճաշակը տալու Այգեկումքի պարունակութեան որո՞ւ հրատարակութեան համար ա'յնքան անհամբեր և անձկագին սպասման մէջ են առհասարակ ամեն գրասէր ընթերցողները:

Դեռ երիտամարդ կին մը պառուսաւ  
Որ իր ամուսինն էր վաղ կորուսեր,  
Անօթութենէն ժանս եւ անարկու  
Փրկելու համար զաւակներն երկու,  
Գիշեր ու ցորեկ, առտու, իրիկուն  
Կ'աշխատէր անդուլ, անխոնջ, աննըկուն  
Երկու կով ունէր, չորս ալ ոչխարներ  
Որոնց կաթէն լաւ մածուն կը շինէր,  
Եւ յիսունի չափ իր հաւերուն գէ՛ր՝  
Թարմ հաւկիթներն ալ միշտ կը հաւաքէր.  
Իր պարտէզին մէջ հասած պրտուղներ  
Բանջարեղէնն ալ քաղաք կը ճանէր,  
Կը ծախէր զանոնք գիներով յարմար  
Եւ իր համեստ ճանն ու ճրդոց համար  
Պէտք եղած՝ պարէն, հագուստ՝ ամէն բան  
Առած, կը բռնէր իր գիւղին ճամբան,  
Այս ամենօրեայ երթ ու դարձն՝ իրեն  
Վըրայ կը ճնշէր անքան ծանրօրէն  
Որ՝ դրամ խնայեց ճար՝ ճարակ ըրաւ  
Եւ փոքր իշուկ մը զընեց որ դիւրաւ  
Իր առեւտուրին, գործին պիտանի  
Ամէն բեռ անով բերէ ու ճանի  
— Հէզ կընոջ խոնջէնքն ասեմէ մ'ի վեր,  
Ինչպէս իշունն ալ, այսպէս կը ճեւէր,  
Իրիկուն մ'ալ, երբ երկուքն ալ սասիկ  
Յոգնած, գիւղ հասան, աղբիւրին մօտիկ  
Դըրացի կին մը դէմերնին ելաւ.

— «Բարրիկուն»

— «Բարե՛ւ»

— «Ինձո՞ր ես»

— «Շա՛ս լաւ»

— «Շաս լաւ. չե՛մ հաւատար, սո՛ւն կ'ըսես, քուրիկ,

«Մեղք ես, քաշածդ ալ հերիք է, հերիք.

«Ինչո՞ւ կը ճքնիս այսքան չարանչար.

«Մանած, հաւ, հաւկիթ, մածուն ու բանջար

«Պատաստես, շինես, քաղես եւ, առտուն,

«Երեսի վըրայ ծըգած տեղ ու տուն,

«Պատառ մը հացի համար, միամիտակ,

Հոգւո՞ւ ու մարմնո՞ւ հասնիս շարունակ,

«Պատճիգսանի, խեղճ մըշակի մը պէս,

«Քաղքէն զիւղ, զիւղէն քաղաք կը շտապես»

— «Ի՞նչ կրնամ ընել . . . »

— «Քուրիկ, ըսեմ քեզ,

«Ծախէ հաւ, ոչխար, կով, տուն ու պարտէզ,

«Դրամի վերածէ այս փոքր իշուկն ալ

«Եւ ամէնուն տեղ՝ կրնաս ունենալ

«—Ըսեալին ուժով, — ամուսին մը նոր

«Որ շան պէս տասի, յոգնի ամէն օր,

«Գիւղ, քաղաք, շուկայ վազէ, երեւոյ, գայ,

«Ապրուս, առեւտուր՝ հոգայ անիկայ,

«Եւ դուն, ճանըդ մէջ, հանգիստ, ապահով

«Ըզբաղիս միայն . . . հիւսարարհով,

«Հաճոյ գործերով անցունես ատեն,

«Ամէն հոգ ու ցաւ չորտան արմատէն . . .

«—Ծախէ ամէն բան, բեռնաբարձ ընտիր,

«Համբերող, տկուն էրիկ մը գիր . . . »





## ԼԱՌՈՇՖՈՒՔՈՅ ԵՒ ԻՐ ԱՌԱԾՆԵՐԸ

Լառոշֆուքոյ (La Rochefoucauld) քաղաքի մը անունն է, Ֆրանսայի հին երկիրներէն Անկումայի, որ այսօր Շարանթ եւ Տորոննէր գաւառներուն մէջմէկ մասը կը կազմէ:

Յիշեալ անունը տրուած է Ֆրանսայի հռչակաւոր գերդաստաններէն մէկուն, որու ամենէն ծանօթ անդամն է՝ Ֆրանսուա, Լառոշֆուքոյի:

Այդ դուքսը 1613ին ծնած եւ 1680ին մեռած է: Ֆլուզովիկոս ԺԴ-ի անշարժաւորութեան միջոցին ծագում առնող Պարսատիկի (La fronde) սպայքարներուն (1648-1653) խառնուելով թէեւ կարեւոր դեր մ'ունեցաւ, բայց հետամուտ եղած կնճիռներու մէջ գրեթէ անյաջող ելնելով ինք իրմէ գժգոհ՝ սկսաւ մարդերը ատել, իրերը ունայն համարիլ, ժամանակէն առաջ գործէ քաջաւեցաւ եւ ուղեց արտօնաք փնտռել մասնաւորապէս Սապլէի մարքիզուհիին, Տիկին Սելինէէին եւ մանաւանդ կոմսուհի Լաֆայէթի բարեկամութեան մէջ:

Այս վերջինը իր գրուածներուն մէջ Լառոշֆուքոյի նկատմամբ կըսէ թէ «Անիկայ իր միտքը ինծի առաւ եւ անոր սիրտը վերանորոգեցի»:

Լառոշֆուքոյ այդ ընկերակցութեան մէջ իր անունով արտադրած է քանի մը պատմական ու բարոյական երկեր, որոնց մէջ գլուղ գործոց կը համարուին Առածները (Maximes. 1665):

Լառոշֆուքոյ՝ Ֆրանսայի դասական մեծանուն հեղինակներու եւ նշանաւոր բարոյախօսներու կարգը անցած է Ֆլէխաւորաբար իր Առածներով:

Առածներու ոճը կորովի, նրբին եւ մեկին է, գիրքը թէեւ չարադատութենէ զուրկ է, բայց ունի գաղափարի միութիւն մը, որ կը տիրէ ամբողջ երկին վրայ:

Լառոշֆուքոյ իր այս երկին մէջ խորաթափանց ոգի մը ներկայացնելով մէկտեղ մեր բոլոր զգացումներն ու գործերը կը վերագրէ անձնասիրութեան, համոզութեան եւ անձնական շահերու:

Տեղ մը կըսէ թէ «Մեր գործերուն անվերածելի գրգիռը կամ շարժառիթն է անձնասիրութիւնը» ուրիշ տեղ մը կը գրէ թէ «Առաքինութիւնները չառ անգամ չեն ուրիշ բաներ, բայց միայն կերպարանափոխ եղած մոլութիւններ»:

Դարձեալ ուրիշ տեղ մը կ'աւելցնէ թէ՛ «Առաքինութիւնները կը կորսուին շահու մէջ, ինչպէս գետերը ծովու մէջ խորատոյգ կըլլան»:

Լառոշֆուքոյ գործնականն է աւելի զննական՝ կարողութեամբ օժ-

տուած էր, ամենէն աւելի ասպետական և վեհանձն երեւոյթներու տակ պահուած ետամբ և սնապստ հաշիւները մասնաւոր կերպով իր ուշադրութիւնը գրաւած էին, ժամանակի և միջավայրի անցքերն ալ շատ ծառայած են զինք տանելու տեսակ մը յոռեանսութեան, որմէ չկրցան գերծ մնալ ո՛չ Մանթէյնը, ո՛չ Բասքալ և ոչ ալ զարուն սրբազան հեղինակները:

Ասիէ զատ Լաուշֆուքոյի առածները մեծ մասով և անզգալաբար փոխ տանուած կամ ներշնչուած են հին և նոր մատենագիրներէ և ժամանակակից հեղինակներէն: Էսման Տրէյֆուս-Պրիգաք իր «Լաուշֆուքոյի առածներու բանալի» անուն գրական-բաղգատական ուսումնասիրութեան մէջ մէկիկ մէկիկ ցոյց տուած է, ինչ որ Լաուշֆուքոյի առածներուն մէջ կը համեմատին նախորդներէ Սենեկայի, Արիստոտելի, Մանթէյնի և Բիէր Շարմի խորածնէրուն, Պաիֆի միմաստութիւններուն և նոր միմաստութիւններուն և ուրիշ հին մատենագիրներու դրածներուն, Փօր-Բուայալի հաւաքածոներէ և ժամանակակից հեղինակներէ Քայիէրի, Շրվրայի, Քորնէյի, Փոսքալի, Պալզաքի, Լըփէյի, Տէքարթի և ինք գործերէն ընտրուած մասերուն:

Լաուշֆուքոյի և իր առածներուն վրայ կատարեալ դաւախար մը կաշմելու համար պէտք է աչքէ անցնել անոր ինքնակենսագրութիւնը և իր առածներուն վրայ զրի տանուած կարծիքը ուսումնասիրութիւնները, միայն թէ ով որ այդ տեսութիւններէն օգտուել կուզէ, պարտաւոր է նախ ամբողջովին կարդացած ըլլալ անոր առածները, որոնք ինչ տեսակ վրիպումներ ալ արտայայտեն, են ու պիտի մնան բարոյախօսական խորագին և մատենագրական ճարտարահմուտ արտադրութիւններ, ուր նուրբ վերլուծութի շացեկանութեան հետ միացած է ճշգրիտ և հակիրճ ձև մը:

Լաուշֆուքոյի առածներուն թարգմանութիւնը, նոյն խակ եթէ ուրիշ օգուտ մ'ալ չընծայէ, գէթ հայ ընթերցողներուն ազգու օրինակով մը անդամ մ'ալ ցոյց պիտի տայ թէ խորաթափանց միտքերն ալ ամենէն կարեւոր կէտերու մէջ երբեմն կը սխալին, և այս ճշմարտութեան ցուցումն ալ օգտարեք ծառայութիւն մը կրնայ նկատուիլ:

Այս նկատմամբ է որ ներկայ տարւոյ Ա. Մանրոյ եռամսեայ թիւերուն մէջ յիշեալ առածներու ամբողջական թարգմանութեան հրատարակութիւնը յարմար դատուած է:

Եթէ առաջիկայ թարգմանութիւնը քիչ շատ ընդունելութեան արժանանայ, կարելի է, ոչ թէ միայն տկանաւոր անձերու կողմէ ազդ առածներու վրայ կատարուած ուշադրութեամբ ուսումնասիրութիւնները, այլ և ուրիշ հեղինակներու գտնադան առածներն, ալ թարգմանել և յետոյ ամենուն դիւրամբունելի և օգտակար դասաւորութիւն մը տալ:

Արդ յիշեալ հեղինակի առածներուն թարգմանութիւնը ներկայսինելէ առաջ կը պարտաւորեմ ազնիւ ընթերցողներուն ուշադրու-



Թիւնը հրաւիրել առայժմ հետեւեալ հինգ դիտողութիւններու վրայ, որոնք Լառուջիուքոյի միտումներուն և վճիռներուն վրայ բաւական ճիշդ գաղափար մը կրնան տալ և կը ծառայեն զանոնք հիմնովին քննարկելու և իրաւունքով դատելու:

Նախ՝ հեղինակը իր վճիռներուն մէջ թէ և շատ անգամ իրաւունք ունի, բայց իր բանաձեւերը չափազանց ընդհանրացուցած է:

Երկրորդ՝ զգացումները կամ գործերը միացուցած է իրարու մէջ շատ անձուկ կապերով, որոնք անհրաժեշտ կերպով իրենց մէջ անխուսափելի աղերսներ չունին, օրինակի համար, երախտագիտութիւնը միշտ նորոսոր բարեբարութիւններ ձեռք բերելու բաղձանքէն չծնիր, անկեղծութիւնը միշտ գովեստ և բարեկամութիւն չի հրաւիրեր ելն:

Երրորդ՝ շատ անգամ կը տեսնուի որ պարտականութիւնը կամ առաքինութիւնը շատ աւելի բարձր են նիւթական շահէն, այնպէս որ բարեկարգութեան հոգը կարելի չըլլար ռամկական համարութեան հետ խառնել և շփոթել:

Չորրորդ՝ կան բնագլային գործեր, որոնք ամէն տեսակ խորհրդածութիւնէ և հաշիւէ խոյս կուտան:

Հինգերորդ՝ վերջապէս եթէ ամէն կողմ համարութիւն տիրէր, և ոչ մէկ անձ պիտի խաբուէր, հետեւաբար անօգուտ պիտի ըլլար զայն առաքինութեան երեւոյթով աշխկերպել:

Յիսմասա, կոմս Լառուջիուքոյի, որ ազնուապէս ամուսին մը և ընտանիքի բարի հայր մը եղած է, վերջէն ինքն ալ զգալով թէ իր վճիռները չափազանցուած են, ուրիշ գրութիւններուն մէջ հարկ դատած է անոնց սաստկութիւնը մեղմացնել և սխալները շտկել:

Ինչպէս որ առաժնեքու հեղինակը ճշմարտապէս անձերու բանաւոր առարկութիւններուն կարեւորութիւն տուած է, նմանապէս ներկայ թարգմանութեան մասին բարեմիտ գիտողութիւնները սիրով ընդունիլ կը պարտաւորի այդ առաժնեքը հայերէնի վերածողն ալ:

## ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՋՆԵՐ ՈՒ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

1.— Այն որ առաքինութիւն կը համարինք, շատ անգամ ուրիշ բան մը չէ, այլ միայն զանազան գործերու և շահերու հաւաքոյթ մը, զոր բախտը կամ մեր ճարտարութիւնը զիտէ կարգադրել և միշտ քաջութեամբ և պարկեշտութեամբ չէ որ էրիկ մարդերը բաջ և կնիկ մարդերը պարկեշտ են:

2.— Անձնասիրութիւնը՝ բոլոր շողմարարներու մեծագոյնն է:

3.— Անձնասիրութեան երկրին մէջ ինչ գտում և յայտնութիւն ալ եղած ըլլան, տակաւին անձանոթ կը մնան հոն շատ տեղեր:

4.— Անձնասիրութիւնը աշխարհիս ամէնէն ճարտարամիտ մարդերէն աւելի ճարպիկ և աջողակ է:

5.— Մեր կիրքերու տեսականութիւնը մեզմէ աւելի մեր կեանքի տեղողութեանէն կախում ունի:

6.— Գիրքը շատ անգամ յիմար մը ամենէն աւելի հանճարեղ կընէ, և յիմարագոյնները՝ հնարագէտ կը դարձնէ:

7.— Այն երևելի և փայլուն գործողութիւնները, որոնք աչքերը կը շլացունեն, քաղաքագէտներու կողմէ իբրև մեծ նպատակներու արգասիք ներկայացուած են, մինչդեռ անոնք սովորաբար խառնուածքի և կիրքերու արդիւնքն են: Այսպէս Օդոստոսի և Անտոնիոսի պայքարը, զոր իրենց աշխարհիս տիրանալու համար ունեցած փառասիրութեան կը վերագրեն, Սերևս միայն նախանձի արդիւնք մ'էր:

8.— Գիրքերն են միայնակ ատենարանները, որ միշտ կը համոզեն: Անոնք իբրև մէկ արուեստն են բնութեան, որուն կանոնները անվրիպելի են, և ամենէն պարզամիտ մարդը, որ կիրք ունի, աւելի լաւ կը համոզէ, քան ամենէն պերճաբան անձը, որ բնաւ կիրք չունի:

9.— Գիրքերն ունին անիրաւութիւն մը և մասնաւոր շահախնդրութիւն մը, որով անոնց հետեւիլը վտանգաւոր կը դառնայ. ուստի պէտք է զգուշանալ անոնցմէ, որչափ ալ շատ իրաւացի երևան անոնք:

10.— Մարդկային սրտին մէջ գոյութիւն ունի մշտապէս սիրում մը կիրքերու, այնպէս որ անոնց մէկուն կործանուածը, գրեթէ միշտ կանգնուին է ուրիշ մէկուն:

11.— Գիրքերը ծնունդ կուտան շատ անգամ իրենց ներհակներուն: Ազահութիւնը առաջ կը բերէ մերթ շուայլումիւն, և շուայլումիւնը՝ ազահութիւն: Մարդիկ շատ անգամ տկարութեամբ քաջացինդ և վախկոտութեամբ յանդուգն կըլլան:

12.— Մարդիկ որչափ ալ խնամ տանին իրենց կիրքերը բարեպաշտութեան և պատուոյ երևոյթներով ծածկելու, անոնք քողին մէջէն միշտ կ'երևան:

13.— Մեր անձնասիրութիւնը աւելի անհամբերութեամբ կը տանի դատապարտութիւնը մեր ճաշակներուն քան թէ մեր զաղարարներուն:

14.— Մարդիկ ենթակայ են ոչ թէ միայն բարեգործութեան և ներառութեան յիշատակը մոռնալու, այլ մինչև անգամ կատեն զանոնք որ գիրքնք պարտաւորած են, և կը դադարին ատենէ զանոնք որ իրենց թշնամութիւն բրած են: Բարիքը փոխարինելու և չարութեան ստեղծելու քննախնդիր ըլլալու մասին փոքր ունենալ իրենց կերևոյ ստրկութիւն մը, որուն զփուրաւ յանձնառու կըլլան:

15.— Մեծերու գեղարարութիւնը շատ անգամ խորագիտութիւն մ'է պզտիկներու սէրը գրաւելու:

16.— Այս գեղարարութիւնը, զոր իբրև սուսքինութիւն մը կը նկատեն, ի գործ կը դրուի մեր մտախառնութեամբ, երբեմն ծուլութեամբ, յաճախ երկիւղով և գրեթէ միշտ այդ բոլոր երեքով միասին:

17.— Երջանիկ անձերու չափաւորութիւնը առաջ կուգայ այն անդորրութենէն, զոր բարեբախտութիւնը կուտայ անոնց խառնուածքին:

18.— Չափաւորութիւնը՝ երկիւղ մ'է իշնալու. նախանձու և անարգանքի մէջ, որուն կ'արժանանան անոնք որ իրենց բախտին կը զավատին, ասիկայ մեր մտաւորական զօրութեան մէկ անտախտ ցուցադրութիւնն է, վերջապէս մարդկային էականութեան չափաւորութիւնը՝ ամենաբարձր վսեմութեան մէջ բաղձանք մ'է իրենց յաշտութենէն աւելի մեծ երևալու:

19.— Մենք ամենքիս ալ ուրիշներու չարիքը կրելու համար բւական զօրութիւն ունինք:

20.— Խոհական անձերու անդրդուելի արիւթիւնը՝ ուրիշ քան մը չէ, այլ միայն արուեստ մը յուզումները իրենց սրտին մէջ սահմանափակելու:

21.— Անոնք որ տանջանքի դատապարտուած են, երբեմն ցոյց կուտան հաստատամտութիւն մը և արհամարհանք մը հանդէպ մահուան, որ իբրեւ չէ ուրիշ քան մը, այլ զայն մտաբերելու երկիւղը, այնպէս որ կրնայ ըստիլ թէ այդ հաստատամտութիւնն ու արհամարհանքը նոյնն են իրենց մտքին մէջ, ինչ որ պատանք իրենց աչքին:

22.— Իմաստասիրութիւնը անցեալ և ապագայ չարքներուն դիրաւ կը յաղթէ, բայց ներկայ չարիքը անոր կը յաղթեն:



**23.**— Մարդերէն քիչեր կը ճանչնան մահը, զայն առհասարակ կը կրեն ո՛չ թէ արիւնքեամբ, այլ յիմարութեամբ և սովորութեամբ, և մարդիկ մեծաւ մասամբ կը մեռնին, որովհետեւ կարող չեն իրենք զիրենք արգիլել մեռնելէ:

**24.**— Երբ մեծ մարդեր իրենց զփաղցումը ինքնաբերական երկարութեան հետեւանքով վիստակեան մէջ ինչն, ցուցնել կուզեն թէ իրենց փառասիրութեան և ո՛չ թէ հոգւոյն ոյժով կը դիմանային, ասիկէ զատ ունայնամտութեամբ կը պարծին թէ դիցազններն ալ ուրիշ մարդերու պէս ստեղծուած են:

**25.**— Աւելի մեծ առարկնութիւններ պէտք են բարեբաղդութիւնը պահելու, քան թէ զփաղցումեան տոկալու համար:

**26.**— Արեւու ինչպէս նաեւ մահուան կարելի չէ անմարմնօր նայիլ:

**27.**— Յաճախ կը պարծին կիրքերու վրայ, նոյն իսկ եթէ աւելի եղբունական ըլլան, բայց միասնաբար վախկոտ և ամէկտ կիրք մ'է, զոր ո՛չ որ կը համարձակի երբէք խոստովանիլ:

**28.**— Նախանձը՝ ինչ ինչ պայմաններու տակ իրաւացի և բանաւոր է, որովհետեւ կը ձգտի միայն այն բարիքին, որ մեզ կը վերաբերի և կամ մենք կը կարծենք թէ մեզ սեպհական է, մինչդեռ միասնաբար մոլեգնութիւն մ'է, որ չի կրնար ուրիշներու բարիքին հանդուրժել:

**29.**— Զարիքը զոր կը գործենք, չի հրաւիրեր մեր վրայ այնչափ հալածանք և ատելութիւն, որչափ մեր բարեմասնութիւնները:

**30.**— Մենք աւելի ոյժ ունինք քան թէ կամք, և շատ անգամ մենք զմեզ արդարացնելու համար կը հաւատանք թէ իրողութիւնները անհնար են:

**31.**— Եթէ մենք Թերութիւններ չունենայինք, ուրիշներու վրայ զանոնք նշմարելէ այնչափ հաճոյք չպիտի զգայինք:

**32.**— Նախանձը կասկածներու մէջ կը անանի, մոլեգնութիւն կ'ըլլայ կամ կը վերջանայ անմիջապէս երբ կասկածը ստուգութեան կը փոխուի:

**33.**— Հպարտութիւնը միշտ իր կրած վնասներուն հատուցումը կ'ստանայ և քան մը չի կորսնցներ, նոյն իսկ եթէ անախառնութենէ հրաժարի:

**34.**— Եթէ մենք բնաւ հպարտութիւն չունենայինք, ուրիշներու հպարտութենէն չպիտի զանգատէինք:

**35.**— Հպարտութիւնը հաւասար է ամէն մարդու քով, և տարբերութիւնը միայն զայն ցոյց տալու միջոցներուն և եղանակին մէջն է:

**36.**— Գերեւայ թէ բնութիւնը, որ մեզ երջանիկ ընելու համար մարմնոյ գործարանները ճարտարութեն յորինած է, նմանապէս տուած է մեզի հպարտութիւնը, որպէս զի մեր անկատարելութիւնները ճանչնալու վիշտէն ազատ մնանք:

**37.**— Հպարտութիւնը աւելի մաս ունի քան թէ բարութիւնը այն դիտողութիւններուն մէջ, զոր կընենք յանցանք գործողներուն վրայ, և զանոնք չենք սրտաւեր այնչափ ուզողու համար, որչափ զիրենք համոզելու որ մենք զերծ ենք այն յանցանքներէն:

**38.**— Մեր անկախութենէն ինքնաբերական համեմատ կը խոստանանք, և մեր երկիւղին հետեւելով կը գործադրենք:

**39.**— Շահախնդրութիւնը ամէն լեզուով կը խօսի, և ամէն տեսակ միջոց անգամ անշահախնդիր անձնաւորութիւններու դերը կը կատարէ:

**40.**— Շահախնդրութիւնը, որ ուսանց աչքը կը կուրցնէ, ուրիշներուն կը լուսաւորէ:

Գ. ԶԱՐԳԻՆԻ

\*\*\*

## ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

### ԳԻՇԵՐԸ

Անհուն, խորունկ ու յաւիտեական պատկառանք մը կը զգայ մարդ գիշերին գիմաց, ուր մութը անվերջանալի անդունդներու մէջ մեծ խորհուրդներու առեղծուածը կը թաղէ :

Խօսպետը էք, ամառուան վեհաշուք ջերմիկ գիշերով մ'ընդարձակ ծովուն գիմացի պատուհանի մը մէջ, երբ հեռուէն անցնող, սպիտակ նաւակի մը ձողփունին հետ կը խառնուի մեղանոյշ ձայնը լացող սրինգին :

Հոգին պատրանքներու ովկէանոսին մէջ կը կորսուի տրտուս զգայնութիւնով մը, որ մեղամաշձոտ երկիւղին կը նմանի. և այն ատեն կը դադրիս ապրելէ օրուան գետնաբարշ կեանքդ, որ հրապոյր չունի բնաւ, երբ բնութեան բանաստեղծութիւնը չխառնուի անոր :

Խորհի՛ւ թէ վաղը պիտի արթննայ մարմնը յողնութիւններու հաւմար, և հոգին պիտի ցուցնի համր չարչարանքով մը, արեգական լոյսը փառասէր նենգութիւններով խառն կեանք մը պիտի սփռէ իր շուքը, բայց ինչո՞ւ այս վաղը, երբ մութը արդէն իր սև վերարկուն տակ պահած է այս խժդու չարչարանքը կեանքին :

Ինչ անուշ է երազանքը գիշերուան մութին մէջ, երբ մանաւանդ, հեռաւոր սրինգի մը լացող ձայնը, ելեքարական հոսանքով կը լեցնէ դոյութիւնդ, և աղւոր պատկերներ կը բերէ աչքիդ առջև :

Օհ գիշեր մը, ծովուն ընդարձակ տարածութեան առջև, երազեցի շղարչներու մէջ սլլուած հուրի մը օդային պարը : Այնչափ փափուկ էր անիկա, ու իր շղարչներուն ծայրերէն սահելով, խնկաւէտ ետեւնայի մը բոյրին այնչափ մը նուրբ զգայնութիւնը կուգար ինծի, որ զգացի թէ հեռզհտէ կը գինովնամ . . . :

Ամպեղէն սպիտակ բարձիկներու կը հպէին անոր մամրիկ ու մալրամոմի պէս ճերմակ ոտքերը, և հետք մ'անդամ չէր մնար անոնց վրայ իրեն մարմնոյն ծանրութիւնէն, այնչափ նուրբ ու եթերային էր անոր իրանին կշիւը :

Ծաղիկներ բացուեցան իրեն հպած անդունդներուն մէջ, ծաղիկներ որք անծանօթ էին ինծի, և սակայն անոնց բոյրը այնչափ աւնոյշ մեղկութիւն մը ձգած էր վրաս, որ չէի ուզած գառնալ կեանքի իրականութեան, և ուզած սիրած էի այդ շղարչներու մէջ սլլուած հուրիին ձամբուն հետեւիլ ամբողջ գիշերը . . . :



Լուռ էր ամենայն ինչ, և ինչուր կ'երկնցնէի ձեռքս բռնելու համար այդ անծանօթ ծաղիկներէնցմին, որ հազարշանգամ աւելի լեցուն էին հրապոյրով քան մեր պարտէզներուն մէջ խնամած ծաղիկները, և անոնք անգուլթ հեռաւորութեամբ մը չէին մօտենար ինծի:

Եւ այս ամէն գեղեցկութիւնները, ամէն հրապոյրները թախծութիւն մը կը պօռէին իրենց շուրջ, այնչափ մաքուր և խնկաւէտ, որ հազար անգամ կը նախընտրէի քան բոլոր գուարթ ու խօլ պարերը մեր երեկոյթներուն, ուր շօշափուած ու վայելած իրականութիւններու հետ կը խաղայ հոգին:

Ո՞վ չի սիրեր գիշերը, լեցուն խորհուրդներով, գանուած էք եւ զէնի անտառներու մութ թաւութեան մը մէջ, երբ անոնք խոնարհած են իրենց մութ զլուխները, օդը կ'անցնի անոնց մէջէն. հազիւ լսելի, հծծիւնով մը, որ գիշերուան երգն է, անոնց շուրջերուն մէջ, և անոնք գիշերուան խորհուրդը կը հօլովն, հսկայ ուրուականներու ստուերին պէս, որք կամայ ձայնով կը խօսին իրարու հետ:

Գիշերուան թռչուններ կը թռածեն այդ ծաւերու ընդարձակութեան մէջ, և հոգիներու պէս, որ իբրեւ թէ անծանօթ հոգերէ ու երկինքներէ կուգան մեզի, կ'երգեն մեր օկանջին տակ, երգը յաւիտենականութեան, երգը անգունդին, որուն մէկ մասը կը կոպմէ գիշերը...

Չեմ սոսկար ես բնաւ այդ անգունդէն, հսկառակ իր լուռ յղացումներուն, կը ճաշակեմ անոր ամէն հրապոյրները, անյապ ու անկուշա երանութիւնով մը, կը սիրեմ մութը, գիշերը, բոլոր այն թուփիչ հմայքները, որք թաքուն խորհուրդներ կը պահեն իրենց մէջ, ու անհունին վրայ կը խօսին ինծի...

Գիշերները... ինչ անուշ հոգեկան նուազ մը կը խառնեն ամէն բանի մէջ, մութ տուներու սենեակներու մէջ, ուր արթուն մնացած միտքեր կը գործեն կամ սիրտեր կը տառազին. փակ վարագոյրի մը ետեւ գոյացող մամի մը լոյսին տակ, գեռառի փափուկ ձեռք մը, որ իր սրտին պատմութիւնը կը գրէ, նորահաս կին մը, որ իր երկունքի ցաւերուն մէջ, մայր ըլլալու հաճոյքով կը խայտայ...

Ահա ձմեռուան երկար գիշերներ, ու պզտիկ գիշերներ, ամառուան ցատուկ օրերու, երգեցի ձեր գուարթ ու անոյշ երգը միտքն, գորայնչափ գուրգուրանքով գիտցած եմ վայելել: Չեմ ուզեր նուազել ձեր միւս երգը. ախարքի մահաատուեր, որ կը պատրաստէք արշալոյսին յանձնելու համար, գիշերներ, ի՞նչ մարդկային թշուառութիւնով լեցուն ծնունդներ կը յանձնէք արշալոյսին, որ արցունք կը յերէ մինչև իսկ ամենէն կորովի տչերէն...

Ե. ԱՆՓԻՍԸ

—:—

ՀՈՒՍԻ ԲԱՆՔ

— Սա մարդն ալ կեանքին մէջ գտնէ որ մը լուրջ բան մը գրած  
ըլլոր . . . :

Այնքան ըսին, այնքան ըսին որ վերջապէս ինքզինքիս . կուգամ  
և սա եղբակացութեան կը յանդիմ որ այս անցաւոր աշխարհիս մէջ  
և այդ գտնագատիկներուն հաճելի ըլլալու համար շատ աւելի խելա-  
ցութիւն է տիտուր կերպարանք մը առնել մեռելաթաղի մը պէս,  
քան զուարթ ըլլալ գտնէ Մարք Թուէնի չափ:

Հայերուն համար գրագէտը ան է՝ որ լացնել գիտէ: Ժպտիլ  
տուող գրագէտը . . . c'est de la camelote!

Աշխարհիս բոլոր Գուրթըլիները, բոլոր Առման Սիւլէսթիները,  
բոլոր Վիլլիները եթէ իրարու քով բերես, դարձեալ Գուրեան մը  
չեն արժէր . . . գտնէ Իսկիւստացիներուն համար:

Այս ըսածիս իրիւր շատ զօրաւոր ապացոյց մը կ'ընայ նկատուիլ սա  
պարագան թէ, մեր doré sur tranche երիտասարդութեան ներկայա-  
ցուցիչները համարուող երկու պարոններ արուեստատիրական նուազի  
մը մէջ, 500 ֆրանք ընծայ տուին անիրացուի մը, մինչդեռ անդին ծա-  
ղիկ մը գնող չէ գտնուած Պարոնեանի գերեզմանին վրայ և ոչ ոքի մըտ-  
քէն անցած է սիկտուէթ մը հրամայել Թրեանցին իր կենդանութեանը:

Լալը աւելի հաճելի կը գտնեն խնդալէն, ինչպէս խաւարը լոյսէն՝  
. . . անմիաները:

Աս ասանկ է սակալն:

Ասոր ինչուն չեմ ուզեր վնասել, ևս ինքս ալ լուրու հարկին մէջ  
չի գտնուելու համար:

Եւ որովհետեւ չապիկ մը փոխելու չափ դիւրին չէ փոխիլ ամբու-  
լի մը նկարագիրը, հետեւարար համակերպելէ զատ ուրիշ բան  
չի մնար ինծի:

Կենդանութեանս երբ այսքան կայսպանեն զիս, Աստուած գիտէ  
ինչեր չափտի ըսեն երբ չուեմ դէպի աշխարհ մը որ մերինէն լաւա-  
գոյն է կըսեն . . . ես չեկողները:

Պզտիկ ճիգ մը բաւական պիտի ըլլար սակայն այդ անախորժ  
գատապարտութենէն զերծ պահել posthume ժողովրդականութիւնս:

Բոլոր նախասիրութիւններս զոհեալ՝ վերջապէս կրցայ ձեռք  
անցնել նիւթ մը այնքան լուրջ, այնքան լուրջ, որուն քով Թօփ-  
ձեանի գրածները խիթերէ բռնուած յաղիսացի մը գտնանցանքները  
կ'ընան նկատուիլ:



Խորվական Ազգային Մատենադարանին դռները կռնակի վրայ  
բայ գտայ առջիւս և ամբողջ ամիս մը զոհեցի հին մագաղաթներու,  
մգլտաւ ըստիւններու և անընթեանի եզրագտակներու մէջ թաղ-  
ուելու համար:

Տքնութիւններս, աշխատութիւններս պարտաւ տեղը չի գտային և  
այսօր հարտա եմ կարենալ ձեզ աւետելու թէ կեանքիս մէջ առաջին  
անգամ ըլլալով ի վիճակի պիտի ըլլամ ձեզի ներկայացնելու լուրջ  
նիւթ մը՝ դարերու փոշին վրան:

Եթէ առ ալ լուրջ չէք գտներ, կամ այն է որ ես բազմ չունիմ և  
կամ դուք՝ ճաշակ:

Գիտէք ի՞նչ էր խաղարկութիւններուս նպատակը: Հին գրքերու  
և ժամանակէն կրճուած վաւերաթուղթերու մէջէն գտնել և դուրս  
հանել վերջին խօսքերը զորս իրենց հոգին աւանդած պահուն ար-  
տասանած են այն մեծ մարդերը որոնք վերջին քսան դարերը փա-  
ռաւորեցին:

Իբրեւ լուրջ գործ ասկէ աւելին փնտռելը՝ հայ վարժապետի մը  
զրպանին մէջ չեֆի carnet մը գտնելու չափ դժուար պիտի ըլլար:

Գործը դժուար էր. սակայն գիտէ՞ք բան մը որ զիմագրել գիտնայ  
կամբին:

Կամբը ծարսնցի է և յաղթելը աշխարհի զիւրին է. անոր համար  
որքան «Մոպէկ»-ին դիւրին է . . . խմբագրութիւն փոխելը:

Ընկրկիլ չի կիսցող կամբի մը շնորհիւն է ահա՛ որ այսօր «Հայր  
մեր»ը դոց ըրածի պէս պիտի կրնամ ձեզի ըսել թէ ի՞նչ եղած են  
վերջին բառերը զորս արտասանած են իրենց հոգեվարքի պահուն  
երկու հազար տարիներու մէջ մեծ կոշուկու իրաւունք ունեցող  
մարդկի:

\* \* \*

ՅԻՍՈՒՍ.— Ո՛վ Տէր, քու ձեռքերուդ մէջ կը դնեմ հոգիս: (Այս  
ուրբ քառերուն վրայ Mélodie մը յորինած է Հայցքն, զոր ցերեա-  
պես կը յանձնարարեմ դասարան երաժշտութեան սիւսնաներուն:)

ՊՐՈՒԹՈՍ.— Առաքելութիւն . . . ունայն բառ մըն ես սոսկ:  
(Եթէ ոչ իրմե առաջ, քայց գոնե իրմե ետքը, Տառն անգամ ըսած եմ  
ես ասիկայ:)

ԲՈՒԼՈՐՊՈՍ.— Յիսուսի ըսածը կրկնած է: «Ո՛վ Տէր, քու ձեռ-  
քերուդ . . . Եւ. Եւ.» (Ահաւասիկ մարդ մը ձեզի, որուն համար  
աւելի դիւրին եր նոր աշխարհ մը գտնել քան նոր phrase մը:)

ԹՈՒՎՄԱՍ ՄՈՒՐ.— (Խօսքը բժիշկին ուղղելով): — Վեր ելլելու  
համար դիւրին ճամբայ մը ցոյց տուէք ինծի: Ես դառնալու հոգը  
ես վրաս կառնեմ:

ՊԻԹԸՆ ԿԱՐՏԻՆԱԼԸ.— Աս ալ ըմբռնեմ . . .

ԾԻՐՏԱՆՈ ՊՐՈՒՆՈ.— Զօրութիւնդ մեծ է Աստուած. դու որ

աշխարհիս անիրաւութիւններուն կը յաղթես, անշուշտ պիտի ըն-  
դունիս զիս քու արքայութեանդ մէջ :

ՃՕՆ ՆՕՔԱ.— Հասեալ է ժամն . . . :

ԼՈՐՏ ՍԹՐԱՖՅՕՆՏ.— Եթէ Աստուծոյս համար ըրած ըլլայի ինչ  
որ ըրի տիրոջս համար, ապահով կրնայի ըլլալ թէ արքայութեան  
մէջ ամէնէն աղւոր տեղը ինծի պիտի տրուէր :

ԿԱՐՈՂՈՍ Ա.— Մահէն չեմ վախնար այնքան, որքան վախցայ  
. . . կիներէն :

ԱՆՏՐԷԱ ՏՕՐԻԱ.— Շնորհակալ եմ, Աստուած իմ, շնորհակալ եմ :  
(Քաղաքապետը երբեք ձեռքէ ձգելու չէ մարդ մինչեւ վերջին  
վայրկեանը) : (Ուրիշ օրինակ մը : ԲՐԱՆԾԻՆԻ, այդ մեծ մարդասպա-  
նը, Կիյոթինին վրայ եւ ձիշտ այն պահուն որ Պ. Տեյպիեր դանակը  
պիտի խաղցներ, դատաւարեալը ժպտալիս կերպով կը դառնայ դա-  
նիւնիս եւ պաղ արիւնով կ'ըսէ. — Après vous, Monsieur, je vous  
prie :)

ՔՐՈՍՏՈՒԷԼ.— Նպաստեալ չէ խմել եւ մեռնիլ, այլ պատրաստուիլ  
մահուան : (Կարծես քրեկը պիտի փախցնէ) :

ԿԱՐՈՂՈՍ Բ.— Նէլին անօթի չի ձգէք : (Նեյի՛ իր սիրական կա-  
տինն անունն էր : Կիներ կան որ Նեյիին չափ բաղդ չեն ունեցած) :

ԿՈՒԼԵՆԼՄՈՍ Գ.— (Իր բժիշկին) Դեռ երկայն պիտի աւել՞ . . . :

ԼՕՔ.— (Խօսքը ուղղելով Լեյքսի Մարշալի որ հոգեվարժին սնտրին  
սօս կայնած Ս. Դիրքը կը կարդար) : Այլ կը բաւէ :

ՀԱԼԼԷՐ.— Այլ բազկերակս չի զարնէր կոր : — (Je t'crois, mon  
vieux) :

ԱՆՆԱ ՊՕԼԷՆԱ.— (Դիտատուած վայրկեանին) Աս ինչ անուշ  
բան է :

ՏԻԿԻՆ ՏՀ ԲՕՆԲԱՏՈՒՐ.— Un moment, Monsieur le Curé, nous  
nous en irons ensemble.

ՋԷՍԹԸՐՖԻԼՏ.— Աթոռ մը տուէք Տէյրօլին. (այս վերջինը այ-  
ցեղութեան եկած էր այդ պահուն) :

ՖՐԱՆՔԼԻՆ.— Մեռնողին համար զիւրին բան չի կայ : (Այս  
խօսքերը կաղդէր աղջկանը որ շնչառութիւնը դիւրացնելու համար  
կը պաղտէր որ գոյալը բարձին վրայ հանգչեցնէ) :

ԱՏՏԻՍԸ.— Տեսէ՛ք, բարի քրիստոնեայ մը ինչ զիւրութեամբ  
կրնայ մեռնիլ : (Այո՛, դիւրութեամբ կրնայ մեռնիլ, մարիֆէրը դիւ-  
րութեամբ ապրելու մեջն է) :

ՏԻԿԻՆ ՌՕԼԱՆ.— Ո՛վ քաղաքակրթութիւն, քու անունովդ ինչ  
ոճիւրներ կը գործուին կոր :

ՄԱՐԱ.— A moi, ma chère : (Իր սպասուհին ֆովը կանչելով երբ  
Շառլոթ Քօրսէյ ներս կը մտնէր սենեակին) :

ՄԻՐԱՊՕ.— Թող տուէք որ հեշտալուր նուագածութիւն մը  
ունենդրելով հոգիս աւանդեմ :



ՎԱՇԻՆԿԹԸՆ. — It is well = Աս աղէկ է :

ՆԵԼՍԸՆ. — Փառք Աստուծոյ, պարտականութիւններս կատարած կը մեկնիմ կոր : (Միեւնոյն քանը չէր կրնար ըսել . . . Պ. Քրօնիկե.)

ՊԻԵՐՐԵՏԷ. — (Ֆրանսացի նշանաւոր արձանագործը) Աչքիս առջևէն անդին տարէք, ատ ինչ գէշ շինուած է : (Քահանային որ խաչ մը կը ներկայացնէր իրեն վերջին անգամ հաւքորէրու համար :)

ԲՈՒԱՍՕՆ. — (Կասկաստէր դերասան մը, վերջին օժոռը բերող ֆանսային դառնալով). Ձեր եղբ ձեզի պահեցէք, բաւական է որքան որ ես իմ եղբուն կը սասկուելիմ կոր :

ՌԸՍԷԼ. — (Անգլիացի մեծ ֆադաֆադէսը) Բարձիս տակէն սա ժամացոյցը վերցուցէք : Յաւանականութեան մէջ ժամը քանի՞ն ըլլալը գիտնալու պէտք չիկայ :

ԷՅՅԷՆ ՍԻԻ. — Ami, je veux mourir, comme j'ai vécu: en libre - penseur.

ՏԻԿԻՆ ՏԸ ՍԹԱԼ. — Սիրեցի զԱստուած, հայրիկս և ազատ կեանքը :

ՊԱՅՐԸՆ. — Now I shall go to sleep : Հիմայ քնանալու պիտի երթամ :

ԿԷՅԹԷ. — Mehr Licht! աւելի լոյս :

ՇԻԼԼԷՐ. — Երթալով աւելի աղէկ, աւելի հանդարտ :

ԼԱՄԸՆԷ. — Նորէն զիրար պիտի տեսնենք :

ԿԱՄՊԷԹԱ. — Քաջութիւն, ամէն բան կը վերջանայ կոր :

ՀԷՆՐԻ ՀԷՆ. — Աստուած պիտի ներէ ինծի : Արդէն առկէ զատ ինչ գործ ունի որ . . . (Հոգին առանդած պակուռն, բժիշկը վրան կը ծռի եւ երկիւղածօրէն կը հարցնէ :)

— Pouvez-vous siffler?

— Helas, non, pas même une comédie de Scribe. (Տեղն է դիտելու որ մարդուս հոգին կեղի, բայց քնաւորութիւնը չի փոխուիր) :

\* \* \*

Թափած այս աշխատութիւնս պէտք էր որ բանի մը ծառայէր : Քանի որ կրցայ գիտնալ թէ անցելոյն մէջ ի՞նչ ըսած են մեծ մարդիկ, իրենց հոգին աւանդած միջոցաւ, տարագոյի մեծ մարդոց ըսելիքը գուշակել կարծեմ շատ աւելի գիւրբին պիտի ըլլայ քան գաւաթ մը Պէնէտիքթին խմելը :

Փորձենք :

ԱՅՐԱՀԱՄ ԱՅՎԱԶԵԱՆ. — Վարի երուսաղէմէն բան մը չի հասկցանք. հայինք վերինը նաւը՞ր է :

Յ. Գ. ՄՐՄՐԵԱՆ. — Ալէլուիա . . . : (— Օրթի . . . պիտի աւելցնէ ֆոլը գտնուող պառաւ հիւանդապահը :)

ՎԱՀԱՆ ՎԱՐԴ. ՊԱՐՏԻԶԱԿՑԻ.— (Դժոխքի ոռոնակը ձեռք առնելով)

— Թա՛ք, թա՛ք :

— Ո՞վ է ան :

— Դիմացի յողմէն ներս չեն առներ կոր, գոնէ դուք բացէք : Ասանկ ըլլալը գիտնացի նէ ժամանակին կաթսիկ կըլլայի. երկու կողմէն ալ մերժուիս նէ, գոնէ երկուքին մէջանայ կենալիք տեղ մը ունիս :

Ա. Ա. ՍՈՒՐԵՆԵԱՆ.— Օտունն իմ . . . :

ԲԻԻԶԱՆԴ ԲԷԶԵԱՆ.— (Վերջի պահուն երբ Պարոյրը երկիւղած եւ ճնրադիր կը հարցնէ.)

— «Հայրիկ իմ խոհուն,

«Այս վերջի պահուն

«Ե՛րբ կ'ուզես, բա՛ն,

«Ո՛ր առնեմ ես կին» :

= Վեցնոցաբեակին :—

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊ.— Ժամանակ չեն ձգեր որ վերջին դատաստանին համար plaidoirie, պարստատեմ :

ՀՐԱՆՏ ԱՍԱՏՈՒՐ.— (Բովը զսնուողներուն) Մի՛ լաք, ես վեր կերթամ կոր Պարոնեանէն բերանացի տեղեկութիւններ առնելու համար :

ԱՂԵՔԱՆԴԵՐ ՓԱՆՈՍԵԱՆ.— (Կարծելով որ հրեշտակապետը դիւստը կ'այնած է)

— Դարբիէ՛լ,

Նախ դուն ե՛լ

Երբ մեկնինք

Դէպ յերկինք :

Փառք յանդի,

Հոս հանգի

Ժամ մահու

Je m'en f...

ՍԻՄՕՆԻԿ ԱԼԱՃԱՃԵԱՆ.— Հայրիկ, չի մեռած գրչի ծայր մը ունէինք, ուր դրած ըլլալդ միտքդ է :

ՍՄԲԱՏ ԴԱԻԻԹԵԱՆ.— Վերի գաւառները վարժապետի և կամ դատաւարի պէտք ունին արդեօք :

ՏՕՄԻՆՑ.— Vobiscum, amen!

ՄԵՐՈՒԺԱՆ, ՊԱՐՍՍՄԵԱՆ.— Քնարս տուէք, բայց չէ՛ թող մնայ, արդէն բոլոր հրեշտակները բարեկամներս են :

ԵՂԻՇԷ ԵՊ. ԴՈՒՐԵԱՆ.— Իզմիրի առաջնորդութիւնը վարելէս ետքը, բանէ մը չեմ վախնար :

ԳՐԻԳՈՐ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ.— Բողոքէս հոն ալ ծով չի կայ : Ուրբաթ օրերը ինչպէ՛ս ժամանակ անցնելու է : (Մեծանուն քարզման չին եւ ծափօր փառաբանին ամենեւնի մեծ passionն է ձկնորսութիւնը : Պէ՛տք եր որ ըսէի.)

[ «Ա. ՄԱՄՈՒԼ» — Ա. Եռամսեայ ]



ՏՕՔԹ. ԹՕՓՃԵԱՆ. — Աստուածաբան ըստը ի՛նչ տղէկ բան է,  
տես՞աք, ի՞նչ լեզուովը պիտի խօսիմ հետը ՏԵՐՏԱ հասկցնելու համար:

ԵՐ և ինձի պէս աղաւնի մը գրկեցին: Մալի՛շ:

ՄԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐԵԱՆ. — Բառարանս . . . :

ԵՂԼԱ. ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ. — Նիւվանայ,

Le voilà

Ha, ha, ha!

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ. — Աստուծոյ գիմայը ելլելու համար,  
արդեօք ձեռնոց հագնելով է:

ՀՐԱՆՏ ՄՍՄՈՒՐԵԱՆ. — Գործակալներու աչքը լոյս, փափաք-  
նուն հասն, իշքի կ'երթամ կոր:

ՔՐԻՋԱՆԹԷՄ. — Անուշիկ Աստուածս, քու գաղտնաստանէդ չսլի-  
տի վախճայի, եթէ միմեկ գիմայի թէ, մահուանս ատեն պիտի լոն՝  
դոնէ կէտը անոնց՝ որ կենդանութեանս . . . վրաս խնդային:

## ԱՆԱՅԻՍ

### ՍԻՐԵԼԻ ՓՈՔՐԻԿ ԱՂՋՆԱԿԻ ՄԸ

Նուրբ փերուած մ'ես դուն, յանգերդ աղանակդ,  
Քեզմէ կը բխիկն, սեր, գորով, եռակդ,  
Ամեն մեկ դասդ մեմունց մ'ե աղոր,  
Ամեն մեկ վանկըդ երգ մը հեշsoror:

Բընութեան դիւքի՛ն մեկ ժպիտն ես դուն,  
Էռքիւնդ հաւակ հաւքոյր մը քրքուն,  
Ըզգըխի՛ն քոյրն ես ծաղկի մը վայրի,  
Պայտուն քոյրն ասդի մ'որ կ'այրի:

Կեանքիս սեր ճաւքուն ճըրագն ես անշիջ,  
Ծիծաղ մ'անպատում դաշուկ արիս մեջ,  
Միկն իմ քոյրսիս ամեն ինչ մութ է,  
Դեմքի՛ն շուրջը քոյր կը ճառագայթի:

Երկնից աղբիւրին դուն կարի՛ն ես ջինջ,  
Կեանքի մեծ գրիկն փայտուն եզն անջինջ,  
Խնկաւե՛ս սիրուն ես, մեղք չունիլ գարնան.  
Սառած շրթնակներս փզմով կը սափան:

Հաւակ ոսկեհիւս հեշին քնար մ'ես,  
Քնկոյ՛ն հրեշտակներ շարած են ըզեզ,  
Գգուող մասներով, հոգւոյ՛ն մեջ անհուն  
Գրութեան գանձեր պահելով քափուն . . . :

ՄԱՐԱՏ ԴԱԻԹԵԱՆ

ՏԱՃԿԱՆԱՅ ՔԱՏՐՈՆԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂ՝ ԻՐԲԵՒ ՄՈՒՏԻ

Իբր հինգ տարի առաջ, թատերական բրոնխներ և անցեալ յիշատակներ հրատարակելու առիթով, խորհուրդ յղացայ այդ հատակտոր տեղեկութիւնները և կենսագրական նօթերը կանոնաւոր ու լաւ ծրագրուած ձեռք մը վերածելով՝ ամբողջական ձեռնարկ մը ընելի Այս առաջադրութեանս առելի ուժ ու մղում տալու համար, հետամուտ եղայ հաւաքելու՝ բեմական գործունէութեան վերաբերեալ նիւթեր որոնք պիտի կազմէին Տաճկահայ թատրոնի պատմութիւնը և բեմական գործիչներու կենսագրութիւնը — իբրեւ գլխաւոր ատարձ իմ ծրագրած ձեռնարկիս:

Ուրախ եմ յայտարարելու հոս՝ թէ իմ անձնական պրպտումներս, որքան իրազեկներու ուղղած կոչս ապարդիւն չմնացին, և նոյն թուականէն ի վեր կրցայ ձեռք բերել այնքան նիւթ որ ամբողջութիւն մը կազմելու գրէթէ յաջողած եմ, թէև դեռ ժամանակի ու աշխատութեան պէտք կայ վերջնական ու հրատարակելի վիճակի մը հասցընելու համար:

Թատերախումբերու կազմութեան և անոնց գործունէութեան շրջանները ճշդելու, թուականները, ներկայացուած խաղերը և դերասաններն ու դերասանուհիները կարելի եղածին չափ որոշ, անընդհատ ու անխալ կերպով երևան բերելու համար — ինչ որ պիտի կազմէր բուն թատերական պատմութեան մասը — բարեբաղդաբար ունէի վաւերական ու կենդանի աղբիւրներ, նոյն իսկ նախնական պեղումներէ ի վեր տապաւէզին մէջ ու ցարդ ալ «պատմէին վրայ» զտնուող թատերական վաղեմի վաստակաւորներ, որոնք յոժարեցան մտադիւր ու անձանձիր կերպով գոհացնել հարցասիրութիւնս: Այս կենդանի ու ժամանակակից վկաներս եղան Ա. Մէտէֆքեան, Մ. Մնակեան Տ. Սանճագեան, Մ. Զաիրաստոնեան և ուրիշներ՝ թէ՛ արուեստով դերասան և թէ՛ արուեստասէր ու թատերասէր անձեր, ինչպէս և թատերական վարչութեանց մասնակցած պաշտօնատարներ: Գրաւոր աղբիւրներ ալ պակաս չեղան, ինչպէս լրագրական բրոնխներ, ներկայացումներու նկարագրութիւններ և թատերական յայտարարութիւններ, որոնք այս կարգի տեղեկութիւններու համար թանկագին ու պերճախօս վկայութիւններ են՝ կրնայ ըստիլ՝ ամէնէն ստուգապատումները որոնց կարելի ըլլայ վստահիլ ճշդելու համար անորոշ թուական մը, ամուն մը, ետլիս:

Դերասաններու առանձին կենսագրութիւններն ալ այս ձեռնարկին համար կարեւոր օժանդակներ ըլլալով՝ գործին այս գլուխը յատուկ խնամքի և պրպտումի առարկայ ըրինք: Այս նախաւով, տպեալ շրջաբերականներու միջոցաւ ուղեցինք քաղել անձնիւր դերասանի վրայ մեզի պէտք եղած տեղեկութիւնները, մասնաւոր ՀԱՐՑԱՐԱՆԻ մը հետևողութեամբ:

Իմ հաւարած ժամանակագրական ու կենսագրական տեղեկութիւններուս համեմատ է որ կազմեցի իմ ձեռնարկիս համար ԾՐԱԳԻՐ մը, որ ինձի կը թուի ամէնէն արա-



մաքանտանը՝ Տաճկահայ Թատրոնի պատմութեան գլխաւոր հանգրուաններն ու շար-  
ջանները յատակ ու բնական շարքով մը պատկերացնելու համար:

Գործիս ամբողջութեան վրայ ընդհանուր գաղափար մը տալու համար շահեկան  
կը համարիմ հոս ամփոփել այդ ծրագիրը որ բովանդակութիւնն ու մշակուելիք նիւ-  
թերու ցանկն է միանգամայն և 12 Գլուխներու բաժնուած է:

### ՏԱՀԱՎԱՅ ԹԱՏՐՈՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ

- 1.— Թատրոնի կոչումն ու նպատակը.— անոր դաստիարակիչ գերը:
- 2.— Հայ Թատրոնը՝ նախնական դարերու մէջ:
- 3.— Տաճկահայ Թատրոնը՝ իր ծագումէն ի վեր:

- Ա. Ընտ ճնեկան շրջանակներու մէջ:
- Բ. Օրծագիւղի մէջ:
- Գ. Խազգիւղի մէջ:
- Դ. Սամաթիոյ մէջ:
- Ե. Եէնի գափուի մէջ:
- Զ. Գում գափուի մէջ:
- Է. Դատըբէյի մէջ:
- Ը. Իւսկիւտար—Գուզլուճուզի մէջ:
- Թ. Փոքր Ասիոյ մէջ (Իզմիր, Տրապիզոն, Պրուսա և ին.)
- Ժ. Ռումէլիի մէջ (Էտիրնէ, Սելանիկ, Թէքիրտաղ, և ին.)

- 4.— Արևելեան Թատրոն,
- 5.— Թաւանեան »
- 6.— Գուսաներգութիւն և գուսաներգական խումբերը,
- 7.— Հայ Թատրոնի խումբերը՝ Եգիպտոս, Յուն սասան, Պուլխարիա,
- 8.— Թատրոնը Կովկասի մէջ և Թէրզոսիա,
- 9.— Կենսագրութիւն հայ Դերասաններու,
- 10.— Թատերական վարիչներ, արուեստասէրներ, Թատերագիրներ, Թարգմանիչներ
- 11.— Յուցակ Թատրոններու և ներկայացուած խաղերու,
- 12.— Վիճակագրական համայնացոյց պատկեր բեմական գործիչներու:

Օգուտ բաղելով Արեւ. Մամուլի պատ. խմբագրութեան հիւրընկալ ու օգուտ-  
խնդիր տրամադրութենէն՝ կը փութամ այս աշխատութիւնս մաս առ մաս հրատարա-  
կութեան տալ Եւրամսույ Պրակնետուն մէջ, ու կը սկսիմ Գործիս ամէնէն շահեկան  
Գլուխէն՝ հին Թէ նոր նշանաւոր արուեստագէտներու Կենսագրութենէն՝ ի հարկէ լայն  
տեղ մը տալով անոնց որ արժանիրով ու գործօն մասնակցութեամբ յիշատակութեան  
և յարգանքի իրաւունք մը ունին:

Ինչպէս Ծրագիրէն կ'երևայ, հետաքրքրական էջերը չէ որ կը պակսին այս ձեռ-  
նարկին մէջ, բայց ի հարկէ, ընթերցողը հոս չպիտի փնտռէ գրական յատկութիւնը,  
այլ պատմական ճշգրտութիւնը և զէպրերու ու զէմբերու հարազատ պատկերացումը՝ ա-  
ռաջագրուած շարքով ու հարցումներու կարգով, ինչ որ գուցէ միօրինակ Թուի բիշմը,  
բայց մեր նպատակը չէ—յայտնի է— գրական ճաշակի զոհացում տալ, այլ հարազատ-  
օրէն պատկերացնել Թատերական կեանքն ու գործիչները:

Փափաքելի է որ իրագրելիք՝ երբ այս էջերուն մէջ հանդիպին մոռցուած պարա-  
գաններու, Թուականներու և այլն՝ շնորհ բերեն հրապ. բաժնով կամ առանձնակի ճշդել  
և ճոխացնել ինչ որ վրիպած կ'ընայ ըլլալ մեր հետազոտութիւններէն:



# ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

## ՅՈՎԷՆՆԵՍ ԱԶԵՍՅԱՆԻ

1828 — 1871

Տաճկահայ Պատրիարքի գործիչներուն մէջ կը գտնուէր Յովնանէս Աճէմ-  
եան անունով երկու արուեսագէսներ։ Այն զոր այսօր կը ներկայացնենք,  
ժամանակագրական կարգով աւելի հին ըլլալով՝ անոր անիկ մակդիրով պիտի  
ճանչցնենք, զանազանելու համար միւս՝ երկրորդ կամ կրտսեր Յովնանէս  
Աճէմեանէն որուն վրայ պիտի խօսինք եւր կարգը զայ Դուսմաներգական  
Խումբերու յիշատակութեան։ Անորանիկ Աճէմեանը՝ այժմու ըմբռնումով  
Comédien կոչուած սեւի դերասան մ'էր, ինչպէս պիտի տեսնենք, իսկ  
կրտսերն ալ նամբաւաւոր է իրքեւ թէնօր, եւ այս հանգամանքով սերտիւ  
կապուած էր Տիգրան Չոհանեանին Հմուտ, զարգացած եւ գեղարուեստա-  
գէտ միտք մը ուն ալ, որ երկար տարիներ քրոնիկագին եղած է Պոլսոյ մէջ  
հրատարակուած Փոքր Տիւ Պատրիարքի տարբեր, եւ ամենամացած էր Օր. Շագիկ  
Սվաճեանի հետ, նշանաւոր երգչուհի (այժմ Տիկին Տօթթ. Օրմանեան)։

Յովնանէս Աճէմեան մէկն է այն թատերական գործիչներէն որ-  
ոնք վաթսուհարկան թուականներէն ալ առաջ, բեմական տրուեալին  
սէրովը վառուած՝ նշանաւոր դեր մը խաղացին իրենց արուեստագի-  
տական ստորանդով։ Այս գործիչներէ ամենի յարատեւ կերպով վառ-  
րած մնացին ասպարէզին, եւ մինչեւ մեր օրերը շարունակեցին գործ-  
ծուելու թիւն մը որ իրենց ճակատին հիւսեց վառ ի սրտակ մը, ինչպէս  
են Ազատեան, Մաղաքեան, Պէնյեան, Թրեան, Էքչեան (յիշելով  
միայն անհետացած գէմերը)։ Թարիչներ ալ՝ այդ թատերասէրներէն՝  
մեր ժամանակներուն անմասն մնացին, ինչու որ կարճատեւ եղած  
իրենց շրջանը որ փակուեցաւ վաղահաս՝ որքան ցաւովի մահով։ Ա-  
սանց մէջ առաջնակարգ դերք մը գրաւեց Յովնանէս Աճէմեան (ա-  
ռաջինը) որ ցիստական թուականներէն սկսած է իր ասպարէզը եւ  
1871ին կեսնքի բեմէն հեռացած է։

Իր անունը կը կարդանք Արեւելեան Թատրոնի գերատնտեսին  
խումբին գլուխը (1864), ր սոց անկէ՝ ալ առաջ Մօսկոյի մէջ (Գաղարկէօյ)  
Արմենակ Հայկունիի անօրինութեան տակ եւ ուրիշ տեղեր ալ մերթ-  
ընդ մերթ երեցած է իր բնական սկարզ գերասան, ինչպէս՝ կ'են-  
թաղուի՝ Օրթուղեղի թատերական արշաւանի շրջանին, նաեւ Բերա  
խաղական եւ Քրանտախան խումբերու մէջ՝ կատարելով Ազնուական  
Հօր եւ Պիսանուքեան սեռէ կարիսր գերեր, որոնցմէ յիշենք Կա-  
լիբեան՝ երկու Յիսնապետներու մէջ, Թիպօ՝ Ջաղացական խաղիկին  
մէջ, Դրաստաւա՝ Ողակախաղի մէջ, Ռիքարտօ՝ Իշեկոնեսայի մէջ,  
ինչպէս եւ Կոսե Բուրմիի գերեր՝ ալ եւ այլ թատերերգութեանց մէջ  
(Տօն Սեզար տը Պազան, Խաղանդի մը կենայ երեսուն տարի, Բա-



մեղա, Լուֆրեցիա Պորճիս, Կեսար Պորճիս, Մաֆպեթ, Գամեղիսազարդ Տիկիև, և չն)։

Թատերական Գրօնիկագիրները և կենսագիրները անխառնած պիտի ըլլան, եթէ անյիշատակ անասուգութեան մէջ թողուն այս վայելուն գէմքը որ, ինչպէս ըսինք, անո՛ր համար անձանթ մնացած է, որովհետեւ իր գործունէութիւնը 1870էն ապին չէ անցած։ Բայց ասիկա պատճառ մը չէ՝ որ մուացութեան մէջ թաղուի Աճէմեանի նման ճշմարտապէս գեղարուեստագէտ գէմք մը որ բազմակողմանի ճիւղեր մշակած է, իբրեւ նկարիչ, իբրեւ ծաղկեգործ, իբրեւ քանդակագործ, իբրեւ արձանագործ, իբրեւ հեղինակ ու թարգմանիչ, իբրեւ դերասան և իբրեւ գերուսոյց։ Յայտնի է թէ այս ճիւղերէն մէկն իսկ բուսական եղած է՝ շատերուն համար՝ հոչակ ու գիրք շինելու համար, մինչդեռ Աճէմեան իրաւունք կը վայելէ գնահատուելու և փառաւորուելու իր տաղանդին բազմազան պրիսմակներով։

Պիտի ջանանք՝ ժամանակին մթութեան մէջէն կորզելով՝ լոյս աշխարհ բերել այս տաղանդաւոր մարդուն կեանքի գրուածները։ Հեռեւի՛նք, ուրեմն, իր կենսագրութեան այլ և այլ շրջաններուն սկսելով իր ծագումէն։

Իր հայրն է Կեսարացի Յարութիւն Աճէմեան, բուսական զարգացեալ միտքի տէր, գործունեայ անձ մը որ Բերս, Ս. Երրորդութիւն եկեղեցիին մօտերը Մանրեղէնի և Երկաթեղէնի բնուով վաճառատուն ունէր և բարեկեցիկ վիճակի մէջ կ'ապրէր, բարեպաշտ մէկը ճանչցուած էր և իր երիտասարդութեան տառնները վարդապետ ըլլալու արամադրութիւնները կը յիշուին՝ ընտանեկան աւանդութիւններուն մէջ։

Յովհաննէս ծնած է 1828ին, Բերայի մէջ, կ'ենթադրուի թէ Վախտէ Զէյմեսի թաղը։ Նախ՝ ազգ. վարժարանի մէջ և ուսած՝ Պրէսնիսերու դպրոցին մէջ կը ստանայ լուրջ դաստիարակութիւն մը ինչպէս և հմութիւն հայ, թուրք և ֆրանսերէն լեզուներու և կարեւոր ուսումներու, որոնք աւելի արհեստագիտական ուղղութիւնով մը ծաղկեցան իր մէջ։

Դպրոցէն ելլելէ ետքը, հեռեւած է գեղարուեստի ճիւղին՝ մշակելով քանդակագործութիւն, արձանագործութիւն և նկարչութիւն։ Աճէմեանի ձեռակերան է, կ'ըսուի, Գաղազ Ամիրայի կիսանդրին որ Եփեսոսէի հիւանդանոցի հիւրասրահին ճակտորը կը զարդարէ։ Ինք ալ, Թրեանցի պէս, աշխատած է Զրադանի պալատին և ուրիշ արքունի շինութեանց մէջ՝ իբրեւ ճարտար քանդակագործ և նկարիչ։ Այս կարգէն կը յիշուի ձիարձակարան մը և գեղջկական քէօշկ մը, Պէյքօզի մէջ կառուցուած՝ Էօմէնի կայսրուհիին այցելութեան առթիւ։

Դէպի 1850, զինքը կը գտնենք Թօփհանէի կողմը, իր հաստատած Արձանագործի խանութին մէջ՝ զոր բացած և վարած է 4-5 տարի, Տիգրան Գալֆախանի հետ (ա՛ն ալ դերասան) և շատ յաջո-

դակ ու բանուկ գործեր ունեցած է՝ միևնոյն ժամանակ մասնակցելով  
թատերական գործերու :

Ճշտիւ չենք կրնար որոշել թէ Աճէմեան երբ և ինչպէս ընդ-  
գրկած է թատերական ասպարէզը, բայց յայտնի է թէ ընտկան կու-  
շում մը մղած է զինքը գերասանութեան, ինչպէս ըսինք՝ Արեւելեան  
Թատրոնի սկզբնաւորութեան թուականներէն ալ առաջ, թէ և ընդ-  
հատարար :

1850էն 1860, Յ. Աճէմեան թատերական կեանքի յարած եռան-  
դուն երիտասարդներէն մէկն է, կը գրեն նոյն ժամանակուան թեր-  
թերը. Մասիայի 1858 Հոկտ. 30 հինգշաբթիի 353 թիւը ուր Բերայի  
խոսքական թատրոնին մէջ ներկայացուած Նեղիսի Բարեւար և Ա-  
մօքխածուքեան Վարձասրուքիւն անուն կատակերգութեանց վրայ  
կը խօսուի, հետեւեալ տողերն ալ կան, ուրիշներու հետ.

«Մասնաւոր յիշատակութեան արժանի կը համարինք Պետրոս Մաղաքեան, Յով-  
հաննէս Աճէմեան, Գաբրիէլ Պալանկեան, Պետրոս Չուրանեան, Թովմաս Թերզեան[\*]  
«գերասանները և Ֆանի Խաճեան և Աղանի Գեորգեան օրիորդները, որոնք մէկ մէկ  
«երեւի գերասաններ ըլլալու արամադրութիւնին յայտնի կը ցուցնեն, և այլն» :

Այդ թուականներուն, ինչպէս ըսինք, Յ. Աճէմեան մասնակցած  
է այլ և այլ ներկայացումներու, Պոլսոյ այլ և այլ կողմերը, Մօտա՝  
Տնօրէնութեամբ Արմ. Հայկունիի, Բերա՝ Շիլլիի կողմը՝ Վեհ. Սուլ-  
թան Մէճիտ կայսեր ներկայութեանը, Տնօրէնութեամբ Սրապիտն  
Հէքիմեանի, Օրթապեղ՝ Հռովմէականներու գլխաւոր, Տնօրէնու-  
թեամբ Մ. Պէշիքթաշեանի, և երբեմն ալ հայ վարժարանին մէջ՝  
Տնօրէնութեամբ հայկաբան Յովհաննէս պատուելի Վանանդեցիի. աւ-  
ստնց կը մասնակցէին վերոյիշեալներէն զատ, արուեստով գերասան-  
ներէ և անարթօն գերասաններէ կազմուած խումբեր, իրրեւ հետե-  
ւող ժամանակին գեղարուեստական հասանջին :

Արեւելեան թատրոնի կազմակերպութեան շրջանին (1861) Յ. Ա-  
ճէմեան, արդէն վարժ ու յաջողակ գերասան, որ իր սկսնակութեան  
փորձերն րրած էր խոսքական, ֆրանսական խումբերու մէջ, Նառումի  
Թատրոնը, կը հրաւիրուի գործակցիլ Արուսեակին, Մաղաքեանին,  
Թրեանցիին. ևն. որոնց արժանիքը գնահատուած ըլլալով՝ այդ թա-  
տերական ձեռնարկին փայլ առաջ տարրեր եղան, Էքզեանի հետ, որ  
առաջին շրջանի վերջերը կամ Բ. շրջանի սկիզբները դօրծի հրաւիր-  
ուած է. մինչ Պէշեան, Մնակեան, Չէրոզի, Արդնեան և ուրիշներ  
իրենց առաջին քայլերը կ'առնէին նոյն խմբին մէջ :

Ծանօթ թատերական միջադէպին պատճառով՝ Արեւ. Թատրոնի  
գերասանական խումբը Իզմիր կ'երթայ, ուր յաջող շրջան մը կը բու-

[\*] Կարևոր է զիտնայ թէ Թատերական կեանքի մէջ յիշուած այս անձը՝ մեր ծա-  
նօթ Ուսուցիչ և Բերթոյ Թ. Թէրզեանն է որ, զիտներ արդէն, այդ կեանքին մաս-  
նակցած է իբրեւ Թատերակիր՝ հեղինակ և Թարգմանիչ այլեւայլ Բիւսներու :



լորէ՝ ժողովուրդին խանդավառ ընդունելութեան արժանանալով։ Այս խումբին մէջ էր նաեւ Յ. Աճէմեան որուն վիճակուած էր գնահատումի լայն բաժին մը. մասնաւորապէս իր նպաստներուն առթիւ, իր անուան ձօնուած ոտանաւորներ՝ սոկեղօժ թուցիկ թերթերու և քարոզերու վրայ ապուած՝ նաեւ ծաղկեփունջեր և այլ ընծաներ ու ձօներ թատրոնին վերնադարկէն կը տեղացնէին Աճէմեանի բեմ ելած միջոցներուն։

Իզմիրէն վերադարձին (1864) Աճէմեան՝ նորէն ձեռք կ'առնէ վրձինըն ու գրոցը՝ իր արհեստը կիրարկելով, միւսնոյն տոնն մասնակցելով թատերական գործին. — 1865ին, Բերա, Վալիսէ Զէչմէսի ինպէս քանի մը արուեստասէր երիտասարդներ դադափար կուսնեան ընտանեկան շրջանակի մէջ՝ ներկայացումներ տալ և կ'ընտրեն տաճիկութիւն իսպ մը (Գապա պիր աճեմ թատերգութիւնը) որուն համար իրենց դերուստայ կ'ըլլայ Յ. Աճէմեան։ Այս արուեստասէրները ցորեկը իրենց առօրեայ զբաղումն ունէին, գիշերէ գիշեր Աճէմեանի վարժ ձեռքին տակ փորձեր կատարելով՝ կը յաջողին նոյն խաղը ներկայացնել ընտանեկան սրահի մը մէջ։

Արուեստակ որ պահ մը մեկուսացած էր, Աճէմեանէն խմանալով այս ձեռնարկին յաջողութիւնը և արուեստասէր դերասաններուն ընդունակութիւնը՝ անոնց և Իզմիրէն դարձող ուրիշ դերասաններու մասնակցութեամբ նպատի ներկայացում մը կուտայ Նաումի թատրոնին մէջ (1866 Նոյեմբեր)։ Աս խումբին մէջ էին նաեւ Կոմիտաս Իսքէնաէրեան և Տիգրան Սանճագճեան որուն թատերական կեանքը կը սկսի այդ թուականէն։

1867ին, Սրապիտն Հէքիմեան և Սիմօն Թընկլըր կը ստանձնեն Արև. Թատրոնի վարչութիւնը որ պահ մը ընդհատուած էր, և կը կազմեն խումբ մը՝ հետեւեալներէ. Մնակեան, Մադաքեան, Պէնլեան, Զօլաքեան, Ռշտունի (Գարեգին)<sup>[\*]</sup>, Յ. Աճէմեան, Վարժապետեան, Յակոբ Վարդովեան, Գարագաշեան քոյրեր, Աղաւնի և Արաքսի Զիլինկիրեան ևլն.։

1868-69ին, Յ. Աճէմեան կը մասնակցի Վարդովեանի թատերախումբին որ ներկայացումներ կուտար Կէտիկ փաշա և Իւսկլետար՝ Ազիլիյէ թատրոնը։

Այս բոլոր պարբերական ելեւեջներուն մէջ, Յ. Աճէմեան կը շարունակէր իր արհեստը՝ իբրեւ նկարիչ և քանդակադորձ, և արքունի շինութեանց մէջ տեական զբաղում ունենալով՝ իր նիւթական վիճակը գրեթէ ապահոված էր։ Բայց արուեստին հուրը, և իր խանդա-

[\*] Մեր Թատերական պրպտումներուն մէջ բոլոր դերասաններու մականունն ու կեղծ անունը (կամ Թատերական անունը) ճշգրտ էնր Թէև, բայց չկրկնող ցարդ զրոնեկ Թէ ի՛նչ է Ռշտունիի բուն մականունը, այս Ռշտունի մականունը յարմարապէս մակդիր մը կամ Թատերական անուն մը նկատելով, Ուրսի պիտի ըլլանք և Թէ մէկը հաճի այս կէտը յայտնել։

վառ ու աւելանալից ներարագիւրը զինքը կը մղէին շարունակական յարաբերութիւն մշակելու թատերական կեանքին ու շրջանակներուն հետ, և իր անունը անբաժան կը դաննէր բեմական շարժումէն, ո՛չ ձախողութիւն, ո՛չ զրկանք չէին զօրեր կասեցնել զինքը և պիտի տեսնենք թէ այդ եռանդն ու միասնական են որ վերջ ի վերջոյ զինքը ընկճեցին և այնքան կանուխ հասցուցին իր կեանքի մայրամուտքին:

1870ին, Բերայի մեծ հրդեհէն ետքը, Թ. Փասուլեանեան Նոր Նախիջևանի թատերական քոռոնէէն Պոլիս գաւնալով՝ Նոր խումբ մը կազմելու կը ձեռնարէ, նորէն կովկաս վերադառնալու համար: Փասուլեանեանին զօրաւոր աջակից մը և իր յաջողութեանց սատար մը կրնար ըլլալ Աճէմեան զոր թախտնաձայն կը փափաքէր իր հետ սանիւ: Ամուսնացած և զուակներու տէր՝ Պոլիսէն հեռանալու կը դժկամակէր Աճէմեան՝ մասնաւորապէս կնոջը թելադրութեամբ, բայց Թ. Փասուլեանեան ա՛յնքան կը հետաքննէ, ա՛յնքան կը ստիպէ՝ որ վերջ ի վերջոյ կը հաւանի ընտանիքովը մէկտեղ ընկերանալ Փասուլեանեանին դէպի Նոր Նախիջևան: Այս խումբին մէջ էին, Փասուլեանեանէն և Աճէմեանէն զտա, նաև Թրեանց, Ռօմանոս Մէտէֆեան, Պ. Ազատեան, Խ. Փափաղեան, Տիրան Գալֆատեան, Քերոքէ Թաշճեան, Պայծառ Փասուլեանեան և Օր. Մարի Նուարդ ու քոյրը՝ Օր. Տիրուհի Շուշանիկ (այժմ Տիկին Տ. Սանճաղճեան): Այս երկու օրիորդներն ալ նոյն թուականէն կը սկսին իրենց բեմական գործունէութիւնը:

Խումբը Ռոստով հասնելուն, Փասուլեանեան կը սկսի ցուրտ վերաբերում մը ունենալ դէպի Աճէմեան և խումբէն առաջ անցնելով՝ կը մեկնի Նախիջևան: Այդ վայրկեանէն կը գառնանայ Աճէմեանի հոգին, և կը զգայ թէ սխալած է իր հանգիստը զսեղծ և Փասուլեանեանի խոստումներէն շրջած՝ իր և իր ընտանիքին բազմը անոր վտանգելով: Դժգոհութիւնը ծայր կուտայ, մասնաւորապէս որ իր հետ ունէր կինն ու երեք անչափահաս աղջիկները (Իսկուհի, Արտէմիա և Սօֆի): Բայց, իբրև փրկատու միտք, կը համակերպի այս լըումին և կը հետեւի խումբին դէպի Նոր Նախիջևան ուր կը հասնին 1870ի Աստուածամայ Տօնի շարժումը:

Չմոռնային յաջող շրջանէ մը ետքը[\*] Նոր Նախիջևանի մէջ թատերական գործը կը սկսի կազալ և խումբը ցրուելով՝ Աճէմեան կը սկսի նորէն իր նկարչութեան և քանդակագործութեան՝ ապրելոյնը համար իր ընտանիքն ու արուեստակից գերատանները: Դ. Թրեանցի հետ կը սառնանէ Կօլօլային (= քաղաքապետ) ապարանքը զարդանկարելու գործը, զոր յաջողապէս ի գլուխ կը հանեն[\*\*] տեղա-

[\*] Չերչին ներկայացումն եղաւ Աճէմեանի ներկնակած մէկ մենախօսութիւնը, Կոմիտասին Յուցակը, որ ժողովրդական կեանքէ քաղուած երգախօսան գաւազն մ'է բաւական լաւ՝ գրեթէ արդիական աշխարհաբարով մը գրուած:

[\*\*] Այս մասին տե՛ս Մանիսի 21 թիւը (14 Ապրիլ 1870):



ցի հայ ազգաբնակչութեան մէջ իր արհեստագէտի ձեռնհասութեամբ պատիւ ու յարգ վայելելով՝ Աճէմեան ուրիշ՝ նոյն կարգի՝ աշխատութիւններ ալ կը կատարէ, ինչպէս cascade շինել (արուեստական շէնք մը որ իբր սալօնի վարդ կը գործածուի), և իր արհեստին ու գործունէութեան հետքիւ կը յաջողի բարեկեցիկ վիճակ մը ձեռք բերել։ Իր համակրելի ու վստովուած բնաւորութիւնը սիրելի կ'ընծայեն զինքը առհասարակ ժողովուրդին ամէն գոտակարգերուն, որոնք կը զարմանային անոր անզոյ ու բեզուէ միտքին և արուեստագէտի այլ և այլ կարողութեանց վրայ։ «Ախր՝ դու մանաւոր՝ ես, Աճէմեան» խօսքը յաճախ կ'ուզէին իրեն իբրեւ գովասանք։ Ի՛նք է որ Նոր Նախիջևանի մէջ նորա (քաղիւ) խաղալ, կատարայի վրայ խորովի (ֆիւլպասը) եփել ևլն. կը սորվէյնէ և այս կարգի շատ մը կեանքի անհրաժեշտ բաներու կ'ընտելացնէ, ինչպէս կը պատմեն իր ընկերները։

Գրաստով իր գերասնական յատկութեանց, ինչպէս վերը յիշեցինք, իր սեռն էր գերերու մէջ grand premier (բայարձակ առաջին) և noble père (ազնուական հայր), թէև օժանդակ և լրացուցիչ սեռեր ալ մշակած է։

«Աս մարդը Գողգէնի չափ արժանիք ունէր, որովհետև ժամ մը ամբողջ կրնար զբօսայնել ժողովուրդը՝ առանց ձանձրացնելու» (Մընակեան)։

Իր նկարագիրին զլսաւոր գիծերը սապէս կ'որակուին. բարձրահասակ, աւուրգ, կայտառ, գելուզէշ հասակ, լափն ուսեր, սպիտակ ու փափուկ մորթ, խարտեաշ մազ և առտոտ պիւտեր, ազդու և ուժեղ ձայն, զգայուն սիրտ, բնութեամբ բարի, զուարթ, կատարաբան, համակրելի և համակերպող, խօսուն, ընկերական և աշխատասէր, իր սիրական զտաղումն էր cascadeներ շինել, որոնց համար պէտք եղած նիւթերը, խեցի, բոժանք, սունկ, քար, ևլն. կը գնէր ողքատ աղջիկներէ՝ սովորականէն աւելի գին վճարելով անոնց։

Իբր զբօսանք, ջութակ կ'ածէր, և իր ընտանեկան կեանքը խաղալ ու զուարթ ժամերով կ'անցնէր՝ ուրիշներով զափն իր վստովուած կենակցութեամբ և իր երգերուն մոսմոսիկց ընկալով զուարթներն ալ. իր նախատիրած բաներէն մէկն ալ պիլլաւսօն էր։

Վերը յիշուած արհեստական-գեղարուեստական ճիւղերէն՝ դատ, Աճէմեան հմուտ էր հայերէնի, թրքերէնի, ֆրանսերէնի, իտալերէնի, յունարէնի, չեխականի, ևլն։

Այս ճիւղերն ու արհեստները կը մշակէր թատրոնէն քաջուած միջոցներովն ալ, խաղացած շրջաններովն ալ։

Ունի այլ և այլ թատերական երգեր, պարերգներ, զուեշաններ, ևլն։ Ի՛րն է «Ես էի առայգ պատանի, Թուհոյ նման թուշտէի» երգը նաև ժողովրդական դարձած և բեմի վրայ յաճախ լսուած՝ Հովիւ եւ Հովուուհի ծանօթ երգը զոր կ'արտագրենք գաղափար մը ապու համար Աճէմեանի ոճէն։

### ՀՈՎԻՒՆ ԵՒ ՀՈՎՈՒՌՆԵՐ

- |                                                                                                             |                                                                                                          |
|-------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------------------------------------------------------------|
| — Երբ օղը անձրևի է,<br>Քու բարի մայրիկդ<br>Պէտք է խրճիթը պահէ<br>Այդ քու փափուկ անձդ:                       | — Ո՛վ դու ազնիւ հովուուհի,<br>Ընդէ՞ր մերժես իմ սէր,<br>Քո ղէմք նստան է լուսնի<br>Որ իմ սրտիս է տիրեր:    |
| == Մօրս խօսքը չէ թէ Թրջիմ<br>Կ'առէ շուտով տի երթաս:<br>Ձէ նէ կ'ելլեմ սա փէտով<br>Քեզ դռօշմեմ՝ ուռնաս:       | == Ձեմ խաակնար քո լեզուն<br>Ի՞նչ կ'ուզես դու ինձմէ<br>Ամէն բանի եմ հմուտ<br>Ատի դուրս է իմ գլխէ:         |
| — Շատ կը ցաւիմ որ քեզ հետ<br>Այսպէս խափու վարուին,<br>Եթէ կ'ուզէք ինձի հետ<br>Փախչիլ ի միասին:              | — Թո՛ղ որ զոնէ քու այտէդ<br>Ընդունիմ մէկ համբոյր,<br>Մբտիս տիրեցիր արդէն<br>Անուանեմ քեզ իմ քոյր:        |
| == Աղբեր, ինչո՞ւ տի փախչիմ<br>Ետէս մարդ չի վազեր,<br>Կովերս որո՞ւ տի ձգեմ<br>Որ ուրիշ բան չեմ սիրեր:        | == Ատի չգիտեմ ի՞նչ բան է<br>Պէտք է իմ մօր հարցնեմ,<br>Անի թէ տո՛ւր որ տաէ,<br>Ի՛նչ որ է՝ քեզ նուիրեմ:    |
| — Տո՛ւր ինձ քու ձեռքդ ու երթանք<br>Դէպի անտառին խոր<br>Հոն գտնենք մեր ապաստան<br>Նախանձի մեծաւոր:           | — Դիտեմ մայրդ կ'արգիլէ<br>Պէտք չէ որ հարցընես<br>Սիրտդ իմ սրտիս փարէ<br>Նստասխանը կ'առնես:               |
| == Պարո՛ն, կեցի՛ր, ի՞նչ կ'ասես,<br>Ես իմ կովեր կ'արածեմ:<br>Գնա՛ ուրիշ մը գտնես՝<br>Անտառն երթամ ի՞նչ տնեմ: | == Պարո՛ն, շատ լաւ կը խօսես,<br>Խաակցայ քո միտքդ<br>Բայց սա փէտն որ կը տեսնես,<br>Կը չափեմ քու չորս դիդ: |

Յօրինած է Կոմիտասին Յուցակը և ուրիշ զաւեչտներ Ֆհայերէնի թարգմանած է Պէր էշկեր, Բարիգու Հնարամատը, Կճագործը: Թատերական և ուրիշ նվաթերու վրայ յօդուածներ գրած է 1860-1870ի Մանգրումներուն մէջ՝ և մտերիմն հղած է նոյն թերթի Տընօրէն խմբագիր Կ. Փանոսեանի:

Ինչպէս տեսանք, ասպարէզէն մերթ ընդ մերթ հեռացած է՝ խումբերու ընդհատումներուն պատճառով, բայց իր միտքն ու գրիչը անընդհատ գործած ու արտադրած են, իր գրոյն ու կռանը միշտ հնչեցուցած է անշուշտ մարմարին մարմին ու ձև աւու, իր վրձինն ու երանգապիտակը հոգեկան ու մարմնական անտիանքն ճշգրտ եմ անդուլ ու անդադար. գործի մարդ՝ աշխատութեան ոգիով վառուած՝ յարատե և անվատ քաշած է իր կարճատե կեանքը: Գեղարուեստական խմորով կուռ ու թրծուն տաղանդ մը որ իր արի ու բարի սիրտով և մշտկուած կիրթ միտքով ու ճաշակով՝ ասպարէզին ու համայնքին պատիւներէն մէկն ըլլալով՝ (առանց ուրանալու արժանիք իր ժամանակակից ղերասաններէն մէկ քանիին) Աճէմեան իրաւունք ունի դասուելու անոնցմէ առաջնակարգներուն մէջ և գրաւելու պատիւի տեղ մը՝ մեր թատերական-գեղարուեստական կեանքի



տարեգրութիւններուն մէջ: Իր կեանքի դրուագներէն մէկն ալ աւասիկ:

Արեւելեան պատերազմի միջոցին ալ (1855) ֆրանսացի Ջուալ զօրապետի մը հետ ծանօթանալով անոր թարգմանի պաշտօն կը վարէ, նաեւ Մապլախի կողմերը, ուր զօրացունդերը բանակած էին, պորմեր կը հաստատէ և գինիի վաճառականութիւն կ'ընէ: Իր ֆրանսերէնին շնորհիւ շատ օգտակար ծառայութիւններ մատուցանելով հանդերձ, ինքն ալ նիւթապէս կը նպաստաւորուի Սախայն անդղիւրէն չղիւնալէն՝ տեսնելով որ իր գործունէութիւնը չի կրնար լիուլի արժեցնել, գաղափար մը կը յըզանայ. անդէ՛ր բանակին ֆրանսացեալ թարգմանի մը օգնութեամբն, մէկ զիշերտան մէջ կը յօրինէ Զրուց արուսեան Բանալի մը որ կ'ամփոփէ բոլոր պիտանի ու գործածական բառերը՝ և յաջորդ օրը արդէն անգղիացի զինուորներուն հետ կը յաջողի խօսիլ իրենց լեզուով, նոր ապացոյց մը տալով իր ծննդական միտքին, ձեռներէց ոգիին և եռանդուն գործունէութեան:

Մեռած է 1871ին

Դեռ Նախիջևան չգացած՝ 1870ին՝ կատարած շունէ մը վախնալով՝ երջանէրդ ըստած հիւանդութիւնէն կը վարակուի, և Նոր Նախիջևանի մէջ ալ, սաստիկ ու երկարատեւ ձմեռուան պատճառով ծանրապէս կը հիւանդանայ և Պոլիս դառնալէն 4 ամիս վերջը կը մեռնի: Մահուանէն ամիս մը առաջ կը զգայ թէ մօտալուտ է իր վախճանը: Բայց իր գործունէոյ միտքը դուլ ու դադար չունէր, այդ վիճակին մէջ ալ և մինչև վերջին օրերը՝ ընթերցումի կը սրտապէս: Հիւկոյի Թշուառներուն վերջին հատորը աւարակէ օր մը ետքը և զոգցես կեանքի թշուառութեանց մտալկումին ներքև կ'աւանդէ իր հոգին:

Յուզարկաւորութիւնը կը կատարուի չքեղ հանդէսով և երաժշտական խումբի մը տխուր մեղեդիներու նուագներով՝ դադարը կ'աւաճիւորուի զէպի վերջին կայանը, Շիշլի, ուր կը թաղուի, թէև այսօր անյայտ է իր գերեզմանը:

Աճէմեան ամուսնացած է, 1859ին, Օր. Թէֆարիկ Պէնդեանի հետ, դուստր Սարգիս Պէնդեանի և եղբորդուստր ծանօթ գերասանապետ Սերսէ Պէնդեանի: Ունեցած է երեք տղիկ՝ և մէկ մանչ պաւակ (Տիգրան) որ կանուխ մեռած է: Այժմ կ'ապրին իր երկու տղջիկները (Օր. Արաթիս և Օր. Սօֆի) և ցաւ է ըսել հիւանդիսի ու ձեռնառութեան կարօտ վիճակի մէջ: (Կարելի չէ արդեօք որ այսքան օգտակար կեանքի մը շտապիչներուն ընծայուի ավոփանք մը, և իրենց որք ու անոք վիճակը նիւթական ամուքում մը գտնէ...):

Իր կենսագրութիւնը, որ ցարդ անծանօթ մնացած է, այս քանի մը տողով երանի՛ թէ յաջգած ըլլայինք մոռացումէ փրկել: Իր վաղեմի ընկերներէն Ռոմանոս Սէտէֆճեան որ մեռաւ անցեալ տարի, ան ալ խեղճութեան մէջ թողլով իրենները, Յ. Աճէմեանի մահուան տոթիւս դրած է յօդուած մը՝ Օգոսէն Խօճատարեանի Օրագիրին մէջ (622 թիւ, 11 Դեկտ. 1871), բայց տարակոյս չկայ թէ աւելի մանրախոյզ պրոֆատմանի՝ այսքան կարճատեւ բայց բեզուէ կեանքի մը գեաւ շատ մը կարեւոր դրուագները պիտի երևան բերեն, ինչ որ կը թողունք մեզմէ աւելի երխաստարգ և աւելի արամազիր գրիչներուն:

ՄԻՋՐԱՆՈՒՂՈՒՐԼԵԱՆՆԵՐ

"ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՌԱՎԷ,"

(ՄԵՐ ԲԱՐՔԵՐԷՆ)

Զինքը ճանչցայ տաննեակ մը տարիներ առաջ, երբ այդ ժամանակամիջոցին՝ մեր հրատարակած *Լոյսի* նալ «հոգեչաղկապ թղթակից»ն էր եղած: Հեռուէն հեռու, թղթակցութիւնով միայն գոյացած պատահական յարաբերութիւն մըն էր որ մեզ իրարու ծանօթացուցեր էր: Կը յիշեմ տակաւին իր՝ զեղազիր տառերով և խնամուած ոճով երկտողները կամ կարճ, կարճ և նամակները, որոնք մեր թերթին ներքին կեանքի պայմաններուն կամ ուղղութեանը մասին անցքեր, թելագրութիւններ էին: Գիտէի թէ հեռագրատունի համեստ պաշտօնեայ մըն էր, ո՛ր յաջափ:

Շաբերը, երբ ա՛յլ թերթը չէր հրատարակուեր և մեր թղթակցութիւնը հաղիւ թէ կեանքի նշաններ մը յայց կուտար, յանկարծ առտու մը իր այցելութիւնը ընդունեցայ Պոլիս, գրասենեակիս մէջ: Բժշկութեան ուսանողի մը բնկերակցութիւնով իր այդ անակնկալ մուտքը զիս շատ հետաքրքրեց: Դէմս կը գտնէի երկու երիտասարդներ, երկուքն ալ տարբեր ստաբալէզներու նուիրուած, և հետեւին կարճ խօսակցութիւն մը բաւական եղաւ յուսալից ըլլալու իրենց ապագային մասին:

Հայկակը — հեռագրատունի պաշտօնեան որուն կեանքին զանազան փուլերուն հետ զբաղել և զանոնք ներկայացնել է նպատակըս — այդ օրէն մինչև այսօր անտղայելի բարեկամութիւնով մը ինծի կապուած մնաց: Ա՛յլ դաւառ չախտի վերադառնար, իր երազը ըլլալով մեծ մայրաքաղաքին մէջ իրեն յարմար ուրիշ զբաղում մը գտնել: Ո՛րչո՞ւի իրական մանրամասնութիւններ, պատմութիւններ, տուամեր ունէր ինծի հաղորդելիք, այն ժամի պատասաներու կամ վայրկեաններու մէջ անցուած միւր տե՛ս-à-տե՛սներուն պահուն ուր, շատ անգամ, անձկալից յուզումի մը մէջ, կ'ըսէր ինծի՝ գլուխը նշանակելի և շեշտունակ շարժումով մը:

— Գրելիք նիւթ կը փնտռես, հայթայթեմ քեզի, ուզածի՛դ չափ: Իր ընտանի և մարդամօտ բնաւորութիւնը կը սիրցնէր զինքը, և իր բարեկամութիւնը, անկեղծութեան, մտերմականութեան և ժողովրդական մարդու դիւրին վերաբերումի խառնուրդ մը, ձանձրաչի չէր զաճներ, ընդհակառակը: Զինքը կարելի էր նկատել անխոյզ ու կոյս մատնան մը ուրկէ շատ բաներ կրնայիր քաղել, և էջերո՞վ: Զկար ո՛ր և է խորշ, գործի աշխարհին, խմբագրատուններու, խանութու, դպրոցի, եկեղեցիի, վաճառատուններու, գրավառի անշո՛ւք





հատականութիւնը հարկադիր ընել տալու ձգտումով :

Գուռուր ընտկած տարիներու շրջանը բեղմնաւոր էր եղած տպու-  
ւորութիւններու տեսակէտով : Ինքը այն տառն պատանի, ծովե-  
զերեայ այդ քաղաքին նկարչական տեսարաններէն մեծապէս ազ-  
դուած էր : Իր թարմ միտքին ինչպէս հետաքրքիր աչքերուն համար  
հաճելի զգայութիւններու ներշնչարան-աղբււրն էին անոնք : Կա-  
նաչորակ դաշտեր, ծիծաղկոտ ափունքներ, և ատոնց հետ ծովը իր  
առջին, հսկայ ու թույլ շգարչի մը նման ստրածուած : Ու յաղթա-  
պանձ շողենաւեր, — որոնց երեւումը միշտ տեսակ մը յուսալից վըր-  
դովումով կ'ողջունէր, անոնցմէ մէկով օր մը Պոլլա փոխադրուելու  
երջանիկ հեռանկարին տալիս քաղաքին մէջ — որոնք ամէն օր  
կուգային խորիսխ նետել հեռադրատունէն քիչ մը հեռու, և որոնց  
ճամբորդներուն այցելութիւնը կ'ընդունէր միշտ, համակրական մը-  
տերիմ շեշտով մը le petit télégraphiste կոչուելով անոնցմէ՝ շատ  
անգամ : Եւ ինքը կը պանծար իր պաշտօնին անթերի կատարումովը,  
այդ օտար հիւրերուն, որոնց մէջ նշանաւոր անձնաւորութիւններ  
չէին պակսեր, միանգամայն գոհունակութիւն ալ պատճառած ըլլա-  
լուն համար : Ինչ անխառն հպարտութիւնով է որ ցոյց կուտար այդ  
անձերուն կողմէ ստացուած բազմաթիւ այցելոծներ — պատուա-  
կան յիշատակներ ամէնքն ալ :

Պոլլա գալով՝ անոր կեանքին բզգացող և աղմկուլի եռուզեւին  
անտարբեր՝ Հայկակ անմիջապէս սկսաւ աշխատութեան : Իր նպա-  
տակն էր առժամեայ զբաղում մը գտնել որ հանգրուանը ըլլար՝  
զինքը ընկերական ա'լ աւելի փայլուն ու ցանկալի տատիճանի մը  
հասցնելու նպատակով : Եւ ծանօթ մեծ հաստատութեան մը մէջ  
յաջողեցաւ պաշտօն մը ձեռք ձգել — հեռագրող պաշտօնեայի  
սպառիչ տապարէզէն վերջապէս հրաժարած : Գեղջուկի անշահար,  
սին պշտմաներ կամ սկանակի վարձնոտ գեղեւումներ չէ'ր որ ունե-  
ցաւ ան՝ Պոլլա ոտք դրած օրէն մինչև իր նոր գործին գլուխը անց-  
նիլը : Ընդհակառակը անիկայ նախապատրաստուած էր արդէն և  
գիտէր ի'նչ ընելիքը : Սիրով փարեցաւ իր պաշտօնին, իր պետե-  
րուն ուշադրութիւնը գրաւելու համար ջանք ու եռանդ չխնայե-  
լով, և եղան վայրեկաններ ուր իր անձնուէր ու կայտառ աշխատափ-  
րութեան մտանաւոր կոչումներ ըրին : Իր սնդկային հրաշալի subti-  
litéն միայն լեղուապիտական ու գեղագրական տաղանդին, կա-  
րողացուցին զինքը յաճախ փնտել ու գնահատել տալու : Այս ուշա-  
դրաւ յաջողութիւնը նախանձոտներ ստեղծեց իր շուրջը, ինչ որ  
անխուսափելի էր : Հայ երիտասարդներ, իրենց պաշտօնակիցի հան-  
գամանքին մէջ, դժգոհ շարժումներ ստին այս «նորեկ»ին դէմ :  
«Ինչ, այս գաւառացին ո'վ կ'ըլլայ կոր...»

Հայկակ շարունակեց անտարբեր ու պաղարիւն ձեւանալ ա'յն չա-  
փով որչափ իր քառեկամները անհանգիստ կ'ըլլային : Յորեկին,



երբ ճաշի սեղանին շուրջը բոլորուէին, նշանը կը արուէր և ահա բերայի շիբ պարոն մը «գաւառ, լնագաւառ» բառերը կը թռցնէր Հայկական հասցէին: Այդ ակնարկութիւնը ծիծաղներ կը բուսցնէր ամենուն գէմբին վրայ: Եւ ասիկայ ցաւալի էր անշուշտ: Ինչո՞ւ այս հեղուութիւնը: Եթէ գաւառացին Պոլսեցիին այնքան հաշտ չքով չնայելու ինչ ինչ նկատումներ ունեցած է կամ ո՞նի, ստիկայ պատճառ ըլլալու է սակայն որ պոլսեցին ալ, en revanche, խընկըղի տեղ գնէր բոլոր անոնք որոնք իրենց պարզամիտի գիմակին տակ աղուէսի խորագրութիւններ յաճախ ծածկած կ'ըլլան, ապահովորար . . . :

Հեղինակի, ծաղրանքի այդ սլաքները անտանկի տեղատարախի մը փոխուած պահո՛ւն էր որ Հայկակ իր միջոցները ձեռք առաւ: «Գաւառացիի մշտաթարմ հաւատքով» գորացած, — ինչպէս սովոր էր ըսել ա՛յնքան նկարուն ոճով մը — պատասխանեց անոնց, և յաջողութիւնո՛վ: Ամէն անգամ գաւառ բառը լսելուն, գլուխը վեր կ'առնէր, աչքերը փայլակնացայտ ուղղելով ակնարկողին, և ուժգնութիւնով մը որ պո՛ւ մը չփոթութեան ու լուրթեան կը դատապարտէր իր «բարեկամ»ները, կը գոչէր,

— Ի՞նչ գիտցաք, հապա՛ . . . գաւառը, գաւառին արտագրութիւնը ուրի՛շ բաներ են, ուրի՛շ . . . :

Ու ծիծաղներուն պայթելը՝ չորս կողմէն:

Իր սուերիոյթ անտարբերութեան հախառակ, սակայն, Հայկակ ներքնապէս կը յուզուէր: Այդ հեգեական ակնարկները կարելի չէր մարսել ամէն օր: Ու մտածեց: Այդ efféminé երիտասարդներո՞ւն, այդ փափուկ մորթով blanc-becներո՞ւն էր մնացեր իրեն հեռ չափուիլ, համմէ՞ . . . : Եւ Հայկակ միտքը դբաւ վրէժ լուծել «խզելախումբ»էն:

\* \* \*

Կեանքի այդ շրջանին ուր Հայկակ ամենէն աւելի ըմպեց «գաւառութեան բաժակ»էն, իր «մշտաթարմ հաւատք»ը անայլայլ մնաց: Իր բարեկամներուն չարակամութիւնը և անհրապոյր ընթացքը մէկ կողկէն, նիւթական տապնոսները — որովհետեւ այս երիտասարդ պանդուխտն ալ նո՛յն իսկ մէթալիկի սովին ենթարկուածի պահեր ունեցաւ — միւս կողմէն՝ իր հոգիին մէջ փոխանակ վհատութիւն գնելու, վրնքը ջլատելու, ընդհակառակը մտրակեցին զինքը, նպաստելով իրեն՝ գտնուած ստպարէզէն գէպի իր բո՛ւն խռելը զինքը արչաւել տալու շոգեպինդ վազքով մը: Եւ մարտիրոսի մը պէս, որ տատաղներու վրայէն գոտապարտուած ըլլար ընթանալու, աչքերը քնա՛ւ չբանեց իր Յոյսէն, իր լուսաւոր երազներուն Փարոսէն: Ու հատաւորուն բաց զգուշաւոր քայլերով սկսաւ զխնլ իր նպատակին, խնկելի հեռանկար մը որ իրեն կը փայտէր և որուն ցանկալի

սահմաններուն, կապուտակ ուրախն չա՛տ մօտը կը գտնուէր արդէն:

Ուրիշներու պէս Երեմիական ուղբեր հիւսելով չանցուց իր ծամանակը, դժգո՛հ վիճակի մը դրուալները ամենուն աչքին տուցէ պարզելով չմխիթարեց ինքզինքը, ոչ ալ կարեկցութիւն, արգահոտանք ուղեց հրաւիրել իր վրայ: Անդու աշխատութեան մը անձնատուր, ցորկը գիշերին խառնեց, չարչարուեցաւ, ուքնեցաւ, իր գիւրահաշորդ լնաւորութիւնով ընդարձակեց ծանօթ հոյսիկապ անձնաւորութիւններու հետ իր յարաբերութիւնները, զիմուհներ ըրաւ, յանձնարարականներ ձեռք ձգեց, և սկսաւ առիթներուն ապուսւլ, իր արժանիքին պատուանդանին ամբողջէն կախած:

Ասդին, խումբը կը շարունակէր իր թմրուկին միօրինակ՝ բամբռու խլացուցիչ աղմուկը լսեցնել: Հիմայ իրենց արամապրութեանը տակ գաւեչաթիւրք մըն ալ ունէին որուն մէջ «գաւառացի»ն կը գաւառեցնուէր երբեմն ջլլիկ ու տափակ ռամկաբանութիւնով մը:

Ի՛նչ զրօսալի նիւթ՝ զուարճանալու ու ծիծաղելու համար: «Գաւառացին եկաւ, սիկառաւ մը տուէ՛ք. հի՛ հի՛ հի՛...» Ու «խլէզախումբ»ը անինսոյ կը ծափահարէր:

Երգիծաբանութեան, սրամտութեան այ՝ chargeերուն(՝) ըսելիք էկար:

Պէ՛տք է ընկերային տեսակէտով այս եղանակներէն շահեկան պատկերին, այս հոգեբանօրէն ա՛յնքան հետաքրքրական և միևնայն ասան ա՛յնքան զայրացուցիչ տեսարանին առջևէն անգա՛մ մըն ալ ուսերու անաարբեր թօթուքաւքով մը անցնիլ, բարեմիտ ու պորկեշտ ընթերցողին ձգելով անոր՝ իր վրայ լսելեայն թուելիք երկար ու թրթռո՛ւն տալաւորութիւնը...: Բողոքի շարժումէ՛ւ մը թէ... կէտերու պերճախօսութիւնը նախապատիւ պիտի համարուէին: Ի՛նչ տգեղ ըմբռնում. ի՛նչ աղատ ունակութիւն: Բայց ամենէն ցաւալին՝ ինքնապաշտ ետմոլութեան մը արմատ բռնել տուող պատճառներէն, զպրօցին ի՛սկ գտնանք իր ծոցին մէջ բեղնաւորող և սնուցանողը ըլլալն է: Չէ՞ մի սր ուէ հոյ վարժարանի մէջ, նորեկ աշակերտ մը, գաւառացի ըլլալ ան թէ Պոլսեցի, միշտ իբր զարմանահրաշ երևոյթ(՝) ընդունուած և մինչև իր վարժուիլը, հեղնութեան, նախադիմի, չարչիկումի ենթարկուած է իր ընկերներուն կողմէն:

Տոմարակաւն զգացումներ խրամատելէ զատ ուրիշ ինչէ՞ պիտի ծառայէին այս կարգի անիմատ նկատումներ ու վերաբերումներ: Գաւառացիի, Պոլսեցիի խորութիւնն է Բայց անցնին՝ք:

\* \* \*

Հայկակը... դեսպանատունի պաշտօնատար և պատուանշանի ալ արժանացած:



Հիմալ, զուարճանալու կարգը իրենն էր: Չէ՞ մի որ առաժը արգէն կ'ըսէ թէ «վերջէն խնդացողը աղէկ կը խնդայ»:

Բայց հո՛ն ուր ամէնէն աւելի իրեն վերապահուած էր բարձրագոյ խնդուքներով ծրծաղելու և իր «բարեկամ ներք» սուրբելու իրաւունքը, ինքը իր տուած լռին բայց պերճախօս զատովը միայն բաւականացաւ:

Իր «բարեկամ»ները ի՞նչպէս հանդուրժեցին անոր այս նշանակելի յաջողութեան, ի՞նչպէս ընդունեցին այս անակնկալ լուրը, այս իրողութեան ջախջախիչ սարսուրտութեան սոսկ ինչէ՞ր կ'զան, աւելորդ է նկարագրել: Ամենէն աչազրաւ երեւոյթներէն մէկը որ սակայն սարգուեցաւ այս աւիթով, միւսնայն զաւեշտութիւնն՝ գովարանական(°) հետեւեալ զեկոյցն էր, «բերկրութեամբ կը ծանուցանենք թէ ... ևլն. ևլն.»: »

Հեգնական, երգիծական ձափուտութեան վերջը այս կեղծիքի, շողորթութեամբ սոյոսկումի նմոյշին ի՞նչ ըսել ... :

Ո՛վ անտանելի կատակերգութիւնը լրագրական բարբերուն:

Պէտք կ'ա՛յ ծանրանալու այդ աշխարհին մէջ գրեթէ ամէն օր տեղի ունեցած նմանօրինակ volte face-երուն, հակասականութիւններուն, երկրկմութիւններուն վրայ, (յարգելի բացասութիւններէ զատ):

Հայկալը ամենէն աւելի թափանցած ու գիտակցած էր այդ համաճարեղ՝ ճկունութիւններուն, այդ խաչագողական հարամտութիւններուն բո՛ւն խմտոյին ու նպտակին: Իրեն համար խմբապահան, լրագրական կեանքը մօտաւանդ գաղտնիք չունէր՝ իր dessous-ներուն հանգամանքին առթած հմայաթափութիւններովը: Ի՞նչ օգուտ սակայն: «Զրադիլ չեմ ուզեր» կ'ըսէր ու կ'երթար: Եւ իրաւունք ունէր:

Մանուկանդ թէ ի՞նչ հարկ կար կրը իրբե՛ գործի՛, կեանքի՛ պայքարի մտրդ, իր միաբը ամենէն աւելի գրաւուած էր ա՛յլ իր առջև պարզուող ընդարձակ տապալէզին բնծոյցած չահեկան մարգերով: Զաւեշալը, կատակերգութիւնը ալ ի՞նչ հրապոյր ու կարեւորութիւն կրնային ունենալ իրեն համար: Կ'արժէ՞ր հետաքրքրուիլ անոնցմով: Իր գաւառացիի առողջ ու զօրեղ Զիյը սահմանուած էր կենսունակ գործունէութեան, օգտակար արդիւն աւորութեան մը շարժումներուն, երջանկութեան հասնելու մեծ ճիգերուն: Այդ ազնուօրէն յոգնեցուցիչ շարժումներուն, այդ՝ յոյսեր պսակելու ձգտող ջանքերուն նպատակը՝ իր միտքի միակ՝ անհեռակէտը դարձաւ: Անխնձ նաւաստիին պէս, իր սիրելի երգերէն մէկը բերանը, սկսած էր թիավարել դէպի անքոյթ ու ապահով նաւահանգիստ մը, «կեանքի փոթորկալից ավիւնտ»ին վրայ, ու յաջողած:

Ուրիշներու պէս հանրային նպատակներ չխորեց, որքի իրաւունքներով չպարարտացաւ, պեղծումի մտատանջութիւններով խիղճը

չծանարեւոնեց։ Ուրիշին գծրազգութիւնովը յաջողութեան տիրա-  
նալու խարդախ նկատումը երբեք չթրթռաց իր ուղեղին բշիջներուն  
մէջ։ Ու պատուաւոր և յամուռ աշխատութիւնով մը միայն վեր-  
ջապէս հասաւ իր խռէալին, արդարացնելով կատարելապէս իր ար-  
ժէքին ու արժանիքին պահանջած բոլոր անկեղծ գնահատութիւննե-  
րը և վարձատրութիւնները։

Երբեմն, բարեկամական շրջանակի մէջ ուր գրականութեան և  
աշխարհիկ նիւթերու վրայ կարծիքի, պաշտօնի փոխանակութիւնէն  
մեծ հաճոյք կ'զգար, յանկարծ՝

— Գաւառացի՛ տղայ, կը կոչէինք զինքը, կատակով մը որ սա-  
կայն մեզի՛ միայն կը ներուէր, ա՛յնքան մեր մտերմութիւնը անկեղծ  
ու աննկատ վերաբերումի մը դրոշմը կը կրէր փոխադարձաբար։  
Չէր բարկանար. առիկայ, հակառակը, իր անձնասիրութիւնը կը  
գգուէր պիտի ըսէի, ա՛յնքան դէմքը անսովոր, վերացական արտա-  
յայտութիւն մը կը նշուէր այդ պահուն, աչքերուն զարմանսլի հը-  
րավառութիւնովը շեշտուած, ու կը կրկնէր, այս անգամ ինդալով։

— Խնչ գիտցաք, հապա՛... վաւառը, գաւառին արտագրու-  
թիւնը ուրիշ են, ուրի՛շ...։

Իրա՛ւ ալ ուրիշ էր։ «Ժողովուրդին հարստատ զաւակն եմ ես»  
կ'աւելցնէր վայրկեան մը ետքը, ներշնչուած, ոգևորուա՛ծ, այդ  
համեստ ու պարզուկ ինքնասահմանումին մէջ զնկելով ամբո՛ղջ՝ իր  
հոգին...։





## ԼՈՒՍՈՒ ԿՍՄԱՍԻՐ

### Է. ԱՆԱՑԻ ՄՐ ՏԱՄՈՒՄՆԵՐ

Անկարելի է ընդունիլ որ կինը իրաւունք ունենայ անգործ և անզբաղ մնալու. ազատ է իր նախասիրած աշխատութիւնը ընտրելու մասին, բայց երբէք ազատ չէ ընտրութեան այդ պարտականութենէն:

ՏԻԳԻՆ ՏՐ՝ ՊԱՌՕ

Կին մը կատարեալ կին չէ, երբ չը սիրեր տանկանգործութիւնը. անգործ կիներէն աւելի բանոյլ ու ասեղ շարժող կեներն են որ խորհրդածել գիտեն, ինչու որ կինը պէտք կ'զգայ իր մտածումը սեւեռելու և ստիկա կ'ընէ ասեղը քաշելով:

ԼԻԻՍԻ ՊԻՐԻԼԱՄԱՔԻ

Կրնանք սիրելի ըլլալու արուեստին տիրանալ՝ փայլուն արամտութեան և ընտիր դաստիարակութեան շնորհիւ, ինչպէս որ կրնանք բարեկամք երևիլ՝ նարտար դերձակունէն ձեւած հագուստով: Բայց մեր միտքը, մեր անձը չեն կրնար երբէք ունենալ գերագոյն շնորհը, երբ ի ծնէ բարի և գեղեցիկ չենք:

ՏԻԳԻՆ ԱՆՍԸԼՈ

Իրապէս բարի կինը այն է որ ներողամիտ է բոլոր կիներուն հանդէպ, որ հաւատ ունի բարւոյն վրայ և երբէք չսիրին: Այն կինը բարի է որ չի բաժնատէր, նեղամիտ անխորհրդիւններ չընէր, անկեղծօրէն կը պաշտպանէ իր առջև վաթ զարնուած կինը, հաճոյք կ'զգայ երևան հանելու իր բարեկամութիւններուն շնորհները ու ձիբբերը. իր արտին մէջ չ'զգար փանաքի նախանձ ու ցանկութիւն, վերջապէս անկեղծ և ուղղամիտ կինը որուն աշխարհ քիչ կը հանդիպինք: Եթէ Տէրը ձեր համբուն վրայ դնէ այդպիսի կիներէն մին. խոնարհեցէք անոր առջև. անիկայ հմայք մ'ունի որ սրտերը կը գր աւէ, ամենէ ընտիր, ամենէ վսեմ յատկութիւնը, այն է բարութիւնը:

ՏԻԳԻՆ ՕԼԷՄԱ ՕՏՈՒԱՐ

Պայծառ և հեռաւան սէրը այն չէ որ կզգանք մեր կեանքին առաջին տարիները. հասուն տարիքն է միայն որ այդպիսի սէր մը զգացնէ կուտայ մեզ: Ասիկայ շատ անգամ մեր պարտութեամբ կ'աճի, մեր արցունքներով կը սնանի, և աւերակներու վրայ լուս կը տեսնէ: Վիշաք այն խիստ վարպետն է որ անողոր ձևերով մեր մային խորութեան մէջ կը փոր սորէ այն անուշիկ հշմարտութիւնները որ ստիկում կ'ազդեն մեր մնացեալ կեանքին:

ԻՇԽԱՆՈՒՀԻ ՕՐԷԼԻ ԿԻՔԱ

Այն սէրերը որ շուտ շուտ կ'աճին, այն յափշտակութիւնները որ չեն զգուշիւր, կը նմանին ջերմանոցի այն տունկերուն որոնց շինծու և կամայական ծաղկումը իրաւ արագ արագ տեղի կ'ունենայ, բայց պահէ մ'աւելի չի տեսէր: Մինչդեռ ճշմարիտ սէրը որ համբերութեամբ կ'աճի՝ բնութեան օրէնքներուն համաձայն, կը նմանի կաղնիի ընձիւղին որ մինակը կը մեծնայ կամայ կախաց, երկար տառն անգոր և անտերև կը մնայ, բայց իր արմատներուն մէջ կը պահէ ազգայ աւերող դուր մը:

ՏԻԳԻՆ ԷՄԻԼ ՏԸ ԺԻՐԱՐՏԷՆ

Ընկերային կեանքը երջանկութեան խոհան է ընկերատէր մարդուն համար, բայց ամեն խորհող էակ պէտք է որ ունենայ իր առանձին և մոտամիտ ժամերը:

ԺՕՐԺ ՍԱՆ

Ինքնամիտի և առանց խորհրդակցի տառապիլ կը տենչանք ուժգին՝ երբ հպարտ ու զօրեղ նկարագիր մ'ունենք. շատ մեծ, շատ գեղեցիկ կ'երևի մեզ՝ մեր վշտերուն գաղտնիքը մեր մէջ պահելու քաջութիւնը և մանաւանդ այն գաղափարը թէ մեզ սիրողներուն կը ինայնքն ցու մը զօր անշուշտ պիտի զգան զժաբաղ տենեկով մեզ: Բայց երբ բարեկամ սիրտ մը կը կուսնէ մեր վիշտը և կ'ստիպէ մեզ մեր սիրտը բանալու, ո՛հ այն ատեն բիւր անգամ աւելի անուշ կը գտնենք այդ մխիթարութիւնը, բան այն զօր բացարձակ լուծիւնը կ'առնէր մեզ՝ մեր ինքնախառնութիւնը զգուհելով:

ԴԵՐԿՈՄՍՈՒՀԻ ՏՐ ԼԷՐՇԷՅ

Ընկերային ամեն դասակարգի տանտիկիւնները սովորաբար կը գանգատին թէ սպասաւորները, այդ կամ կին, վճարեալ թշնամիներ են տան մէջ: Սրտի և մտքի տէր կին մը պէտք է շանայ զանոնք անձնուէր և փոյթեաւոր բարեկամներ ընել իրեն, նոյն իսկ իր անձնակ մէ շահուն համար: Ուզենք կամ չուզենք անոնք են որ մեզի կը ներկայացնեն խաղող ու հանդարտ կեանք մը կամ հողերով ու տաղաւակներով բեռնաւորուած սրեր: Յաճախ ընտանեկան երկպառակութիւնները ծնունդ կ'առնեն սպասաւորաց Թերի և յոռի ծառայութենէն, երբ կիները կ'արող չեն ոչ կառավարելու և ոչ սիրաշահելու զանոնք:

ԼԻԻՍԻ ՊԻԻՐԼԱՄԱՔԻ

Կին մը մեծ քաջութեան պէտք ունի երբ կը հարկադրուի մշտապէս անշուք և համեստ կերպով հաղուելու: Երբ արգուզարդի ճաշակը ունի՝ որքա՛ն անձիւ փորձութեանց դիմադրելու պէտք պիտի զգայ ամեն վայրկեան, այժնոնքի մասին խոհական ըլլալ՝ կնոջ համար վստահալ է:

ՏԻԿԻՆ Է ԻԼ ՏՐ ԺԻՐԱՐՏՏԷՆ

Ի՞նչ դիւրութեամբ կը մեղադրենք և կը խրատենք մեր նմանները, քննադատելէ առաջ պէտք է ծանօնալ անոնց կեանքին պարագանքը և անոնց սրտին ու մտքին ամենէ ծածուկ խորշերը պրկտել:

ԼԻԻՍԻ ՊԻԻՐԼԱՄԱՔԻ

Շողորործութիւնը միշտ բազցը կը հնչէ երիտասարդներու ականջին: Մասնաւոր փորձառութիւն մը և հազուագիտ համեստութիւն մը պէտք է ունենայ մարդ, որպէսզի մեծ գաղափար մը չը կազմէ իր այնքան քայքայուած և հուշակուած արժանեաց վրայ:

ԴԵՐԿՈՄՍՈՒՀԻ ՏՐ ԼԷՐՇԷՅ

Երբէք չը կրցա՛յ եմ ըմբռնել կնոջական մտքի այն ցաւալի անհեթեթութիւնը որ կիներու վրայ չարախօսելու և զանոնք նենգամիտ ու չարալեզու գաւանդու մէջ կը կայանայ: Կնոջ համար գէշ խօսելու մասին՝ այրելը բաւական չէ՞ն միթէ. իգական սեռին համար շատ անշուքն ընտ մը չէ՞ արդեօք ճայնակից ըլլալ մեր Թշնամի տրական սեռին: Կու սգոյն չըլլա՛ր միթէ իգական մասնութիւն մը հիմնել արանց չարամիտ տկարակամեանց և զրպարտութեանց դէմ:

ՏԻԿԻՆ ՕԼԷՄԲ ՕՏՈՒՍԻ

Ընկերոջդ զգացումներուն վրայ կասկածիլ շատ անգամ պատճառ կ'ըլլայ որ ան իրօք Թշնամի ըլլայ քեզի: Վնասը եղած է և զգուշութիւնը աւելորդ է ալ: Ընդհակառակն վստահութիւնը մեզ կը դրդէ բարի և ուղղամիտ ըլլալու: Միշտ կ'զգածուինք երբ ուրիշները լաւ գաղափար ունին մեր վրայ և շատ դժուարաւ կը համակերպինք այդ նպատաւոր կարծիքին փոփոխութեան:

ՏԻԿԻՆ ՏՐ ՍԷՎԻՆԷԷ

Սրտն րդիստ՝ խօսք մը որքա՛ն զոհողութիւններ կը փոխարինէ, որքա՛ն չարիքներ մոռցնել կը տալ: Սիրտը որչա՛փ հաբուտ է, թայց որքա՛ն մարդիկ այդ հաբուտութիւնը կը գործնան անպէս ինչպէս ազանը իր ոսկիները: Այդ գանձը կը Թաղեն և Թոյլ չեն տար ոչ որի օգուտ քաղել անկէ:

ՄԱԹԻՆՏ ՖՐՕՄԱՆ (ՊՈՒՐՏՈՆ)



Մենք կինքս Թրթռուն հոգիներ ենք. մեզի համար ամենէն անուշ բանը մեր արտին պատած անձէն ճանչցուիլն է. եթէ ստոյգ չենք այդ մասին՝ կորսումս՝ է մեր երջանկութիւնը, և մեր երջանկութեան հետ մեր ամբողջ կեանքը:

**ՏԻԿԻՆ ԷՄԸԼԻՆ ՌԷՅՄՕՆ**

Մեծ վիշտ մը մտախոհութեան կենթարկէ մեզ միշտ. նուազ կը տառապինք երբ կը մտածենք, ինչու որ լուռութեան մէջ մտածումները կը փոխուին և կը զանազանին: Շարժումը չը կրնար զբաղեցնել խորապէս վշտահար սիրտը. Թեթևարարոյ անձինք շուտով կը մխիթարուին դուրսի զուարթարար կեանքին մէջ, բայց զգայուն և իրապէս ցաւոտ հոգիները բազմութեան մէջ աւելի կը մեկուսանան և աւելի, կը տառապին:

**ԴԲՍՈՒՀԻ ՏՄՊՐԱՆԹԷԶ**

Մեծ դժբաղդութեան մը մէջ կորովի և կանացի սիրտ մը չը կրնար երբեք զօրանալ և ափսոսիլ այնքան՝ որքան ուրիշ և մասնաւորապէս բարեկամ անբաղդի մը օգնելով և անոր ցաւը մեղմելով: Փրկութեան խարխալն է այն. փոթորկի ժամանակ հոգին կը կապուի անոր և նուազ կ'զգայ իր անձին սպառնացող վտանգը. նոյն իսկ երբեմն կը մոռնայ զայն:

**ՅՐԷՏԷՐԻՔԱ ՊՐԷՄԷՐ**

Կեանքի ամենէ մեծ գաղտնիքը՝ ազնիւ նպատակ մը ունենալ և զայն երբեք աչքէ չը հեռացնելն է:

**ՔՐԻՍՏԹԻՆ ՏԸ ՍԻԻԷՏ**

Երբեք չար գործ մի՛ ընէք, որովհետև չարիքը անդառնալի է. կրնանք ներել, բայց բնու չենք կրնար մոռնալ. մոռացումը և վերքին սպիացումը անկարելի բան մ'է:

**ՏԻԿԻՆ Ա. Մ. ՊԼԱՆՇԸՔՕԹ**

Բացակայութիւնը փորձարար մ'է որու կը զարնուին հոգիները, և զգացումները մէջտեղ կ'եննեն: Տառապելով կամ մխիթարուելով ցոյց կը տան Թէ կը սիրէին կամ չէին սիրեր:

Ճշմարիտ բարեկամը չը կրնար մոռնալ երբեք. հեռաւորութիւնը կը կրկնապատկէ գորովը՝ փոխանակ զայն պակսեցնելու:

**ԴԲՍՈՒՀԻ ՏՄՊՐԱՆԹԷԶ**

Մարդկանց մասին մեր ունեցած հաւատքը ժամանակի երեք բաժանումներ ունի. առաջինը մարդկանց վրայ ամենայնու գաղափարը կազմել կը տայ մեզի, երկրորդին մէջ փորձառութիւնը այդ գաղափարը խախտած է. այդ միջոցին պէտք է զգուշանալ բոլորին համար կասկածոտ ըլլալէ և ամեն բանի գէշ կողմը տեսնելէ. հետզհետէ որքան յառաջ երթանք կեանքի մէջ՝ կը տեսնենք որ մարդկանց մեծագոյն մասը մեր կարծածէն աւելի լաւ է, և պարագաներ կան ուր փոխանակ դժգոհելու և պախաւանդելու՝ անոնց վրայ ցաւիլ և արգահատիլ պէտք ենք:

**ՅՐԷՏԷՐԻՔԱ ՊՐԷՄԷՐ**



ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍՄԱՆԵԱՆ

ՈՒՐՈՒԱԿԱՆԸ

ՆՈՐԱՊԷՊ

Նաոփնի, այդ գեղեցիկ կնոջ եղերոջան մահէն անմիջապէս ետքը, ժիր այր Յովսէփեան Ռուսիայէն մեկնեցաւ: Նախ Բարիդ անցաւ, վերջը գալու Պոլսի մէջ հաստատուելու համար:

Ռուսիայի այդ մանկամարդ կնոջ յանկարծական անհետացումը, իր շուրջը յուսահատութեան ահաւելի խորխորտոմբ, վիհ մը կը սկզէր, որուն մէջ գահաձիւկելու, անէանալու պէտքը կ'զգար ժիրայր: Տեսակ մը անբութեան յաւատանջ նոպայէ՝ բռնուեցաւ, և ամէն բան այնքան անհրապարկ երեցաւ իրեն որ պահ մը զարմացաւ թէ ինչպէս պիտի կրնայ ապրիլ Նաոփնի մահէն վերջը:

Դէպի Անգլիա գալուց կտախտում մը, անիւի շարադէտ ուսում մով մը կը գայթի իր բուն ճամբէն և տասներկու վախճան լեցուն ճամբորդները իր հետ անդունդի մը մէջ կը գլորէ:

Նաոփն այդ ճամբորդներուն մէջ կը գտնուէր:

Ժիրայր Յովսէփեան, զարգացած, կենցաղապէս, նրբախոյզ անձ մը՝ կամուսնի առանձնամոլութեան մը բուսական մէջ սուղուելով, կը կարծէր յիշատակը յարգած բոլոր այն եղական կնոջ, որուն խողարանի մը մէջ հանդիպած էր և սիրած՝ ութը տարի շարունակ: Տխուր ինքն անխախտ մը անձնատուր՝ իր զաւր փորձանքով զխոտւորութիւնով երկիրէ երկիր ճամբորդեց, միշտ Նաոփնի ստուերը ունենալով ետեւէն: Կարծես իր ամէն շարժումները կը դիտէր ան, և կեանքին անորոշ երեւոյթէն հետեւութիւններ հանելով, կը հրճուէր կամ կը տրամէր:

Հաստուհ մը բոլոր առաւելութիւնները ունենալով, ուղեց սանկ շորհքով գործի մը մտնել, առաւելները ուշ երթալու և իրիկունները կանուխ վերադառնալու համար:

Մարդկային գիւրափոխիս և յարաժարժ ախարհներէն մէկը՝ հեղհեղէ միտքի մարտեցաւ, մոռնալով քիչ մը Նաոփնի պաշտելի դիտատուերը, քաղաքին ժիրին մէջ՝ ուր կ'անցընէր իր կեանքը:

Հարուստ, չա՛տ հարուստ հրեայ վաճառականի մը քով մասուղալով, իր հօրը նախկին բարեկամներէն մէկը, որուն մօտ յաջողիկ կը կարծէր ժիրայր, այդ ծերացած ու անկարող մարդուն ահա գին հարստութիւնը շահագործելով:



Շիշլի փողոցին մէջ երկու սենեակ վարձեց, գեղեցկօրէն կահաւորել տալով զանոնք իր ճաշալին համեմատ: Տեսակ մը հաճոյք կը պատճառէր իրեն այդ նոր կեանքը, զինքը զբաղեցնել տալով, դրամ գիշերելու մոլուցքը ներշնչելով իրեն, ժամանակը մեռցնել տալով վերջապէս:

Քիչ բարեկամներ ունէր, գրեթէ մարդ չէր ուզեր ճանչնալ: Հըպարտ, լուսէր, գոռաբահած՝ բարեկամանալով, ասոր անոր ընտանութիւն ցոյց տալով՝ կը կարծէր իր ունեցած բարեմասնութիւնները բաժնել ուրիշին հետ, իր գաղափարներէն ու ճաշակներէն մերկանալ: Այնքան անճապաշտ ալ էր ան:

Քանի մը ամիսներ այս իրեն անձանսթ ապրելու ուղղութեան մէջ ամիսփութած՝ ապապայի երանաւէտ վայելքներ, երեակայական գինովութիւններ սկսեւ էր երազել արդէն: Դրամ կը հաւաքէր, և այդ դրամին ուժովը շատ բան պիտի կրնար ընել:

Իրիկուն մը Բլթի Շանի ամառնային թատրոնին մէջ կնոջ մը հանդիպեցաւ. իր առջևի աթոռին վրայ նստեր էր, տարիքոտ կնոջ մը հետ: Ետեէն հրաշայի կ'երևար: Անգուգական, խարտեաչ ու յորդող մազերով պլուխ մը՝ ծոծրակի տնքիմ, ոլորկ մարմարէ սիւնի մը վրայ: Լայն ու շատ թափանցիկ ժանեակներով ալուցուած ճերմակ չիփակ յտակօրէն ցոյց կուտար այդ ազնուական մարմինին խոտմնալից չքեղութիւնները: Խօսելու անախկ անվախ, համարձակ շեշտ մը ունէր որ անմիջապէս ժիրայր գրառուեցաւ, յափշտակուեցաւ անկէ. անոր գէմքին նուրբ գիծերուն վրայ հիանալով, շարժումները դիտեց, ու կուրծքին ներդաշնակ, կանոնաւոր զուգաւորումին անդիմադրելի հրապոյրովը սարսառաց:

Նստինը բոլորովին մոքէն ելած էր այդ պահուն:

Շատ անմատչելի կին մը չէր երևար ան, և իրեն անանկ եկաւ որ ֆրակօնառի կիներէն մէկը մարմին առնելով... թատրոն եկեր էր: Պոլիսի մէջ հաստատուիլը տաւր ամիս կ'ըլլար և առաջին անգամ կը պատահէր որ ասանկ գեղանի, մարդկային միտքը վրդուկող հրապուրիչ արարածի մը կը հանդիպէր, նստինի մահէն ետքը:

Ժիրայր չկրցաւ հետեիլ խաղին իրադարձութիւններուն, և Պոլսաւը, որ կը ներկայացուէր ֆրանսական operetteի խումբի մը կողմէ, անտարբեր կը ձգէր զինքը. իր սմբուշ ու շաղթութիւնը, բոլոր յափշտակութիւնը այդ տենչահրաւէր կնոջ վրայ կեղբոնացուցած էր: Հրովառ նայուածքները, երեակայութեամբ մեղսակցութիւնովը, կը հանուեցնէին, փոխադարձաբար կը հուզուեցնէին, կը համբուրէին, կը փայփայէին զանիկա: Խաղին վերջանալուն սպասեց անհամբերութիւնով, այդ կնոջ ինքնութիւնը հասկնալու համար:

Շանթի հարուածի մը զոհը եղեր էր:

Կտուքի մը մէջ նստուեցաւ և հետեւեցաւ անոնց:

Երբ հասկցաւ ո՛ր փողոց նստելին, քիչ մը հանդարտեցաւ:

— Անոր հետ պիտի տառնանամ, կ'ըսէր ինքնիրեն, ըղձանքի վարկենական թափով մը ինքզինքէն ելած. ինչ գինով որ ըլլայ. անոր հետ պիտի տառնանամ:

Աղջիկ էր գեռ անիկա. թատրոնի կիշէին առջև գլխարկաւոր պարոն մը հետը խօսած էր օրիորդ անուանելով:

Յաջորդ օրը մեծ եղաւ զարմանքը երբ յանկարծ annuaireին մէջ տունին թիւը փնտռած տունն հայ ընտանիքի մը տունին հանդիպեցաւ...

— Ուրեմն հայ է մենախօսեց, ինչ երջանկութիւն... այսօր իսկ գործի պիտի սկսիմ...

Եւ յաջողեցաւ: Աղուոր երիտասարդի, իր զարգացումին, ընկերական դերքին (որովհետեւ հրեայ վաճառականին սեղը անցեր էր տանըհինգ օրէ ի վեր) անունին համբաւովը դերութիւնով կրցեր էր յարաբերութեան մէջ մտնել Սիմոնեան ընտանիքին հետ:

Օրիորդ Սիրանոյշ Սիմոնեան հետզհետէ ճանչցեր էր երիտասարդ Յովսէփեանին մտքին հակումները, նախընտրութիւններուն սահմանը, չփորձելով ճանչնալ սակայն, շատ մը դիւրահաճ և թեթեւ աղջիկներուն պէս, անոր անցեալ կեանքին մանրամասնութիւնները: Քիչ ետքը իրարու սիրտ բացեր էին և նշանուած էր ժիրայր առանց խորհելու, առանց անդամ մը անդրադառնալու իր սիրական մեռած կնոջը վրայ: Երբեմն այնքան դիւրին եղանակով մը մարդ կեանքի մէջ կը յաջողի: Յովսէփեան բազդը ունէր աւելի երկարօրէն շտառապելու, չմաշելու խաչալի մը ետեւէ վաղուդ, մղձաւանջ մը հետաւ պնդող հողարուոր երիտասարդներուն պէս:

Ազատ դատարարութիւնով անած, համարձակ աղջիկ մը՝ Օրիորդ Սիմոնեան, միշտ կը մերժէր հիմակ իր Ֆրանսացի ուսուցչունին ընկերակցութիւնը: Անդլիերէն, գերմաներէն կը խօսէր և քանի մը տարուան մէջ Ֆրանսերէն ալ սորված էր, լեզու մը ուրուն մէջ այնքան զօրաւոր էր սակայն, միւսներուն չափ: Յովսէփեան գերմաներէն գիտէր և ֆրանսերէնը ուսումնասիրած էր Բարիզցիի մը պէս: Չէին ձանձրանար, ամէն օր կը տեսնէին զիրար, և ժիրայր, ինչպէս բոլոր անհամբեր ու աճապարող սիրողները, առիթներ կը փնտռէր վայելելու, աւելի՛ մօտէն շօշափելու համար արձանալին այդ վէս գեղեցկութիւնը:

Մինչև այն ատեն գեռ ձեռքը միայն կրցեր էր համբուրել, երբ օր մը, արտահին մէկ անկիւնը նշանածին իրանը դրկեր էր վերջապէս, անոր դէմքին թաւապեղ ու դեղձի, բերնի ջուրերը վաղցնելիք սաւաքուն հեշտանքը ձծելով:

Այն իրիկունը երջանիկ և դոհ, դուն վերադարձաւ:

Երբ սենեակը մտաւ, աչքին զարկաւ, ախուր՝ զուգադիպութիւնով մը, մեռնող կնոջը մեծադիր պատկերը, որ իրեն կ'ազատէր կարծեալ: Մէկէնիմէկ զողաց... կը խաբէր նստինը ուրեմն... այն



պաշտելի կինը որուն միշտ հաւատարիմ մնալ խոստացած էր :

— Ահ, ըստ, ի՞նչ անդուլթ եմ եղեր, ես որ ինքզինքս մեռցնել կը մտածէի կնոջս մահէն վերջը, ես որ ապրիլ չէի ուզեր և աշխարհ պարտապ, բոլորովին մութ կը տեսնէի... ի՞նչ ճիւղալային սիրտ է աս մարդերունը... անքան փոփոխութիւն... :

Վայրկեան մը նայուածքը կնոջը մեռած ուղբերուն մէջ սուղեց, ապահովուելու համար թէ վշտացած էր իրեն, թէ չպիտի ներէր ընաւ : Ինք որ երգում ըրած էր իրմէ զատ մէկը չսիրել, իրմէ զատ մէկուն համակրութիւն ցոյց չտալ : Թաշկինակը հանելով գրպանէն, սրբեց աչքերը, որոնք թրջած էին յանկարծ : Անգամ մըն ալ նայեցաւ սրտակերին, կարծես անոր անուշ նայուածքը հիմակ յանդիմանութիւն կը ժայթքէր իրեն երեսին :

Յաջորդ օրը ժամադրութիւն մը ունէր օրիորդ Սիրմանեանի հետ : Ամբողջ գիշերը մաքառեցաւ ժամադրութեան գանուելու կամ չգլուխուելու սրոշումներուն դէմ : Եւ իբրեւ թէ առաջին անգամ՝ Նատինին խոստմնադրութեաւ եղած ըլլար, անորոշ փոփոխամտութիւնով մը մտածեց որ եթէ չերթար չա՛տ գէշ գաղափար մը տուած պիտի ըլլար իր մօտին : Պիտի ենթադրուէր որ ինք ալ խաբող մըն է, կլնուրուն ետեւէն վազող մը, սիրտեր բզջտող մը պարզապէս : Եթէ երթար՝ իր կինը նորէն խաբած պիտի ըլլար, վիրաւորած, արիւնած պիտի ըլլար Նատինի յիշատակը : Խիզճը աւելի ծանրօրէն պիտի կշռէր իր սիրտին մէջ : Մեղանշումի և պարտականութեան աշտ կրկնակ մտածումներուն խորը պահ մը զանդաղեցաւ, գալարուեցաւ : Վերջապէս որոշեց աչքետոմ : մը զրիկը նշանաւորին, հիւանդութիւն կեղծելով, օր մը աւելի՛ խորհելու համար ինքզինքին ու իր առջի սէրին վրայ :

Օրիորդ Սիրմանեան այցետոմսը ստանելուն պէս, անմիջապէս հագուեցաւ և փութաց երթալ Ժիրայրը տեսնել :

Յովսէփեան գործի չէր գտցեր այդ օրը :

— Կ'երեւայ թէ սոսկալի գիշեր մը անցուցած ես, բարեկամս : Ի՞նչ ունիս . . . ըսաւ Սիրմանոյշ, աչքերը յաւելով անկողինին վրան գտնուող դեղեցիկ կնոջ պատկերին :

— Ի՞նչ գիտնամ, սիրելիս, պզտիկ անհանգստութիւն մը . . . :

Յովսէփեանի դէմքը յանկարծ աւելի դունդաւոր էր : Կարմրած աչքերը իրենց չուրջը սևութեան շուք մը ձգելը էին : Երթեացած շրթունքները իրարու կը զարնուէին : Վրան արտասովոր բան մը կար . . . :

— Իրա՛ւ հիւանդ ես դուն, ըսաւ Օրիորդ Սիրմանեան, ուշադրութիւնով շննելով Ժիրայրի դէմքը : Քեզի պիտի աշէկցնեմ ես . . . Ըսայց ո՛վ է սա աղուոր կինը, տեսնեմ . . . :

— Ֆրանսացի ծանօթ դերասանուհի մը . . . Ահ, անունը չեմ յիշեր այս պահուս . . . :

Աղջիկը իրեն մօտենալով ձեռքերը կը սեղմէր սիրավառ կերպով :

Երիտասարդին մատները ջգածգօրէն կը պրկուէին դեռատի աղջկան փափուկ ձեռքին մէջ :

Ելեքտրական հոսանք մը պտըտեցաւ երակներուն մէջ : Կիրքի, հեշտանքի, տենջանքներու ողորում մը ծածկեց հրեակայութիւնը : Աչքերը պահ մը իրենց առջի փայլը առին : Վառիչ սկսան : Արտերը վարդազունեցան թեթեօրէն :

Կնոջ հրեղիթով, նրբիրան, գեղանի աղջկանը մատները կը շոյէին իր գէմքը : Ուրի վրայ կենալու ուժ չունեցաւ : Աթոռ մը առաւ ու վրան ինկաւ : Այդ վարկիանին նորէն նշանածէն զատ մէկը չէր տեսնուր աչքերուն առջեւ : Գիշերուան նոյքարները դադրած էին ու դեղին մէջ, և կամայ կամաց, երիտասարդ աղջկանը պաշտօնիօրէն զգլխիչ փայփայանքին տակ կ'զգար որ կը վերակենդանանայ, կ'ուզեւորուի : Հիմակ իր վրայ եկած հակած էր : Շունչէն թարմ բուրում մը կը խնկարկուէր իր ռնգունքներէն ներս :

Սիրանոյշի լանջքը իր ամէն մէկ չնչառութեանը աւելի կը մօտենար ժիրայրի գլխուն, և այս վերջինը կ'զգար որ ճերմակ թափանցիկ հագուստի մը մէջ պատնէշուած աղջկանը կուրճիքերը կ'ըստանային դուրս պոռթկալու, դուրս նետուելու : Թեկերը անզգալաբար նշանածին մէջքին անցուց, և աչքերը գոց՝ անոր այրող շնորթները կը փնտռէր համբուրելու համար :

Կէս թմրութեան, արբուանքի, սիրոյ գինովութեան այս զգայացունց պահուն, ուր երկուքն ալ արձանացած կը մնային, իրարու փաթտուած և գալարուելով հեշտանքի ներարկումէն : Սիրանոյշ առաջին անգամ ըլլալով կ'ըմբռնէր պաշտումի հոսանքաւ հրայրքը : Սրունքները կը դողային և հեռզհեռէ ինքզինքին պիտակցութիւնը կը կորանցնէր : Ժիրայր կը չփութէր, կը դեղեւէր, կը տարակուսէր : Իր մոսմունքներուն, յիշատակներուն, զգայութիւններուն խառնակ իրերայաջորդութեան մէջ կը կարծէր թէ Սիրանոյշի խանդավառութիւնով, մեղքի ծարսումով բացավառող աչքերուն խորէն Միւսին յաւիտեհապէս անմահ նայուածքներուն կոխորդանքը կը խմէ : Կը կարծէր թէ միւսին գգուանքները կը պտըտէին իր այտերուն վրայ, և թէ միւսէն պատճառուած վայելքներուն ցնուրեցնող սարսուռները կը վազէին իր մարմնին վրայ :

Այդ հիւսնազապէն վիճակին մէջ կ'ենթադրէր որ Նատինի ուրուակոյնն է՝ զինքը գրկողը, իր վրայ ճնշողը, մեռնող կինը զոր աչքքան սիրած էր :

Երբ իր բազուկներուն բաճառանգումը քակեց, ընկրկելով, տուն տամեղով աղերսեց :



— Պիտի խնդրէի որ մինակ ձգէիր զիս, տկար կ'զգամ ինքզինքս, չա՛տ տկար:

Սիրանոյշ տեղի տուաւ:

Դեռ Օրլորդ Սիմոնեան տունին դռանէն դուրս չէր ելեր, փա-  
րայր հազունցաւ արագօրէն: Կտուք մը նստաւ և Ղալաթիա գնաց  
ուղղակի: Գործերը կարգադրեց ու յսշորդ օրը, Չորեքշաբթի մը,  
Բարիզ ճամբորդեց անմիջապէս:

Երբ իմացաւ Սիրանոյշ նշանածին յանկարծական և խորհրդաւոր  
մեկնումը, ապշուեցաւ խորհեցաւ էրիկ մարդերուն զգացումներուն  
վրայ: Չկրցաւ երբէք գաղանիքին տեղեակ լըլլալ և միշտ, իր աղ-  
ջըկան կեանքին մէջ յիշեց այդ երիտասարդը որ «զինքը խաբէլով  
փախեր գայեր էր»:



## ՎՐԻՊԱԿ

| Էջ  | Տող | Սխալ        | Ուղիղ       |
|-----|-----|-------------|-------------|
| 36  | 10  | կ'մերձայնեն | կ'մերկացնեն |
| 43  | 12  | աշխատիւ     | աշխարհը     |
| 105 | 15  | սիրում      | ընթաց       |
| 109 | 2   | Հուսք Բանք  | Հուսկ Բանք  |

## ՀԱՄԱՐԽԱՐՀԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԲ

Շատ դպրոցականներ կ'իմիման Ասոնք ստէպ կակազողներ են միայն Գալեի<sup>1)</sup> է ազդուապէս ուղղել այսպիսիները Այս մասին շահեկան փորձեր կատարուած են վերջերս Անկլիոյ մէջ: Նախնական կրթութեան Յանձնաժողովը մասնաւոր ուսուցչի մը՝ Պ. Երբալէյի յանձնած է այս փորձերը կատարելու պաշտօնը Պ. Երբալէյ զատարանի մը մէջ հաւաքած է բաւաւոր չափ կակազող ժանուկներ, մանչ և աղջիկ, անոնց աւանդելու համար արտասանութեան դասեր՝ լեզուի կակազումները անհետացնելու յտուկ նորագոյն մէթոտի մը համաձայն Այս կակազումները ընդհանրապէս արդիւնք են շընչելու և արտաբերելու թերի եղանակի մը Պ. Երբալէյ իր դասերը շարունակեց վեց շաբաթ, շաբաթը վեց օր և օրական չորս ժամ աւանդելու պայմանով: Ձեռք բերուած առաջին արդիւնքները գոհացուցիչ են: Ահաւասիկ Թէ ի՞նչ եղանակաւ կ'կատարուին այս փորձերը: Առաջին երկու շաբաթներուն մէջ կէս ժամ աւտու և կէս ժամ իրիկունը կ'յատկացուին աստիճանական վարժութիւններու, նպատակ ունենալով զօրացնելու շնչատուութեան մը: Կանները, վանկերը ճայիկնով և ձայները երկարաձիգ ու եղանակաւ կերպով հանել տ պով արտաբերել կ'ստրվեցնեն: Դաստիարակութեան վերջին մասը յատկացուած է՝ շնչատուութեան զուգընթացաբար ձայնի աստիճաններուն վարժութեան՝ շարժումներու կշռողութեամբ: Աշակերտները բարձր ձայնով կ'կարդան, զատ զատ կամ ամէնքը միասին, չափաւոր գործիքով նշանակուած նախին համաձայն, վերջին երկու շաբաթներուն մէջ կ'բացատրուին այն սկզբունքները զորս տղաք պիտի գործածեն իրենց տունը՝ ծնողներու հրահրութեան ներքեւ: Այս դրութիւնը մեծ յարաւուծութիւն կ'պահանջէ Թէ՛ ուսուցչին և Թէ՛ աշակերտին կողմէ, բայց այժմ աշիկա ցոյց տուած է իր արժէքը և կարելի է լուրջ արդիւնքներ ակնկալել անկէ ետէ՛ դասերը կրկնուին մինչև որ կակա-

զումը բոլորովին դադրի: Եանձնաժողովի տեղեկագիրը կ'յուսայ Թէ այս մասնաւոր դաստիարակութիւնները հետզհետէ պիտի շտանան և բիշ անոնէն ամեն կրթական հաստատութիւններու ծրագրին մէջ պիտի ընդունուին: Տեղեկագիրը միևնոյն ժամանակ կ'յանձնարարէ այս նպատակին համար բոլոր վարժապետանոցներու մէջ հաստատել նախապտորտական դասընթացքներ, ինչ որ ապահովապէս պտուտակուն նորութիւն մը պիտի ըլլայ զոր կ'արժէ որդեգրել:

Պէրլինցի բնախօս մը՝ Տօրթ. Էմիլ Քէօնիկ, որ ծանօթ է արդէն կարեւոր աշխատութիւններով, վերջերս հրատարակած է տետրակ մը որ շատ քաջալերիչ չէ մարդկային կեանքի ապագային համար: Պ. Քէօնիկ կ'հաստատէ Թէ մարդիկ չարաբար գործածած են իրենց ոյժերը և բնախօսական կազմութիւնը, և այսպէս աւելի ընդունակ եղած են հիւանդութիւններու: Շատերու վրայ կ'տեսնուի գործարաններու վատասերում մը, և որովհետեւ բնախօսական այս վիճակը կը փոխանցուի սերունդէ սերունդ, ասկից առաջ եկած է տեսակի ընդհանուր աղետներում մը: Քէօնիկ ասոր ապացոյց կ'նկատէ նախ քաջկեղի հիւանդութեան ահաբիւրոյն յարածուն հանգամանքը զոր մեծ մասով կը վերագրէ արդի մարդուն բարդ կեանքին: Կ'աւելցնէ Թէ պիտի հիւանդութիւնները հետզհետէ աւելի յաճախալէպ կ'զտանան և որոնք շատ անգամ արդիւնք են այն ճնշումին զոր ի գործ կ'գնէ արիւնը երակներու և շնչերակներու ներքին կողերուն վրայ՝ չափազանց աշխատութեան, գործունէութեան, արագութեան, ամէն տեսակ յոգնութիւններու հետեւ: Նքով ի սկից զատ կ'հաստատէ Թէ մարդուն բնատմբքը հետզհետէ կ'վատասերի, և Թէ ակումներու փտութիւնը և կորուստը այս քանին կ'նպաստեն վրդովիչ համեմատութիւններով: Ասկէ կը հետեւցնէ Թէ ետէ՛ մարդիկ շարունակեն իրենց սպրեւակերպը արդի կարճեցեալ քաղաքակրթութեան



պահանջներուն համաձայն, ճակատագրօրէն և կարծուածէն աւելի շուտ պիտի գայ վայրկեան մը ուր ֆիզիքական անհանդուրժելի տառապանքներէ առաջ եկած անձնասպանութիւնները ամէնօրեայ իրողութիւններ պիտի դառնան Այս յոռետեսութիւնը ի հարկէ քիչ մը չափազանց է և ինչ ինչ տեսակէտով՝ ճշմարտագանց, բայց ճշմարտութեան հիմի մը վրայ հաստատուած է: Անուրանալի է թէ, բացառութիւնները մէկ կողմ թողլով, մարդկային կեանքը ողջպահիկ կանոններէ երես կ'դարձնէ և այս իսկ պատճառաւ կ'կարծի կամ կ'խանգարի Մարդ հեագհետէ աւելի նուազ կ'հասլնայ թէ իր մեծագոյն հարստութիւնը առողջութիւնն է: Անկեղծ ըստ հաճոյս կ'մտնէ զայն՝ իր հայրենի ժառանգութեանը երկու ձեռքով վասնող զաւակի մը պէտք Ձիտու մէջ առաքինութեան մրցանակներ կ'տրուին այն մարդոց որոնք գիտեն զերծ մնալ հիւանդութիւններէ: Ինչպիսի բան մը պիտի ըլլար այսօրինակ սովորութիւն մը հաստատել քիչ մը ամէն տեղ:

Գերմանական նորագոյն վիճակագրութիւն մը կ'հաստատէ թէ ծանօթ երաժիշտներուն մէջ ամենէն աւելի առատ արտադրող երգահանները եղած են Մօցարտ և Շիւպէր: Արդարեւ, երկուքն ալ իրենց երիտասարդ հասակին մէջ մեռած են, առաջինը 35 տարեկան և երկրորդը 34 տարեկան: Մօցարտ ծնողած է 626 նուագներ և Շիւպէր 791: Սէպտեմբրին Պախ թողուց 1102 կտոր, բայց 65 տարեկան մեռաւ:

Օրուան գրական դէպքն է 2200 տարիէ ի վեր մեռած կատակերգակ բանաստեղծի մը յայտնութիւնը: Նեղոսի տփունքը աննշան գիւղի մը մէջ գտնուած են Մէանդրի կատակերգութիւններէն չորս մեծ հատուածներ: Արդ, Մէանդրի հարիւր ութը կտոր թատերախաղերէն հազիւ քսանի մը տրամախառութիւններ ծանօթ էին մինչև հիմա: Ինչ որ աւելի հետաքրքրական է թերեւ, սա է թէ գտնուած բնագիրները լիովին կ'արգարացնեն փառքը այս բանաստեղծին զոր գրականութեան պատմիչները՝ նախնեաց հաւատքին համաձայն՝ Թէրանսէն և Լատիններէնէն առաջ կ'ընէին:

Ռուս ժողովուրդին թշուառութեան պատճառներէն մէկն ալ ապահովագէտ աղքատականութիւնն է որ ահռելի համեմատութիւններ կ'առնէ Ռուսիոյ մէջ: Տարաբաղդ մարդոց պէս՝ ժողովուրդը իր վիշտերը արբեցութեան մէջ կ'խեղդէ: 1907 տարուան առաջին հիւնց ամիսներուն մէջ ծախսուած օդին (վումս) քանակութիւնը աւելի շատ է քան ամբողջ 1906 տարուան մէջ սպառած օդին:

«Երբ Ֆրանսացի մը ինքն իր վրայ գէշ կ'իստի, կըսէր՝ օր մը Բայլըօն, մի՛ հաւատար, ինքզինքը գովելու համար է:» Ֆրանսացի շատ կ'սիրեն իրենք զիրենք քննադատել: Ֆրանսական բարձրագոյն կրթութեան կոնք քննադատ մը՝ Պ. Ֆէրմանէ Լօ՝ չարաւէր հաճոյքով մը բողոքատութիւնը ըրած է Գերմանիոյ և Ֆրանսայի համալսարաններուն համար ծախսուած գումարներուն: Բայց կ'մոռնայ կամ անտես կ'անցնի սա պարագան որ Գերմանիա 56 միլիոն բնակիչ ունի, այսինքն աւելի մեծ թիւով հարկապարտներ, մինչ Ֆրանսայի բնակչաց թիւն է 39 միլիոն: Կ'մոռնայ նաև թէ Գերմանիա աւելի շատ ուսանողներ չունի: Յետոյ գերմանական հին համալսարանները 5 միլիոնէն աւելի եկամուտ ունին: Ուրիշ կ'հետեւի որ եթէ իրօք Գերմանիա տարին 31 միլիոն կ'ծախէ իր բարձրագոյն կրթութեան համար և Ֆրանսա 21 միլիոն, այս վերջինին մէջ իւրաքանչիւր հարկապարտ միջին հաշուով 54 ամսով կուտայ և մէն մի գերմանացի 56,50 ամսով: Տարբերութիւնը ո՛չ ահագին է և ոչ ալ անպատուաբեր: Հիմակ իրաւ է թէ Ռէնի միւս կողմը ամէն տարի ժամանակակից պատմութեան վրայ հրատարակուած գործերը Ֆրանսայի մէջ հրատարակուածներէն երեք անգամ աւելի են և հին պատմութեան վրայ հրատարակուած գործերը 50 անգամ աւելի: Բայց այս աշխատութեան որակը ֆրանսականներէն աւելի՞ թէ անոնց հաւատար արժէք ունի: Այս է խնդիրը:

Անցեալ տարի պղինձին գինը շատ սուղ էր: Սակայն քսան տարիէ ի վեր պղինձի արտադրութիւնը եռապատիկ աւելցած է, այնպէս որ 1886ին պղինձի արտադրութիւնը հասած է 217000 թոնոյի և 1906ին 700000ի: Միայն թէ ճարտար-

արուեստի մէջ պղինձի սպառումը ա՛լ աւելի արագ յաւելում մը ունեցած է: Վերջապէս պղինձի հանքերը սպառելու վրայ են: Երբեմն Անկլիոյ մէջ Քորնուալլի դքսութիւնը պղինձի մեծագոյն քանակութիւնը կ'հայթ ալծէր. այսօր Միաց.-Նահանգներուն կ'առականի առաջնութիւնը յետոյ կուգան Մեքսիկա և Բերու: Գարով Սպանիոյ պղինձի հանքերուն, անոնք ալ նուազելու վրայ են: Պղինձի այս աղութիւնը իր ազդեցութիւնը ունեցաւ մինչև իսկ այգեգործական տապանապին վրայ:

Իրաւի որմատունները կ'զարմաննեն պղինձի ծծմրատով. արդ, աւել տուաջ այդ նիւթին 100 բլոն կ'արժէր 50 ֆր. մինչդեռ այս տարի 90 ֆրանքի բարձրացաւ: Վերջերս պղինձի գինները կրկին ինկան Երախ մը առաջ բերելով Միաց.-Նահանգներուն մէջ

Նիւ-Եօրքի մէջ՝ Սալարանին մօտերը մինչև իսկ ամենափոքր կրպ սկները ա՛յնքան սուղ վարձագին մը ունին որ մէկ քառակուսի ոտը տարածութեամբ պզտիկ անկիւն մը վարձելու համար՝ հարկ է նոյնչափ տեղ տոյրներով ծածկել: Շիւղ անունով սիկաւաւաճառ մը մօտերս կալուածատէրէ մը վարձու բռնած է փոքրիկ անկիւն. մը ուր հազիւ երկու հոգի կրնան ալմիլ, վաճառորդը և գործըլը, և որուն համար տարեկան վարձք կ'վճարէ 7500 տօլար կամ 37000 ֆրանք: Գործին մէջէն անմիտս ելլելու համար պէտք է որ օրը իւրաքանչիւրը 50 սիկար պարունակող 3760 տօլի սիկար ծախէ և այն ատեն սու մը անգամ չպիտի շահի: Իր յոյսը գրած է այն անցորդներուն վրայ որոնց թիւը օրական կէս միլիոնի կը հասնի: Երախովաճառ մըն ալ՝ աւելի սուղ վարձք մը կ'վճարէ: Պոսովէյի մէջ կոշիկ ներկող մը մինչև անցեալ յունիսին տարեկան 50000 ֆրանք կ'վճարէր մէկ քառակուսի ոտը տեղի համար ուր կը դնէր իր տուփը: Այս մարդը ընդերկրեայերկամուղիի շինութեան սառնիւ ստիպուեցաւ իր տեղը փոխել և ճիմայ 75000 ֆրանքի

բարձրացած է իր նստած անկիւնին տարեկան վարձագինը, զոր կ'վճարէ առանց տուարկութեան, որովհետև օրէ օր կ'հարստանայ: Եւ ամէն բան այս համեմատութեամբ է:

Իտալացիները Մանուկներու Թագուհի կ'անուանեն իրենց վեհապետունին՝ մանուկներու համար ունեցած գորովին և սէրին պատճառաւ: Երբ իր առջինեկ զաւակը Եօրանտ իշխանութիւն աշխարհ եկաւ, Թագուհին զայն աղօթութիւն պատճառեց՝ արքունիքի օրկիններուն խալիվան վաղեմի սովորութիւնները չի յարգելով: Փոխ նակ կտուններու մէջ փատտելու իր նորածին աղջիկը, անկիւնական երկայն հազուստը հազցուց անոր: «Երախաներու սրունքները ոտքի հարուածներ տալու համար շինուած են, կ'ուզեմ որ իմ փոքրիկս ալ կարող ըլլայ ուզածին պէս շարժել իր ստախիները» Այս կերպով լուեցուց ձանձրացուցիչ դիտողութիւնները: Մանուկներու համար իր բարեսրտութիւնը զառական դարձած է բովանդակ Իտալիոյ մէջ: Իրեն համար ամենամեծ հաճոյք մըն է մասնակցիլ մանուկներու զուարթութեան, մանկական հանդէսներ սարքել: Իր սիրական գրադուին է այցելել որբանոցները ուր իր շնորհալի ազնուութիւնը արևու ճառագայթ մը կ'րեւէ փոքրիկ լքեալներուն:

Կատունները շատ կ'յարգուին Անկլիոյ մէջ: Նոյնինքն Ալէքսանտրա Թագուհին յիսունի չափ կատու ունի որոնցմէ տասներկուքը իր մասնաւոր շնորհները կը վայելնու: Սպասեակ մը պաշտօն ունի հակելու անոնց հանգստութեամբ վրայ և ընտիր կերակուրներ մեծարելու անոնց: ԵՍՏ անոնցմէ մէկը անհանգստութիւն մը ունենալ՝ անմիջապէս արբունի անանաւորոյժը կ'րեքուի և բռն ժշկական քննութեան արդիւնքը իսկոյն կ'հաղորդուի Թագուհիին, իբր Թէ իր սիրականներէն մէկը եղած ըլլար հիւանդը:



## ԽՄԲԱԳՐԻՆ ԷԶԸ

### ՅԱՊԱՆՈՒՄՆԵՐ

Յաւաջիկայ թիւին համար բացի ներկայ թիւին մէջ երեւցող աշխատակիցներու կարեւոր մէկ մասէն, որոնց հաւանութիւնը ստացած ենք կրկին երեւելու, երկրորդ եւամսնային մէջ պիտի հրատարակենք ողբացեալ Կորիւն վարդապետի «Լեռներու Մերութիւն»ը բանաստեղծական արձակ մէկ յօդուածը՝ զոր տեղի անձկութեան պատճառով չկրցանք ներկայ թիւին մէջ զետեղել: Յաջորդին թողուցինք նաեւ մեր մոպուն աշխատակցին՝ Տիար Կ. Նաւասարդի թարգմանութիւնը՝ ներկայ թիւին համար խոսացուած:

Մեզմէ անկախ պատճառներով սխալուեցանք չհրատարակել Մելքսն Ասատուրի պատմուածքը «Մէկ հասիկը»՝ զոր ծանուցած էինք նոյն իսկ «Ա. Մամուլ»ի 9րդ թիւին մէջ՝ եւամսնայի բովանդակութիւնը հրատարակելու առթիւ:

### ՅԵՏԱՄՆԱՑՆԵՐԸ

Մեր աշխատակիցներու մէջ խտրութիւն դրած չլլալու համար թուականի կարգով ուշ հատածները Բ. րդ թիւին թողուցինք, որոնց կարգէն են նաեւ համալերելի Տօրթ. Մ. Վահէի խիստ հետաքրքրական տեղագրական մէկ յօդուածը եւ Թրկասիացիի համով հոսով, երկարաշունչ մէկ վէպը, մասնաւորապէս եւամսնայներուն համար յօրինուած:

### Բ. ԵՌԱՄՍԵԱՅ

Երկրորդ եւամսնային մտադիր ենք հրապարակ հանել Մայիսի 15ին, հետեւաբար կ'ինդրենք մեր աշխատակիցներէն իրենց յօդուածները մեր ձեռք հասցնել առաւուռէն մինչեւ Մարտ ամսոյ 25ը, այդ թուականէն վերջ հասածները պիտի սխալուինք թողուլ երրորդ թիւին:

Ուրախութեամբ կ'արժանագրենք մանաւանդ՝ որ բացի մեր բաժանորդներէն եւ ընթերցողներէն, որոնք միշտ համակրութիւն ցոյց տուին մեր այս ձեռնարկին, գրագէտ դատակարգն ալ անտարբեր չգտնուիր, եւ ոյժ կուտայ մեր ջանքերուն ինքնաբեր աշխատակցութեամբ:

### ԲԱՑԱՌԻՆ ԳԻՆ

Այս առաջին թիւը բացառաբար 5 դրուշի պիտի ծախուի հասով, այս կարգադրութիւնը յարմար դասեցինք որպէսզի ամեն ոք, իբր նմոյշ, կարող ըլլայ գնելու ու դասելու մեր գործը, ապահով ենք որ յուսախաբ չպիտի ըլլան ընթերցողը եւ յաջորդական թերթերուն յօժարակամ պիտի շարունակեն վճարել 7 դրշ. նախապէս որոշեալ զինն՝ որ նոյնպէս մասշելի զին մ'է:

**ԱՐԵԻԵԼՔ.**— Օրաթերթ Ազգային, Գրական և Քաղաքական.— Տեղ և Տնօրեն՝ ԳԱՐԵԳԻՆ ՊՅԱՃԵԱՆ։ Բաժանորդագրին՝ Կ. Պօլսոյ համար 80, 45 դրչ. Գաւառ. 108, 60, Արտասահման 25, 20 ֆր. հատը՝ 10 փարա։ Ղալաթիւ Կ. Պօլիս։

---

**ԱՐՇԱԼՈՅՍ.**— Պատկ. Հայաթերթ ամենօրեայ. — Ներքին, Ազգային, Քաղաքական, Գրական, Գիտական և Առևտրական.— Տեղ և Տնօրեն՝ ԲԱՐՍԵՂ ՔԷՇԻՇԵԱՆ։ Բաժ. Իզմիրի՝ 80, 40, 20դ. Պօլսոյ և Գաւառ. 108, 54, Արս. 25, 18 ֆր. հատը 10 փր.

---

**ԱԻԵՏԱՅԵՐ.**— Շաբաթաթերթ Կրօնական, Ուսումնական, Ընտանեկան և Քաղաքական. — Տնօրեն - Խմբագիր՝ Հ. Մ. ԱԼԼԷՆ։ Բաժ. 30 դ. Արտասահման 7. 50 ֆր. հատը 30 փր. Պայպը Հառւղ Կ. Պօլիս։

---

**ԲԻԶԱՆԴԻՈՆ.** — Հայաթերթ Ամենօրեայ. — Ազգային, Քաղաքական, Գիտական։ Տեղ և Տնօրեն՝ ԲԻԶԱՆԴ ՔԷՉԵԱՆ։ Բաժ. 100, 50, 25 դ. Գաւառ. 120, 60, 30 դ. Արտաս. 40, 36 ֆր. 20, 18, 9 ֆր. հատը 10 փր. շաբաթ օրերը՝ 20 փր.։

---

**ԲԻՐԱԿՆ.**— Առևտրական Շաբաթաթերթ։ Գնահատուած Օսմ. Առևտր. Սենեակէն։ Բաժանորդագրութիւն 60 դրչ. 13 ֆր. 5 րպ. հատը 40 փարա, Մէհմէտ Փաշա խան թիւ 12 Սթամպուլ։

---

**ԼՈՅՍ.**— Պատկ. Շաբաթաթերթ.— Խմբագիր՝ ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ.— Բաժանորդ. տարեկան 50, 25 դր. Գաւառ. 60, 30, Արտասահման 12 ֆր. հատը 40 փարա, Պայպը Ալի ճառարէսի 38 Կ. Պօլիս։



**ՏԱՂԻԿ.**— Պատկ. Շաբաթաթերթ Տղոց և դպրոցականներու համար.— Խմբագիր՝ ՅԱԿՈԲ ՏԵՐ ՅԱԿՈԲԵԱՆ: Բաժ. Պօլսոյ և Գաւառ. 30 զրշ. Արտասահ: 7 ֆր. հատը 20 փարա, Ղաթաթա Գուրջուժ: Խան թիւ 7 Կ. Պօլիս:

**ՆՐԱԳԻՏԱԿ.**— Պատկ. Շաբաթաթերթ.— Տնօրեն-Խմբագիր՝ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ: Բաժ. Կ. Պօլսոյ համար 50, 25 զր. Գաւառ. 54, 27, Արտասահ: 12, 6 ֆր. հատը 40 փր. Պապ Ալի Ասատուրեան տպարան թիւ 52 Կ. Պօլիս:

**ՃԵՐԻՏԵՐԻ ՇԱՐԳԻՅԷ.**— Բօլիթիգիյէ, Միլլիյէ, Թիւճճարիյէ, Սարրաֆիյէ վէ Իւլիյէ: Աանիպ վե Միւսիրի՝ ՅԱԿՈԲ Տ. ՃԻՎԷ-ԼԷԿԵԱՆ: Ապօնէ Սթամպուլ 140, 70, 40դ. Թաշրա 150, 80, 45դ. Իճնէպ. 32 ֆր. Թանէսի 20 քարա, Պապը-Ալի թիւ 20:

**ՄԱՍԻՍ.**— Շաբաթաթերթ Ազգային, Դրական, Դիտական և Բաղաքական: Տնօրեն-Խմբագիր՝ ԵՆՈՎԲ ԱՐՄԷՆ: Բաժա-նորդագին Պօլիսի և Գաւառ. 60 զրշ. Արտասահ: 14 ֆր. Պապ-Ալի թիւ 38:

**ՄԱՆՁՈՒՄԷԻ ԷՖԲԵԱՐ.**— Հայաթերթ Առաւօտեան.— Ներ-քին, Ազգային, Բաղաքական, Դրական, Դիտական և Տնտես.— Տեր եւ Տնօրեն՝ ՅՈՎՀ. Ֆ. ԴԱՅՍԷՐԵԱՆ: Բաժ. Պօլսոյ 80, 50դ. Գաւառ. 108, 60դ. Արսհ. 25, 14 ֆր. հա. 10 փ. 38 Պապ-Ալի Կ. Պ.

**ՓՈՒՆԶ.**— Շաբաթաթերթ, Ազգային, Դրական, Դիտական և Բաղաքական.— Պատկ. Տնօրեն Ս. ՉԷՕՄԼԷՔՃԵԱՆ: Բաժ. Պօլսոյ 50, Գաւառ. 54, Արտասահ: 12 ֆր. Պալըգ-Բաղար, Նաֆիէ Խան թիւ 16 Կ. Պօլիս: